

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Ս. Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ռ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԵՊՀ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(1919-2019 ԹԹ.)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 378:54(091)

ԳՄԴ 74.58+24

Գ 888

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը:*

Գիրքը նվիրվում է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին:

Մասնագիտական խմբագիր՝

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան,
քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տարիել Վլադիմիրի Ղուչիկյան

Գրիգորյան Ս. Կ., Հարությունյան Ռ. Ս.

Գ 888 ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի պատմությունը (1919-2019 թթ.)/
Ս. Կ. Գրիգորյան, Ռ. Ս. Հարությունյան: - Եր., ԵՊՀ հրատ.,
2019, 182 էջ + 12 ներդիր:

Ներկայացված են ՀՀ-ում և համալսարանում քիմիական կրթության և գիտության ստեղծման ակունքները, համալսարանում քիմիայի զարգացման ուղիները և Մայր բուհի դերը ՀՀ-ում քիմիական կրթության, գիտության և արդյունաբերության ստեղծման և զարգացման գործընթացում: Համառոտ տրված է քիմիայի ֆակուլտետի ստեղծման ու գործունեության պատմությունը:

ՀՏԴ 378:54(091)

ԳՄԴ 74.58+24

ISBN 978-5-8084-2390-9

© ԵՊՀ հրատ., 2019

© Գրիգորյան Ս. Կ., Հարությունյան Ռ. Ս., 2019

Հեղինակների կողմից

Անգնահատելի է Երևանի պետական համալսարանի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում կրթության, գիտության, տեխնիկայի և արդյունաբերության զարգացման, ինչպես նաև ազգաշինության գործընթացներում: Այն իսկապես Մայր բուհ է, քանզի իրենից ծնունդ են առել կրթության և գիտության ինքնուրույն կայացած մի քանի օջախներ: Համալսարանի գործությունը շաղկապել են գիտակրթական տարբեր ուղղություններ, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի քիմիական կրթությունը և գիտությունը, որոնք հիմնադրվել և զարգացվել են նորաստեղծ համալսարանի համապատասխան բաժիններում և ամբիոններում սկսած 1920 թ.-ից, իսկ 1934 թ.-ից՝ առանձին գործող քիմիայի ֆակուլտետում: Ներկայացվող գրքում հեղինակներն անդրադարձել են քիմիայի. ստեղծմանը և զարգացմանը համալսարանի քիմիայի բաժիններում, ամբիոններում և ֆակուլտետում: Հեղինակները փորձել են ներկայացնել համալսարանում քիմիական կրթության և գիտության զարգացման կարևորությունը և դերը ՀՀ-ում՝ քիմիական կրթության, գիտության և արդյունաբերության զարգացման գործընթացում:

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը, եթե գրքում կնկատվեն բացթողումներ:

Շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերներին և բոլոր նրանց, ովքեր նպաստել են գրքի հրատարակմանը:

Քհն. գիյր. դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գրիգորյան
Քհն. գիյր. դոկտոր, պրոֆեսոր Ռոմիկ Հարությունյան

ԲԱԺԻՆ I

Հայաստանում քիմիայի զարգացման հակիրճ պատմական ակնարկ

Քիմիական գիտության խորն ու լայնածավալ ուսումնասիրումը և զարգացումը Երևանի պետական համալսարանում սկսվել է Խորհրդային Հայաստանի կազմավորման առաջին իսկ տարիներից՝ 1920-ական թվականներից:

Քիմիայի մասին՝ որպես գիտության և դրա կիրառական բնույթի վերաբերյալ տեղեկությունները Հայաստանում հայտնի են շատ հնուց՝ դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում: Հայկական տարբեր տարածքների, մասնավորապես Մեծամորի պեղումներից պարզվել է, որ Հայաստանի տարածքում գոյություն է ունեցել մետաղագործություն, իսկ Արմավիրի, Արտաշատի, Կարմիր բլուրի և այլ տեղերի պեղումների ժամանակ գտնվել են մետաղական, ջնարակված խեցեղեն, գունավոր, անգույն և սաղավափալ ապակու բարձրարվեստ ու բարձրորակ իրեր: Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի և համաշխարհային պատմության տվյալների՝ մեր թվարկությունից շատ առաջ մարդու կողմից քիմիական երևույթների և նյութերի գիտակցված կիրառումը կատարվել է Հայաստանում, Եգիպտոսում, Չինաստանում և Միջագետքում: Ինչպես հաստատում է անգլիացի հետազոտող Լ. Ատչիսոնը (Leslie Aitcheson, A History of metals, vol. I, II, 1960)՝ աշխարհում ոսկու, երկաթի, պղնձի և բրոնզի առաջին արտադրությունները իրականացվել են Հայաստանում: Այդ հին ժամանակներում հայերին հայտնի էին մինչև հիմա իրենց նշանակությունը չկորցրած քիմիական շատ գործընթացներ՝ խաղողանյութի սպիրտային և կաթնաթթվային խմորումները, քացախի ստացումը, զարեջրի և գինու պատրաստումը: Վաղ միջնադարյան Հայաստանից տարբեր երկրներ արտահանել են ոսկի, պղինձ, «Հայկավ» (արաբերեն՝ Ստին Արմանի), մալախիտ, անուշադր նաև որդան կարմիր, դաբաղանյութեր, եթերային յուղեր, պաղլեղ (որոշները ունեին «Հայկական աղ»՝ Sal Armenium և «Հայքար»՝ Pierre d' Armenie անվանումներ) և այլն:

Հին ձեռագրերը վկայում են, որ հայ ալքիմիկոսները միջնադարում զբաղվել են զուտ կիրառական խնդիրներով՝ աղերի, ներկերի, քանաքների, ջնարակների, սոսինձների, օծանելիքների, դեղանյութերի

ստացում, մոնանյութի սպիտակեցում, ամալգամաների, հայելիների պատրաստում և այլն, որոնք այլալեզու և հայերեն աղբյուրներում հիշատակվել են «Հայաստան»- «Armenium» անվանումով, քանի որ այն ժամանակ դրանք Հայաստանից տարվում էին արտերկրներ: Դրանք բոլորը նշված են Երևանի Մատենադարանի ձեռագրերում (№551, №6924): Քիմիական գիտելիքները առաջին անգամ Հայաստանից են անցել Ռուսաստան, որը նշել է ռուս գիտնական Ն. Ֆիզուրովսկին (Большая Советская Энциклопедия, II изд., том 2, стр 159):

Միջնադարում գործել են շատ նշանավոր հայ ալքիմիկոսներ, որոնցից հայտնի են Ստեփանոս Իմաստասերը, Դանիել Աբեղան, Օհան Թոխաթցին, Ղազար Եպիսկոպոսը, Տեր-Հարություն Էրզրումցին, Տեր-Սահակ Էջմիածնեցին, Տեր-Դավիթը, Ավագը, Թողորը, որոնց ձեռագրերը պահվում են Մատենադարանում:

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տիրան Ղազանչյանը, ուսումնասիրելով Մատենադարանի հին հայկական ձեռագրերը, հանգել է այն եզրակացության (Т. Казанчян, „Очерки по истории химии в Армении“, 1946 г.), որ գործնական ալքիմիան հին Հայաստանում հենվում էր դասական բնափիլիսոփայության տեսական պատկերացումների վրա, որոնց հիմքում ընկած էր հույն փիլիսոփա Արիստոտելի ուսմունքի չորս տարրերի՝ կրակի, օդի, ջրի, հողի միասնականությունը (որը Հայաստանում անվանվել է «Հայկական ձու»՝ կեղև, թաղանթ, սպիտակուց, դեղնուց), որոնք քննարկվել են հայ միջնադարյան գիտնականների գործերում (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Որոտնեցի և ուրիշներ): Հետագայում, սկսած 17-18-րդ դարերից, հայ բնագետ-քիմիկոսները իրենց տեսաբանական պատկերացումները ներկայացրել են ատոմիստական տեսանկյունից, որն արտահայտվել է Մ. Աբկարյանի «Գրքուկ որ կոչի Սկզբունք բնական գիտութեանց» (1796թ.) գրքում, փաստորեն ավելի շուտ, քան Դալտոնի ատոմիստական ուսմունքի ստեղծումը (1808 թ.): Քիմիական գիտության և նյութերի քիմիական հատկությունների մասին արժեքավոր դատողություններ են արել 19-րդ դարի հայ բազմաթիվ գիտնականներ իրենց հրատարակած գրքերում՝ Մ. Բժշկյան՝ «Ճեմարան գիտելեանց» (1818 թ.), Մերովբե Կարնեցի՝ «Ճաղիկ գիտութեանց» (1819 թ.), Մ. Աղաջրաղյանց՝ «Համառօտ արուեստաբանութիւն և նորանոր հնարք» (1830

թ.), Մ. Սաղաթելյանց՝ «Համառոտ բնական գիտություն» (1842 թ.), Մ. Գարագաշյանց՝ «Նկարագիր ուսման» (1845 թ.), Բ. Նուրիճանյան՝ «Փորձագիտական բնագիտություն կամ ֆիզիկա» (1856 թ.): Դրանցում քիմիան ներկայացված է որպես նյութերի բաղադրությունը զննելու, ճանաչելու և բաղադրելու գիտություն: Հայերենով լույս տեսած գրականության մեջ «քիմիա» տերմինի փոխարեն, որն ըստ Հ. Աճառյանի «քիմիա» ձևով առաջինը գործածել է Սամուել Անեցին XII դարում, գործածվել են դրա հայերեն համարժեքները՝ տարրաբանություն, տարրագիտություն, տարրախուզություն և բնալուծություն, բայց 20-րդ դարի սկզբից ավելի գործածական է դարձել «քիմիա» տերմինը: Պետք է առանձնապես նշել, որ 1815-1830 թթ. կիրառական քիմիայի հարցերով հետաքրքիր ուսումնասիրություններ է կատարել Էջմիածնի Միաբանության անդամ Սահակ Տեր-Գրիգորյանը, ով հայտնի է Ծաղկարար անունով: Նա առաջինն է զբաղվել Արարատյան դաշտի Որդան Կարմիրից ներկանյութ ստանալու խնդրով, նրա ձեռագրերում կան ներկանյութը կորզելու բազմաթիվ դեղատոմսեր, որոնցով կարելի է ստանալ նաև տարբեր երանգի ներկեր:

Չուտ քիմիային նվիրված առաջին հայերեն գիրքը Ս. Վահանյանի «Սկզբունք քիմիական գիտութեան» (1853 թ.) ձեռնարկն է, որտեղ շարադրված են անօրգանական քիմիայի հիմնական հարցերը, նկարագրված են քիմիական գործիքները, անվանակարգման սկզբունքները: 1852-1853 թթ. «Բազմավեպ» ամսագրում տպագրվել է Օ. Գուրգենյանի «Սկզբունք բնալուծության» խորագրով գիտական հոդվածաշարը, որտեղ ներկայացված է անօրգանական քիմիան իր ժամանակի մակարդակով: 1870 թ. լույս է տեսել Մ. Քաջունու եռահատոր գիրքը՝ «Տարրաբանություն տեսական և արուեստական», որի I և II հատորները նվիրված են անօրգանական քիմիային, իսկ III հատորը՝ օրգանական քիմիային, սակայն մեծ գործածություն չի ունեցել գրաբարով գրված լինելու պատճառով: 1891 թ. տպագրվել է Պ. Գաֆթանի երկհատոր «Նոր տարրաբանություն» գիրքը, որի I հատորը նվիրված էր մետաղների և մետաղանման նյութերին, իսկ II հատորը՝ օրգանական քիմիային և, մասնավորապես, կենցաղում (տանը) օգտագործվող քիմիական նյութերին: 19-րդ դարում կատարվել է եվրոպական ճանաչված պրոֆեսորներ Ռոսկոյի «Քիմիա» (1892 թ.) և Բերնշտեյնի «Բնալուծություն» (1885 թ.) կարևոր գրքերի թարգմանությունը: Պետք

է առանձնահատուկ նշել, որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի եվրոպական և համաշխարհային քիմիայի զարգացման բնագավառում իր ծանրակշիռ ավանդն ունի աշխարհում լուսաքիմիայի (ֆոտոքիմիայի) հիմնադիր, պիրոլի քիմիայի սկզբնավորող հայ տաղանդաշատ գիտնական, պրոֆեսոր Լ. Չամչյանը (Բոլոնիա, Իտալիա), ով 1922 թ.-ին ներկայացվել էր Նոբելյան մրցանակի, սակայն նրա ամժամանակ մահվան (1922 թ.) պատճառով մրցանակը չտրվեց: Լ. Չամչյանի անունով է կոչում Բոլոնիայի քիմիայի գիտահետազոտական ինստիտուտը, որտեղ աշխատել է աշխարհահռչակ հայ գիտնականը: Նշված ժամանակներում եվրոպական ճանաչում էր ստացել նաև վերլուծական (անալիտիկ) քիմիայի նշանավոր գիտնական Հ. Աբելյանը (Յյուրխ, Շվեյցարիա):

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում միջնադարյան բարձրագույն կրթօջախների փակման հետևանքով հայ երիտասարդները իրենց մասնագիտական կրթությունը ստացել են օտար երկրներում՝ հիմնականում եվրոպական, դառնալով նշանավոր մասնագետներ նաև քիմիայի գծով: Ոմանք 1919-1920 թթ. կամավոր և հրավերով վերադարձել են նորաստեղծ ՀՀ և լծվել ուսման ու գիտության սուրբ գործին: Քիմիայի ասպարեզում նրանք մեծ և հերոսական գործ կատարեցին՝ քիմիան զարգացնելով հասցրին համաշխարհային մակարդակի, որը որոշ դժվարություններով հանդերձ ներկայումս՝ 21-րդ դարասկզբին, ՀՀ-ում դեռևս պահպանվում է: Այսպիսով, քիմիան Հայաստանյան և հայաբնակ տարածքներում, հազարամյակների ընթացքում, մինչև մեր ժամանակները, օգտագործվել և զարգացվել է հայ մարդու կողմից: Ստացվել են բյուրավոր բազմատեսակ օգտակար և պիտանի նյութեր, պարզաբանվել են բազում բնական և արհեստական քիմիական երևույթներ ու գործընթացներ և, հետագայում, գործարկվել են բազմաթիվ քիմիական ու արդյունաբերական արտադրական հիմնարկ-ձեռնարկություններ և գործարաններ, այդ բոլորը հասցնելով ընդհուպ միջազգային մակարդակի:

Կրթության, գիտության և արդյունաբերության բնագավառներում քիմիան ավելի մեծ զարգացման հասավ հատկապես Խորհրդային Հայաստանում: Այնուամենայնիվ, Հայաստանում քիմիայի զարգացումը բոլոր ոլորտություններով իրականացվել է հիմնականում Երևանի պետական համալսարանում՝ մեծատաղանդ և հայրենասեր, արտա-

սահմանում բարձրագույն կրթություն ստացած խոշոր գիտնականների ջանքերով ու տվյալաձևերով: ՀՀ-ում քիմիայի հիմնադիրը՝ ուսման, գիտության և արդյունաբերության բնագավառներում, մեծ քիմիկոս, բազմակողմանի զարգացած գիտնական, պրոֆեսոր Ստեփան Պողոսի Ղամբարյանն է, որի ուսումնագիտական շքախմբում էին սկանավոր քիմիկոսներ՝ Լևոն Ռոտինյանը, Հովհաննես Ակունյանը, Ղազար Տեր-Ղազարյանը, Պապա Քալանթարյանը, Ալեքսանդր Հակոբյանը և շատ ուրիշներ:

ԲԱԺԻՆ II

II-1. Քիմիայի զարգացման նոր փուլի համառոտ պատմությունը Հայաստանում և համալսարանում Խորհրդային (1920-1991թթ.) և հետխորհրդային ժամանակաշրջանում

Քիմիայի ուսուցման, գիտության, արդյունաբերության բազմակողմանի և բարձր մակարդակով զարգացում սկսվեց 1919-1920 թթ. անկախ Հայաստանի (1918 թ.) ստեղծումից հետո: Այդ շարժումը ավելի բուռն ընթացավ 1920 թ. Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո: Հիմնական օջախը Երևանի ժողովրդական (հետագայում պետական) նորաստեղծ համալսարանն էր, որտեղ ձևավորվեց նաև մյուս բնագիտական և հումանիտար բաժինները: Հայաստանի հանրապետության այն ժամանակվա կառավարությունը նորաստեղծ համալսարանում աշխատելու համար հրավիրեց հիմնականում արտասահմանյան երկրներում կրթություն ստացած ականավոր գիտնականների, այդ թվում նաև եվրոպական ճանաչում ունեցող քիմիկոսների: Նրանք էին՝ Ս. Ղամբարյանը, Լ. Ռոտինյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Պ. Քալանթարյանը, Ա. Հակոբյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Ակունյանը և ուրիշներ, ովքեր սկսեցին մանկավարժագիտական քիմիկոս կադրերի պատրաստման հիմնարար գործընթացը Մայր օջախում՝ համալսարանում, բնագիտական ֆակուլտետներում, որոնք երեքն էին՝ Գյուղատնտեսական, Բժշկական և Տեխնիկական (համալսարանի մյուս երկու ֆակուլտետները հումանիտար էին՝ Պատմության և Բանասիրության): Բնագիտական նշված ֆակուլտետներում սկսվեցին դասավանդվել այդ ժամանակի գիտական բարձր մակարդակին համապատասխանող քիմիայի դասընթացներ, կատարվեցին առաջին գիտական ուսումնասիրությունները, որոնք շարունակվեցին նաև հետագայում: Այդ գործընթացը շարունակվեց նաև 30-ական թվականներին համալսարանի բազայի վրա ստեղծված Պոլիտեխնիկական, Բժշկական և Մանկավարժական ինստիտուտներում, որին մեծ չափով նպաստեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը:

Լայն ծավալ ստացան ժողտնտեսության համար կարևոր խնդիրներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքները, որոնց ուսումնասիրության օբյեկտներ դարձան Արարատյան դաշտի կրա-

քարերը, կավահողերը, մերձարաքսյան և Արարատյան ճահիճներն ու ճահճահողերը, բազալտները, տուֆերը և այլն:

Համալսարանում և իր բազայի վրա ստեղծված ինստիտուտներում կադրերի պակասության պատճառով մինչև 1940-ական թթ. ուսումնական և գիտական աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էին համալսարանական փորձառու դասախոսները, որոնցից ամենամեծ ծանրաբեռնվածություն և զբաղվածություն ունեցել է, իսկապես հանճարեղ գիտնական, պրոֆեսոր Ստեփան Պողոսի (Պավլովիչ) Ղամբարյանը (1879-1948 թթ.), ով փաստորեն հանդիսանում է ՀՀ քիմիական գիտության հիմնադիրը, քիմիական արդյունաբերության ստեղծողը, կիրառական քիմիայի հայրը: Նրա ջանքերով 1935թ. ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի քիմիական լաբորատորիան, որն ունեցավ անօրգանական, օրգանական, ֆիզիկական և կենսաբանական քիմիաների բաժանմունքներ: Քիմիական գիտության զարգացումը լայն թափ ստացավ հատկապես ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի (ԳԱ) ստեղծումից հետո (1943թ.):

Ուսումնագիտական և արդյունաբերական-արտադրական զարգացումները ՀՀ-ում շարունակվեցին կատարվել մասնագիտական բոլոր հնարավոր ուղղություններով: Մինչև 1940-ական թթ. և 1945 թ.-ից հետո, ինչպես նշվել է վերը, Երևանի համալսարանի բազայի վրա բացվել էին նոր ինստիտուտներ (բժշկական, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական, մանկավարժական, անասնաբուժական-անասնաբուժական, տնտեսագիտական (ժողտնտեսական)), որոնցում կային քիմիական ֆակուլտետներ կամ քիմիայի ամբիոններ: Բացվեցին նաև ուսումնարաններ, տեխնիկումներ, քոլեջներ (մանկավարժական., բժշկական, քիմիական և այլն), որոնցում էական նշանակություն ու տեղ ունեւ «Քիմիա» առարկայի դասավանդումը: Քիմիայի զարգացումը նշված բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսուցման օջախներում լայն թափ և վերելք էր ստացել, պատրաստվում էին բարձր մակարդակի մեծ թվով քիմիկոս կադրեր՝ քիմիական տարբեր ուղղվածություններով: Քիմիական բարձրակարգ ուսուցում իրականացվում էր նաև Բաքվի հայկական մանկավարժական ինստիտուտում (ՀՍԽ), որն ուներ քիմիա-կենսաբանական ֆակուլտետ, որտեղ սովորում և դասախոսում էին հայերենով: Մինչ Հայրենական պատերազմի տարիները Կիրովաբադում (Գանձա-

կում) նույնպես գործում էին ռուսալեզու մանկավարժական և գյուղատնտեսական ինստիտուտներ, որոնց ուսանողությունը և դասախոսական կազմը հիմնականում տեղաբնակ և Ղարաբաղի հայերն էին: Իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կենտրոնում՝ Ստեփանակերտում, գործում էին մանկավարժական և բժշկական ուսումնարաններ և երկամյա մանկավարժական ինստիտուտ: Հետագայում Բաքվի իշխանավորները (Բագիրովի և ապա Հեյդար Ալիևի գլխավորությամբ) ՀՄԻ-ն տեղափոխեցին Ստեփանակերտ՝ աղյուսակային բաժին ավելացնելով և փակելով մանկավարժական ուսումնարանն ու երկամյա ինստիտուտը: Ղարաբաղյան շարժման պատճառով Ստեփանակերտից մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես տեղափոխվեց Վանաձոր: Արցախի Հանրապետության ինքնորոշումից հետո մանկավարժական ինստիտուտը վերադարձավ Ստեփանակերտ, դարձավ Արցախի պետական համալսարան և ԵՊՀ-ի հոգացությամբ շարունակեց աշխատել: Ներկայումս այն ունի նաև քիմիայի և կենսաբանության ֆակուլտետ, քիմիայի ամբիոններ, որոնց պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում ԵՊՀ-ի շրջանավարտներն են:

Քիմիայի ուսուցման կարևոր կենտրոններ են նաև Գյումրիի մանկավարժական ինստիտուտը, պոլիտեխնիկական և տնտեսագիտական համալսարանների մասնաճյուղերը, Վանաձորի բուհերը, Գավառի և Գորիսի համալսարանները, ինչպես նաև նշված և այլ քաղաքների ուսումնարաններն ու քոլեջները, որոնցում քիմիան էական և անհրաժեշտ մասնագիտություն է: Հարկ է նորից նշել, որ ՀՀ-ում քիմիայի բուհական ուսուցման հիմնադիրը և կազմակերպիչը պրոֆ. Ս. Ղամբարյանն է իր համախոհներով, ով սկսած 1920-ական թվականներից մինչև 1937 թվականը, ստեղծել և միաժամանակ ղեկավարել է 1930-ական թվականներին նորաստեղծ բուհերի և համալսարանի օրգանական, անօրգանական և մյուս քիմիայի ամբիոնները: Մեծ գիտնական Ս. Ղամբարյանը եղել է ոչ միայն բուհական կրթության, այլ նաև ՀՀ-ում գիտահետազոտական լաբորատորիաների և ինստիտուտների ստեղծման մախաճեռնողը: Նրա և տաղանդաշատ գործընկերների ու սաների ջանքերի շնորհիվ մինչև քառասունական թվականները սկսեցին գործել նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտներ՝ անօրգանական և օրգանական քիմիայի ուղղությամբ:

յամբ: 1945 թ.-ից հետո Երևանում ինքնուրույն գիտահետազոտական կենտրոններ էին՝ Ընդհանուր և անօրգանական քիմիայի, Օրգանական քիմիայի, Ֆիզիկական քիմիայի, Նուրբ օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտները, Պոլիվինիլացետատը, Պլաստպոլիմերը, Պոլիմերների ՀԳՀԻ «Նաիրիտ» Գիտաարտադրական միավորումում (ԳԱՄ), «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ը, Վանաձորում «ՊՍՊԻ»-ը և այլն: Հիշենք որ ԵՊՀ և մյուս բնագիտական ուղղվածության բուհերը ուսումնական բարձրագույն հաստատություններ լինելուց բացի, մշտապես եղել և մնում են որպես գիտահետազոտական կենտրոններ (նաև քիմիայի գծով):

Ուսումնական և գիտահետազոտական բարձր մակարդակն ու զարգացվածությունը քիմիայի բնագավառում և միջազգային չափանիշով գիտական կադրերի պատրաստումը ՀՀ-ում հնարավորություն ընձեռեց քիմիական բարձրորակ արտադրություն կազմակերպել տարբեր ուղղվածությամբ: Կիրառական քիմիան թևածեց ՀՀ-ում: Մինչ 1940-ական թվականները վիսստորեն ՀՀ-ում սկսվեց գիտաարտադրական մեծ հեղաշրջում «Կաուչուկ» գործարանի ստեղծման շնորհիվ, որի իրականացման միտքը և զարգացման հնարավորությունը նորաստեղծ ՀՀ-ում կատարեց մեծ հայրենասեր ու հանճարեղ գիտնական պրոֆ. Ղամբարյանը: Գործարանի կառուցումը տևեց 1930 թ.-ից մինչև 1940 թ., որի բացումը տեղի ունեցավ 1940 թ. մարտի 19-ին որպես Խորհրդային Միության ամենահզոր և կարևոր ռազմատեխնիկական օբյեկտ, որի արտադրանքի շնորհիվ ՀՀ-ում ստեղծվեցին քլորոպրենային կաուչուկի արտադրության հետ կապված տարատեսակ գործարաններ: Դրանցից ամենակարևորը Ավտոդողերի գործարանն էր, որն արտադրանք էր տալիս ամբողջ Խորհրդային Միությանը և Հայրենիքը ապահովվեց տրանսպորտային և ռազմատեխնիկական բնույթի ավտոդողերով, որոնք պատրաստվում էին կաուչուկի բազայի վրա, ինչպես նաև Խորհրդային Միության այլ վայրերում կառուցված ավտոդողերի գործարաններում: Այսպիսով ՀՀ դարձավ քիմիական երկիր, և մեկը մյուսի հետևից կառուցվեցին նորանոր քիմիական արտադրության ձեռնարկություններ: «Կաուչուկ» գործարանը դարձավ հզոր՝ «Նաիրիտ» ԳԱՄ հսկա միավորում, որը Խորհրդային Միության մեջ առաջինն էր քլորոպրենային կաուչուկի և լատեքսների արտադրության որակի, քանակի ու ծավալի տեսակե-

տից (տարեկան՝ մոտ 70.000 տոննա), ինչպես նաև իր ռազմատեխնիկական նշանակությամբ: Համամիութենական, նաև միջազգային մակարդակի էին նաև ՀՀ մյուս արդյունաբերական ձեռնարկությունները և գործարանները՝ Երևանի ալյումինի գործարանը («Կանազը»), որը տալիս էր ԽՍՀՄ-ի ամենատրակյալ ավիացիոն ալյումինումի արտադրանքը, Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը, Կիրովականի (Վանաձորի) քիմիական կոմբինատը, Երևանի Պոլիմիլի-լացետատ գործարանը, Ջողի ոսկու հանքամշակման և Արարատում մաքուր ոսկու ստացման արտադրամասերը, «Քար և Սիլիկատներ» ԳԱՄ-ը իր քարային և սիլիկատային բազմազան արտադրությամբ, Ջանգեգուրի պղնձամոլիբդենային ֆաբրիկան՝ բարձրորակ պղնձի և մոլիբդենի արտադրությամբ և այլն: ՀՀ-ում նշված և այլ արտադրությունները իրականացնում էին հայ մասնագետները, ովքեր միջազգային մակարդակով տիրապետում էին ինժինեռատեխնիկական և տեխնոլոգիական բոլոր հնարքներին: Այդ առումով պետք է նշել, որ համաշխարհային մակարդակի ինժինեռ-քիմիկոս էր Էդգար Տեր-Ղազարյանը (1912-1961 թթ.)՝ պրոֆ. Ղազար Տեր-Ղազարյանի որդին: Էդգար Տեր-Ղազարյանը ծնվել է Բաքվում, միջնակարգը ավարտել է Թբիլիսիում, իսկ 1929 թ.՝ տեղի քիմիական տեխնիկումը: 1930-1931 թթ. աշխատել է Բերեզնիկի քիմիական գործարանում, 1931-1934 թթ.՝ Վանաձորի ազոտական պարարտանյութերի գործարանում որպես տեխնիկ: Լինելով Երևանի պոլիտեխնիկի ուսանող՝ միաժամանակ 1936 թ.-ին ղեկավարել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի նախագծային աշխատանքները: 1934-1936 թթ. մասնակցել է Լենինգրադում քլորոպրենային կաուչուկի փորձնական նմուշի՝ «Սևանիտի», ստացման աշխատանքներին: 1937 թ.-ին ընդհատել է բուհում ուսանելը և 1938-1939 թթ. աշխատել է Նիկոտինի (Բաբուշկին) գործարանում որպես գլխավոր ինժեներ: 1939 թ. տեղափոխվել է Երևան և ղեկավարել Երևանի քիմիական գործարանի նախագծային կոնստրուկտորական բաժինը: 1943-1953 թթ. աշխատել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի գլխավոր ինժեներ. կատարելագործել է կաուչուկի ստացման տեխնոլոգիան, կատարել մեծ ներդրումներ մագնիսի, կոշիկի և ռեզինատեխնիկական արտադրության մեջ: 1953-1957 թթ. որպես գլխավոր ինժինեռ նախագծել է և կառուցել Սումգայիթի կաուչուկի գործարանը:

Առանց բարձրագույն կրթության դիպլոմի 1952 թ. թույլատրել են պաշտպանել թեկնածուական թեզ և ստացել տեխ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան: Է. Տեր-Ղազարյանը 1944-1946 թթ. աշխատել է Դյուպոն ֆիրմայի ձեռնարկություններում, ուսումնասիրել է այնտեղ ստացվող սինթետիկ կաուչուկի արտադրության օրինաչափությունները և գաղտնիքները, ցուցաբերելով շատ բարձր գիտելիքներ այդ բնագավառում, ինչը բազմիցս նշվել է ԱՄՆ-ի թերթերում ու ամսագրերում: Նրա ջանքերով Երևանի կաուչուկի գործարանում ներդրվել է քլորբենզոլի երկփուլ ռեկտիֆիկացմամբ անընդհատ ստացման և էմուլսիայում պոլիմերման եղանակները: Քլորբենզոլի անընդհատ ստացման եղանակը նրա կողմից ներդրվել է նաև Չինաստանում, Լեհաստանում և Խորհրդային Սիւրիայի այլ գործարաններում: Նա բազմաթիվ նախագծերի հեղինակ էր ամբողջ ԽՍՀՄ-ում, աշխարհում ճանաչված ինժեներ-քիմիկոս: 1957 թ.-ին Է. Տեր-Ղազարյանը եղել է Վանաձորի քիմիական և գունավոր մետալուրգիայի արտադրության պրոցեսների ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն: 1960 թ.-ին նշանակվել է Խորհրդային Հայաստանի Հանրապետության Ժողովրդական նախագահի առաջին տեղակալ, ուր աշխատել է մինչև կյանքի վերջը: 1960 թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ: Այդ մերոնք էին, որ հետպատերազմյա ժամանակաշրջանում Կիրովաբադում կառուցեցին և շահագործման հանձնեցին այլումինի գործարանը, Բաքվից ոչ հեռու կառուցեցին Սումգայիթ քաղաքը և կաուչուկի գործարանը, որտեղ հիմնականում աշխատել են տեղաբնակ հայերը:

Այսպիսով, քիմիան մեծ ծաղկաման հասավ Խորհրդային Հայաստանում: Քիմիական արդյունաբերության շնորհիվ ՀՀ-ի ֆինանսատնտեսական մակարդակը շատ բարձրացավ և ստեղծվեցին նոր գյուղեր, քաղաքներ, ասֆալտապատվեցին ճանապարհները, շինարարությունը ունեցավ մեծ վերելք, ստեղծվեցին նոր գիտական, առողջապահական, մշակութային և սպորտային կենտրոններ ու օջախներ: ՀՀ համարվում էր միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտատեխնիկական կենտրոն: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վիճակը աղետալիորեն փոխվեց:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո (1991թ.) կրթության, գիտության և արտադրության զարգացման թափը անս-

պասելի կոտրվեց, այդ թվում նաև քիմիայի բնագավառում: Այդ անկանխատեսելի անկումը, ըստ երևույթին, պայմանավորված էր սոցիալ-տնտեսական, ֆինանսական և կազմակերպչական գործունեությունների թուլացմամբ ու թուրք-ազերների կողմից հրահրած Գևարադյան պատերազմի գոյությամբ, ինչպես նաև 1988 թ. դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդին պատուհասած Սպիտակի հզոր ու մահաբեր երկրաշարժով: Կատարվեց արհավիրք արհավիրքի, չարիք չարիքի հետևից, և տասնյակ տարիների ձեռքբերումները կորսվեցին կարճ ժամանակահատվածում: Անկախացումից հետո կարճ ժամանակում փակվեցին քիմիական (և ոչ միայն քիմիական) ձեռնարկությունները և կատարվեց քիմիական կադրերի հոսք ուսումնագիտական և գիտական ինստիտուտներից ու քիմիական ձեռնարկություններից, առաջացավ անգործություն, պարզապես աղքատություն՝ նյութական, ֆինանսական և կենցաղային բնույթի, իսկ քիմիան ոմանց կողմից (նույնիսկ քիմիկոսների) քյուրիմացությամբ համարվեց թունավոր ու ժողովրդին ոչ պիտանի բնագավառ: Ըստ նրանց քիմիան «ատոմային ռումբ էր» և պետք էր վերացնել ու այդպես էլ արվեց...

Դրան հակառակ, զարմանալիորեն սնկի նման արագ աճեցին մասնավոր և կոոպերատիվ ուսումնակրթական օջախներ, որոնք բերեցին կադրերի պատրաստման որակի խիստ անկման: Այդպիսով, ուսումը, գիտությունը և արտադրությունը մեր երկրում, կարելի է ասել, արհեստական ճանապարհով բոլոր բնագավառներում (գուցե և ավելի շատ քիմիայի) նահանջեց ու թուլացավ:

Նշենք, որ այդ դժվարությունների ալիքի տակ ընկավ նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, քանի որ վերջին տասնամյակներում փակվեցին որոշ ամբիոններ՝ «Քիմիական ֆիզիկայի», «Էկոլոգիական քիմիայի», իսկ «Անալիտիկ քիմիայի» ամբիոնը միացվեց «Անօրգանական քիմիայի» ամբիոնին, որը 2013 թ.-ից կոչվում է՝ «Անօրգանական և անալիտիկ քիմիայի» ամբիոն: Հիմնական պատճառը դասաժամերի քանակի պակասելն էր, որը պայմանավորված էր ընդունվող ուսանողների քիչ թվաքանակով: Չնայած ստեղծված այդ պայմաններին, այնուամենայնիվ, որոշ խանդավառություն ցուցաբերող քիմիկոս մասնագետների կողմից մեծ ջանքեր են գործադրվում ստեղծված վիճակը շտկելու համար: Սոցիալ-տնտեսական դժվարին այս ժամանակներում Քիմիայի ֆակուլտետում բացվեցին դեղագործա-

կան քիմիայի (1994 թ.-ին) և կիրառական քիմիայի բաժինները (1995 թ.-ին), էկոլոգիական քիմիայի միջամբիոնային գիտահետազոտական լաբորատորիան (1997 թ.-ին), սննդի անվտանգություն բաժինը (2016 թ.-ին):

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում ղեկագործական քիմիայի բաժինը 1994-1997 թթ. մեծ զարգացում ունեցավ, ինչի հենքի վրա համալսարանում ստեղծվեց ղեկագործական քիմիայի ամբիոն (1998 թ.): Ֆակուլտետում նորաստեղծ Դեղագործական քիմիայի ամբիոնը դարձավ ՀՀ-ում ղեկագործական քիմիայի լուրջ գիտակրթական կենտրոն՝ ճանաչվելով և գնահատվելով նաև միջազգայնորեն: Դա էր պատճառներից մեկը (մյուսը՝ այդ բաժնի ուսանողների գերակշռող քանակը), որ Քիմիայի ֆակուլտետը 2015 թ. անվանափոխվեց Դեղագիտության և Քիմիայի ֆակուլտետի:

Այդ ֆակուլտետում ղեկագիտության մասնագիտական հետազարդոր առաջընթացները բերեցին նոր կարևոր փոփոխությունների՝ ստեղծվեցին ղեկագիտության բաժինը սպասարկող ևս երկու ամբիոններ, որոնց հենքի վրա 2017 թ. հունվարից ԵՊՀ-ում կազմավորվեց ուսումնագիտական նոր ինստիտուտ՝ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը: Ըստ այդմ, ֆակուլտետը նորից անվանափոխվեց Քիմիայի ֆակուլտետի:

II-2. Քիմիայի հիմնական մասնագիտական կենտրոնների (բաժինների) ստեղծումն ու գործունեությունը ՀՀ-ում և համալսարանում 1920-2019 թթ.

Խորհրդային Հայաստանում քիմիայի հիմնադրման և զարգացման կենտրոնը Երևանի համալսարանն էր և ՀՀ-ում քիմիայի հիմնական մասնագիտությունների ձևավորումն ու զարգացումը իրականացվել է նորաստեղծ համալսարանում ու դրան կից ստեղծված ուսումնագիտական լաբորատորիաներում և ինստիտուտներում մեծանուն քիմիկոսների ղեկավարությամբ: Ուստի քիմիայի տարբեր մասնագիտական բնագավառների առաջացմանը և զարգացմանը ՀՀ-ում էապես նպաստել է Երևանի համալսարանը:

Ստորև համառոտ ներկայացված է քիմիայի՝ ուսումնական, գիտական, արդյունաբերական զարգացման և ձեռք բերված էական արդյունքներն ու տվյալները Խորհրդային Հայաստանում ըստ քիմիայի հիմնական մասնագիտական բնագավառների (Անօրգանական, Օրգանական, Նուրբ օրգանական և Դեղագիտական, Ֆիզիկական քիմիաների, Քիմիական ֆիզիկայի, Անալիտիկ (Վերլուծական) քիմիայի, Պոլիմերների քիմիայի, Քիմիական տեխնոլոգիայի), որոնց հիմնադրման և զարգացման մեջ մեծ ներդրում է ունեցել և ունի ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Մասնագիտական բաժինների գործունեության համառոտ նկարագրերը:

Անօրգանական քիմիա: Այս ուղղությամբ քիմիայի զարգացումը Խորհրդային Հայաստանում գլխավորապես կապված է հանրապետության տարածքում առկա հանքային և ոչ հանքային առատ հումքի հետազոտությունների և կիրառման հետ: Առաջինը այդ ուղղությամբ ուսումնագիտական աշխատանքներ կատարել է ԵՊՀ պրոֆեսոր Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանը (1879-1964 թթ.), որոնք վերաբերում են բազալտի հալման և բյուրեղացման օրինաչափություններին՝ կազմակերպելու քարեծուկածո իրերի արտադրություն: Այդ աշխատանքների շնորհիվ ՀՀ-ում ստեղծվեց բազալտի փորձնական, իսկ հետագայում՝ Մուլիտի գործարան: Քիմիայի զարգացման այդ սկզբնական շրջանի ուսումնական աշխատանքներից հիշարժան է նշել Վ. Դեմիրչյուլյանի «Ատոմի կառուցվածքը և արժեքականությունը» մենագրությունը (1926 թ.), որում հեղինակը աշխարհում առաջինն է տեսականորեն

կռահել ջրածնի իզոտոպի՝ դեյտերիումի գոյությունը, որը նա անվանել է «Արմենիում», սակայն Եվրոպան և աշխարհը այդ մասին լռել են ընդմիջտ:

Դեռևս 1950-ական թթ. ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի լաբորատորիայում Մանվել Մանվելյանի (1913-1985 թթ., ՀՀ ԳԱ թղթակից անդամ՝ 1956 թ., ակադեմիկոս՝ 1963 թ., ինստիտուտի տնօրեն՝ 1957-1985 թթ.) ղեկավարությամբ կատարվեցին մեֆելինային սինեիտների հետազոտությունները, որոնց շնորհիվ մշակվեցին սինեիտների հիմնային ջրալուծույթներում ալյումինի և սիլիցիումի օքսիդների, նատրիումի և կալիումի մետասիլիկատների, Երևանիտների և այլ անօրգանական նյութերի ստացման տեխնոլոգիաները: Նույն ինստիտուտում ֆիզիկաքիմիական ամալիզի եղանակով հետազոտվեցին մի շարք սիլիկատային բազմաբաղադրամաս համակարգեր Հրանտ Բաբայանի (ապագայում՝ դոկտոր, պրոֆեսոր՝ 1966 թ., ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ՝ 1969-1983 թթ., «Քար և սիլիկատներ» ԳԱՄ տնօրեն՝ 1983-1993 թթ.) ղեկավարությամբ, ում շնորհիվ հնարավոր դարձավ գործարկել նատրիումի մետասիլիկատի արտադրությունը: Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը զբաղվել և զբաղվում է ՀՀ-ի հանքանյութերի, արտադրական թափոնների, սուլֆիդային խտանյութերի համալիր վերամշակման խնդիրներով (ցեմենտի և գիբսի ստացում և այլն): Սինթեզվել են մաշակայուն և դյուրահալ բոքսիտային և այլ տեսակի ապակիներ, իսկ 1950-ական թթ. սկսած սինթեզվեցին տեղական հումքի օգտագործմամբ օպտիկական, մեխանիկական և ջերմային տարբեր հատկություններով օժտված ապակիներ, ինչպես նաև պատրաստվեցին դժվարահալ (մինչև 2300°C) և դյուրահալ (մինչև 1200°C) ապակիների եփման վառարաններ, որոնց արդյունքները ամփոփվել են դոկտոր, պրոֆեսոր (1968 թ.), ակադեմիկոս (1996 թ.) Կոստան Կոստանյանի «Բյուրեղապակի և տեսակավոր ապակի» մենագրությունում (1964 թ.): Ակադեմիկոս Կ. Կոստանյանը մշտական գիտաուսումնական կապի մեջ է եղել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի հետ:

Մեծ է Կոստան Արտավազդի Կոստանյանի (1926-2007 թթ.) դերը ՀՀ-ում ապակու քիմիայի և տեխնոլոգիայի ստեղծման գործում, նոր տեսակի ապակիների սինթեզի և էլեկտրական ու այլ հատկությունների ուսումնասիրությունների բնագավառում: 1968 թ.-ին նա կազմանկեր-

պել է ԽՍՀՄ «Էլեկտրավակումային ապակու» գիտահետազոտական ինստիտուտի Երևանյան մասնաճյուղը, ապա այդ ինստիտուտի փորձարարական գործարանը (1981 թ.), որոնց տնօրենը մինչ 1986 թ. եղել է ինքը՝ պրոֆ. Կ. Կոստանյանը, ում ղեկավարությամբ ստացվել են դժվարահալ և դյուրահալ նոր տեսակի ապակիներ՝ առաջինը Խորհրդային Միությունում: 1986-1992 թթ. նա եղել է Պոլիտեխնիկական ինստիտուտի «Սիլիկատների տեխնոլոգիա»-ի ամբիոնի վարիչ, համատեղությամբ միաժամանակ ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի անօրգանական պոլիմերների լաբորատորիան, լինելով նաև այդ ինստիտուտի գիտական խորհրդի նախագահը մինչև իր կյանքի վերջը: Եղել է ստենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդների անդամ ԵՊՀ-ում և Քիմիական Ֆիզիկայի ինստիտուտում (1999-2007 թթ.), իսկ Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ 057 խորհրդի նախագահ (մինչև մահը):

Ակադեմիկոս Մ. Մանվելյանից հետո Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում շարունակվեցին գիտահետազոտական աշխատանքների կատարումը, որը հաջողությամբ իրագործվեց տեխնիկական գիտությունների դոկտոր (1997 թ.) Սուրեն Սմբատի Կարախանյանի (1930-2003 թթ.) ղեկավարությամբ (1985-2003 թթ.), ով ցուցաբերեց գիտական և կազմակերպչական մեծ ունակություններ, ստեղծելով աշխատանքային բոլոր պայմանները գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարման համար: Նա եղել է Պոլիտեխնիկի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի դասախոս (1982-1995 թթ.): Մեծ ծավալի գիտահետազոտական աշխատանքներ է կատարել տարբեր ոլորտներում՝ անօրգանական նյութերի տեխնոլոգիա, նեֆելինային սիենիտներից արգնահողի ստացում, ֆոսֆոգիպսի և ցեմենտի ստացում, թանկարժեք մետաղների ստացում, արդյունաբերական կեղտաջրերի մաքրում և կրկնակի օգտագործում, կվարցիտներից ապակու արտադրության հումքի ստացում, որոնց զգալի մասը ներդրվել է արտադրության մեջ: Տասնյակ գյուտերի հեղինակ էր, ՌԴ բնական ԳԱ հայկական մասնաճյուղի փոխնախագահ (1998-2003 թթ.), ՌԴ բժշկատեխնիկական ԳԱ անդամ (2001 թ.):

Ընդհանուր և անօրգանական քիմիայի գիտահետազոտական աշխատանքները արդյունավետորեն շարունակվել են անօրգանա-

կան և տեխնոլոգիական քիմիայի փայլուն մասնագետ, տեխնիկական գիտությունների դոկտոր (2011 թ.), պրոֆեսոր (2014 թ.) Նիկոլայ Բաբկենի Կնյազյանի (1951 թ. ծնվ.) տնօրենության ժամանակ (2006-2018 թթ.): 1974 թ. նա աշխատել է այդ ինստիտուտում և մշտապես ակտիվորեն մասնակցել գիտահետազոտական աշխատանքների կատարմանը: Նրա գիտական գործունեությունը կապված է հիմնականում անօրգանական կարևոր նյութերի բարձրջերմաստիճանային սինթեզի հետ, սիլիկատային նյութերի քիմիայի, բորոտային, սիլիկատային, գերմանատային ապակիների և ապակեբյուրեղային նյութերի ստացման տեխնոլոգիական խնդիրների և դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությունների հետ: Պրոֆ. Ն. Կնյազյանի կողմից մշակվել են տեխնիկական նշանակության հատուկ ապակիներ և բյուրեղապակիներ, որոնք կիրառվել են «Էլեկտրոն», «Արաքս» և այլ գործարաններում: Նույն ինստիտուտում հետաքրքիր գիտահետազոտական աշխատանքներ են կատարում նաև հանքային սինթեզների մշակման, կիրառական նշանակության մագնեզիումային ու սիլիկատային նյութերի ստացման ուղղություններով (քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Զուլումյան և այլք):

Երևանի «Էլեկտրավակուումային ապակիների ինստիտուտը» (հետագայում՝ «Նյութաբանության»), որը ստեղծվել էր ակադեմիկոս Կ. Կոստանյանի նախաձեռնությամբ, նրանից հետո տնօրինել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սան, տեխնիկական գիտությունների դոկտոր (1987 թ.), պրոֆեսոր (1988 թ.) Սեյրան Գևորգի Զավուկցյանը (1934-2005 թթ.), ով եղել է այդ հիմնարկության ավագ գիտաշխատող: Նա ընդունվել է Լենինգրադի տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական (1970 թ.), ապա նույն ինստիտուտում նաև դոկտորական թեզեր (1987 թ.): 1992-1998 թթ. աշխատել է «Նյութաբանության» ինստիտուտի տնօրեն: Այդ ինստիտուտում զբաղվել է շատ հրատապ գիտահետազոտական գործունեությամբ, սինթեզելով միութենական նշանակության բյուրեղային և մետաղ պարունակող (էլեկտրավակուումային) հատուկ ապակիներ, որը մեծ ճանաչում բերեց Ս. Զավուկցյանին: Նա Խորհրդային Միության բյուրեղանման նյութերի Կորդիմացման խորհրդի անդամ էր: ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում (1992-2004 թթ.) վարել է մասնագիտական հատուկ առարկաներ, եղել է համալսարանում գործող քիմիայի

մասնագիտական խորհրդի անդամ (1994-1999 թթ.): Ճանաչված քիմիկոս մասնագետ լինելուց բացի հայրենասեր և ակտիվ հասարակական գործիչ էր՝ եղել է ՀՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր (1990-1995 թթ.): Ս. Ջավուկյանը բյուրեղաքիմիայի և բյուրեղապակիների սինթեզի գծով ՀՀ նշանավոր մասնագետներից մեկն էր:

1980-ական թթ. սկսած մեծ ծավալի և կիրառական նշանակության գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել Երևանի «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ում, որտեղ ստեղծվել են ՀՀ-ում լեռնային ապարների մշակման և վերամշակման նոր եղանակներ, արտադրության մեջ ներդրվել մարգարտաքարից ապակու նոր հումքի (կանազիտի) ստացման անթափոն եղանակ, նաև փրփրապակու և բյուրեղապակու ստացման նոր եղանակ (Գ. Մելքոնյան), հունի մեջ է դրվել «Արմենիկա» կոշվող ջերմա և ձայնամեկուսիչ սալիկների արտադրությունը:

Բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել և կատարվում են ՀՀ բուհերում, հատկապես Երևանի համալսարանում և Պոլիտեխնիկական ինստիտուտում (ՀՊԻ): ՀՊԻ-ում հետազոտվել են տարասեռ (հետերոգեն) կատալիտիկ ակտիվություն ունեցող նյութեր (Ա. Ալչուջյան, Ա. Գյուլգադյան), երկար տարիներ հետազոտվել են երկաթային, պղնձամոլիբդենային և այլ հանքանյութեր, մշակվել են դրանց հարստացման, ռեմիում, վոլֆրամ ու հազվագյուտ տարրեր կորզելու եղանակներ, ցեմենտի և կատալիտիկ ակտիվություն ցուցաբերող տարասեռ անօրգանական նյութերի ստացման եղանակներ (Լ. Ջախարով, Ա. Գյուլգադյան, Ա. Ալչուջյան և ուրիշներ): Մեծ է տաղանդավոր քիմիկոս, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Արծրուն Գասպարյանի դերը ՀՀ-ում անօրգանական քիմիայի զարգացման գործում: Խորհրդային Միությունում և աշխարհում առաջինն է մշակել առանց սառեցման աղաթթվի ստացման տեխնոլոգիան (1946 թ. պետական մրցանակ): Նա 1966-1980 թթ. եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորը և ուներ միջազգային ճանաչում:

ԵՊՀ-ում կատարվել են տեղական դոլոմիտներից և մագնեզիտներից մագնեզիումի ու դրա միացությունների անջատման եղանակների մշակումներ, որն իրագործել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1962-1969 թթ.) Մամիկոն Վարդանի Դարբինյանը (1908-1969 թթ.):

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1950-1962 թթ.), դոկտոր, պրոֆեսոր Տիրան Տիրանի Ղազանչյանի (1901-1969 թթ.) ղեկավարությամբ ՀՀ-ում առաջինը կիրառվեց ֆիզիկաքիմիական անալիզի եղանակը (1950-ական թթ.), որը հետագայում ամբիոնում մեծ զարգացում և կիրառություն ունեցավ պրոֆ. Հ. Բաբայանի կողմից:

1930-ական թվականներին ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում հիմնադրվել է «Կոմպլեքս միացությունների քիմիա» ճյուղը Դերենիկ Հովսեփի Մարությանի կողմից (ք.գ.դ., պրոֆեսոր՝ 1944 թ., ԵՊՀ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ և Քիմիայի ֆակուլտետի ղեկավար՝ 1937-1950 թթ.): Նա ՀՀ-ում առաջինն է ուսումնասիրել անցման շարքի մետաղների կոմպլեքսագոյացումը պիրիդինային շարքի ամինամիացությունների հետ: 1960-ական թթ.-ից կոմպլեքսների քիմիայի ուղղվածությունը շարունակել է զարգացնել պրոֆ. Դ. Մարությանի սաներից՝ Սարգիս Նազարի Ավագյանը, ուսումնասիրելով տեսական և գործնական նշանակության π և խելատային կոմպլեքսներ:

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում 1970-ական թթ. ծավալվել են սիլիկատային և հալոգենիդային բազմաբաղադրիչ հետերոգեն համակարգերի հետազոտություններ ֆիզիկաքիմիական անալիզի եղանակներով (պրոֆ. Հ. Բաբայան): Ստեղծվել են հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի ճյուղային համամիութենական գիտահետազոտական լաբորատորիա (1971 թ.), որտեղ իրականացվեցին բազմամետաղական հանքանյութերի և արտադրական թափոնների վերամշակման գիտահետազոտական աշխատանքներ՝ ոսկու կորզման նոր եղանակ, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի թափոնների վերամշակման տեխնոլոգիա և այլն:

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում 1989-2007 թթ. շարունակվել են գիտահետազոտական աշխատանքների առաջընթացը ամբիոնի վարիչ պրոֆ. Սերգեյ Գրիգորյանի (1938 թ. ծնվ.) ղեկավարությամբ՝ երեք հիմնարար ուղղություններով՝ 1. պինդ բնույթի անօրգանական նյութերի սինթեզ, հետազոտություն և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, 2. անցման շարքի մետաղիոնների հետ տարանուն լիգանդներով կոմպլեքս միացությունների սինթեզ և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, 3. հանքային և արդյունաբերական թափոնների մշակում ու անօրգանական նյութերի սինթեզ (Լ. Գրիգորյան, Ռ. Մկրտչյան, Ռ. Աղամյան, Է. Ղա-

վանցյան, Ռ. Ասատուրյան, Գ. Ջեյթադյան, Գ. Գրիգորյան, Գ. Պետրոսյան, Ռ. Գրիգորյան, Ս. Ներսիսյան, Մ. Բաբայան և ուրիշներ): Հետագայում ամբիոնում կազմակերպվեց (2005 թ.) բազային լաբորատորիա՝ «Անօրգանական սինթեզ, հետազոտություն և կիրառություն» պրոֆ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ (2005-2014 թթ.):

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի բազային լաբորատորիան 2014 թվից ղեկավարում է ամբիոնի վարիչ (2007-2018 թթ.) պրոֆ. Ռ. Հարությունյանը, ով 2007 թ.-ից ի վեր, բացի նշված գիտահետազոտական ուղղություններից, ղեկավարում է նաև նոր աշխատանքներ՝ կոնդենսացված համակարգերում ընթացող բազմաբնույթ պրոցեսների և ռեակցիաների ֆիզիկաքիմիական և կինետիկական ուսումնասիրություններ: Ամբիոնում 2009 թ.-ից կատարվել են հետազոտություններ նվիրված ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային անօրգանական նյութերի սինթեզին (ՀՀ ԳԱԱ քիթակից անդամ Ս. Խառատյան) և քիմիական տեղափոխման ռեակցիաների կինետիկային (պրոֆ. Գ. Գրիգորյան):

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում շարունակվում են ՀՀ ջրային համակարգերի և ավազանների էկոլոգիաքիմիական ուսումնասիրությունները պրոֆ. Գևորգ Փիրումյանի ղեկավարությամբ (ԵՊՀ «Էկոլոգիական քիմիա» ամբիոնի նախկին վարիչ՝ 2007-2014 թթ.): 2013 թ.-ին Անալիտիկ քիմիայի ամբիոնը միացվեց Անօրգանական քիմիայի ամբիոնին և 2013 թ. ֆակուլտետում գործում է «Անօրգանական և Անալիտիկ քիմիա»-ի ամբիոնը, որտեղ կատարվում են նաև բազմաբաղադրիչ համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտություններ (պրոֆ. Հ. Խաչատրյան)

Երկար տարիներ (1971-1996 թթ.) Երևանի քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության նյութերի գիտահետազոտական ինստիտուտում (մինչև 1991 թ. համամիութենական մասնաճյուղ՝ ԻՌԵԱ) մշակվել և արտադրության մեջ են ներդրվել ցեոլիտների, հատուկ մաքրության սիլիկահողի, կապարի սուսրի և այլ կարևոր անօրգանական նյութերի ստացման եղանակներ պրոֆ. Ստեփան Գրիգորի Բաբայանի (1930-2017 թթ.) ղեկավարությամբ, ով 1960-70-ական թթ. համատեղությամբ աշխատել է նաև ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոններում որպես բարձրակարգ դասախոս: Նա հայտնի քիմիկոս-տեխնոլոգ էր, քիմ. գիտ. դոկտոր (1977 թ.), պրոֆեսոր (1980

թ.), ՀՀ և Միջազգային ինժեներական ակադեմիաների ակադեմիկոս (1994 և 1999 թթ.): Աշխատել է ԳԱ անօրգանական և ընդհանուր քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ (1964-1969 թթ.), Քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության քիմիական նյութերի ինստիտուտի («ԲՌԵԱ» ԳԱԱ) լաբորատորիայի վարիչ (1971-1989 թթ.), ապա տնօրեն (1986-1991 թթ.), այնուհետև՝ Քիմիատեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1991-1995 թթ.): Աշխատել է նաև Արդյունաբերության նախարարությունում որպես վարչության պետ և խորհրդական (1997-2002 թթ.), ապա՝ Միջազգային բիզնես կենտրոնի բաժնի պետ (2002 թ.): Պրոֆ. Ս. Գ. Բաբայանի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերել են ճառագայթասակտիվ տարրերի քիմիային, անօրգանական միացությունների, գերմաքուր նյութերի ու կլանիչների արտադրության տեխնոլոգիաներին և ոչ մետաղական հանածոների մշակմանը:

Օրգանական քիմիա: Ժամանականից քիմիայի, նաև օրգանական քիմիայի, հիմնադիրը և զարգացնողը Խորհրդային Հայաստանում եղել է պրոֆ. Ս. Ղամբարյանը: Նա 1920-1937 թթ. աշխատել է նորաստեղծ Երևանի համալսարանում մինչև նրա անիրավ աքսորը Սիբիր՝ Սեմիպալատինսկ (1937-1944 թթ.): Համալսարանում և ինստիտուտներում քիմիայի ուսուցման գործընթացին զուգընթաց կազմակերպել և իրականացրել է նաև գիտահետազոտական աշխատանքներ: Համալսարանում շարունակել է դեռևս Գերմանիայում իր կողմից կատարվող գիտական ուսումնասիրությունները՝ իրականացնելով ացիլգերօքսիդների և ամինների փոխազդեցության ռեակցիաների նոր հետազոտություններ (1928 թ.): Այդ գիտական աշխատանքները հետագայում մեծ առաջընթաց ունեցան իր աշակերտներից պրոֆ. Հ. Չալքիկյանի կողմից Ֆիզիկական քիմիայի ամբիոնում (1939- 1972 թթ.): Պրոֆ. Ս. Ղամբարյանը առաջինը ստեղծեց կալցիումի կարբիդի արտադրությունը Երևանում և Վանաձորում ու կարբիդից ստացվող ացետիլենի բազայի վրա նաև քլորոպրենային կաուչուկի առաջին արտադրությունը Խորհրդային Միությունում (1930-1937 թթ.): Նա իր աշակերտների հետ բազմակողմանի հետազոտական աշխատանքներ ծավալեց ացետիլենի քիմիայի բնագավառում, որը շարունակաբար դարձավ քիմիական գիտության կարևորագույն ուղղություններից մեկը ՀՀ-ում: Առաջին յուրատեսակ գիտական աշխատանք-

ները օրգանական քիմիայից կատարվեցին ացետիլենի բնագավառում Ս. Ղամբարյանի աշակերտներ՝ Լևոն Ղազարյանի (1908-1983 թթ.) և Արաքսի Բաբայանի (1906-1993 թթ.) կողմից: Լ. Ղազարյանը (դոկտոր, պրոֆեսոր՝ 1953 թ., Պոլիտեխնիկ ինստիտուտի Օրգանական քիմիայի տեխնոլոգիայի և Օրգանական քիմիայի ամբիոնների միաժամանակյա վարիչ՝ 1938-1945 թթ., օրգանական և ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ՝ 1947-1968 թթ.) կալցիումի կարբիդից և կետոններից իրականացրել է երկմեթիլինիլկարբիմոլի և ացետիլենային գլիկոլների ստացումները: Իսկ ացետիլենից ացետիլենային սպիրտների սինթեզը առաջինը իրականացրեց Ա. Բաբայանը (դոկտոր, պրոֆեսոր՝ 1945թ., Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ՝ 1942-1956 թթ., Օրգանական քիմիայի ինստիտուտի ամինամիացությունների լաբորատորիայի վարիչ՝ 1957-1993 թթ., ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1968 թ.): Նա մշակել է նաև ապահիդրոլորմամբ քլորոպրենի և վինիլացետիլենի ստացման եղանակները:

Այդ ժամանակաշրջանում Արմֆանում և համալսարանում հոտավետ (բուրավետ) նյութերի և օծանելիքների քիմիայի բնագավառում բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքներ էր տանում պրոֆ. Վաչե Իսագուլյանը (1893-1973 թթ.): Նրա կողմից նաև մշակվեցին երկքլորբութենից արիլբութեններ և բույսերի աճը կարգավորող արօքսիքացախաթթուներ սինթեզելու եղանակներ: Ակադեմիկոս Վ. Իսագուլյանը եղել է Խորհրդային Միությունում օծանելիքների և հոտավետ նյութերի քիմիայի հիմնադիրն ու զարգացնողը:

1960-ական թթ. Գյուղատնտեսական ինստիտուտում մշակվել է նոր հերբիցիդի՝ կրոտիլինի, ստացման եղանակ պրոֆ. Վռամ Դովլաթյանի (1923-2005 թթ.) ղեկավարությամբ (քիմ. գիտ. դոկտոր՝ 1965 թ., պրոֆեսոր՝ 1967 թ., ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ՝ 1986 թ., ակադեմիկոս՝ 1994 թ., Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ՝ 1959-1989 թթ.):

ԵՊՀ-ում և Քիմիայի ինստիտուտում 1950-ական թթ. սինթեզվեցին հետերոցիկլիկ միացություններ, կենսաբանորեն ակտիվ նյութեր ու դեղատեսակներ՝ նուրբ քիմիայի խոշոր մասնագետ Արմենակ Մնջոյանի անմիջական ղեկավարությամբ և տաղանդավոր մի շարք քիմիկոսների մասնակցությամբ (Հ. Հարոյան, Ս. Վարդանյան, Լ. Գյուլբու-

դադյան, Ս. Մացոյան և ուրիշներ): 1957 թ. ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի հիման վրա ստեղծվեցին երեք ինքնուրույն ինստիտուտներ՝ Օրգանական քիմիայի (ՕՔԻ), Նուրբ օրգանական և դեղագործական քիմիայի (ՆՕՔԻ), Ընդհանուր և անօրգանական քիմիայի (ԸԱՔԻ): Օրգանական քիմիայի ինստիտուտում (ՕՔԻ) հետազոտություններ ծավալվեցին օրգանական քիմիայի տարբեր բնագավառներում: Այդտեղ Արաքսի Բաբայանի գլխավորությամբ խթանվեց ամինների և ամոնիումային միացությունների քիմիայի զարգացումը ՀՀ-ում, սինթեզվեցին լեպիդիներ և դրա ածանցյալները, բացահայտվեցին չորրորդային ամոնիումային աղերի կատալիտիկ հատկությունները և վերախմբավորման-ճեղքման ու ցիկլման-ճեղքման ռեակցիաները, մշակվեցին խառը երրորդային ամինների ստացման եղանակներ (Մ. Ինճիկյան, Կ. Թահմազյան, Է. Չուխաջյան, Ս. Քոչարյան, Ա. Գյուլնազարյան և ուրիշներ):

Ակադեմիկոս Սարգիս Վարդանյանի ղեկավարությամբ իրականացվեցին ագետիլենային և վինիլացետիլենային միացությունների բազմակողմանի հետազոտություններ (Շ. Բաղանյան, Գ. Չուխաջյան, Ա. Գևորգյան, Ռ. Կուռոյան, Ա. Նորավյան և ուրիշներ): Հետագայում Շ. Բաղանյանը (1933-2003 թթ.) դարձավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.) և ՕՔԻ տնօրեն՝ 1988-2002 թթ., իսկ Ա. Նորավյանը (1937-2015 թթ.)՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՆՕՔԻ բաժնի վարիչ: Չհագեցած ածխաջրածինների բնագավառում յուրատեսակ հետազոտություններ են կատարվել ակադեմիկոս Ստեփան Գրիգորի Մացոյանի (1923-2003 թթ.) ղեկավարությամբ (քիմ. գիտ. դոկտոր՝ 1966 թ., պրոֆեսոր՝ 1967 թ., ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1982 թ., ՕՔԻ տնօրեն՝ 1967-1988 թթ.): Իրականացվել են վինիլացետիլենային սպիրտների, դրանց եթերների, էսթերների ռեակցիաները, կատարվել է չհագեցած եթերների և էսթերների ցիկլումը, մշակվել են հետերոցիկլիկ միացությունների ստացման եղանակներ (Է. Դարբինյան, Լ. Հակոբյան, Գ. Պողոսյան և ուրիշներ): Քիմիայի ինստիտուտի բաժանմունքի վարիչ պրոֆ. Գուրգեն Տիգրանի Թադևոսյանի (1906-1973 թթ.) ղեկավարությամբ հետազոտությունները տարվել են բազմօղակ հիդրոարոմատիկ կետոնների, կենսաբանորեն ակտիվ նյութերի, ինդոլի շարքի ածխաթթուների սինթեզի ուղղությամբ, ինչպես նաև կենսաօրգանական միացությունների շարքին պատկանող նյութերի, չհագեցած երրոր-

դային ֆոսֆինների ու ֆոսֆոնիումային աղերի և էսթերների սինթեզի ու հետազոտության ուղղությամբ (Մ. Ինճիկյան): Վերը նշված գիտնականներից ոմանք երկար տարիներ համատեղությամբ աշխատել են նաև ԵՊՀ-ում որպես պրոֆեսորներ: ՀԽՍՀ ԳԱ քղթակից անդամ (1968 թ.), պրոֆ. Գ. Թադևոսյանը ԵՊՀ-ում աշխատել է 1960-ական թվականներին՝ լինելով ՆՕԲԻ բաժանմունքի վարիչ (1957-1973 թթ.): Մ. Ինճիկյանը (1930-2013 թթ.) համալսարանում աշխատել է 1980-ական թվականներին (քիմ. գիտ. դոկտոր (1966 թ.), պրոֆեսոր (1973 թ.), ՀԽՍՀ ԳԱ քղթակից անդամ (1986 թ.), ակադեմիկոս (1996 թ.), ՕԲԻ փոխտնօրեն (2004-2013 թթ.):

ՕԲԻ-ում սինթեզվել են կիրառական նշանակության բնական և սինթետիկ բուրավետ նյութեր՝ ֆերոմոններ (Վ. Իսազուլյանց, Ա. Գևորգյան, Շ. Բադանյան), ինդոլային և հետերոցիկլային կետոքթուոններ (Ս. Ադրալյան), մշակվել են ածխաջրածինների հալոգենացման և ապահալոգենացման ոչ կատալիտիկ եղանակներ (Գ. Մկրյան, Ա. Հակոբյան):

Տարբորգանական միացությունների բնագավառում տարվող հետազոտությունները բերեցին ֆոսֆորետաինների նոր դասի հայտնաբերման և նոր բորբորգանական միացությունների սինթեզին (Մ. Ինճիկյան, Մ. Հովակիմյան): Ստացվել են անվիճելի տվյալներ, որոնք վկայում են քիմիական գրականության մեջ մտած և հարյուր տարուց ի վեր արժարժվող այսպես կոչված «Միջֆազ կատալիզի» անկարողությունը բացատրելու ամոնիումային, ֆոսֆոնիումային և նմանակ միացություններով շարժուն ջրածնի ատոմ պարունակող միացությունների ալկիլման ռեակցիաները: Ապացուցվել է, որ այդ ռեակցիաների շարժիչ ուժը ալկիլվող միացությունների քիչ աստցված ածանցյալների առաջացումն է (Մ. Ինճիկյան, Գ. Հասրաթյան):

Վերջին տարիներին ստեղծվել են մարդու և շրջակա միջավայրի համար էկոլոգիապես անվնաս գյուղատնտեսական կուլտուրաների և բույսերի պաշտպանության միջոցներ՝ ֆերոմոններ, ինչպես նաև հորմոններ, պլրետրոլիդներ, որոնք թույլ են տալիս զգալիորեն կրճատել կիրառվող բուժաքիմիկատների քանակները (Շ. Բադանյան, Ժ. Չոբանյան), սինթեզվել են՝ հակավիրուսային, կարդիոտոնիկ, հիպոտենզիվ, հակամիկրոբային, հակասնկային ակտիվությամբ օժտված մեծ թվով չհագեցած ամինոմիացություններ, ստացվել են մա-

կերևութային ակտիվ նյութեր, սննդային բուրավետ նյութեր, ոսկու և այլ փոխանցիկ մետաղների լուսաքիմիական որոշման ռեագենտներ (Ս. Քոչարյան, Է. Չուխաշյան, Ա. Գյուլնազարյան), մշակվել են ալիլացման և հիդրման կատալիզատորների քիրալ լիգանդներ, ինչպես նաև ջրի փափկեցման համար օգտագործվող ֆոսֆորօրգանական լուծահանիչներ (Մ. Ինճիկյան): ԵՊՀ-ի սան (ավարտել է 1969 թ.), քիմ. գիտ. դոկտոր (1997 թ.) Ա. Գյուլնազարյանը 1999-2001 թթ. աշխատել է ՕԶԻ փոխտնօրեն, 2002-2003 թթ. տնօրեն, 2013 թ.-ից ՕԶԻ, ապա ՕՂԶԳԿ-ի գիտ. քարտուղար:

Իրականացվել է արտադրական հումք հանդիսացող մեքանի օքսիդային պիրոլիզով ացետիլենի ստացման կողմնակի արգասիք դիացետիլենի հիման վրա N- և C-վինիլազոլների և դրանց ֆունկցիային ածանցյալների սինթեզի արդյունավետ եղանակների մշակումը: Տրվել է դիացետիլենի հիման վրա ազոլների սինթեզի հնարավոր տարբերակների գնահատականը:

Մետաղների բարձր ընտրողական լուծահանիչների ստացման նպատակով մշակվել են N-վինիլպիրազոլների և դրանց ածանցյալների սինթեզի արդյունավետ եղանակներ: Ստացվել են Au^{+3} , Pd^{+2} իոնների կոմպլեքսները պիրազոլային շարքի, այդ թվում պոլիմերային, միացությունների հետ: 1-վինիլպիրազոլները փորձարկվել են իբրև ՅՄ-20 էպօքիդային խեժի տաք պնդեցման պնդեցուցիչներ (Գ. Հասրաթյան, 2006 թ. քիմ. գիտ. դոկտոր, 2004 թ. ՕԶԻ տնօրեն):

Մշակվել են հայտնի դեղանյութ ֆոսֆակոլի (գլաուկոմայի բուժման համար), N-մեթիլմորֆոլինօքսիդի, որն արժեքավոր միացություն է գիտական հետազոտությունների և կենսատեխնոլոգիայի համար, վինիլ- և α-հալոիդէթիլֆոսֆոնատների մեծ հետաքրքրություն ներկայացնող հրակայուն պոլիմերների և անտիպիրենային հավելանյութերի ու դիմեթիլֆոսֆոնիլքացախաթթվի ստացման համապատասխան եղանակներ (Մ. Ինճիկյան, Գ. Հասրաթյան):

Հետազոտություններ են տարվել պոկման, տեղակալման և այլ ռեակցիաների մեխանիզմների պարզաբանման ուղղությամբ (Ա. Գևորգյան, Ա. Առաքելյան):

Քլորոպրենի և ստիրոլի հիման վրա ստացվել են իմունոդիագնոստիկ մոնոդիսպերս լատեքսներ (Ա. Հովհաննիսյան):

Հայտնաբերվել է պիրիմիդինների «վերաամինացմամբ» ընթացող

ենամինային վերախմբավորումը, ինչպես նաև պիրիմիդինների C-C ռեցիկլումը, պիրիմիդինումային աղերի փոխարկումները ազդող[1,5-α]պիրիմիդինների, տրիագոլների և ազոլոտրիագինների (Գ. Դանագույան, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սան (1968-1973 թթ.), քիմ. գիտ. դոկտոր 2000 թ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ 2010 թ.):

Արոմատիկ արդեհիդրների ներկայությամբ ացետիլացետոնի և ացետոքացախաթթվի էսթերի ու առաջնային ամինների փոխազդեցության դեպքում հայտնաբերվել է ոչ սովորական կարբոցիկլացման երևույթը: Ուսումնասիրվել են β-դիկարբոնիլային միացությունների հետ իմինների կարբոցիկլացման ռեակցիայի արդյունքում առաջացող 2,3,4-տեղակալված 5-N-R-ամինոհեքսանոլների սինթեզի հնարավորությունները (քիմ. գիտ. դոկտոր Մ. Սարգսյան):

Էական աշխատանքներ են կատարվել օրգանական միացությունների և պոլիմերների էլեկտրաքիմիական սինթեզի և մեխանիզմի ուսումնասիրման ուղղությամբ (քիմ. գիտ. դոկտոր (1996 թ.), պրոֆեսոր (2007 թ.), Պոլիտեխնիկի բնապահպանության և կենսագործունեության ամբիոնի վարիչ (2012 թ.) Ս. Սարգսյան):

2007 թ. Օրգանական քիմիայի ինստիտուտը միավորվեց Նուրբ օրգանական քիմիայի Ա. Մնջոյանի անվան ինստիտուտի հետ և ստեղծվեց Օրգանական և Դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոն, որի տնօրենը 2007-2018 թթ. եղել է տաղանդավոր քիմիկոս և կազմակերպիչ, ԵՊՀ շրջանավարտ Վիգեն Օնիկի Թոփուզյանը (1951 թ. ծնվ.): 1974 թ.-ից նա աշխատել է ՆՕԶ ինստիտուտում, իսկ 1992-1997 թթ. աշխատել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում որպես գլխավոր մասնագետ, ապա վարչության պետ՝ մասնակցելով նորաստեղծ մեր անկախ ՀՀ գիտական համակարգի ձևավորմանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վ. Թոփուզյանի գիտական հիմնական հետազոտությունները վերաբերում են բնական և չհագեցած ամինաթթուների ու պեպտիդների կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին, դրանց քիմիական և կենսաբանական հատկությունների ուսումնասիրություններին, որոնց ուղղությամբ 2004 թ. պաշտպանել է դոկտորական թեզ: Նա 2005 թ. վերականգնել և ղեկավարել է ՆՕԶԻ ներդրումների և արտադրական բաժինը, ապա 2006 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ ՆՕԶԻ տնօրեն: ՕԴԶԳՏԿ-ի մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոնը (ՄԿՈԻԿ) մեծ ճանաչում ունի ՀՀ-ում:

Մինչև 1950-ական թթ. սկիզբը ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում պրոֆ. Ա. Մնջոյանի (1904-1970 թթ.) կողմից մշակվել են եռազինների, երկհիմն թթուների ամիդների ու նիտրիդների սինթեզի եղանակներ (Մ. Դանդյան, Հ. Հարոյան, Լ. Գյուլբուրդյան): 1950-ական թթ. հետո գիտահետազոտական աշխատանքները Օրգանական քիմիայի ամբիոնում տարվեցին պրոֆ. Մամիկոն Դանդյանի (1907-1984 թթ.) ղեկավարությամբ: Նոր գիտահետազոտական աշխատանքները հիմնականում ծավալվեցին γ -լակտոնների քիմիայի ուղղությամբ (Ա. Դուրգարյան, Մ. Զալինյան, Ս. Առաքելյան, Գ. Շահնազարյան, Է. Մեսրոպյան):

Ավելի ուշ, սկսած 1970-ական թթ., Օրգանական քիմիայի ամբիոնում տարվել են նոր գիտահետազոտական աշխատանքներ պրոֆ. Աիդա Ավետիսյանի (1938-2009 թթ.) ղեկավարությամբ: Դրանք վերաբերում են չհագեցած լակտոնների՝ ֆուրանոնների և պիրանոնների սինթեզին ու հետազոտություններին, ինչը նշանակալի հարստացրեց ու զարգացրեց լակտոնների քիմիան, ամբիոնը դարձավ Խորհրդային Միությունում լակտոնների քիմիայի առաջատար կենտրոններից մեկը: Այդ ժամանակաշրջանում, նաև հետագայում, ամբիոնում կատարվեցին գիտական և կիրառական բնույթի շատ աշխատանքներ նշված և այլ ուղղություններով (Ա. Ավետիսյան, Լ. Գյուլբուրդյան, Ա. Դուրգարյան, Է. Մեսրոպյան, Վ. Հարությունյան, Գ. Մելիքյան, Տ. Դոչիկյան, Ն. Դուրգարյան, Գ. Թոքմաջյան և ուրիշներ):

Հետաքրքիր և գործնական բնույթի ծավալուն գիտահետազոտական աշխատանքներ կատարվեցին «Նաիրիտ» ԳԱՄ կազմում Երևանի պոլիմերային նյութերի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում (Պոլիմերների ՀԳՀԻ - ВНИИПолимер): Ացետիլենի և դրա ածանցյալների պոլիմերման գործընթացի հետազոտություններին զուգահեռ գիտահետազոտական աշխատանքներ են տարվել շատ թվով քլորի ատոմներ պարունակող մոնոմերների սինթեզի ուղղությամբ (Գ. Մկրյան, Է. Ոսկանյան): Պարզաբանվել են դիմերացման և վինիլացման գործընթացների մեխանիզմները (Հ. Թարխանյան): Սինթեզվել են Cl, N և այլ տեղակալիչներ պարունակող չհագեցած մոնոմերներ, մշակվել են արիլացված միացությունների ստացման պարզ եղանակներ, հետազոտվել են ալկիլման և համասեռ կատալիտիկ ռեակցիաներ, ինչպես նաև ոչ պրոտոնային, երկբևեռ

լուծիչների (կրաուն եթերների) ներգործությունը այդ ռեակցիաների վրա (Գ. Մարտիրոսյան, Ա. Մալխասյան): Մետաղակոմպլեքսային և միջֆազային կատալիզի եղանակների օգտագործմամբ իրականացվել են ացետիլենային և այլ չհագեցած ածխաջրածինների սինթեզը ջրային միջավայրում և վինիլացետիլենի ստացման եղանակը, որը ներդրվել է արտադրության մեջ (Գ. Չուխաջյան):

Քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության նյութերի համաձիթեքնական գիտահետազոտական ինստիտուտի (Մոսկվա) օրգանական սինթեզի երևանյան լաբորատորիայում 1986 թ.-ից աշխատանքներ են տարվել օրգանական ռեակտիվների տեսականու սինթեզի, շրջապատի անալիտիկ վերահսկողության և անհրաժեշտ հատկություններով նյութերի ստացման ուղղություններով (Ռ. Մաթևոսյան, Ն. Մոռյան, Գ. Շահնազարյան, Հ. Մատնիշյան, Ս. Գաբրիելյան և ուրիշներ):

Օրգանական քիմիայի ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքներ են տարվել (և տարվում են) նաև մյուս ուսումնական հաստատություններում: Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում սինթեզվել ու հետազոտվել են մետաղների բարձրջերմաստիճանային և թթվային կոռոզիան կանխող օրգանական արգելակիչներ (Կ. Թահմազյան, Գ. Թորոսյան): Երևանի բժշկական ինստիտուտում հետազոտվել է թթվային կատալիզի պայմաններում օլեֆինների հիդրոկարբօքսիլացման ռեակցիաների մեխանիզմը, մշակվել է ջրում լուծելի պորֆիրինային միացությունների սինթեզի դյուրին եղանակ, սինթեզվել են հակառուռոցքային և մանրէասպան հատկություն ունեցող միացություններ (Մ. Օրդյան):

Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում (համալսարանում) մշակվել է արոմատիկ կետոնների սինթեզի եղանակ (քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Բաբայան), լուրջ հետազոտություններ են իրականացվել չորրորդային ամոնիումային աղերի սինթեզի և հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ (պրոֆ. Ա. Բաբախանյան, քիմ. գիտ. թեկնածու Ս. Հովակիմյան): Այդտեղ վերջին տասնամյակներում մեծ ծավալի և բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքներ են տարվում ցիանուրիլային մետաղիոնային և այլ կոմպլեքս միացությունների, մոնոմերների սինթեզի և պոլիմերման, ինչպես նաև տարատեսակ սոսինձների ստաց-

ման ու հետազոտման ուղղություններով ԵՊՀ-ի սան, քիմ. գիտ. դոկտոր (1985թ.), պրոֆ. (1989 թ.) Մեծլում Լևոնի Երիցյանի ղեկավարությամբ: Պրոֆ. Մ. Երիցյանը ծնվել է Շամխորի շրջանի Բարսում հայկական գյուղում (05.05.1940 թ.): 1959 թ. ավարտել է դպրոցը, այնուհետև՝ Երևանի գյուղատնտեսական տեխնիկումը, ապա ծառայել Խորհրդային բանակում: 1967 թ. ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, իսկ 1971 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան և դարձել քիմ. գիտ. թեկնածու: Նա շատ ճանաչված, տաղանդավոր և բազմակողմանի զարգացած գիտնական է: Նա եվրոպական բնագիտական ակադեմիայի (2011 թ.), Միջազգային էկոլոգիական անվտանգության ակադեմիայի (2009 թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի (1998 թ.), Միջազգային բնության և հասարակության ակադեմիայի (1998 թ.), ՀՀ ինժեներական ակադեմիայի (2015 թ.) անդամ է: Մ. Երիցյանը 1971-1978 թթ. աշխատել է ՀՀ պոլիմերային սոսինձների պետական ինստիտուտում (Վանաձոր՝ ՊՍՊԻ), որպես լաբորատորիայի, ապա բաժնի վարիչ (1978-1982 թթ.), իսկ 1983-1987 թթ. աշխատել է Լենինգրադյան Օխտինսկի գիտաարտադրական միավորման Պլաստպոլիմերի լաբորատորիայի վարիչ: 1987 թ. ընտրվել է Արովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ (1987-2002 թթ.), ապա նույն ինստիտուտի Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետի ղեկան (1989-2002 թթ.), այնուհետև 2002-2011 թթ. աշխատել է այդ ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ 2011 թ. առաջօր քիմիայի ամբիոնի վարիչն է: Նրա կողմից հրատարակվել են մոտ 300 գիտական աշխատություններ: Պարգևատրվել է «Ամանիա Շիրակացի» մեդալով (2003 թ.) և ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով (2014 թ.): Պրոֆ. Մ. Լ. Երիցյանը որպես ԵՊՀ կադր կապի մեջ է համալսարանի գործընկերների հետ:

Հայ օրգանիկ քիմիկոսներից է աշխարհահռչակ գիտնական Իվան (Հովհաննես) Լյուդվիգի Կնունյանցը (1906 թ., Շուշի - 1990 թ. Մոսկվա), ով վերջին 100 տարվա խոշորագույն, միջազգային ամենաբարձր մակարդակի հայ քիմիկոսն է: Նա մեծ գիտատեխնիկական նվաճումների է հասել քիմիայի բնագավառում, դառնալով ֆտորօրգանական միացությունների քիմիայի հիմնադիրը: Ծնվել է պատմական Արցա-

խում (Շուշի) պրոֆեսիոնալ հեղափոխականների ընտանիքում, սակայն Հովհաննես Կնունյանցը ընտրել է այլ ուղի: Սովորել է Մոսկվայի Բաումանի անվան ինստիտուտում (1923-1928 թթ.) և ավարտելուց հետո աշխատել ԽՍՀՄ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտում՝ բուսական և կենդանական ծագման նյութերի սինթեզի ու հետազոտության լաբորատորիայում, զուգահեռաբար աշխատելով նաև Քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիայում (1930-1953 թթ.): 1954 թվականից նա տեղափոխվել է Տարրօրգանական միացությունների ինստիտուտ՝ որպես ֆտորօրգանական միացությունների լաբորատորիայի վարիչ: Քիմիական գիտությունների դոկտոր է դարձել 1939 թ., պրոֆեսոր՝ 1939 թ., ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ՝ 1946 թ., ակադեմիկոս՝ 1953 թ., ճարտարագետ-գեներալ-մայոր՝ 1949 թ., Սոցիալիստական աշխատանքի հերոս՝ 1966 թ., Լենինյան (1972 թ.) և Ստալինյան (1943 թ., 1948 թ., 1950 թ.) մրցանակների դափնեկիր: Ստացել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի, Աշխատանքային կարմիր դրոշի և Կարմիր աստղ շքանշաններ և մի շարք մեդալներ: Նրա գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են F, S, P պարունակող հետերոցիկլային միացությունների սինթեզին, դրանց քիմիական փոխարկումներին և կիրառություններին: Մշակել է պիրիդինի օդակ զանազան խմբեր ներմուծելու մոդելումակներ, հայտնագործել γ -ացետոպրոպիլսպիրտի ստացման եղանակ, որը կիրառվել է հականալարիային պատրաստուկների և վիտամին B₁-ի արտադրության համար: Ակադեմիկոս Հ. Լ. Կնունյանցին են պատկանում կապրոլակտամի գծային պոլիմերի (կապրոնի) ստացումը և նայլոնի արտադրության առանձին նյութի՝ ադիպոնիտրիլի ստացման եղանակի մշակումը (1958 թ.): Նրա ղեկավարությամբ սինթեզվել են կարևոր դեղամիջոցներ՝ Էքլորբուրիլ, Պապենցիլ, Լոֆենալ և Հեքսաֆոսֆամիդ նյութերը ու օգտագործվել քաղցկեղի որոշ տեսակների բուժման համար: Հ.Լ. Կնունյանցը ֆտորօրգանական միացությունների սինթեզի բնագավառում հիմնադրել է Մեծ դպրոց, նրա կողմից հայտնագործած սինթեզի եղանակները և սինթեզված նյութերն ունեն թե՛ տեսական, թե՛ կիրառական նշանակություններ: Ակադեմիկոս Հ.Լ. Կնունյանցը շուրջ 200 գիտական հայտնագործությունների և գյուտերի հեղինակ է, որոնք իրենց արժեքը չեն կորցրել նաև ներկայումս: Նա եղել է իր կողմից հիմնադրած՝ “Журнал

Всесоюзного химического общества им. Д.И. Менделеева” հանդեսի (1955-1956 թթ.), “Краткая химическая энциклопедия”-ի (հատոր 1-5, 1961-1967 թթ.) գլխավոր խմբագիրը, ինչպես և “Journal of Fluorine chemistry”-ի (1972 թ.), “Знание сила”-ի և “Биологический журнал”-ի, “Большая советская энциклопедия”-ի (1988-1990 թթ.) խմբագրական խորհուրդների անդամ: Եղել է մաս պետական մրցանակաբաշխությունների, փորձագնման հանձնաժողովների, հայկական և արտերկրների գիտական ընկերությունների անդամ: Նրա մասին “Пути к неземное” հանդեսում գիրք են տպագրել՝ Несмеянов А.Н, Кабачник М.Н. Академик Кнуныц, сб.4, М., 1964.

Ակադեմիկոս Հ. Կնունյանը մշտապես կապի մեջ է եղել ՀՀ քիմիկոսների և նշանավոր պետական գործիչների հետ, նպաստել իր խորհուրդներով ու աջակցությամբ: Եղել է քիմիայի համաշխարհային դեմքերից մեկը և այդպիսին էլ մնում է, մշտապես հարուցելով մեծ հիացմունք և հպարտություն:

Նուրբ օրգանական և դեղագիտական քիմիա: Կենսաբանորեն ակտիվ նյութերի և դեղատեսակների առաջին սինթեզները ՀՀ-ում իրականացվել են 1930-ական, և հատկապես 1940-ական թվականներին, ակադեմիկոս Ա. Մնջոյանի կողմից Երևանի բժշկական ինստիտուտում, որտեղ ստացում և արտադրության մեջ էին ներդնում ռազմաճակատին ու քիկունքին անհրաժեշտ դեղանյութեր: Այդ աշխատանքները հետագայում ծավալվեցին Ա.Մնջոյանի ղեկավարությամբ ստեղծված Բժշկական ինստիտուտի քիմիադեղագործական լաբորատորիաներում, իսկ 1957 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ համակարգում Ա.Մնջոյանի ջանքերով ստեղծված Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում (ՆՕԲԻ, 1971 թ. Ա. Մնջոյանի անվան): Այնտեղ կատարվող գիտական հետազոտությունները նպատակաուղղված էին և՛ ստացվող քիմիական միացությունների կառուցվածքի, և՛ դրանց կենսաբանական ակտիվության կապն արտահայտող օրինաչափությունների բացահայտմանը և անհրաժեշտ հատկություններով դեղամիջոցների ստացմանը, որպես հետազոտության օբյեկտներ ընտրելով կենսաբանորեն ակտիվ բնական նյութերը և դրանց մոմանակները: Ցույց է տրվել, որ երկհիմն կարբոնաթթուների ածանցյալները կենսաբանական ակտիվություն ունեցող նյութեր են: Պարզվել է, որ սաթաթթվի երկմեթիլամինատերիլէսթերն ունի ուժեղ կուրարենաման հատկություն, իսկ

խցանաթթվի երկմեթիլամինատեթիլէսթերի երկյոդմեթիլատն էլ ունի շնչառական կենտրոնը գրգռող հատկություն: Այդ նյութերից առաջինը՝ դիէթիլինը, օգտագործվեց բժշկության մեջ կրծքավանդակի վիրահատությունների ժամանակ որպես մկանային թուլացնող միջոց (միոռելաքսանտ), երկրորդը՝ սուրբէտոլինը, որպես շնչառությունը խթանող նյութ: Տեղակալված քացախաթթուների և ֆենոլաթթուների ամինատեթերների խոլինաքայքայիչ և հանգուցամեկուսիչ հատկությունների հետազոտությունների հիման վրա ցույց է տրվել, որ ամինասպիրտային բաղադրիչի կառուցվածքի փոփոխությունը հանգեցնում է դրանց կենսաբանական ակտիվության ի հայտ գալուն և մեծացնում ազդեցության տևողությունը: Այդ հետազոտություններով սինթեզվել են գանգլերոն և քվատերոն դեղատեսակները, որոնք օգտագործվել են կրծքային հեղձուկի և խոցային հիվանդությունների բուժման համար (պրոֆ. Ա. Մնջոյան): Իսկ ֆենիլքացախաթթվային ամինատեթերների հիման վրա սինթեզվել են ինդոլի շարքի ամինամիացություններ, մորֆինի ածանցյալներ, նոր ալկալոիդներ և այլ միացություններ, որպես հանգստացնող և հոգեբուժական ինդոլային տեսակի միջոցներ (ՀՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Թադևոսյան): Ստեղծվել են սիրտանոթային, ստամոքսաաղիքային, կենտրոնական նյարդային համակարգերի հիվանդությունների բուժման միջոցներ՝ Արփենալ, Մեսֆենալ, Ֆոքրոմեզան անուններով: Ստացվել է նաև հակատուբերկուլյոզային դեղամիջոց՝ Նալեցինը, որը օգտագործվել է հատկապես կոկորդի տուբերկուլյոզը բուժելու համար (ակադեմիկոս Ա. Մնջոյան):

Այդ ինստիտուտում մեծ է եղել ակադեմիկոս Ս. Վարդանյանի ղեկը բուժական միջոցների սինթեզի և հետազոտության ուղղությամբ՝ առանձնապես Ա. Մնջոյանի վախճանից հետո նրա տնօրեն եղած ժամանակաշրջանում: Նրա ղեկավարությամբ նոր թափ ստացան արիլալկիլամինների, իզոխինոլինի ածանցյալների, ինդոլի, պիրիմիդինի, S, N, O պարունակող հետերոցիկլիկ միացությունների, ամինաթթուների, պեպտիդների, կիսասինթետիկ հակաբիոտիկների, բուսական ծագում ունեցող միացությունների սինթեզը և հետազոտությունները: Այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ստեղծվեցին կենտրոնական նյարդային համակարգի վրա ընտրողաբար ներգործող դեղամիջոցներ: Էպիլեպսիայի բուժման համար՝ Պոֆեմիդը, նյարդաբորբերի, հյուսկաբորբերի, ռադիկուլիտների

րի և նյարդային այլ հիվանդությունների բուժման համար՝ Թիոդինը, տասներկուամտնյա աղիքի խոցի բուժման համար՝ Դիմեկումարոնը: ՆՕԲ ինստիտուտում ստեղծվել են նաև հակաուռուցքային, հակա-քիոտիկային, հակամանրէային դեղատեսակներ: Հայտնաբերվել են նախկինում անհայտ կոնդենսացված հետերոցիկլային միացություններ, որոնք բարձրարդյունավետ հանգստացնող և հակաջղայնային դեղամիջոցներ են (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Նորավյան): Նուրբ օրգանական քիմիայի բնագավառում արդյունավետ աշխատանքներ են տարվել նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Դովլաթյանի ղեկավարությամբ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում: Այնտեղ իրականացվել են օրգանական պեստիցիդային միացությունների սինթեզը և հետազոտել դրանց ակտիվությունը բացահայտող օրինաչափությունները՝ որպես գյուղատնտեսական բույսերի պաշտպանության մոլախոտասպան միջոցներ, որոնցից կարևորներն են եռազինի և թիազոլիդինի ածանցյալները՝ մետազինը և ֆենագոնը:

Վերջին տասնամյակներում նուրբ օրգանական և դեղագիտական քիմիայի ուղղվածությամբ մեծ ծավալի գիտահետազոտական և կիրառական բնույթի աշխատանքներ են տարվում Երևանի կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում և ԵՊՀ-ում պրոֆ. Ա. Սաղյանի ղեկավարությամբ:

Ֆիզիկական քիմիա: Քիմիայի այս ուղղության ուսումնագիտական աշխատանքները սկսվել են ԵՊՀ-ի կազմավորումից հետո, քիմիական գիտության մեծ նվիրյալ պրոֆ. Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանի (1979-1964թթ.) կողմից, ով առաջինը եղել է իր կողմից նոր կազմակերպած Ֆիզիկական, Անօրգանական և Անալիտիկ քիմիաների ամբիոնների վարիչը 1923-1938 թթ.: Նա լիարժեք տիրապետել է այդ երեք մասնագիտություններին, թե՛ ուսումնական, թե՛ գիտական ուղղություններով: Պրոֆ. Լ. Ռոտինյանը իր լավագույն աշակերտներից Հովհաննես Հակոբի Չալքիկյանի հետ միասին 1927 թ. ԵՊՀ-ում վերակազմավորեցին ավելի բարձր մակարդակի առանձին գործող Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոն՝ Լ. Ռոտինյանի ղեկավարությամբ (1927-1938 թթ.), այնուհետև այդ ամբիոնի վարիչը դարձավ Հ. Չալքիկյանը (1939-1972 թթ.):

Լ. Ռոտինյանը եղել է ականավոր գիտնական, քիմիայի խոշոր գիտակ և Ս. Ղամբարյանի հետ միասին զարգացրել ու լուծել են քի-

միական (բուհական, գիտական և արդյունաբերական) շատ կարևոր խնդիրներ, ինչպես մեր համալսարանում ու դրա բազայի վրա ստեղծված բուհերում, այնպես և իրենց կողմից ստեղծված քիմիական ամբիոններում, լաբորատորիաներում և արտադրական հիմնարկ-ձեռնարկություններում: Լ. Ռոտինյանի առաջին հետազոտությունները Ֆիզիկական քիմիայի ամբիոնում վերաբերել են քիմիական թերմոդինամիկային, որի ուղղությամբ այն ժամանակներում ՀՀ-ում մեծ նվաճումների հասավ նաև Լ. Ռոտինյանի և Ս. Ղամբարյանի աշակերտ Ալեքսանդր Հակոբյանը (1904-1987 թթ.), ում գիտահետազոտական աշխատանքները նվիրված էին ագետիլենի քիմիային: Նա աշխատել է Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում, իսկ 1976 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Պրոֆ. Ս. Ղամբարյանի հետազոտությունները (դեռևս Գերմանիայում եղած ժամանակներից) օրգանական լուծիչներում օրգանական նյութերի, հատկապես, ամֆինամֆագությունների օքսիդացումը գերօքսիդներով, կանխորոշեցին ֆիզիկական օրգանական քիմիայի զարգացումը ՀՀ-ում և մասնավորապես ԵՊՀ-ում: Բենզոլի պերօքսիդի ու ամինների փոխազդեցության կինետիկայի և մեխանիզմի բացահայտումը պրոֆ. Ս. Ղամբարյանի սիրելի աշակերտ Հ. Չալքիկյանի կողմից 1939 թ. դարձան համալսարանի Ֆիզիկական քիմիայի ամբիոնի գիտական հետազոտությունների ելակետը: Գիտական մնանատեսակ աշխատանքները շարունակվեցին երկար տարիներ նրա աշակերտների կողմից՝ մինչև ներկա ժամանակները: Այդ աշխատանքներով դրվեց կինետիկական հետազոտությունների սկիզբը ՀՀ-ում, որը դարձավ ֆիզիկական քիմիայի հիմնական գիտական ուղղությունը, որի նպատակն էր բացահայտել մոլեկուլի ռեակցատնակության և կինետիկական մեծությունների միջև եղած կապը, ինչպես նաև ռեակցիաների մեխանիզմը: Այդ ուղղությամբ կատարվեցին բազմաթիվ աշխատանքներ: Բայց հարկ է նշել, որ ֆիզքիմիայի ամբիոնում պրոֆ. Հ. Չալքիկյանի ղեկավարությամբ կատարվել են նաև ագետիլենի քիմիային նվիրված կարևոր գիտական և կիրառական բնույթի աշխատանքներ Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի ստեղծումից հետո, որտեղ երկար տարիներ համատեղությամբ աշխատել է Հ. Չալքիկյանը, ուսումնասիրելով ագետիլենի դիմերման, վինիլացետիլենի հիդրոքլորման կատալիտիկ ռեակցիաների մեխանիզմները: Կարևոր էր կուպրուկատալիզի բնագավառի հետազոտու-

քյունները, որոնք ամփոփվեցին Հ. Հ. Չալքիկյանի «Կուպրուկատալիզ» (1963 թ.) մենագրությունում, որը 1966 թ.-ին թարգմանվել է մաս ԱՄՆ-ում:

Պրոֆ. Հ. Չալքիկյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1959 թ. ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնին կից ստեղծվեց համամիութենական նշանակության պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիա: Պոլիմերման պրոցեսներում հիմնական հարուցիչներ օգտագործվեցին ամին-գերօքսիդ համակարգերը: Բացահայտվեցին այդ համակարգերում ռեակցիաների արագության և մեխանիզմի կախվածությունը բաղադրիչների կառուցվածքից և ռեակցման պայմաններից: Ցույց է տրվել, որ ռեակցիայի առաջին փուլում գոյանում է ամին-գերօքսիդ կոմպլեքսը, այնուհետև տեղի է ունենում ամինից մեկ (ռադիկալային մեխանիզմ) կամ երկու (ոչ ռադիկալային մեխանիզմ) էլեկտրոնի անցում գերօքսիդին, որտեղ էական դեր է կատարում մաս ռեակցման միջավայրը կամ լուծիչը (պրոֆ. Ն. Բեյլերյան): Հետագա հետազոտություններում, կատարելով ամին+հիդրոգերօքսիդ և ամին+հիդրոպերօքսիդ+M(II) համակարգերի կինետիկական ուսումնասիրությունները, առաջին անգամ պարզվեց, որ ամինասպիրտների և ամին-մետաղիոն կոմպլեքսների ազդեցությամբ ջրային միջավայրում տեղի է ունենում հիդրոգերօքսիդների կատալիտիկ քայքայում հիմնականում ոչ ռադիկալային մեխանիզմով (Ս. Գրիգորյան): Ստացված արդյունքները հնարավոր դարձրին ամինասպիրտ+մետաղիոն կատալիտիկ համակարգերը օգտագործել որպես քլորոպրենային լատեքսների էժան և ոչ թունավոր ջերմա- և լուսակայունացուցիչներ (Ս. Գրիգորյան, Ն. Բեյլերյան, Ա. Գևորգյան, Գ. Մարտիրոսյան): Այդ տարիներին ֆիզիկական քիմիայի ամբիոնում ուսումնասիրվել են մաս ամինասպիրտների ներկայությամբ կալիումի գերսուլֆատի և բենզոիլ գերօքսիդի քայքայման ռեակցիաները, որոնք ընթանում են մաս շղթայական մեխանիզմով:

ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնում հետազոտվել են մակերևութային ակտիվ նյութերի (ՄԱՆ) ջրային լուծույթներում (Էմուլսիաներում) օքսիդացման և պոլիմերացման ռեակցիաների կինետիկայի ու մեխանիզմի հիմնախնդիրները (Լ. Մելքոնյան, Զ. Գրիգորյան, Յ. Նալբանդյան, Ռ. Հարությունյան):

Ֆիզիկական քիմիայի ամբիոնում կատարվել են մաս լազերային

ճառագայթումով մոնոմերների և լցանյութերի մակերևույթի ակտիվացման ուղղությամբ ֆիզիկաքիմիական նոր ուսումնասիրություններ (Ռ. Չաթիկյան):

ԵՊՀ քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի, տեսական քիմիայի, Կատալիզի և տեխնիկական քիմիայի նշված հերթական անվանումներով ամբիոններում, սկսած 1964 թ.-ից ամբիոնի վարիչ պրոֆ. Կ. Խաչատուրյանի (1964-1984 թթ.), այնուհետև՝ Կատալիզի ու տեխնիկական քիմիայի ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Մուշեղյանի (1987-1993 թթ.) ղեկավարությամբ կատարվել են շատ հետաքրքիր գիտահետազոտական աշխատանքներ: Հետազոտվել են մի շարք բազմաբաղադրիչ համակարգերի տարասեռ կատալիզի երևույթներ, հայտնաբերվել են պինդ նյութերի մակարևույթի վրա ագետիլենային միացությունների փոխարկման նոր օրինաչափություններ, մշակվել են կիրառական հարցեր: Ամբիոնում տեսական բնույթի գիտական աշխատանքներ են կատարել պրոֆ. Կ. Խաչատուրյանը և պրոֆ. Հ. Դավթյանը: Պրոֆ. Կ. Խաչատուրյանի գիտական աշխատանքները վերաբերում են քիմիական թերմոդինամիկային և քվանտային քիմիային, ինչպես նաև հրթիռային շարժիչներում վառելանյութի այրման ու գազային պրոցեսների տեսության հարցերին: Առանձնապես պետք է նշել ամբիոնի պրոֆեսոր Հ. Դավթյանի գիտական գործունեությունը, ով ուսումնասիրություններ է կատարել քվանտային քիմիայի, թերմոդինամիկայի, տեսական ֆիզիկայի, կինետիկայի և կատալիզի ուղղություններով: Նա մշակել է խմբերի տեսությունը քվանտային քիմիայում կիրառելու եղանակը: Այնուհետև այդ ամբիոնի վարիչ է դարձել դոց. Գրիգոր Գրիգորյանը (1994-2002 թթ.), ում ամբիոնի վարիչության ժամանակ գիտահետազոտական աշխատանքները հիմնականում տարվել են մետաղական և մետաղօքսիդային կոմպլեքսային կատալիզատորների սիլիկագելային կլանիչների սինթեզի ու հատկությունների ուսումնասիրությունների, ինչպես նաև քիմիական տեղափոխման (տրանսպորտային) ռեակցիաների կինետիկայի ուսումնասիրման ուղղություններով (Օ. Քամալյան, Գ. Գրիգորյան և ուրիշներ):

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում (1989-2015 թթ.) պրոֆ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ տարվել են բազմաբնույթ հետազոտություններ (Բազային լաբորատորիայի բյուջետային, նպատակային, միջազգային գիտական շրջանակներում), նվիրված կոմպլեքսային բնույթի միացությունների սինթեզին համասեռ և տարասեռ

համակարգերում:

Դեռևս 1940-ական թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում կատարվել են էլեկտրաքիմիական պրոցեսների և ռեակցիաների ուսումնասիրություններ: Տարվել են խիտ լուծույթների էլեկտրահաղորդականության չափման և Ֆտորաջրածնական լուծույթներում էլեկտրաքիմիական սինթեզին և հետազոտությանը նվիրված գիտահետազոտական աշխատանքներ՝ պրոֆ. Լ. Անդրոպով (1913-1980 թթ.) և ուրիշներ: 1950-ական թվականներին Պոլիտեխնիկական ինստիտուտում Ա. Ալշուջյանը (1906-1974 թթ.) իր գործընկերների հետ զարգացրել է հիմնականում տարասեռ կատալիզի գծով գիտահետազոտական աշխատանքների ֆիզիկաքիմիական հետազոտությունները:

Երևանի «Նաիրիտ» ԳԱՄ-ում գործող «Պոլիմերների ՀԳՀԻ»-ում մակերևութային ակտիվ նյութերի (ՄԱՆ) միցելային լուծույթների և լիոտրոպ հեղուկ բյուրեղների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունների հիման վրա ստեղծվել է միցելային համակարգերի կառուցվածքը բնութագրող տեսություն (պրոֆ. Լ. Մելքոնյան, ՀՀ ԳԱ ակադ. Ա. Շահինյան): Այդ համակարգերը օգտագործվեցին միցելային-էմուլսիոն պոլիմերման պրոցեսներում սինթեզվող պոլիմերների հատկությունները կարգավորելու նպատակով (պրոֆ. Լ. Մելքոնյան և այլք):

Պրոֆ. Ռ. Վարդանյանի ղեկավարությամբ գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել Գորիսի ֆիզիկատեխնիկական կենտրոնում և Գորիսի պետական համալսարանում: Պրոֆ. Վարդանյանը քիմիական կինետիկայի գծով լավագույն և ճանաչված մասնագետներից է, ով աշխատելով Գորիսում երկար ժամանակ (սկսած 1971 թ.) հաջողությամբ զբաղվում է հիդրոպերօքսիդների քայքայման կինետիկայով և ռեակցիաների մեխանիզմների բացահայտմամբ տարատեսակ մոդելային և բնական (բուսական դեղատեսակային) համակարգերի ուսումնասիրություններով:

Պրոֆ. Ռ. Վարդանյանը ծնվել է 14.04.1941 թ. Սյունիքի մարզի Տաթև գյուղում: 1962 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և 4-րդ կուրսից ուսումը շարունակել Մոսկվայի պետհամալսարանում: 1968 թ. ընդունվել է ասպիրանտուրա ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգալովկայի մասնաճյուղում, 1971 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և շարունակել աշխատել այնտեղ: Նույն թվին հրավիր-

վել է Վանաձորի պողիմերային սոսինձների պետական ինստիտուտ որպես լաբորատորիայի վարիչ, 1975 թ.-ից եղել է Գորիսի ֆիզիկատեխնիկական կենտրոնի լաբորատորիայի վարիչ, իսկ 1984-1990 թթ. ղեկավարել է նշված կենտրոնը: 1980-1996 թթ. աշխատել է որպես ՀՀ ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղի «Ընդհանուր տեխնիկական առարկաներ» ամբիոնի վարիչ: Դոկտորական քեզը պաշտպանել է 1986 թ.-ին Չերնոգալովկայի գիտական խորհրդում: 1996-2012 թթ. աշխատել է Գորիսի համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, 2012 թ.-ից «Կենսաբանություն և քիմիա» ամբիոնի պրոֆեսոր է: Հեղինակ է ավելի քան 180 գիտական աշխատությունների, նրա ղեկավարությամբ պաշտպանվել են յոթ քեկնաժուական և մեկ դոկտորական ատենախոսություններ:

Քիմիական ֆիզիկա: Քիմիական ֆիզիկան որպես քիմիական գիտության ինքնուրույն ճյուղի ՀՀ-ում հիմնադրել և զարգացրել է (1959-1989 թթ.) նոբելյան մրցանակակիր Ն. Մեմյոնովի աշակերտ, հայ տաղանդավոր քիմիակոս, ակադեմիկոս (1963 թ.) Արամ Բագրատի Նալբանդյանը (1908-1989 թթ.): Նա ՀՀ ԳԱ համակարգում 1959 թ.-ին ստեղծեց Քիմիական ֆիզիկայի լաբորատորիա, ապա դրա հենքի վրա 1975 թ.-ին Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ (ՔՖԻ), որը ղեկավարեց 1975-1989 թթ. (ինստիտուտը 1990 թվից կրում է ակադեմիկոս Ա. Նալբանդյանի անունը): Ա. Նալբանդյանը ծնվել է 1908 թ. Վանաձորում, 1930 թ. ավարտել է Երևանի համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը և 1931 թ. աշխատանքի անցել Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում Ն. Մեմյոնովի ղեկավարությամբ, իսկ 1957 թ. եղել է նույն ինստիտուտի լաբորատորիայի վարիչ: 1959 թ. մեր հանրապետությունում ստեղծել է Քիմիական ֆիզիկայի գիտահետազոտական լաբորատորիա և ղեկավարել այն համատեղությամբ, այնուհետև 1965 թ. Մոսկվայից մշտապես տեղափոխվել է Երևան: Նա 1967 թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը, 1979 թ. Նյու-Յորքի ԳԱ իսկական անդամ էր: Երևան տեղափոխվելուց հետո ակադեմիկոս Ա. Նալբանդյանը ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետի ուսումնագիտական գործունեությանը աշխատելով մաս որպես պրոֆեսոր ֆիզիկական քիմիայի և Տեսական քիմիայի ամբիոններում: Ակադեմիկոս Ա. Նալբանդյանի կողմից կատարված գիտական աշխատանքները վերաբերում են գազաֆազ ճյուղավորված

և այլասերված ճյուղավորված շղթայական ռեակցիաների կինետիկայի, մեխանիզմի և միջանկյալ ու վերջնանյութերի ուսումնասիրություններին: Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում ջրածնի օքսիդացման և այրման ռեակցիաների էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի եղանակով հետազոտությունների մոդելավորմամբ զարգացվել և մշակվել են (պրոֆ. Ա. Հ. Մանթաշյանի մասնակցությամբ) ռեակցիաների միջանկյալ փուլի մասնիկների ($\text{HO}\cdot$, $\text{HO}_2\cdot$ և այլն) ու վերջնանյութերի (մրջնաթթու, գերօքսիդներ և այլն) առաջացման և ստացման եղանակներ, ինչպես նաև ռադիկալների սառեցման կինետիկական եղանակ:

Ակադեմիկոսներ Ա. Նալբանդյանը և Ա. Մանթաշյանը 1965-ական թվականներին մասնակցել են ԵՊՀ ֆիզիկական քիմիայի, ապա տեսական քիմիայի ամբիոնների ուսումնագիտական աշխատանքներին, լինելով նաև ֆակուլտետի գիտական և մասնագիտական խորհրդների անդամներ: ՔՖ ինստիտուտի աշխատանքները ակադ. Ա. Նալբանդյանից հետո 1990 թ.-ից ղեկավարել է քիմ. գիտ. դոկտոր (1975 թ.), պրոֆեսոր (1976 թ.) Ադուֆ Հայրապետի Մանթաշյանը (1932 թ. ծնվ.) մինչև 2014 թ.: Հայ տաղանդավոր քիմիկոս Ա. Մանթաշյանը ավարտել է Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտը (1956թ.) և աշխատանքի անցել այնտեղ: 1958-1961 թթ. եղել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ, 1962 թ. ստացել է քիմ. գիտ. թեկնածուի աստիճան և վերադարձել Երևան, աշխատել ՔՖ լաբորատորիայում որպես գիտքարտուղար (1962-1973 թթ.), ապա ՔՖ ինստիտուտի փոխտնօրեն (1974-1977 թթ.), իսկ 1988-2014 թթ.՝ տնօրեն, եղել է Պոլիտեխնիկական ինստիտուտի ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1977-1993 թթ.): Երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ քիմիայի պրոբլեմային խորհրդի նախագահ: Նրա գիտական աշխատանքները հիմնականում նվիրված են ածխաջրածինների և մետաղ-սուլֆիդային միացությունների օքսիդացման մեխանիզմների բացահայտմանը: 1976 թ. արժանացել է Պետական մրցանակի, հետագայում տարբեր պետական պարգևների: Ներկայումս պրոֆեսոր Ա. Հ. Մանթաշյանը Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ է:

Գիտական հետազոտությունները Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, հիմնականում տարվել են երեք ուղղություններով՝ գազաֆազ օքսիդացման բարդ ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի

հետազոտություններ, ինքնատարածվող բարձրաչեքմաստիճանային անօրգանական սինթեզ, քիմիական տեղափոխման (տրանսպորտային) ռեակցիաների ֆիզիկաքիմիական և կինետիկական ուսումնասիրություններ:

Դրանցից առաջինի նպատակն էր հետազոտել բարդ գազաֆազ օքսիդացման (ջրածնի, ածխաջրածինների և այլն) ռեակցիաների կինետիկան և մեխանիզմը, որոնք բերեցին շրթայական ռեակցիաների տեսության զարգացմանը և ժողտնտեսության համար կարևոր նյութերի (սպիրտների, գերօքսիդների, էպօքսիդների, օրգանական թթուների և այլ միացությունների) ստացման գիտական հիմունքների մշակմանը: Ուսումնասիրվող այդ գործընթացներում կայուն միացություններից բացի առաջին անգամ հայտնաբերվեցին ռեակցիաների ընթացքները պայմանավորող մասնիկներ՝ ակտիվ կենտրոններ (բազմատոմ ռադիկալներ, գերօքսիդային ռադիկալներ), հետազոտվեցին դրանց առաջացման, կուտակման և ծախսման օրինաչափությունները, ռեակցիաների վերջնանյութերը (Ա. Նալբանդյան, Ի. Վարդանյան, Ա. Մանթաշյան, Լ. Թավադյան, Թ. Դարիբյան և ուրիշներ): Այդ հետազոտությունների արդյունքները ամփոփվել են՝ Ա. Նալբանդյանի և Ա. Մանթաշյանի «Տարրական պրոցեսները գազաֆազային դանդաղ ռեակցիաներում» (1975 թ.), Ա. Նալբանդյանի և Ի. Վարդանյանի «Օրգանական միացությունների գազաֆազային օքսիդացման պրոբլեմի ժամանակակից վիճակը» (1986 թ.) մենագրություններում: Ակադեմիկոս Ի. Ա. Վարդանյանը ժամավճարային կարգով աշխատել է մաս ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: Ինստիտուտում կատարվել են մաս ածխաջրածինների հեղուկաֆազ օքսիդացման հետազոտություններ (պրոֆ. Լ. Թավադյան): Լ. Թավադյանը ծնվել է 1951 թ. Երևանում, ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1973 թ.), եղել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ (1973-1976 թթ.), պաշտպանել թեկնածուական թեզ և վերադարձել Երևան՝ ՔՖ ինստիտուտ, աշխատել որպես Հեղուկաֆազ օքսիդացման և ազատ ռադիկալային ռեակցիաների լաբորատորիայի վարիչ, 1985 թ. դարձել է ինստիտուտի փոխտնօրեն: Քիմ. գիտ. դոկտոր (1988 թ.), պրոֆեսոր (1989 թ.) Լ. Թավադյանը 1992 թ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոնում, որպես պրոֆեսոր: Նա ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է (2014 թ.), եղել է ՔՖ ինստիտուտի տնօրեն (2012-2018 թթ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար քիմիայի

գծով (2016 թ.-ից): Ակադեմիկոս Լ. Թավադյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են հեղուկ լուծույթներում ընթացող ազատ ռադիկալային ռեակցիաներին, օրգանական միացությունների հեղուկաֆազ օքսիդացման ռեակցիաների կատալիզին և արգելակմանը, քիմիական գործընթացների մաթեմատիկական մոդելավորմանը: Համահեղինակ է բազմակենտրոն շրջայական քիմիական ռեակցիաների ընտրողական արգելակման երևույթի հայտնագործմանը (ԽՍՀՄ հայտնագործությունների պետական գրանցամատյան №338, 1987 թ.): Համահեղինակ է „Анализ кинетических моделей химических реакционных систем. Ценностный подход”, Е. 2005 г., մենագրությանը:

Երևանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում կատարվող երկրորդ ուղղության գիտական հետազոտությունն ինքնատարածվող բարձրջերմաստիճանային սինթեզն է (ԻԲՄ), որի առաջին հեղինակը Խորհրդային Միությունում եղել է հայազգի ակադեմիկոս Ա. Մերժանովը: Այն վերաբերում է պինդ ֆազում ընթացող բարձրջերմաստիճանային այրման ռեակցիաների ուսումնասիրություններին և նպատակն է ԻԲՄ եղանակով մշակել դժվարահալ արժեքավոր անօրգանական միացությունների և նյութերի ստացման գիտական հիմունքները: Այդ ուղղությամբ ՀՀ-ում զբաղվում է Ա. Մերժանովի աշակերտներից ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2011 թ.), պրոֆ. Սուրեն Խառատյանը (1948 թ. ծնվ.), աշխատանքները ղեկավարելով Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, իսկ 1995 թ.-ից, զուգահեռաբար ԵՊՀ-ում՝ զարգացնելով գիտահետազոտական այդ ուղղությունը ժամանակակից բարձր մակարդակով: Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում տարվող երրորդ գիտական ուղղությունը՝ քիմիական տեղափոխման (տրանսպորտային) գործընթացների ուսումնասիրություններն են, որոնք կատարվել են հիմնականում անօրգանական պինդ բյուրեղային բնույթի մետաղօքսիդների և աղերի փոխարկումների ուղղությամբ՝ միջին և բարձր ջերմաստիճանային տիրույթներում գազ-պինդ ֆազ համակարգերում, որպես խթանիչներ օգտագործելով ջրածին և օրգանական պերօքսիդներ ու այլ նյութեր (Ա.Բ. Նալբանդյան, Գ. Լ. Գրիգորյան, Լ. Ա. Վարտիկյան, Է.Գ. Սարգսյան, Ա.Ն. Աբրահամյան): Անօրգանական նյութերի տրանսպորտային փոխարկման պրոցեսներում և ռեակցիաներում առաջին անգամ օգտագործվել են հիդրոպերօքսիդները որպես ակտիվ խթանիչներ (պրոֆ. Գ. Գրիգորյան, դոց.

Գ. Գրիգորյան):

Քիմիական ֆիզիկայի և ֆիզիկական քիմիայի բնագավառում նշանակալի գիտական աշխատանքներ է կատարել և շարունակում է կատարել Վիլեն Վաղարշակի Ազատյանը, ով ծնվել է 1931 թ. Երևանում նշանավոր քիմիկոս Վաղարշակ Դավթի Ազատյանի ընտանիքում: Երևանում դպրոցն ավարտելուց հետո ընդունվել և ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը (1949-1954 թթ.) և աշխատանքի անցել ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: Տաղանդավոր երիտասարդը գիտահետազոտական աշխատանքային գործունեության ընթացքում հասել է մեծ հաջողությունների և դարձել միջազգային ճանաչված գիտնական: Քիմ. գիտ. դոկտոր է (1978 թ.), պրոֆեսոր (1985 թ.), Ռուսաստանի ԳԱ թղթակից անդամ (2000 թ.), ՌԳԱ Կառուցվածքային մակրոկիմետիկայի ինստիտուտի (Մոսկվա) Տարասեռ և շոթայական ռեակցիաների լաբորատորիայի վարիչ (1982 թ.): Պրոֆ. Վ. Ազատյանի գիտական աշխատանքները վերաբերում են գազերի այրման գործընթացում պայթյունի և ճայթունի շարժընթացների ֆիզիկաքիմիական ուսումնասիրություններին: Հայտնաբերել է այրման ռեակցիաներում շոթաների տարասեռ շարունակման և ճյուղավորման երևույթը, գազաֆազ ռադիկալաշոթայական ռեակցիաների ու մակերևույթի վիճակի փոխադարձ կապը, առաջարկել է այդ ռեակցիաների տեսությունը: Նա Հիմնարար և կիրառական քիմիայի միջազգային միության անդամ է, մաս Այրման միջազգային ինստիտուտի և ՌԳԱ նախագահության այրման ու պայթյունի գիտական խորհրդի բյուրոյի անդամ: Հեղինակ է բազում հոդվածների, պատենտների և մենագրությունների: ՀՀ ԳԱԱ անդամ Վ. Ազատյանի հայրը՝ Վաղարշակ Դավթի Ազատյանը (1904 թ. Թիֆլիս-1984 թ. Երևան), մույնպես նշանավոր քիմիկոս է եղել: Նա ավարտել է Ներսիսյան դպրոցը, ապա Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը (1928 թ.), մաս բնագիտական ֆակուլտետի կենսաբանության (1930 թ.) և քիմիայի (1931 թ.) բաժինները: Աշխատել է համալսարանում (1928-1934 թթ.) որպես դասախոս, պրոռեկտոր: Եղել է Արմֆանի (1943 թ.-ից ՀՀ ԳԱ) Քիմիայի ինստիտուտի տնօրեն (1939-1945 թթ.), իսկ 1965 թ.-ից Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում որպես ավագ գիտաշխատող: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են ագետիլենային միացությունների սինթեզին, կատալիտիկ ռեակցիաներին, տարրօրգա-

նական միացությունների, ցիկլոկտատետրանի ուսումնասիրություններին: Զբաղվել է նաև հայերեն քիմիական տերմինների մշակմամբ:

Քիմիական ֆիզիկայի, ֆիզիկական քիմիայի և պոլիմերների քիմիայի խոշորագույն մասնագետ է աշխարհահռչակ գիտնական Նիկոլայ Սերգեյի Ենիկոլոպյանը (1924 թ. Ստեփանակերտ-1993 թ. Հայդելբերգ՝ Գերմանիա, հուղարկավորված է Մոսկվայում): Ն. Ենիկոլոպյանը սովորել է Ստեփանակերտի միջնակարգ դպրոցում, ընդունվել և 3 տարում ավարտել է Երևանի պոլիտեխնիկի քիմիայի ֆակուլտետը (1945 թ.)՝ աշակերտելով պրոֆ. Լ. Ռոտիմյանին: 1946 թ. աշխատել է (մինչև կյանքի վերջը՝ 1993 թ.) ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում՝ լինելով ասպիրանտ (նորեյլան մրցանակակիր, ակադեմիկոս Ն. Ն. Սեմյոնովի ղեկավարությամբ) և գիտաշխատողից դարձել ԽՍՀՄ և բազում արտերկրների ակադեմիկոս: Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում աշխատելու ժամանակ զուգահեռաբար աշխատել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում որպես պրոֆեսոր, նաև ամբիոնի վարիչ (1981-1993 թթ.), ԽՍՀՄ սինթետիկ պոլիմերային նյութերի ինստիտուտի (1998 թ.-ից Ենիկոլոպյանի անվան) տնօրեն՝ (1981-1993 թթ.): Եղել է ԽՍՀՄ ԳԱ նախագահությանը կից նոր սինթետիկ նյութերի գծով Գիտական խորհրդի փոխնախագահ, ապա նախագահ՝ (1972-1993 թթ.), ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի կոմիտեին կից Ժողովնախագահի մեջ պոլիմերների օգտագործման Գիտական խորհրդի փոխնախագահ, ապա նախագահ՝ (1972-1993 թթ.), Պոլիմերների և կոմպոզիտային նյութերի ինստիտուտի բաժնի վարիչ, ապա տնօրեն՝ (1979 թ.): Մեծ է ակադեմիկոս Ն.Ա. Ենիկոլոպյանի գիտական ժառանգությունը, նրա գիտական աշխատանքները վերաբերում են. ածխաջրածինների օքսիդացման շղթայական գործընթացներին, իոնային պոլիմերման ռեակցիաների կինետիկային և մեխանիզմին, մակրոմոլեկուլների առաջացման և փոխանակման վրա ֆիզիկաքիմիական ազդակների ներգործության ուսումնասիրություններին տարատեսակ պայմաններում: Նա մշակել է այլասերված-նյութավորված շղթայական օքսիդացման գործընթացների քանակական տեսության հիմունքները և հաստատել պարզագույն ածխաջրածինների օքսիդացման մեխանիզմները (Պետական մրցանակ 1966 թ.): Ստեղծել է պինդֆազային անիզոտրոպ պոլիմերման տեսությունը և հայտնագործել բարձր ճնշման և սափքի ձևափոխման պայմաններում օրգանական նյութերի ստացման օրի-

նաչափությունները (Լենինյան մրցանակ 1980 թ.): Մշակել է լցոնված պոլիմերների ստացման տեխնոլոգիան, ստեղծել բարձրակայուն պոլիմերային նյութերի նոր դաս: Իր կողմից ստեղծած Լցոնային պոլիմերների ինստիտուտում հայտնագործել է պինդ մարմինների և պինդ պոլիմերների բարձր ճնշման տակ առաձգական ձևափոխմամբ քայքայման երևույթը և էլեկտրահաղորդիչ նյութերի ստացման եղանակ (1981 թ.): Ն. Ենիկոլայանի առաջարկով և Լցոնների ինստիտուտի պատվերով ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնը կատարել է տնտպայմանագրային գիտահետազոտական աշխատանք (1987 թ.) պրոֆ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ:

Ակադեմիկոս Ն.Ա. Ենիկոլայանը հեղինակ է ավելի քան 1200 գիտական աշխատությունների, մենագրությունների, 30-ից ավելի հայտնագործությունների և պատենտների, որոնցից շատերը արտոնագրված են տասնյակ երկրներում:

Ն. Ենիկոլայանը մշտապես պահպանել է ուսումնագիտական կապերը ՀՀ քիմիական օջախների հետ, լինելով հայ քիմիկոսների խորհրդատուն և աջակիցը, հանդես է եկել դասախոսություններով ու զեկույցներով ԵՊՀ-ում, Պոլիտեխնիկական և Երևանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտներում և այլուր, առանձնահատուկ սերտ կապերի մեջ է եղել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի, հատկապես ֆիզքիմիայի ամբիոնի վարիչ Հ. Հ. Չալքիկյանի հետ: Ակադեմիկոս Նիկոլայ Սերգեյի Ենիկոլայանի հիշատակը վառ են պահում նրա գործընկերները և սաները, ամեն տարի (նրա ծննդյան օրը) անկացնելով գիտական միջազգային գիտաժողովներ՝ «Ենիկոլայան ընթերցումներ»: Այսօր Պոլիտեխնիկական ինստիտուտում նրա անունով է կոչվում Ընդհանուր քիմիայի և քիմիական պրոցեսների ամբիոնը: Նա քիմիայի բնագավառում համաշխարհային մեծության աստղ էր, հայասեր և հայրենասեր, հարգված և միջազգայնորեն գնահատված:

Անալիտիկ (Վերլուծական) քիմիա: Անալիտիկ քիմիային վերաբերող ուսումնագիտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում թելադրված էին տեղական հանքանյութերի քիմիական վերլուծությունները (անալիզները) իրականացնելու անհրաժեշտությամբ: ՀՀ-ում անալիտիկ քիմիայի ներդնողը և զարգացնողը եղել է քիմիական գիտության նվիրյալ, տաղանդավոր պրոֆ. Լևոն Ռոտինյանը, ում ջանքերով առաջինը Երևանի համալսարանում 1923 թ. կազմակերպվեց և ստեղծվեց Անօրգանական ու անալիտիկ քիմիայի համա-

տեղ ամբիոն, որի առաջին վարիչն էր հենց ինքը: Քիմիական անալիզը իրականացվում էր Երևանի համալսարանում և ժողտնտխորհի կենտրոնական քիմիական լաբորատորիայում (ստեղծված Ս. Ղամբարյանի և Լ. Ռոտինյանի կողմից):

Այնուհետև, 1930-ական թթ. համալսարանում վերլուծական քիմիայի նոր եղանակների ստեղծման աշխատանքային փորձերը կատարվել են ռուս հայտնի անալիտիկ-քիմիկոս ակադեմիկոս Ի. Ալիմարինի ղեկավարությամբ և խորհրդատվությամբ, որոնք վերաբերում էին էլեկտրաքիմիական վերականգման եղանակով փոփոխական արժեքականություն ունեցող կատիոնների քանակական որոշմանը: Այդ աշխատանքներին, որպես լաբորանտ, մասնակցել է նաև Թիֆլիսից նոր եկած Վերգինե Թառայանը: Նրա հետ է կապված ՀՀ-ում և ԵՊՀ-ում անալիտիկ քիմիայի զարգացման հիմնական շրջանը: Նրա ամբիոնի վարիչության տարիներին իրականացվել են պրոֆ. Լ. Ռոտինյանի կողմից առաջարկված մատեցման և կոմպլեքսագոյացման մի շարք ռեակցիաների պոտենցիալական հետազոտությունները, մշակվել են սիլիկաթթվի, ալյումինի, բերիլիումի, կապարի, թորիումի և այլ տարրերի որոշման եղանակներ: Նա մշակեց ծավալային անալիզի (վերլուծության) մերկուրոռեդուկտորաչափական եղանակը (1958 թ.)՝ ուսումնասիրման օբյեկտ դարձնելով նաև հազվագյուտ և ցրված տարրերի (ոսկի, ցերիում, ռենիում, սելեն, թելուր և այլն) քիմիական անալիզի հարցերն ու լուսաչափական եղանակով դրանց որոշումը: Այդ ուղղությամբ աշխատանքները կատարվել են ամբիոնի վարիչ (1977-1983 թթ.) Ե. Հովսեփյանի անմիջական ղեկավարությամբ: ՀՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Մ. Թառայանի ղեկավարությամբ նաև գիտահետազոտական խումբ է աշխատել ՀՀ ԳԱ համակարգում՝ ՀՀ-ի հանքանյութերի քիմիական անալիզի և հազվագյուտ տարրերի կոմպլեքսագոյացման ուղղություններով (պատասխանատու կատարող, քիմ. գիտ. թեկնածու Ֆերդինանդ Միրզոյան): Անալիտիկ քիմիայի ամբիոնում, Վ. Թառայանի ամբիոնի վարիչության տարիներին, ներդրվել է նրբաշերտ քրոմոտագրության (քրոմատոգրաֆիկական) եղանակը, որը մշակել էր պրոֆ. Դանիել Գալբակյանը (1927-2003 թթ.):

1983 թ.-ից ամբիոնի աշխատանքները կապված են ամբիոնի վարիչ Համբարձում Գուրգենի Խաչատրյանի հետ: Նրա ղեկավարությամբ ամբիոնում տարվել են հետաքրքիր հետազոտություններ,

նվիրված հազվագյուտ և ցրված տարրերի անիոնային կոմպլեքսների հետ հիմնային ներկանյութերի առաջացրած միացությունների ստացմանը և հատկությունների ուսումնասիրմանը (Ժ. Առուստամյան, Ջ. Միքայելյան և ուրիշներ): Պրոֆ. Հ. Խաչատրյանի ղեկավարությամբ վերջին տասնամյակներում զարգացվեցին նաև գազ-հեղուկ քրոմատագրության եղանակով գիտահետազոտական աշխատանքները (քիմ. գիտ. դոկտոր Ս. Հայրապետյան): 2013 թ. Անալիտիկ քիմիայի ամբիոնը միացվեց Անօրգանական քիմիայի ամբիոնին և դարձավ Անօրգանական և Անալիտիկ քիմիայի ամբիոն:

Անալիտիկ քիմիայի ուղղությամբ կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ են տարվել Երևանի օրգանական քիմիայի և Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներում (1980-2000-ական թթ.): Մշակվել են ֆիզիկաքիմիական անալիզի և սպեկտրաչափական անալիզի եղանակներ (գործել է ՆՕԶ-ում), իսկ ներկայումս՝ միացյալ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում, ուր կատարվում են բազմատեսակ քիմիական նյութերի և դեղատեսակների անալիզներ ու հետազոտություններ:

Պոլիմերների քիմիա: Պոլիմերների սինթեզի և հետազոտության առաջին գիտական աշխատանքները ՀՀ-ում կապված են սինթետիկ կաուչուկի արտադրության հետ: 1959 թ. ստեղծվեց սինթետիկ կաուչուկի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը՝ Պոլիմերների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը (Պոլիմերների ՀԳՀ-ի), որը 1976 թ. մտցվեց «Նաիրիտ» ԳԱՄ-ի մեջ, որտեղ սինթեզվում և հետազոտվում էին նոր տեսակի քլորոպրենային կաուչուկներ, լատեքսներ և ներդրվում արտադրության մեջ: Այդ ուսումնասիրություններով բացահայտվեցին էմուլսիայում քլորոպրենի պոլիմերման հիմնական օրինաչափությունները, պոլիմերների և համապոլիմերների կառուցվածքները, պոլիմերման աստիճանները (պրոֆ. Լ. Մելքոնյան՝ 1972-1976 թթ. ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ, տեխ. գիտ. դոկտոր Էմիլ Ոսկանյան): Այնտեղ մշակվեց բուտադիենի հեղուկաֆազ քլորման եղանակ և ներդրվեց արտադրության մեջ, որը զգալիորեն կրճատեց արտադրական թափոնների քանակությունը (պրոֆ. Գ. Մարտիրոսյան, ԵՊՀ շրջանավարտ (1956 թ.), Երևանի բժշկական ինստիտուտի քիմիայի ամբիոնի վարիչ (1974-78 թթ.), «Նաիրիտ» ԳԱՄ գլխավոր տնօրենի տեղակալ գիտական գծով (1978

թ. մինչև կյանքի վերջը):

Պոլիմերների սինթեզի և հետազոտության ուղղությամբ հետաքրքիր ու կիրառական բնույթի շատ աշխատանքներ են տարվել ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնում (1959-2000 թթ.):

1959 թ. կազմավորվեց մաս ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի մոնոմերների և պոլիմերների քիմիայի լաբորատորիան պրոֆ. Ս. Մացոյանի(1923-2003 թթ.) ղեկավարությամբ (1982 թ. ՀԽՍՀ. ԳԱ. ակադեմիկոս, 1967-1988 թթ. ինստիտուտի տնօրեն): Այդ լաբորատորիայում ուսումնասիրվել են երկվինիլացետալների, երկվինիլետոնների ցիկլոպոլիմերման ռեակցիաների օրինաչափությունները, մշակվել են նոր տեսակի կարբոցիկլային և հետերոցիկլային պոլիմերների ստացման եղանակներ: Սինթեզվել են նոր տեսակի կատալիզատորներ, ստացել ցիանուրիքլորիդային ջերմակայուն պոլիմերներ (դոկտորներ՝ Լ. Հակոբյան, Է. Դարբինյան և Գ. Պողոսյան): Օրգանական քիմիայի ինստիտուտում հետազոտվել են մաս պոլիբուտադիենների վրա քլորոպրենի պատվաստման ազատ ռադիկալային ռեակցիայի մեխանիզմը, պարզաբանվել են ռեակցիաների կինետիկական օրինաչափությունները և պոլիմերային արգասիքների հատկությունները (դոկ., պրոֆ. Վ. Դանիելյան): Ինստիտուտում բազմաթիվ հետազոտություններ են կատարվել օլիգոմերների քիմիայի և տեխնոլոգիայի բնագավառում, մշակվել են վինիլացետատի օլիգոմերման և օգտագործման եղանակները, որոնք ներդրվել են «Պոլիվինիլացետատ» ԳԱՄ-ում: Ժամանակին գիտահետազոտական աշխատանքներ են տարվել վինիլացետատի պոլիմերման ուղղությամբ մաս ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնին կից «Պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայում» և պարզվել է, որ գերօքսիդների և ամինասպիրտների առկայությամբ պոլիմերումը ընթանում է մեծ արագությամբ և մեծ ելքով: Մակերևութային ակտիվ նյութերի առկայությամբ ուսումնասիրվել են մաս վինիլացետատի պոլիմերման պրոցեսի կինետիկական օրինաչափությունները (Ն. Բեյլերյան, Ֆ. Կարապետյան):

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում իրականացվել է հազեցած և արոմատիկ միտրիլների համապոլիմերումը էպօքսիդների հետ, մշակվել են արոմատիկ ալդեհիդների և վինիլային մոնոմերների համապոլիմերների ստացման եղանակներ, իսկ քլորոպրենից էպօքսիդների և α-քլոբենտոնների ստացման եղանակներ (պրոֆ. Անժելո

Դուրգարյան, պրոֆ. Նարինե Դուրգարյան՝ 2016 թ.-ից օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ):

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ Օրգանական սինթեզի և պլաստմասսաների ամբիոնում, մշակվել է համապոլիմերման արդյունավետ եղանակ և իրականացվել վինիլացետատի համապոլիմերում վինիլպրոպիոնատի հետ, ստացված համապոլիմերները իրենց ֆիզիկաքիմիական հատկություններով զգալիորեն գերազանցել են մայր պոլիմերին: Այդ աշխատանքները ղեկավարել է պրոֆ. Համբարձում Գերասիմի Սայադյանը (1909-1991 թթ.)՝ միաժամանակ կատարելով «Սինթետիկ կաուչուկ» գործարանի հետ կապված գիտահետազոտական այլ աշխատանքներ: Նա քլորբենզոլի անընդհատ ստացման գյուտի համահեղինակ է, եղել է Ընդհանուր քիմիական տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ (1941-1944 թթ.), ապա Հիմնական օրգանական նյութերի սինթեզի տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ (1945-1976 թթ.), եղել է ինստիտուտի պրոֆեսորային լաբորատորիայի հիմնադիր վարիչ (1961-1985 թթ.):

Վանաձորի Էդգար Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների պետական ինստիտուտում (ՊՍՊԻ) պոլիմերային նյութերի հիմքի վրա ստացվել են տարբեր հատկությունների սոսինձներ, որոնք օգտագործվել են տնտեսության զանազան բնագավառներում: Օխտինսկի «Պլաստպոլիմեր» միավորման Երևանի բաժանմունքում մշակվել են պոլիվինիլսպիրտային մանրաթելեր (Հ. Հակոբյան) և պոլիվինիլացետատային պոլիմերների ու համապոլիմերների ստացման նոր եղանակներ (պրոֆ. Մ. Երիցյան և ուրիշներ), որոնք ներդրվել են արտադրության մեջ:

Պոլիտեխնիկումում ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ս. Դավթյանի ղեկավարությամբ կատարվում են կիրառական նշանակություն ունեցող արդյունավետ հետազոտություններ ճակատային (ֆրոնտալ) պոլիմերման բնագավառում:

ՀՀ Խ. Աբովյանի անվան մանակավարժական ինստիտուտի (համալսարանի) քիմիայի ֆակուլտետում վերջին տասնամյակներում մեծ հաջողությամբ հետաքրքիր և կարևոր հետազոտություններ են տարվում իզոցիանուրային և այլ մոնոմերների ու դրանց պոլիմերների մետաղիոնային կոմպլեքսների սինթեզի և հետազոտությունների ուղղություններով, որը ղեկավարում է ԵՊՀ սան, պրոֆ. Մ. Լ. Երիցյանը:

Պոլիմերային գործընթացների ֆիզիկաքիմիական հետազոտու-

քյունների բնագավառում կարևոր և էական աշխատանքներ է կատարել քիմ. գիտ. դոկտոր (1985 թ.), պրոֆեսոր (1986 թ.) Հրաչիկ Արմենակի Ղազարյանը (1939 թ. Ճաղկավան, Տավուշ): ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը ավարտելուց հետո 1963 թ. ընդունվել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Թեկնածուական թեզը (ղեկավար՝ ակադեմիկոս Ն. Ս. Եմիկովայան) նվիրված է եղել իոնական պոլիմերացման կինետիկային, որը պաշտպանել է 1967 թ.: 1967-1972 թթ. ղեկավարել է Մոսկվայի նավթավերամշակման գործարանի կենտրոնական լաբորատորիայի անալիտիկ բաժինը, որտեղ առաջին անգամ կիրառվել է իր կողմից մշակած գել-բրոմատոգրաֆիական եղանակը: 1972 թ. ակադեմիկոս Ն. Ս. Եմիկովայանի և ԽՍՀՄ արդյունաբերության նախարար Լ. Ա. Կոստանդովի խորհրդով Հ. Ղազարյանը գործուղվել է Վանաձորի պոլիմերային սոսինձների գիտահետազոտական ինստիտուտ աշխատելու, որտեղ ղեկավարել է տեսական և տեխնոլոգիական հետազոտությունների բաժինը՝ ուսումնասիրելով դիսպերս համակարգերի ֆիզիկաքիմիական ձևավորությունները: Այդ ուղղությամբ 1985 թ. պաշտպանել է դոկտորական թեզ: 1983 թ. Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, ակադեմիկոս Ս. Ն. Մերգելյանի կողմից հրավիրվել է ինստիտուտ և ընտրվել Քիմիայի ամբիոնի վարիչ, որը ղեկավարում է մինչև այժմ: Պրոֆ. Հ. Ղազարյանը Միջազգային ակադեմիական միության ակադեմիկոս է (1998 թ.): Ստացել է ՀՀ վարչապետի շնորհակալագիր (2004 թ.), ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալ (2009 թ.), ՀՀ Տավուշի մարզի «Պատվավոր Տավուշցի» կոչում, պարգևատրվել է ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալով, ՎՊՄԻ-ի ոսկե մեդալով: Պրոֆ. Հ. Ա. Ղազարյանը հեղինակ է տեսական և կիրառական նշանակության 25 գյուտի և 160 գիտական աշխատությունների: Նրա ղեկավարությամբ 7 անձ պաշտպանել են թեկնածուական թեզեր:

Քիմիական տեխնոլոգիա: Որպես քիմիային վերաբերող գիտություն՝ ՀՀ-ում քիմիական տեխնոլոգիան սկիզբ է առել 1940-ական թթ., խոշոր քիմիական արտադրության զարգացման, հատկապես Երևանի կաուչուկի գործարանի ստեղծմանը զուգընթաց: Առաջին տեխնոլոգիական գիտական աշխատանքների հեղինակներն էին գործարանային (նաև անօրգանական նյութերի ստացման) ճարտարագետները, ինչպես և բուհական համակարգերի դասախոսները: Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր էին Արծրուն Մարտիրոսի Գասպարյանի

(1908-1994 թթ.) ղեկավարությամբ կատարված գիտաարտադրական աշխատանքները: Հետագայում նա դարձավ ակադեմիայի թղթակից անդամ (1968 թ.): 30-ական թվականներին աշխատել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի գլխավոր ինժիներ, ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն (1949-1966 թթ.), Պոլիտեխնիկ ինստիտուտի ռեկտոր (1966-1980 թթ.): Նրա կատարած աշխատանքների շնորհիվ Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի արտադրական սխեմաներում մտցվել են մի շարք բարելավումներ: Նա 1944 թ. վերապատրաստվել է Դյուպոնի համանման գործարանում: Պրոֆ. Ա.Մ. Գասպարյանի ամենախոշոր ներդրումը քիմիական արտադրության մեջ ոչ միայն Խորհրդային Միությունում, այլ աշխարհում՝ նրա կողմից մշակված քլորաջրածինը ջրով անընդհատ կլանելու տեսությունն է, որի շնորհիվ Ա. Մ. Գասպարյանը մշակել է աղաթթու ստանալու անընդհատ եղանակ, որը ներդրվել է արտադրության մեջ: Այն կոչվել է «Գասպարյանի եղանակ» և լայն կիրառություն ստացել ամբողջ աշխարհում (1946 թ. Ստալինյան մրցանակ): Կաուչուկի գործարանում կատարվեցին նաև այլ կարևոր աշխատանքներ: Բարելավվել է սինթետիկ կաուչուկի արտադրության գազային խառնուրդներից վինիլացետիլենի անջատման պրոցեսի արդյունավետությունը, մշակվել է երկվինիլացետիլենի և ացետիլենի պոլիմերման արգասիքներից բարձրարժեք էթինոլային լաքի ստացման տեխնոլոգիան (Ա. Գասպարյան, Է. Տեր-Ղազարյան, Կ. Կոստանտինով), որի շնորհիվ վերացավ այդ արտադրության թափոնների զգալի մասը: Գործարանում մշակվել է նաև քլորոպրենային լատեքսի մանրահատիկ ու մոնոդիսպերս մակարդման եղանակ (Է. Տեր-Ղազարյան, Է. Լազարյան, Ն. Կարապետյան): Սինթետիկ կաուչուկի գործարանում մշակվել և ներդրվել է նաև վինիլացետիլենի հիդրոքլորացման մոտեխնոլոգիան, որի շնորհիվ քլորոպրենի արտադրությունը դարձավ անընդհատ և ոչ վտանգավոր (Ռ. Մելիքյան): Իսկ քլորբենզոլի արտադրությունը ավելի շահավետ դարձնելու նպատակով մշակվել և ներդրվել է անընդհատ գործող ռեակտոր (Հ. Սալադյան, Է. Տեր-Ղազարյան): Հետագայում քիմիական տեխնոլոգիական հետազոտությունները ծավալվեցին նաև Պոլիտեխնիկական և Քիմիայի ինստիտուտներում, ինչպես նաև ԵՊՀ-ում: Պոլիտեխնիկական ինստիտուտում հետազոտությունները վերաբերել են երկֆազ համակարգերի (պինդ-հեղուկ, պինդ-գազ, հեղուկ-գազ) մասնակցությամբ ընթացող տեխնոլոգիա-

կան պրոցեսների՝ զանգվածափոխանակության և ջերմափոխանակության ուսումնասիրություններին, որոնց գործնական մշակումները ներդրվեցին Խորհրդային Միության 80-ից ավելի հիմնարկ-ձեռնարկություններում (Ռ. Հակոբյան, Ռ. Միրզախանյան, Ա. Գասպարյան և այլք)։

Քիմիական տեխնոլոգիայի ուղղությամբ մեծ ծավալի և բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքների կատարումը սկսվել է 1930-ական թթ. ԵՊՀ-ում, ապա 1933 թ.-ից նորաստեղծ Պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ հետագայում քիմիական արդյունաբերության զարգացմանը զուգընթաց նաև մյուս հիմնարկ-ձեռնարկություններում, որտեղ հիմնականում պատրաստում էին քիմիական տեխնոլոգիայի լավագույն մասնագետներ, հատկապես կաուչուկի, վինիլացետատի, պոլիվինիլացետատի, հանքանյութերի և այլ արտադրության ուղղություններով։ Տարբեր ժամանակահատվածներում քիմիական տեխնոլոգիական գիտության զարգացումը Պոլիտեխնիկ ինստիտուտում իրագործել են մեծ գիտնականներ՝ Ս. Դամբարյանը (1933-1937 թթ.), Լ. Ռոտինյանը (1933-1937 թթ.), Լ. Դազարյանը (1938-1945 թթ.), Հ. Սալադյանը (1946-1975 թթ.), Կ. Թահմազյանը (1976-2001 թթ.), Գ. Թորոսյանը (2001 թ.), որոնք բացի ուսումնական գործառնությունից կատարել են նաև արտադրական տեխնոլոգիաների մշակումներ։ Հետագա տարիներին Պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը շարունակաբար զարգացրել է քիմիական տեխնոլոգիան ուսումնագիտական և արտադրական տարբեր մասնագիտական ուղղություններով, այդ թվում նաև էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիան, ԽՍՀՄ Պետական մրցանակակիր, էլեկտրաքիմիայի ամբիոնի վարիչ (1972-1993 թթ.) պրոֆ. Ա. Եղիզարյանի կողմից։

Քիմիական տեխնոլոգիական պրոցեսների ուսումնասիրությամբ և կիրառական ասպեկտների մշակմամբ ՀՀ-ում զբաղվել են նաև ամօրգանական նյութերի և միացությունների բնագավառում։ Դեռևս 1930-ական թվականներին պրոֆեսոր Լ. Ռոտինյանի սկսած աղեղային վառարաններում բազալտի էլեկտրաձուլման աշխատանքները հետագայում շարունակվեցին Սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտում (ակադեմիկոս Կ. Ա. Կոստանյան և ուրիշներ), սինթեզելով բարձրորակ բյուրեղային, մետաղ պարունակող և այլ ապակիներ։ Նմանատեսակ կիրառական տեխնոլոգիական եղանակներ

են մշակվել նաև հետազայում՝ «Քար և Սիլիկատներ» ԳԱՄ-ում (Մ. Մելքոնյան, Հ. Բաբայան և այլք), Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում, որտեղ մշակվել են սինթեզի և հետազոտության տեխնոլոգիական բազում եղանակներ ու կատարվել ներդրումներ՝ հանքատեսակներից ստացվող անօրգանական կարևոր նյութերի, սինթեզվող տարատեսակ ապակիների արտադրության և այլ բնագավառներում (Մ. Մանվելյան, Կ. Կոստանյան, Ն. Կնյազյան): Քիմիական տեխնոլոգիական կարևոր պրոցեսներով սինթեզներ են տարվել Վանաձորի քիմիական կոմբինատում, Ալավերդու պղնձամուլական գործարանում, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային արտադրական միավորումում: Իհարկե, ցավալի է, որ հետխորհրդային ժամանակաշրջանում քիմիայի ուղղությամբ գիտահետազոտական և արդյունաբերական ոլորտների զարգացման թափը խիստ նվազել է, իսկ որոշ գործարաններ ու արտադրական հիմնարկ-ձեռնարկություններ, այդ թվում, շատ կարևոր նշանակության Երևանի «Կաուչուկ», «Պոլիվինիլացետատ», Վանաձորի «Քիմկոմբինատ», Ալավերդու «Պղնձամուլական համալիր» խոշոր արտադրական միավորները փակվել են:

Վերջին տարիներին ՀՀ-ում քիմիատեխնոլոգիական աշխատանքներ տարվում են հանքաարդյունաբերության բնագավառում և որոշ մասնագիտական արտադրություններում:

Շարադրածից հետևում է, որ ՀՀ-ում քիմիայի զարգացումը առաջին հերթին կապված է ԵՊՀ-ի հետ: Ընդ որում՝ Քիմիայի ֆակուլտետը ոչ միայն էական դեր է ունեցել քիմիայի զարգացման գործընթացում, այլ նաև բարձրորակ մասնագետներ է տվել գիտահետազոտական ինստիտուտներին և արտադրական ձեռնարկություններին: Քիմիայի ֆակուլտետի բազմաթիվ շրջանավարտներ դարձել են գիտությունների թեկնածուներ, մոտ 100-ը՝ գիտությունների դոկտորներ, իսկ 14-ը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ (տե՛ս հավելվածը):

ԲԱԺԻՆ III
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1919-2019 ԹԹ.)

III-1. Համալսարանի ստեղծումը, քիմիայի ուսուցման ֆակուլտետները, դեկանները, գործունեությունները (1919-2019 թթ.)

Բազում դարեր հետո, անողորք ու ոճրագործ բշմամիներին հաղթելով, 1918 թվականի մայիսի 28-ին վերականգնվեց Հայոց պետականությունը: Դժվարությամբ ստեղծվեց ու հռչակվեց անկախ Հայաստանի հանրապետությունը Անդրկովկասում՝ Արևելյան Հայաստանի մի փոքր հատվածում՝ Երևանի շուրջ: Եվ հայ ժողովրդի համար նորից կենսական նշանակություն ստացավ նաև ուսման ու կրթության ապահովումը: Չնայած նորաստեղծ հանրապետության ներքին և արտաքին անբարենպաստ պայմաններին և ծառացած ծանր խնդիրներին (սոցիալ-տնտեսական, ռազմական, քաղաքական և այլ), ՀՀ այն ժամանակվա իշխանությունները գիտակցում էին նաև բարձրագույն ուսումնական հաստատության անհրաժեշտությունը: Եվ երկար քննարկումներից հետո Նախարարների Խորհուրդը վարչապետ Խատիսյանի ղեկավարությամբ 1919 թ. մայիսի 16-ին որոշում ընդունեց Երևանում համալսարան հիմնադրելու վերաբերյալ: Սի շարք առկա խոչընդոտներ հաղթահարելուց հետո իշխանությունը 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (Գյումրիի) Առևտրային դպրոցի շենքում (Երևանում հարմար չենք չլինելու պատճառով) բացման կառավարական արարողությամբ հռչակեց առաջին պետական համալսարանի ծնունդը Հայաստան աշխարհում՝ անունը Հայաստանի համալսարան, ապա Հայաստանի ժողովրդական համալսարան (1920-1923 թթ.), այնուհետև Հայաստանի պետական համալսարան (1923-1930 թթ.), վերջում՝ Երևանի պետական համալսարան (1930 թ. մինչև այժմ): Համալսարանի առաջին ղեկավար նշանակվեց Մոսկվայի համալսարանի շրջանավարտ, իրավաբան, Մոսկվայի (1884-1899 թթ.) և Բրյուսելի (1900-1906 թթ.) համալսարանների նշանավոր պրոֆեսոր Յուրի Ստեփանի Ղամբարյանը (Ղամբարով) (1850-1926), ով ղեկավար է աշխատել կարճ ժամկետով՝ 1919 թ. հուլիս- 1920 թ. դեկտեմբեր: Նրա ջանքերով նորաբաց համալսարանում դասախոսելու հրա-

վեր ստացան արտերկրյա բուհերում մասնագիտացած հումանիտար և բնագետ տասնյակ նշանավոր պրոֆեսորներ և գիտնականներ (այդ թվում նաև խոշոր քիմիկոսներ Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանը, Պապա Քալանթարյանը, Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշներ), ովքեր նաև համալսարանի հիմնադիր դասախոսներն էին: Առաջին ուսումնական տարում համալսարանը Գյումրիում ունեցել է մեկ ֆակուլտետ՝ Պատմալեզվագրական, որում ուսանել է 262 ուսանող և աշխատել՝ 32 դասիտ: Հայաստանի համալսարանում առաջին դասերը մեկնարկել են 1920 թ. փետրվարի 1-ին և առաջին դասախոսությունը կարդացել է նշանավոր հայագետ, պրոֆեսոր Ստեփան Սարգսի Մալխասյանցը (1857-1947 թթ.), 1943 թ. ակադեմիկոս: 1920 թ. հունվարի 24-ին համալսարանում բացվել է նաև Բնագիտական ֆակուլտետ և Գյումրիում Հայաստանի համալսարանը շարունակել է գործել երկու ֆակուլտետներով՝ Հասարակագիտական ու Բնագիտական (վերջինում ուսանել են նաև քիմիա):

Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո (1920 թ. նոյեմբերի 29) համալսարանը անմիջապես տեղափոխվել է Երևան և 1920 թ. դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հրամանով վերանվանվել Հայաստանի Ժողովրդական համալսարան (1920-1923 թթ.), զբաղեցնելով այն ժամանակվա Երևանի Աստաֆյան (հետագայում՝ Աբովյան) փողոցի նախկին Ուսուցչական սեմինարիայի շենքը (Սև շենքը՝ Աբովյան 52), որը կառուցվել է 1900-1906 թթ. (ճարտարապետ՝ Վ. Միրզոև), հետագայում՝ 1950-1960-ական թթ. Երևանի պետական համալսարանի ներկայումս գործող նոր շենքերը (նաև Քիմիայի ֆակուլտետի) կառուցվել են Չարենց և Մռավյան (Մանուկյան) փողոցների միջև՝ Երևանի Այգեստան կոչվող թաղամասում (ճարտարապետ Է. Տիգրանյան):

Ժողովրդական համալսարանը փաստորեն դարձել է Հայաստանի համալսարանի իրավահաջորդը Խորհրդային Հայաստանում, որի ռեկտոր է նշանակվել (թվով երկրորդը) Գերմանիայում բարձրագույն ուսում ստացած խոշոր հումանիտար գիտնական, պրոֆեսոր Հակոբ Համազասպի Մանանդյանը (1873-1952 թթ.), ով այդ պաշտոնում աշխատել է նույնպես կարճ ժամանակով (1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. հոկտեմբեր) և հանդիսացել է նորաստեղծ համալսարանի հիմնադիր դասախոսներից: Նա եղել է պատմաբան, բանասեր, աղբյուրագետ,

լեզվագետ (մայրենիից բացի տիրապետել և գրել է գերմաներեն, հուններեն, ռուսերեն): Սովորել է Եմայի, Լայպցիգի, Ստրասբուրգի համալսարաններում (1893-1897 թթ.), իսկ Եմայի համալսարանում դարձել է փիլիսոփայության դոկտոր (1897 թ.): Պրոֆեսոր է դարձել 1925 թ., պատմական գիտությունների դոկտոր՝ 1938 թ., ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ., Երևանի համալսարանի արևելագիտության, ապա պատմագրական ֆակուլտետների դեկան՝ 1921-23 թթ., եղել է նաև հայոց պատմության ամբիոնի վարիչ: Ուսման և գիտության մեծ կազմակերպիչը 1931 թ. ընդհատել է մանկավարժական աշխատանքը և զբաղվել միայն գիտահետազոտական գործունեությամբ: Հրատարակել է 100-ից ավելի աշխատություններ՝ հայերեն, ռուսերեն, հունարեն և գերմաներեն լեզուներով, նվիրված հայոց պատմության, պատմագրական աշխարհագրության, հայագիտության, հայ գրերի պատմության խնդիրներին, որոնք իրենց գիտական արժեքը չեն կորցրել առ այսօր:

Ժողովրդական համալսարանում շարունակվել է նոր ֆակուլտետների բացում՝ Արևելագիտական, Գյուղատնտեսական, Տեխնիկական (1921 թ.), Բժշկական (1922 թ.), Բանվորական՝ Բանֆակը (1923 թ.): Քիմիայի ուսուցումը առանձին բաժնի ձևով սկսվել է 1920 թ.՝ Բնագիտական ֆակուլտետում և շարունակվել նաև հետո ստեղծված Գյուղատնտեսական, Տեխնիկական և Բժշկական ֆակուլտետներում: Այդ նոր բացված ֆակուլտետներում սկսվել է քիմիայի դասավանդումը բարձրագույն ուսումնական հաստատության մակարդակով, որով դրվել է քիմիայի բարձրագույն կրթության հիմքերը Հայաստանում: Դա իրականացվել է պրոֆեսորներ Ստեփան Դամբարյանի, Լևոն Ռոտինյանի և իրենց համախոհների ջանքերով:

Այդ դժվարին, դժնդակ ու խրթին ժամանակներում (օրինակ, 1937 թ. համալսարանում իրար հետևից փոխվել են 6 ռեկտորներ՝ անարդարացի պարտադրումներով և բռնություններով հանդերձ) Երևանի Ժողովրդական համալսարանի թվով 3-րդ ռեկտոր է նշանակվել Դավիթ Քրիստափորի Ջավրյանը (Ջավրիկ) (1889-1957 թթ.), ով նույնպես աշխատել է կարճ ժամանակով է (1921 թ. հոկտեմբեր-1922 թ. փետրվար): Նա եղել է եվրոպական կրթություն ստացած քիմիկոս-գիտնական, սովորել է Պետերբուրգի համալսարանում և աշակերտել Դ. Ի. Մենդելեևին: Ուսանողական ժամանակներից մեկնել է

Փարիզ և գիտական հետազոտություններ կատարել պրոֆեսորների ղեկավարությամբ: Համալսարանը ավարտելուց հետո աշխատել է Պետերբուրգի ճանապարհաշինարարական ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ և անօրգանական քիմիայի պրոֆեսոր՝ շարունակելով կատարել գիտահետազոտական աշխատանքներ: Եղել է ոչ միայն անօրգանական քիմիայի, այլ նաև ֆիզքիմիայի, քիմիական տեխնոլոգիայի, նավթի երկրաբանության գիտական հարցերով խոշոր մասնագետ-գիտնական, զբաղվել է նաև հնագիտության և լեզվաբանության հարցերով: 1919 թ. Դ. Ջավրյանը եղել է համալսարանի կազմակերպիչներից մեկը և Յուրի Ղամբարյանի հետ միասին նախապատրաստել է Հայաստանի համալսարանի բացումը, դարձել նրա օգնականը: 1921 թ. պրոֆ. Դ. Ջավրյանը ընտրվել է համալսարանի Բնագիտական, ապա Տեխնիկական ֆակուլտետի ղեկան, իսկ Հակոբ Մանանդյանից հետո նշանակվել է ռեկտոր: Համալսարանի գործերով նա 1922 թ. փետրվարին գործուղվել է Մոսկվա և Պետերբուրգ ու դրանից հետո չի վերադարձել Երևան (անհասկանալի հանգամանքների պատճառով): 1922 թ. գարնանից վերադարձել է Թիֆլիս՝ իր ծննդավայր, աշխատանքի անցել Թիֆլիսի ճանապարհաշինարարական ինստիտուտում որպես Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պահպանելով սերտ կապերը ԵՊՀ-ի, ՀՀ մյուս բուհերի և ԳԱ-ի հետ, ապրելով իր ծննդավայրում մինչև կյանքի վերջը:

Քիմիայի բարձրագույն կրթության ստեղծման և զարգացման գործում մեծ ու ծանրակշիռ դեր է ունեցել Գյուղատնտեսական ֆակուլտետի (1921-1930 թթ.) քիմիայի ամբիոնը, որտեղ աշխատում էին արտերկրներից հրավիրված և իրենց կամքով հայրենիք վերադարձած մեծամուն, ճանաչված գիտնականներ՝ Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանը, Պապա Քալանթարյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Հովհաննես Ոսկանյանը, Ալեքսանդր Հակոբյանը, Հովհաննես Ակունյանը և ուրիշներ: Համալսարանում քիմիական կրթության զարգացմանը մեծապես նպաստել են նաև պաշտոնյա մեծ գիտնականներ՝ ագրոքիմիկոս, Լալայգիգի համալսարանի կադր պրոֆ. Պապա Քալանթարյանը (1887-1942 թթ.), ով այն ժամանակ նաև Գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին ղեկանն էր, և կենսաքիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը (1875-1941 թթ.), ով Երևանի համալսարանի այն ժամանակվա թվով 4-րդ ռեկտորն էր:

Պապա Բեջանի-Քալանթարյանը (1887 թ. Արդվին, 1942 թ. Երևան) եղել է նշանավոր ագրոքիմիկոս և մանրէաբան, դոկտոր, պրոֆեսոր (1934 թ.): Նա 1905 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա Լայպցիգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը (1911 թ.): Աշխատել է Պոլտավայում և Մոսկվայում, իսկ 1914 թ.-ից Թիֆլիսի երկրագործական դեպարտամենտում որպես լաբորատորիայի վարիչ: Խորհրդային Հայաստանի ստեղծումից հետո տեղափոխվել է Երևան, մասնակցել համալսարանի կազմավորմանը, կազմակերպել ու դարձել Գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին դեկանը (1922-1932 թթ.), լինելով նաև Գյուղինստիտուտի ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: Պրոֆ. Պ. Քալանթարյանի գիտական հիմնական աշխատանքները վերաբերել են ՀՀ հողերի ֆիզիկաքիմիական, ագրոքիմիական և մանրէաբանական առանձնահատկությունների ուսումնասիրություններին:

Ակադեմիկոս Հակոբ Հովհաննիսյանի ռեկտորությունը (1922-1930 թթ.) եղավ համեմատաբար երկարատև և բեղմնավոր: Նա բարձրացրեց պրոֆեսորադասախոսական կազմի որակը՝ համալրելով նոր բարձրորակ կադրերով, ստեղծեց մի շարք նոր ֆակուլտետներ, ամբիոններ, լաբորատորիաներ, կաբինետներ, համալսարանին կից գիտահետազոտական ինստիտուտ, ասպիրանտուրա: Առանձնապես նպաստել է քիմիայի զարգացմանը, խթանել է մեծ քիմիկոսներ Ս. Դամբարյանի, Լ. Ռոտինյանի, Պ. Քալանթարյանի, Հ. Ակունյանի և մյուսների ուսումնագիտական գործունեությունը, ստեղծելով ու բացելով քիմիական նոր բաժիններ և ամբիոններ: Լինելով խոշոր կենսաքիմիկոս՝ նպաստեց քիմիայի զարգացմանը նաև կենսաբանության ու բժշկության և այլ բնագավառներում: Համալսարանում ստեղծեց Կենսաքիմիայի ամբիոն, որը ղեկավարել է մինչև 1937 թ.: 1930-1936 թթ. եղել է Բժշկական ինստիտուտի ռեկտորը, իսկ 1937 թ. նշանակվել է ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի՝ Արմֆանի կենսաբանության ինստիտուտի տնօրեն: Պրոֆ. Հ. Հովհաննիսյանը եղել է ոչ միայն խոշոր գիտնական, քիմիկոս-կենսաբան, այլ նաև գիտության և ուսման գործի մեծ կազմակերպիչ և ղեկավար: Նրա օրոք կառուցվել է Բժշկական ինստիտուտի ներկայիս շենքը, ինստիտուտում ստեղծվել են նորանոր ամբիոններ, կլինիկաներ: Նա նաև գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ-ում քիմիական գիտության և արդյունաբերության

խնդիրների մշակման և լուծման գործընթացներին ու կադրերի պատրաստման գործում: Հ. Հովհաննիսյանը ծնվել է Շուշի քաղաքում, ավարտել տեղի թեմական դպրոցը և ուսումը շարունակել Բեռլինի համալսարանում՝ մասնագիտանալով քիմիայի բնագավառում: 1903 թ. Հայդերբերգի համալսարանում պաշտպանել է դոկտորական թեզ, վերադարձել հայրենի Շուշի, դասավանդել դպրոցներում (1904-1907 թթ.): Միաժամանակ Գերմանիայի, Ստրասբուրգի և Բեռլինի համալսարաններում գործողմամբ զբաղվել է ֆիզիկական քիմիայի և մանրէաբանության խնդիրների ուսումնասիրություններով: Որպես մասնագետ 1907-1920 թթ. Բաքվում ղեկավարել է քիմիամանրէաբանական լաբորատորիան: Այնուհետև հրավերով տեղափոխվել է Երևանի համալսարան: Դաժան է եղել այդ մեծ գիտնականի ճակատագիրը, նրան ձերբակալել են 1937 թ. որպես քաղաքական հանցագործի (մապահանջում էր իր հայրենի Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին) բանտարկել են ՀՀ անվտանգության խուցում, ֆիզիկապես տանջել-ծեծել, ապա 1941 թ. հինգ տարով արքայի ղազախստան, բայց երևանամերձ ճանապարհին գնացքում մահացել է...

ԵՊՀ-ում ուսման և գիտության զարգացման ու վերելքի գործընթացը, հատկապես քիմիայի ուղղությամբ, շարունակվել է մինչև 1930-ական թթ. (պրոֆ. Ս. Ղամբարյանի և պրոֆ. Լ. Ռոտինյանի կազմակերպչական ջանքերով), բարձր մակարդակի հասցնելով քիմիական գիտության ուսուցումը և զարգացումը, նոր քիմիկոս բարձրորակ կադրերի պատրաստումը: Երևանի համալսարանում քիմիայի հանդեպ հատուկ սեր ունեցող և ուշագրավ շրջանավարտներից շատերը պահվել են համալսարանում: Նրանցից էին՝ Հովհաննես Չալքիկյանը, Արմենակ Մնջոյանը, Վաղարշակ Ազատյանը, Աղասի Քանքանյանը, Արաքսի Բաբայանը, Մամիկոն Դարբինյանը, Լևոն Ղազարյանը և ուրիշներ, ովքեր աստիճանաբար դարձան մեծ գիտնականներ և պրոֆեսորներ, իրենց ուսուցիչների արժանի օգնականները և փոխարինողները: Մերնդափոխության այդ ոճը համալսարանում պահպանվել է նաև հետագայում:

1930 թ. Անդրկովկասյան ֆեդերացիայի ժողխորհի որոշմամբ կատարվեց Անդրկովկասի համալսարանների որոշ վերակառուցում և դրանց հիման վրա նոր ուսումնական մասնագիտական առանձին գործող բուհական ինստիտուտների կազմակերպում: ԵՊՀ-ի ֆակուլտետների հենքի վրա 1930 թ. Երևանում կազմակերպվել և անջատվել

են՝ Պոլիտեխնիկական, Բժշկական, Գյուղատնտեսական, Կոոպերատիվ-տնտեսագիտական և Մանկավարժական ինստիտուտները, իսկ 1931 թ. Անդրկովկասյան անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի (բացված՝ 1928-1929 թթ.) բազայի վրա Երևանում ստեղծվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: Կազմավորված այդ նոր ուսումնական հաստատություններում շարունակել են դասավանդել համալսարանի դասախոսները (հիմնական կամ համատեղության կարգով) մինչև ինստիտուտներում նոր համապատասխան կադրերի պատրաստումը և վերջնական հունի մեջ մտնելը: Համալսարանում շարունակվել է ուսումնագիտական գործընթացը պահպանված ֆակուլտետներում և բաժիններում, մինչև որ ձևավորվել են նոր անուններով ֆակուլտետներ: Եվ 1933 թ. ԵՊՀ-ն շարունակել է գործել արդեն հինգ ֆակուլտետներով՝ Ֆիզիկա-մաթեմատիկական, Պատմաբանասիրական, Մանկավարժական, Տնտեսագիտական և Բնագիտական: 1934 թ. Բնագիտական ֆակուլտետի հենքի վրա բացվել են՝ Քիմիական, Կենսաբանական, Երկրաբանա-Աշխարհագրական առանձին ֆակուլտետները: 1935 թ. բացվել է Իրավաբանական, իսկ 1936թ. Պատմական և Բանասիրական ֆակուլտետները: Պետք է նշել, որ ԵՊՀ-ի երկարատև գործունեության ընթացքում, տարբեր տարիներին նոր ֆակուլտետների կամ ամբիոնների բացումը, ստեղծումը, միավորումը, բաժանումը, ինչպես նաև հների, որոշ դեպքերում, լուծարումը կամ փակումը կատարվել է ժամանակի պահանջներին համապատասխան և անհրաժեշտաբար ու բնականորեն, որը տեղի է ունեցել և ունի նաև քիմիայի բնագավառում առ այսօր որպես համալսարանի զարգացման փուլ:

ԵՊՀ-ում իր ստեղծման ժամանակից առայսօր քիմիայի ուսուցումը կատարվել է հետևյալ 7 ամվանումներով ֆակուլտետներում՝ 1. Բնագիտական (1920-1922 թթ.), 2. Գյուղատնտեսական (1922-1930 թթ.), 3. Բնագիտական (1930-1933 թթ.), 4. Քիմիակենսաբանական (1933 թ.), 5. Քիմիական (Քիմիայի) (1934-2015 թթ.), 6. Դեղագիտության և Քիմիայի (2015-2016 թթ.), 7. Քիմիայի (2017 թ. հիմա):

Ստորև բերված է Երևանի համալսարանի և քիմիայի ուսուցման ֆակուլտետների ժամանակագրական անվանումները առ 1919-2019 թթ.: Հայաստանի համալսարանի (1919-1920 թթ.), Հայաստանի Ժողովրդական համալսարանի (1920-1923 թթ.) բնագիտական ֆա-

կուլտետ (1920-1922 թթ.), Հայաստանի պետական համալսարանի (1923-1930 թթ.) գյուղատնտեսական ֆակուլտետ (1921-1930 թթ.), Երևանի պետական համալսարանի (1930 թ.) բնագիտական ֆակուլտետ (1930-1933 թթ.), քիմիակենսաբանական ֆակուլտետ (1933 թ.), քիմիական (քիմիայի) ֆակուլտետ (1934-2015 թթ.), դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ (2015-2016 թթ.), քիմիայի ֆակուլտետ (2017 թ.): Քիմիայի ֆակուլտետի մասնաշենքում դեղաբանական երեք ամբիոնների հենքի վրա ստեղծվել է առանձին գործող ԵՊՀ ֆարմացիայի ուսումնագիտական ինստիտուտ (2017 թ.): Աղյուսակ 1-ում բերված են քիմիայի ուսուցմամբ ֆակուլտետների, դեկանների, ամբիոնների (բաժինների) անվանակարգերը և գործունեության ժամանակաշրջանները (1920 թ. -2019 թ.):

Աղյուսակ 1

№	Ե-ՊՀ ֆակուլտետներ	Ֆակուլտետների գործունեության մասնամուկաշրջանը	Գիկաններ	Գիկանների գործունեության մասնամուկաշրջանը	Անդրանիկը կամ բաղիմները
1.	Բնագիտական	1920-1922 թթ.	Զավին (Զավարյան Դ.Բ.) (1889-1957 թթ.), պրոֆ.	1920-1922 թթ.	Քիմիայի բաժնիներ (դեկադարներ՝ Ս. Ղամբարյան, Լ. Բաղիմյան)
2.	Գյուղատնտեսական	1922-1930 թթ.	Քալանդարյան Պ. Բ. (1887-1942 թթ.), պրոֆ.	1922-1930 թթ.	Անր.Օրգ. (Վարդ. Ս. Ղամբարյան), Անրգ. և Անուլ., Ֆիզիքիմա (Վարդ. Լ. Բաղիմյան)
3.	Բնագիտական	1930-1933 թթ.	Քալանդարյան Պ. Բ., պրոֆ.	1930-1933 թթ.	“”
4.	Քիմիայի և կենսաբանության	1933 թ.	Գ.Գրգյան (կենսաբան), պրոֆ.	1933 թ.	“”
5.	Քիմիայի	1934-2015 թթ.	Տար.Ղազարյան Դ. Գ. (1874-1958 թթ.), պրոֆ.	1934-1937 թթ.	Անր.Օրգ. (Ս. Ղամբարյան), Անրգ. (Վ. Տեր Ղազարյան), Անուլ. և Ֆիզիքիմա (Լ. Բաղիմյան)
6.	“”	“”	Մարտիկյան Դ. Հ. (1910-1950 թթ.), պրոֆ.	1937-1950 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմա
7.	“”	“”	Մնջոյան Ա. Լ. (1904-1970 թթ.), պրոֆ.	1951-1952 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմա
8.	“”	“”	Դանդոյան Մ. Տ. (1907-1984 թթ.), պրոֆ.	1953-1961 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմա
9.	“”	“”	Թատայան Վ. Մ. (1905-1985 թթ.), պրոֆ.	1961-1964 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Թերմոֆիզիքիմայի և մոլեկուլի կառուցվածքի
10.	“”	“”	Խաչատուրյան Կ. Է. (1909-1993 թթ.), պրոֆ.	1964-1967 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Տեսական քիմիայի
11.	“”	“”	Դանդոյան Մ. Տ. (1907-1984 թթ.), պրոֆ.	1967-1973 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Տեսական քիմիայի
12.	“”	“”	Ավագյան Ս. Ն. (1918-1995 թթ.), պրոֆ.	1973-1975 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Կառուցվածքի և Տես. քիմիայի
13.	“”	“”	Նուշադյան Ա. Հ. (1926-2000 թթ.), դոց.	1975-1985 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Կառուցվածքի և Տես. քիմիայի
14.	“”	“”	Ավետիսյան Ա. Ա. (1938-2009 թթ.), պրոֆ.	1985-2009 թթ.	Անր.Օրգ., Անրգ., Անուլ., Ֆիզիքիմ., Գեոլոգիա, Բնագիմիա
15.	“”	“”	Դուչիկյան Տ. Վ. (1949 թ.), պրոֆ.	2010-2015 թթ.	Անր.Օրգ., Անրգ., և անուլ., Ֆիզիքիմ., Գեոլոգիա, քիմիայի
16.	Գեոլոգիա և քիմիայի	2015-2016 թթ.	Դուչիկյան Տ. Վ. (1949 թ.), պրոֆ.	2015-2016 թթ.	Անր.Օրգ., Անրգ., և անուլ., Ֆիզիքիմ., Գեոլոգիա, քիմիայի, Ֆարմապոլիս և Ֆարմաբիոքիմիայի
17.	Քիմիայի	2017 թ. հիմա	Դուչիկյան Տ. Վ. (1949 թ.), պրոֆ.	2017 թ. հիմա	Անր.Օրգ., Անրգ., և անուլ., Ֆիզիքիմ.

1964-2019 թթ. Քիմիայի ֆակուլտետում դեկանի տեղակալներ աշխատել են 12 անձ.

1. Զալինյան Միքայել Գարեգինի (1930-2017 թթ.), 1964-1967 թթ.
2. Գրիգորյան Սերգեյ Կոստանդի (1938 թ.), 1967-1969 թթ.
3. Դուկասյան Թելման Տիգրանի (1934-1988 թթ.), 1969-1971 թթ.
4. Ոսկանյան Լենոր Անդրանիկի (1939-1975 թթ.), 1971-1973 թթ.
5. Նալչաջյան Սուրեն Հովհաննեսի (1926-2000 թթ.), 1973-1975 թթ.
6. Հախնազարյան Ալեքսանդր Հայրապետի (1932-1992 թթ.), 1975-1987 թթ.
7. Դուկասյան Թելման Տիգրանի (1934-1988 թթ.), 1975-1988 թթ.
8. Մկրտչյան Ռոբերտ Տիգրանի (1939 թ.), 1988- 1992 թթ.
9. Դուկասյան Արամ Հովհաննեսի (1948 թ.), 1992-1997 թթ.
10. Կսիպտերիդիս Վովա Խրիստոյի (1948 թ.), 1992-1997 թթ.
11. Գալստյան Լաուրա Խորենի (1953 թ.), 1997-2007 թթ.
12. Մկրտչյան Ռոբերտ Տիգրանի (1939 թ.), 2007-2010 թթ.
13. Վարդապետյան Սամվել Մարտունի (1955 թ.), 2010-2017 թթ.
14. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի (1959 թ.), 2017 - 2018 թթ.
15. Գալստյան Արմեն Սուրենի (1981 թ.), 2018 թ. առ այսօր:

Հաջորդիվ III-1-1 ենթաբաժնում ներկայացված են 1934 թվից ԵՊՀ-ում առանձին գործող Քիմիական (Քիմիայի) ֆակուլտետի դեկանների (թվով 10 անձ) ուսումնագիտական գործունեությունները և համառոտ կենսագրությունները, իսկ 1920-1933 թթ. դեկաններինը (Զավրիյան, Բալանթարյան) բերված են սույն բաժնի սկզբնամասում:

**III-1-1. ԵՊՀ քիմիական (քիմիայի)
ֆակուլտետի ղեկամների կենսագրությունները (1934-2019 թթ.)**

1. Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի (1874 թ. Շուշի-1958թ. Երևան)

Քիմ. գիտ. դոկ. (1906 թ.), պրոֆ. (1935 թ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան (1934-1937 թթ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1934-1937 թթ.),

*ՀՀ Արտվյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիայի ամբիոնի
վարիչ (1938-1955 թթ.)*

Ծնվել է 1874 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում հոգևորականի ընտանիքում: Կրթությունը ստացել է Շուշիի Ռեալական ուսումնարանում և Հայոց Թեմական դպրոցում: 1895-1898 թթ. աշխատել է ուսուցիչ Հայդուքի, Կապանի և Կուտկում գյուղի երկամյա դպրոցներում: 1899 թ. մեկնել է Շվեյցարիա, ընդունվել Ժնևի համալսարանի բնագիտական ֆակուլտետը և 1904թ. ավարտելով՝ ստացել է դիպլոմավոր քիմիկոսի կոչում: 1906 թ. պաշտպանել է ատենախոսություն և ստացել ֆիզիկաքիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին նշանակվել է Ժնևի համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի ընթերակա (ասիստենտ), ապա դոցենտ:

1909 թ. Ղազար Տեր-Ղազարյանը տեղափոխվել է Սանկտ Պետերբուրգ, ընդգրկվել Ռուսաստանի ֆիզիկաքիմիական ընկերությունում, զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով: 1911 թվականից տեղափոխվել է Բաքու և արդյունաբերողների պատվերով կառուցել գինեթթվի գործարան: 1913-1915 թթ. վարել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչի և ֆիզիկայի ուսուցչի պաշտոնները, ապա մինչև 1917 թ. վերջը եղել է Բաքվի «Բենկենդորֆ ընկերություն» նավթարդյունաբերական ֆիրմայի գիտահետազոտական լաբորատորիայում որպես գիտաշխատող: 1917-1934 թթ. Ղ. Տեր- Ղազարյանը դարձել է Թբիլիսիի անդրկովկասյան համալսարանի ընդհանուր քիմիայի ամբիոնի պրոֆեսոր և քիմիական լաբորատորիայի ղեկավար, միաժամանակ այնտեղ աշխատել է նաև ՀՀ պարենոթղկումատու և Հայառևտրի ներկայացուցչությունում: Այդ ժամանակներում Թբիլիսիում պատասխանատու աշխատանքներ է կատարել նաև Անդրֆեդերացիայի Պետպլանում (1926-1929 թթ.), Ժողտնտխորիում, միաժամանակ

ղեկավարելով Թբիլիսիի հաղորդության ճանապարհների ինժինե-
րական քիմիայի ամբիոնը (1930-1931 թթ.) և Թբիլիսիի կիրառական
քիմիայի ինստիտուտի բաժնի վարչությունը (1932-1933 թթ.): 1934 թ.
Ղ. Տեր-Ղազարյանը հրավերով տեղափոխվել է Երևան և նշանակվել
Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի առաջին
ղեկան և անօրգանական քիմիայի ամբիոնի առաջին վարիչ (1934-
1937 թթ.): Պրոֆեսորի կոչում ստացել է 1935 թ.: Նա համատեղությամբ մինչև 1937 թ. ղեկավարել է նաև Երևանի պոլիտեխնիկական
ինստիտուտի ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնը, ինչ-
պես նաև ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի, ընդհա-
նուր քիմիայի բաժինը: Հետագայում Տեր-Ղազարյանը աշխատել է
նաև քիմիայի պրոֆեսոր Երևանի անասնաբուծական-անասնաբու-
ժական ինստիտուտում (1943-1944 թթ.), իսկ 1938-1955 թթ. եղել է Խ.
Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստի-
տուտի քիմիայի ամբիոնի վարիչը: 1939 թ. (ԵՊՀ-ի հրատարակչությամբ) լույս է տեսել Տեր-Ղազարյանի կազմած «Անալիտիկ քիմիայի
համառոտ դասընթաց» դասագիրքը բուհերի ուսանողների համար:
Ժնևում աշխատելու ժամանակներից (1906 թ.) Ղ. Տեր-Ղազարյա-
նը հրատարակել է կարևոր նշանակության գիտական աշխատանք-
ներ: Ժնևում և Փարիզում հրատարակել է օրոքուր խտությունների
որոշման նոր եղանակներին վերաբերող գիտական աշխատանքներ,
իսկ 1906, 1909 և 1911 թթ. Փարիզում հրատարակել է քլորաջրածնի
խտությունը և քլորի ու արծաթի ատոմական զանգվածները որոշելու
աշխատանքներ: Մշակել է նավթից ստացվող բազմաթիվ քիմիական
և դեղագործական պատրաստուկների, բուսայուղերից տարբեր ար-
տադրանքների ստացման կարևոր եղանակներ:

Պրոֆ. Ղ. Տեր-Ղազարյանը իր կեսդարյա գիտամանկավարժական
գործունեության ընթացքում մեծ ավանդ է ներդրել Անդրկովկասում և
ՀՀ-ում քիմիական գիտության ձևավորման և զարգացման, քիմիական
արտադրությունների կազմակերպման, բարձր որակի քիմիկոս կադ-
րերի պատրաստման բնագավառներում: Նա եղել է բազմակողմանի
զարգացած և շատ հմուտ մանկավարժ, նրա դասխոսությունները
մեծ հետաքրքրությամբ էին լսվում: Եղել է բարի, համեստ և խստապա-
հանջ անձնավորություն, մեծ ճանաչում է ունեցել Անդրկովկասում:
Նրա որդին՝ Էդգար Տեր-Ղազարյանը եղել է համաաշխարհային մա-

կարդակի իմօժենք-քիմիկոս:

Պրոֆեսոր Ղազար Գրիգորի Տեր-Ղազարյանը պատվավոր տեղ է գրավում Հայաստանի և Անդրկովկասի անվանի քիմիկոս գիտնականների փայլուն համաստեղությունում:

2. Մարուխյան Դերենիկ Հովսեփի (1910 թ. Հին Բայազետ- 1950թ. Երևան)

Քիմ. գիտ. դոկ. (1944 թ.), պրոֆ. (1944 թ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1937-1950 թթ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1950 թթ.)

Ծնվել է 1910 թ. Արևմտյան Հայաստանի Հին Բայազետ քաղաքում, 1915 թ. եղեռնից մահապարծ ընտանիքը գաղթել է Արևելյան Հայաստան: 1928 թ. ավարտել է Երևանի №2 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը, որն ավարտելուց հետո նույն տարում ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան քիմիայի գծով: 1932-1933 թթ. Դ. Մարուխյանը աշխատել է ԵՊՀ-ի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: Որպես ԵՊՀ ասպիրանտ 1933-1934 թթ. գործուղվել է Լենինգրադի ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստիտուտ, իսկ 1934-1935 թթ. ասպիրանտական ուսումը շարունակել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում ԳԱ թղթակից անդամ, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ի. Ի. Չերնյակի դեկավարությամբ, որտեղ էլ 1935թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Երկարժեք պլատինի պիրիդինային կոմպլեքս միացությունների մասին» թեմայով: Դ. Մարուխյանին շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի ու ավագ գիտաշխատողի կոչումներ: 1936 թ. վերադարձել է և աշխատել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անօրգանական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ ու ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի՝ Արմֆանի ավագ գիտաշխատող:

1937 թ. նշանակվել է ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի՝ Արմֆանի տնօրեն և գլուգահեռ աշխատել է նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան ու անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ՝ մինչև իր անժամանակ մահը: Շարունակելով գիտահետազոտական աշխատանքները կոմպլեքս միացությունների սինթեզի և հետազոտությունների բնագավառում 1944 թ. Մոսկվայում

պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Միաբժեք պղնձի կոմպլեքսները» թեմայով և ստացել քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ու պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Դ. Մարությանը ՀՀ-ում կոմպլեքս միացությունների քիմիայի հիմնադիրներից և զարգացնողներից է, մի շարք գիտական աշխատությունների և հայտնագործությունների հեղինակ: Մեծ ներդրում է ունեցել պղնձի և պլատինի խմբի տարրերի կոմպլեքս միացությունների (ամինային և այլ լիգանդների հետ) սինթեզի և հետազոտությունների բնագավառում: Նրա գիտահետազոտական աշխատանքները շարունակել են իր աշակերտները և ասպիրանտները՝ Ս. Ն. Ավագյանը (հետազայում՝ պրոֆեսոր, Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, Քիմիայի ֆակուլտետի դեկան), Ռ. Ս. Մխիթարյանը (հետազայում դոցենտ), Գ. Ա. Չոբյանը (հետազայում դոցենտ) և ուրիշներ: Նրա կատարած ծառայությունները արժանավայում են գնահատվել՝ պարգևատրվել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ պարգևներով: Պրոֆ. Դերենիկ Հովսեփի Մարությանը մեծ հետք է թողել համալսարանում և ՀՀ-ում անօրգանական քիմիայի զարգացման գործընթացում:

3. Մնջոյան Արմենակ Լևոնի (1904 թ. Սարիղամիշ,

Կարսի մարզ- 1970 թ. Երևան)

*Քիմ. գիտ. դոկ. (1937 թ.), պրոֆ. (1939 թ.), ՀՀ ԳԱ ակադ. (1943 թ.),
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1951-1952 թթ.),
ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1941 թթ. և 1944-1951 թթ.),
ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1939 թթ.),
ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1946 թթ.),
ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի տնօրեն (1945-1950 թթ.),
ՀՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն (1957-1970 թթ.),
ԽՍՀՄ սոցալիստական աշխատանքի հերոս (1969 թ.)*

Խորհրդահայ տաղանդավոր քիմիկոս Ա. Մնջոյանը եղել է ՀՀ-ում նուրբ և դեղաբանական քիմիայի առաջին հիմնադիրներից, պրոֆ. Ս. Ղամբարյանի գործի արժանի շարունակողը օրգանական քիմիայի բնագավառում: Ա. Մնջոյանը ավարտել է Մոսկվայի համալսարանի քիմիադեղագործական ֆակուլտետը (1928 թ.), այնուհետև մասնագիտացել է ԵՊՀ-ի բժշկական ֆակուլտետը (1933 թ.): Քիմիական գիտությունների դոկտոր էր՝ 1937 թ., պրոֆեսոր՝ 1939 թ., ակադեմիկոս՝ 1943 թ.:

Կազմակերպել և ղեկավարել է Խորհրդային Հայաստանի ղեկավարների վարչության գիտահետազոտական արտադրական լաբորատորիան (1928-1938 թթ.): Եղել է Երևանի բժշկական ինստիտուտի անօրգանական քիմիայի (1937-1939 թթ.) և օրգանական քիմիայի (1937-1946 թթ.) ամբիոնների վարիչը, միաժամանակ (երկու շրջանով) լինելով Երևանի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1941 թթ. և 1944-1951 թթ.): Եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան (1951-1952 թթ.):

Հայրենական պատերազմի տարիներին ՀՀ ժողտնտիստիկի որոշմամբ Ա. Մնջոյանը կազմակերպել և ղեկավարել է հատուկ քիմիական լաբորատորիա, որտեղ սինթեզվել են կարևոր ղեղանյութեր և մարտական թունավոր նյութերը հայտնաբերող բացահայտիչներ (ինդիկատորներ): 1945-1950 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի տնօրենը: Նրա կողմից կազմակերպած ղեկագործական քիմիայի հենքի վրա 1957 թ. ստեղծվել է ՀՀ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը (ՆՕՔԻ), որի գիտական ղեկավարն էր և տնօրենը (1957-1970 թթ.): 1971 թ. այն կրում է ակադեմիկոս Արմենակ Մնջոյանի անունը: 1953-1960 թթ. եղել է ՀՀ ԳԱ փոխպրեզիդենտը, 1964-1967 թթ.` քիմիական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը: Ա. Մնջոյանի գիտական աշխատանքները վերաբերում են նոր, արդյունավետ ղեղանյութերի սինթեզին և օրգանիզմի վրա դրանց ներգործության ուսումնասիրություններին: Պրոֆ. Ա. Մնջոյանը մինչև 1937 թ. զբաղվել է ՀՀ բուսական և հանքային (թերթաքարեր) հումքից ղեղանյութեր ստանալու հետազոտություններով, իսկ 1944 թ.` թմրանյութերի սինթեզներով, որոնք հետագայում ՆՕՔ ինստիտուտում մեծ զարգացում ունեցան և կարևոր տեղ գրավեցին օրգանական նյութերի և միացությունների կառուցվածքի ու կենսաբանական ակտիվությունների կապի ուսումնասիրություններում: Փաստորեն, ակադեմիկոս Մնջոյանը մասնավորապես ակտիվ նյութերի սինթեզի և հետազոտման դարոցի հիմնադիրն է ՀՀ-ում: Նրա ղեկավարությամբ սինթեզվել և հետազոտվել են բազմաթիվ նոր կենսաբանորեն ակտիվ նյութեր, որոնք փոխարկված ածանցյալներ են ալկիլօքսիբենզոյական թթուների, քալսաթթուների և կարբոնաթթուների: Դրանցից շատերը` Դիֆիլինը, Գանգլերոնը, Սուբիտոլինը, Արփենալը, Մեսփենալը և այլք կիրառվել են և օգտագործվում են որպես սիրտ-անոթային, նյարդա-հոգեկան,

չարորակ ուռուցքների, վարակիչ և այլ հիվանդությունների բուժման համար:

Հայ տաղանդավոր գիտնականը բարձր է գնահատվել կառավարության կողմից, պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով, մասնաՍոցիալիստական Աշխատանքի հերոս էր (1969 թ.): Ակադեմիկոս Արմենակ Մնջոյանը մեծ ծառանգություն է թողել հայկական և միջազգային նուրբ օրգանական և բժշկադեղագիտական քիմիայի բնագավառում: Նա Դեղաբանական քիմիայի բնագավառում մնացել է համաշխարային մեծագույն դեմք, հայ ժողովրդի արժանավուն զավակը և հպարտությունը:

4. Դանդյան Մամիկոն Տիգրանի (1907 թ. գ. Թեջիրաբակ (Չորաղբյուր)-1984 թ. Երևան)

Քիմ. գիտ. դոկտոր (1949 թ.), պրոֆ. (1950 թ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1953-1961 թթ. և 1967-1973 թթ.),

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1951-1979 թթ.)

Հայ նշանավոր քիմիակոս-օրգանիկ, պրոֆ. Մ.Տ. Դանդյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1936 թ.), աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, եղել է ասպիրանտ Ա. Լ. Մնջոյանի դեկավորությամբ, դոկտորական թեզը պաշտպանել է 1949 թ. Երևանում, պրոֆեսորի կոչում է ստացել 1950 թ.: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են բազմաֆունկցային γ-լակտոնների սինթեզին և դրանց փոխարկումներին ու քիմիական հատկությունների ուսումնասիրություններին: Այդ թեմատիկան հետագայում շարունակվել է ամբիոնում: 1951 թ. պրոֆ. Մ. Տ. Դանդյանը դարձել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Նա համալսարանի քիմիայի ուսուցման ֆակուլտետի դեկաններից միակն է, որ լինելով ամբիոնի վարիչ, միաժամանակ վարել է քիմիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնը երկու շրջանով՝ 1953-1961 թթ. և 1967-1973 թթ., ցուցաբերելով կազմակերպչական բարձր ունակություններ: Երկարատև աշխատանքնային գործունեության ընթացքում որպես ամբիոնի վարիչ և դեկան նպաստել է ֆակուլտետի մասնագիտական զարգացմանը: Նրա օրոք ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից ստեղծվել են պրոբլեմային, իսկ անօրգանական քիմիայի ամբիոնին

կից՝ ճյուղային գիտահետազոտական լաբորատորիաներ: Պրոֆ. Մ. Տ. Դանդյանը եղել է համեստ և առաքինի անձնավորություն, ունենալով համապատասխան արժանիքներ երբեք չի դիմել ԳԱ թղթակից անդամի կամ ակադեմիկոսի ընտրություններին մասնակցելու համար: Պրոֆ. Մ. Տ. Դանդյանը մեծ հետք է թողել համալսարանում քիմիայի զարգացման գործում և օրգանական քիմիայի գծով բարձր մակարդակի կադրերի պատրաստման գործընթացում:

5. Թառայան Վերգինե Մակարի (1905 թ. Թբիլիսի - 1985 թ. Երևան)

*Քիմ. գիտ. դոկտոր (1954 թ.), պրոֆ. (1956 թ.), ՀՀ ԳԱ թղթակից անդամ
(1956 թ.),*

ԵՊՀ քիմիական ֆակուլտետի դեկան (1961-1964 թթ.),

*ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ
(1938-1942 թթ., 1946-1954 թթ., 1962-1977 թթ.)*

Պրոֆ. Վ. Մ. Թառայանը անալիտիկ (վերլուծական) քիմիայի առաջին զարգացողներից մեկն է: Թբիլիսիում միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո ընդունվել է Թբիլիսիի պետական համալսարանի քիմիադեղագործական բաժինը (ռուսական): 1929թ. ավարտել է և նույն տարում տեղափոխվել Երևան ու աշխատանքի անցել ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղի (Արմֆան) կենտրոնական լաբորատարիայում որպես լաբորանտ, ապա ասիստենտ, իսկ 1931-1933 թթ. անալիտիկ քիմիայի բաժնի դեկավար: 1933 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ-ի ընդհանուր քիմիայի (անօրգանական և անալիտիկ քիմիայի) ամբիոնում, որպես դասախոս մինչև 1938 թվականը: 1938 թ. Լ. Ռոտինյանի դեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական թեզ և նույն թվին դարձել ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնից առանձնացված նորաստեղծ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ: Նա և պրոֆ. Լ.Ա. Ռոտինյանը միակն են քիմիայի ուսուցման ֆակուլտետում, որ ամբիոնի վարիչ են աշխատել երեք շրջանով: Ավելի քան 28 տարի դեկավարելով համալսարանի այդ ամբիոնը՝ Վ. Թառայանը պատրաստել է բազում հայ անալիտիկ քիմիկոսներ, բարձագնելով ուսումնագիտական աշխատանքների մակարդակը անալիտիկ քիմիայի գծով: Դոկտորական թեզը պաշտպանել է 1954 թ., 1956 թ.

մրան շնորհվել է պրոֆեսորի կոչում և նույն տարում ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ քոթակից անդամ: Հրատարակել է 230-ից ավելի գիտական աշխատություններ, որոնցից 10-ը հեղինակային իրավունքով: Հեղինակ է՝ «Մերկուրոռեդուկտոմետրիան որպես ծավալային անալիզի եղանակ» (1958 թ.) և «Ռենիումի անալիտիկ քիմիա» (1966 թ.) մենագրությունների: Նրա հետազոտություններում կարևոր տեղ են գրավել վերլուծական էլեկտրաքիմիական եղանակները՝ պոտենցիալաչափությունը, ամպերաչափությունը և պոլյարոգրաֆիան: Արժեքավոր են հողալկալիական մետաղների անալիտիկ քիմիային նվիրված աշխատանքները, մեծ ճանաչում ունեն մաս լուծահանման լուսաչափական (էքստրակիցիոն ֆոտոմետրական) եղանակների զարգացման ուղղությամբ դոց. Ե. Հովսեփյանի հետ կատարած ուսումնասիրությունները: Նրա ղեկավարությամբ մշակվել են բարձր զգայնության անալիզի եղանակներ, կիրառելով քիալիմային և ալկիլիմային շարքի ներկանյութեր՝ ոսկու, ռենիումի, թալիումի, գալիումի, տանտալի, ծարիրի և այլ տարրերի միկրոքանակները որոշելու համար: Պրոֆ. Վ. Թառայանը 1961-1964 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան: Միաժամանակ ղեկավարել է մաս ՀՀ ԳԱ երկրաբանության և ընդհանուր ու անօրգանական քիմիայի ինստիտուտներում վերլուծական քիմիայի լաբորատորիաները, ինչպես մաս գիտահետազոտական խմբեր: Եղել է ՀՀ ԳԱ քիմիական գիտությունների գիտխորհրդի անդամ, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ: Վ. Մ. Թառայանը միջազգային ճանաչում ունեցող պատկառելի հայ կին քիմիկոս էր անալիտիկ քիմիայի ոլորտում, թողել է գիտական մեծ ժառանգություն և պատրաստել մեծ քվով քիմիկոս կադրեր:

6. Խաչատուրյան Կարո Էրանի (1909 թ. Ջրաշեն, Բասեն-1993 թ. Երևան)

Տեխնիկական գիր. դոկտոր (1957 թ.), պրոֆեսոր (1958 թ.),

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան (1960-1961 թթ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1964-1967 թթ.),

*ԵՊՀ քիմ. թերմոդինամիկայի և նյութի կառույցի ամբիոնի վարիչ
(1964-1967 թթ.),*

ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնի վարիչ (1967-1984 թթ.),

ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (1967-1977 թթ.)

Պրոֆեսոր Կ. Է. Խաչատուրյանը հայ խորհրդային նշանավոր ֆիզիկոս-քիմիկոս է, առվորել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանում և 1935 թ. ավարտել քիմիայի ֆակուլտետը: 1939 թ.-ից դասախոսել է Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմածովային ակադեմիայում, իսկ 1945 թ. նշանակվել է Ա. Ն. Կռիլովի անվան ակադեմիայի թերմոդինամիկայի և այրման տեսության ամբիոնի պետ: Նա տեխնիկական գիտությունների դոկտոր էր (1957 թ.), պրոֆեսոր (1958 թ.), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (1967 թ.): 1960 թ. գնդապետի կոչումով զորացրվել է և անցել քաղաքացիական ծառայության: Աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում կարճ ժամանակով որպես դեկան, ապա 1961 թ.-ից տեղափոխվել է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոն որպես պրոֆեսոր, այնուհետև իր կողմից նորաստեղծ քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի ամբիոնի վարիչ (1964-1967 թթ.), ապա անվանափոխված՝ ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնի վարիչ (1967-1984 թթ.): Ընտրվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1964-1967 թթ.), ապա նշանակվել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (1967-1977 թթ.), միաժամանակ լինելով քիմիայի ֆակուլտետի պրոֆեսոր (մինչև 1993 թ.): Պրոֆ. Կ. Է. Խաչատուրյանի գիտական աշխատանքները վերաբերում են հեղուկների ու լուծույթների մակերևութային լարվածության թերմոդինամիկային և հրթիռային շարժիչներում վառելանյութի այրման ու գազային պրոցեսների տեսության հարցերին: Եղել է Բրատիսլավայի համալսարանի պատվավոր դոկտոր (1970 թ.) և Խորհրդային Միության ԳԱ բարձր ջերմաստիճանային ջերմաֆիզիկայի գիտական խորհրդի անդամ: Հրատարակել է «Տեսական քիմիայի հիմունքները» ուսումնական ձեռնարկը (I և II մասեր), ԵՊՀ

հրատարակչություն (1974 թ., 1978 թ.) և „Основы термодинамики и теории горения” (части 1-3) Москва, 1951-1955 гг., մենագրությունը: Պրոֆ. Կ.Է. Խաչատուրյանը նշանակալի ավանդ է թողել Խորհրդային Միության ռազմածովային ակադեմիայի թերմոդինամիկայի և ալյուման տեսություն ամբիոնի պետ աշխատելու ժամանակ և ԵՊՀ-ում քիմիական թերմոդինամիկայի ու տեսական քիմիայի բնագավառներում, նաև համալսարանի ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու զարգացման ոլորտում:

7. Ավագյան Սարգիս Նազարի

(1918 թ. Դարբազ, Լոռի-1995 թ. Երևան)

Քիմ. գիյր. դոկտոր (1967 թ.), պրոֆ. (1968 թ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1973-1975 թթ.),

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ուսումնական աշխատաքների գծով պրոռեկտոր և

Քիմիայի ամբ. վարիչ (1975-1984 թթ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1984-1989 թթ.)

Ծնվել է Լոռու մարզի Դարբազ գյուղում և գերազանց առաջադիմությամբ ավարտել Վանաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1936 թ. ընդունվել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիա-տեխնոլոգիական ֆակուլտետը: Ինստիտուտը ավարտելուց հետո 1941 թ. հունիսին կամավոր մեկնել է ռազմաճակատ և մասնակցել հայրենիքի պաշտպանության համար մղվող պայքարին: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո մայրիկոչումով Ս. Ավագյանը վերադարձել է Երևան և 1946 թ. ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետին կից ասպիրանտուրան «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ: 1948 թ.-ից Ս. Ավագյանը աշխատել է համալսարանի քիմիական ֆակուլտետում որպես ասիստենտ, ապա ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, դեկան: 1953 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1967 թ. դոկտորական ատենախոսություն՝ «Անցման շարքի մետաղների նոր կոմպլեքսային միացությունները մոնոդենտատային և պոլիդենտատային լիգանտների հետ» թեմայով Թբիլիսիի համալսարանի մասնագիտական խորհրդում: Նրա գիտական հետազոտությունները նվիրված են հիմ-

նականում օլեիֆենային, դիօլեիֆենային և խելատային բնույթի կոմպլեքս միացությունների սինթեզին ու ուսումնասիրմանը: Հրատարակել է 100-ից ավելի գիտական աշխատանքներ: Բազմիցս մասնակցել է միութենական և միջազգային գիտաժողովներին, 1970 թ. Կրակովի կոմպլեքսային միացությունների քիմիայի միջազգային 18-րդ գիտաժողովում Ս. Ավագյանը ընտրվել է բաժնի նախագահ: 1973-1975 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան: ՀՀ կառավարության կողմից պրոֆ. Ս. Ավագյանը 1975 թ. նշանակվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, որտեղ աշխատել է մինչև 1984 թ., միաժամանակ դեկավարել է նաև ինստիտուտի Անօրգանական քիմիայի ամբիոնը: Եղել է ՀՀ ՈՒԳՀԱ հանրապետական խորհրդի նախագահ, ՈՒԳՀԱ համամիութենական խորհրդի նախագահության անդամ, Կրթության և գիտության նախարարության քիմիայի և քիմիական տեխնոլոգիայի գիտա-մեթոդական բաժնի նախագահ: Պրոֆ. Ս. Ն. Ավագյանը 1984 թ. վերադարձել է ԵՊՀ և ընդտրվել ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Պրոֆ. Ս. Ավագյանը եղել է ուսանողների և աշխատողների կողմից հարգված, հանրապետությունում ճանաչված անձնավորություն: Նա եղել է բարի, հոգատար, հայրենասեր, մշտապես իր հարուստ փորձը և հմտությունը սիրով հաղորդել է ուսանողությանն ու երիտասարդությանը: Իր մարտական ծառայությունների և աշխատանքային բեղմնավոր գործունեության համար պրոֆ. Ս. Ավագյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և տասնյակ մեդալներով ու բազում պատվոգրերով: Նա անջնջելի հիշողություն է թողել իր գործընկերների և ուսանողության մոտ:

8. Նալչաջյան Սուրեն Հովհաննեսի (1926 թ. Բեյրութ, Լիբանան - 2000 թ. Երևան)

*Քիմ. գիտ. թեկնածու (1966 թ.), դոց. (1967 թ.),
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1975-1985 թթ.)*

Դոցենտ Ս.Հ Նալչաջյանը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի և ՀՀ լավագույն ֆիզիկաքիմիկոսներից մեկն էր: Ծնվել է 1926 թ. Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Տասը տարեկանում մեկնել է Կիպրոս միջնակարգ կրթություն ստանալու նպատակով: Հաշվի առնելով նրա

բարձր մտավոր ընդունակությունները, նրան ընդունել են Կիպրոսի Մելքոնյան վարժարանի 5-րդ դասարան, ուր սովորում էին իրենից 2-3 տարով մեծ հայրորդիներ: Նա շուտով աչքի է ընկնել իր ֆիզիկամաթեմատիկական արտակարգ ընդունակություններով և բարձր առաջադիմությամբ, նաև որպես կարգապահ աշակերտ: Ակնառու հաջողությամբ ավարտել է Մելքոնյան ուսումնական հաստատությունը և վերադարձել ծննդավայր՝ Բեյրութ, շարունակել զարգացնել կրթությունը և աշխատել: 1946 թ. ընտանիքով հայրենադարձվել են Երևան մշտական բնակության և նույն տարում Ս. Նալչաջյանը ընդունվել է ԵՊՀ-ի իր նախասիրած Քիմիայի ֆակուլտետը, որտեղ սովորելու տարիներին ցուցաբերել է բացառիկ ընդունակություններ ֆիզիկամաթեմատիկական և քիմիա առարկաներից՝ հանդես գալով գիտական զեկուցումներով: 3-րդ կուրսից կապվել է ֆիզքիմիայի ամբիոնի հետ, դառնալով ամբիոնի վարիչ պրոֆ. Հ. Չալքիկյանի ամենասիրելի ուսանողներից մեկը: Ավարտելուց պրոֆ. Հ. Չալքիկյանը նրան հրավիրում է աշխատել համալսարանում, սակայն նա աշխատանքի է անցնում ՀՀ-ի ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում, որտեղ ուշագրավ հետազոտություններ է կատարում նոր տեսակի ապակիների ստացման և հալույթների էլեկտրաքիմիայի բնագավառում՝ դառնալով ինստիտուտի կողմից հրատարակված մենագրության համահեղինակ: Իր ստացած գիտահետազոտական արդյունքներով 1966 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Այնուհետև, որպես լաբորատորիայի վարիչ, գլխավորել է մաքուր սիլիցիումի օքսիդների և դրանց միացությունների ստացման աշխատանքները՝ զբաղվելով նաև ուսումնասիրվող համակարգերի տեխնոլոգիական պրոբլեմների տեսության խնդիրներով: Ս. Նալչաջյանը որպես դոցենտ սկսել է աշխատել ԵՊՀ ֆիզիկական քիմիայի իր հարազատ ամբիոնում, ամբիոնի վարիչ ՀՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Չալքիկյանի հրավերով: Նա բարձրահասակ, հաճելի տղամարդ էր, բարձր ինտելեկտով և մասնագիտական հեղինակությամբ օժտված, ֆակուլտետի կոլեկտիվը հարգում էր նրան, ուստի և նշանակվեց դեկանի տեղակալ, իսկ այնուհետև ընտրվեց դեկան: Նա ուներ գիտական հարցերի նկատմամբ ինքնուրույն մոտեցում և մտածելակերպ: 1980-ական թվականներին ներգրավվել է ամբիոնի պրոբլեմային լաբորատորիայի գիտական թեմաների կատարման

աշխատանքներում (ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Բեյլերյանի ընդ-
հանուր ղեկավարությամբ): Ս. Նալչաջյանը ակտիվորեն զբաղվել է
գիտությամբ, էմուլսիայում պոլիմերման նոր տեսության մշակմամբ,
այդ բնագավառում ներդնելով իր հմտությունը և որակական ու քա-
նակական մտածելակերպի ողջ տաղանդը: Նա չպաշպանեց դոկտո-
րական թեզ, սակայն ընդմիջտ մնաց քիմիական գիտության իսկական
դոկտոր, հանրապետության լավագույն ֆիզիկաքիմիկոսներից մեկը
և շատերի կողմից ճանաչված, թե՛ որպես բարձրակարգ քիմիկոս, թե՛
որպես հայ մարդ, ով իր բարի և լավագույն հիշողություններն է թողել
ֆակուլտետի աշխատակիցների, ուսանողության, բոլոր գործընկեր-
ների ու իրեն ճանաչողների շրջանում:

9. Ավետիսյան Աիդա Ավետիսի (1938 թ. Երևան - 2009 թ. Երևան)

*Քիմ. գիյր. դոկտոր (1975 թ.), պրոֆ. (1976 թ.), Էկոլոգիական ՄԱ ակադեմիկ
(1996 թ.), ՀՀ ԳԱԱ ակադ. (1999 թ.), ՌԴ բն. գիյր. ակադ. (2000 թ.),
ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1979-2000 թթ.),
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան (1985-2009 թթ.)*

Պրոֆեսոր Ա.Ա. Ավետիսյանը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի բոլոր
ժամանակների ամենաերկարատև աշխատած ղեկանն է: 1960 թ.
ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, այնուհետև ընդունվել Մոսկ-
վայի ԽՍՀՄ ԳԱ Ջեկինսկու անվան ինստիտուտի ասպիրանտուրան
և պաշտպանել թեկնածուական թեզ: 1966 թ. վերադարձել է համալսա-
րան ու աշխատել որպես դասախոս, միաժամանակ բուռն կերպով կա-
տարելով գիտահետազոտական աշխատանքներ չհագեցած լակտոն-
ների, ֆուրանոնների և պիրանոնների սինթեզի և հետազոտություն-
ների բնագավառում: 1975 թ. պաշտպանել է դոկտորական թեզ, 1976
թ.-ից պրոֆեսոր է, 1979 թ. ընտրվել է Օրգանական քիմիայի ամբիոնի
վարիչ և ցուցաբերել կազմակերպչական մեծ ունակություններ ուսում-
նագիտական աշխատանքները ամբիոնում զարգացնելու և կադրերի
պատրաստման գործում: Ամբիոնը նրա ղեկավարության ժամանակ
աստիճանաբար դարձավ լակտոնների ուսումնասիրությունների
գծով Խորհրդային Միության գիտական կենտրոններից մեկը: Պրոֆ.
Ա. Ավետիսյանի ուսումնագիտական գործունեությունը ֆակուլ-

տետում լայն ծավալի և ավելի բարձր մակարդակի հասավ նրա դեկանության ժամանակ: Ֆակուլտետում բացվեցին ուսումնական նոր մասնագիտական ամբիոններ և բաժիններ՝ Դեղագործական քիմիա, Էկոլագիական քիմիա և Կիրառական քիմիա: 2005 թ. ֆակուլտետում գիտահետազոտական աշխատանքները մեծ թափ ստացան և բացվեցին բազային գիտահետազոտական լաբորատորիաներ՝ Անօրգանական, Օրգանական և Ֆիզիկական քիմիաների ամբիոններին կից: Նրա ղեկավարությամբ Օրգանական քիմիայի ամբիոնում տարվել են բազմաբնույթ գիտահետազոտական աշխատանքներ՝ նվիրված թթվածին, ազոտ և ծծումբ պարունակող տարացիկլային, մաս կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին և հետազոտությանը, մշակվել է կումարինների և թիոլակտամների ստացման եղանակ, սինթեզվել է վերափոխված (մոդիֆիկացված) պոլիվինիլպիրոլիդոն (արյան փոխարինիչ), հայտնաբերվել է հիդրազոնների ցիկլունով պիրազոլիդոնների ստացման նոր ռեակցիա:

Համահեղինակ է «Օրգանական քիմիա» (1988 թ.), «Օրգանական քիմիայի խնդրագիրք» (1988 թ.), «Օրգանական քիմիայի պրակտիկում» (2011 թ.), «Ալկեններ, ցիկլոալկեններ, ալկիններ, կառուցվածքը և հատկությունները» (2008 թ.), «Ալկենների քիմիական հատկությունները» (2005 թ.) դպրոցական և ուսումնամեթոդական ձեռնարկների: Նա արժանացել է ՀՀ Անամիա Շիրակացի մեդալի (1999 թ.) և ՀՀ մախագահի մրցանակակի (2004 թ.):

Ա. Ավետիսյանը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ամենապայծառ և նշանավոր դեմքերից էր, օրգանական քիմիայի բնագավառում մեծ ճանաչում ունեցող գիտնական:

10. Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի (1949 թ. Մեծ Պարնի)

Քիմ. գիտ. դոկտոր (2008 թ.), պրոֆեսոր (2010 թ.),

ՌՖ ԲԳԱ ակադեմիկոս (2016 թ.),

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան (2010 թ. առ այսօր)

Քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Տ. Ղոչիկյանը օրգանական քիմիայի ճանաչված մասնագետներից է: Նրա կատարած գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են հազեցած γ-լակտոնների և ֆունկցային տեղակալված սպիրո-դիլակտոնների նոր

ածանցյալների, ինչպես նաև տարացիկլային կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին և դրանց հատկությունների ուսումնասիրություններին: Բազմաֆունկցային ածանցյալների հետազոտությունների հիման վրա նրան առաջինը հաջողվել է մշակել նոր քիմիական դասերի նյութերի սինթեզի եղանակներ, որոնք նախկինում նկարագրված չեն և լայն հնարավորություն են ընձեռում սինթեզելու այնպիսի նոր միացություններ, որոնց ստացման համար այլ ուղի չկա: Պրոֆ. Տ. Ղոչիկյանը ոչ միայն օրգանական սինթեզի մասնագետ է, այլ նաև քիմիայի ուսումնական գործի քաջ գիտակ՝ երկար տարիներ ծավալելով ուսումնադաստիարակչական գործունեություն ուսանողական և դպրոցական օլիմպիադաներում և մրցույթներում:

Տ. Ղոչիկյանը ծնվել է ՀՀ Մեծ Պարնի գյուղում (01.12.1949 թ.), մանկությունը և պատանեկությունը անցել է Թբիլիսիում, որտեղ և ստացել է միջնակարգ կրթություն: Դպրոցն ավարտելուց հետո աշխատել է արտադրությունում, ապա ծառայել Խորհրդային բանակում, իսկ 1972 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ և այն գերզանցությամբ ավարտել 1977 թ.: Դեռևս ուսանող եղած ժամանակ (1975 թ.-ից) որպես առաջադեմ ուսանող ներգրավվել է աշխատանքի ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ և ակտիվորեն զբաղվել գիտահետազոտական աշխատանքով՝ պրոֆ. Մ. Գ. Ջալիլյանի ղեկավարությամբ: 1985 թ. դարձել է քիմ. գիտ. թեկնածու, 2004 թ. ստացել է դոցենտի կոչում, 2008 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, պրոֆեսոր է 2010 թ.-ից: 2010 թ. ընտրվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկան և միաժամանակ ղեկավարել է նաև ամբիոնին կից գործող՝ «Ազոտ, թթվածին, ծծումբ պարունակող տարացիկլային միացությունների քիմիա» գիտահետազոտական լաբորատորիան: Կատարել է տնտայնամագրային, բյուջետային և այլ գիտահետազոտական աշխատանքներ, որոնցից երկուսը ներդրվել են քիմիական ռեակտիվների գործարանում: Ունի «ԽՍՀՄ գյուտարար»-ի կոչում, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (2016 թ.): Միջազգային համագործակցության շրջանակներում համատեղ աշխատանքներ է կատարում Գերմանիայի Դաշնության Ռոստոկի և Ջաառլանդի համալսարանների և ՌԴ Մոսկվայի պետական ու Կազանի բժշկական համալսարանների հետ: Եղել է ՀՀ ԲՈՀ-ի 010, 018 մասնագիտական խորհրդ-

ների անդամ (2011-2017 թթ.), իսկ ներկայումս 010 մասնագիտական խորհրդի անդամ է: Պրոֆ. Տ. Ղուչիկյանը համահեղինակ է 265 մեթոդական և գիտական հոդվածների, զեկուցման թեզիսների, հեղինակային իրավունքների և պատենտների, ինչպես նաև «Որոշ ֆունկցիոնալ խմբերի անալիզի որակական և քանակական եղանակներ» (2012 թ.), «Քիմիայի լաբորատոր աշխատանքներ» (2011 թ.) և «Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» (2017 թ.) ձեռնարկների:

III-2. Երևանի համալսարանի քիմիայի ուսուցման ֆակուլտետների, բաժինների, ամբիոնների և ամբիոնի վարիչների գործունեությունները (1919-2019 թթ.)

Համալսարանը ստեղծվելուց հետո՝ սկսած 1920-ական թվականներից, նեղ մասնագիտական՝ օրգանական, անօրգանական, ֆիզիկական, անալիտիկ, նաև՝ նուրբ օրգանական և տեխնոլոգիական քիմիաները, բարձրակարգ քիմիկոսներով ուսուցանվել են Գյուղատնտեսական և Բնագիտական ֆակուլտետների ուսանողությանը մինչև 1930-ական թթ.: Այդ ընթացքում բացվել են քիմիայի նոր բաժիններ և ամբիոններ, որը տեղի է ունենում նաև ներկա ժամանակներում: ԵՊՀ-ի քիմիայի ուսուցման ֆակուլտետների և ամբիոնների ուսումնառական սույն ժամանակագրությունը ամբողջությամբ արտացոլում է ոչ միայն համալսարանի, այլև, ընդհանրապես, ՀՀ-ում քիմիայի զարգացումն ու քիմիկոս պրոֆեսորադասախոսական և գիտահետազոտական բարձր մակարդակի կազմի ձևավորումը, դերն ու նվիրումը, նրանց գործունեությունը այդ կարևոր բնագավառում վերջին հարյուր տարում, բոլոր բուհերում և գիտական օջախներում, քանի որ նրանք համալսարանի ծնունդ են:

Ստորև ներկայացվում է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի առանձին գործող մասնագիտական ամբիոնների դերն ու նշանակությունը քիմիայի զարգացման տարբեր փուլերում, առանձնապես դրանք շեշտելով սկսած 1920-ական թթ.: Հակիրճ ներկայացված են համալսարանում (և ոչ միայն) քիմիայի զարգացման՝ ուսումնական, գիտական, արդյունաբերական և կիրառական բնագավառներում խոշոր ու նշանակալից գործունեություն ծավալած նշանավոր քիմիկոս-մասնագետների՝ դեկանների, ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, գիտաշխատողների ուսումնառական կենսագրությունները (դեկաններիինը՝ նախորդ բաժնում, իսկ ամբիոնի վարիչներինը՝ այս բաժնում): Առ այսօր Բիմիայի (1934-2015 թթ.), Դեղագիտության և քիմիայի (2015-2016թթ.), Քիմիայի (2017 թ.) ֆակուլտետներում գործել են 7 մասնագիտական առանձին ամբիոններ (Աղյուսակ 1):

Ժամանակի ընթացքում որոշ ամբիոնների անվանումներ փոփոխություն են կրել՝ Անօրգանականը կոչվել է նաև Ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոն, Ֆիզիկական քիմիան՝ Ֆիզիկական

և կոլոիդային քիմիայի ամբիոն (մինչև հիմա), Տեսական քիմիայի ամբիոնը (1964-2008 թթ.) սկզբում կոչվել է՝ Թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի ամբիոն (1964-1970 թթ.), հետո՝ Տեսական քիմիայի (1970-1984 թթ.), ապա՝ Կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոն (1987-2002 թթ.), վերջում՝ Քիմիական ֆիզիկայի (2005-2008 թթ.):

Որոշ ժամանակահատվածում համատեղ գործել են Անօրգանական և Անալիտիկ քիմիայի ամբիոնները (1923-1934 թթ. և 2013 թ.-ից առ այսօր): 2008 թ. լուծարվել է քիմիական ֆիզիկայի ամբիոնը, լուծարվել է նաև Էկոլոգիական քիմիայի ամբիոնը (2015 թ.) ժամաքանակի պակաս լինելու պատճառով: 2013 թ. Անալիտիկ քիմիայի ամբիոնը, նույնպես ժամաքանակի պակասի պատճառով, միացվել է Անօրգանական քիմիայի ամբիոնին և ներկայումս ամբիոնը գործում է՝ «Անօրգանական և անալիտիկ քիմիա» անվանումով: 2015-2016 թթ. Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում գործել են ևս երկու ամբիոն՝ դեղաբանության մասնագիտացմամբ: Ֆակուլտետի Դեղաբանական մասնագիտական այդ ամբիոնների բազայի հիման վրա 2017 թ. հունվարից ԵՊՀ-ում ստեղծվել է Ֆարմացիայի ինստիտուտ՝ ակադեմիկոս Աշոտ Սաղյանի ղեկավարությամբ:

Ստորև ներկայացվում են ԵՊՀ-ում քիմիայի ուսուցման նեղ մասնագիտական բաժինները և ամբիոնները առ 1920 թ. առ այսօր՝ ըստ ժամանակակարգի (հները, նոր ստեղծվածները, լուծարվածները և գործողները):

1. Օրգանական քիմիայի բաժին-1920-1921 թթ., ամբիոն – 1922 թ. (մշտապես առանձին գործող):
2. Անօրգանական քիմիայի բաժին – 1920-1922 թթ., ամբիոն – 1923 թ.-ից առ այսօր (առանձին գործող 1934-2013 թթ.):
3. Անալիտիկ քիմիայի բաժին – 1920-1922 թթ., ամբիոն – 1923 թ. (առանձին գործող 1934-2013 թթ.):
4. Ֆիզիկական քիմիայի բաժին – 1920-1922 թթ., ամբիոն – 1923 թ. (մշտական առանձին գործող):
5. Քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի (1964-1970 թթ.), Տեսական քիմիայի (1970-1984 թթ.), Կատալիզի և տեխնիկական քիմիայի (1987-2005 թթ.), Քիմիական ֆիզիկայի (2005-2008 թթ.), որը լուծարվել է 2008 թ.:
6. Դեղաբանական քիմիայի բաժին – 1994-1997 թթ.:

7. Դեղագործական քիմիայի ամբիոն – 1998 – 2016 թթ.: 2017 թ.-ից՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում:
8. Կիրառական քիմիայի բաժին – 1995 -2002 թթ., լուծարվել է 2002 թ.:
9. Էկոլոգիական քիմիայի միջամբիոնային ուսումնական լաբորատորիա – 1997-2007 թթ.:
10. Էկոլոգիական քիմիայի ամբիոն – 2007-2015 թթ., լուծարվել է 2015 թ.:
11. ԵՊՀ Էկոլոգիական անվտանգության կենտրոն – 2009 թ.:
12. Կենսաբժշկագիտության ամբիոն – 2015-2016 թթ.: 2017 թ.-ից ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում:
13. Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի Էկոնոմիկայի և Կառավարման ամբիոն – 2015-2016 թթ.: 2017 թ.-ից ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում:

ԵՊՀ-ի քիմիայի ուսուցման ֆակուլտետներում (1920 թ. մինչև հիմա) մասնագիտական բաժնի և ամբիոնի վարիչներ են աշխատել 31 անձ, ընդ որում նրանցից տարբեր ակադեմիկոսների անդամներ (ակադեմիկոս կամ թղթակից անդամ)՝ 15 անձ, դոկտոր-պրոֆեսոր՝ 30 անձ, քիմ.գիտ.թեկնածու-դոցենտ՝ 5 անձ, կին՝ 6 անձ: ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում ամբիոնի վարիչներ աշխատել են հետևյալ դասախոսները.

1. Ղամբարյան Ստեփան Պողոսի (1879-1948 թթ.), 1922-1937 թթ. (Օրգանական քիմիա):
2. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի (1879-1964 թթ.), 1923-1938 թթ. (Ֆիզիկական քիմիա), 1923-1933 թթ. (Անօրգանական և անալիտիկ քիմիա), 1933-1937 թթ., 1942-1946 թթ. (Անալիտիկ քիմիա):
3. Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի (1874-1958 թթ.), 1934-1937 թթ. (Անօրգանական քիմիա):
4. Իսազուլյան Կաչե Հովհաննեսի (1893-1973 թթ.), 1942-1944 թթ. (Օրգանական քիմիա):
5. Ղազանչյան Տիրան Տիրանի (1901-1967 թթ.), 1950-1963 թթ. (Անօրգանական քիմիա):
6. Չալքիկյան Հովհաննես Հակոբի (1902-1972 թթ.), 1939-1972 թթ. (Ֆիզիկական քիմիա):

7. Մնջոյան Արմենակ Լևոնի (1904-1970 թթ.), 1938-1941 թթ., 1944-1951 թթ. (Օրգանական քիմիա):

8. Թառայան Վերգինե Մակարի (1905-1985 թթ.), 1938-1942 թթ., 1946-1954 թթ., 1962-1977 թթ. (Անալիտիկ քիմիա):

9. Դանդյան Մամիկոն Տիգրանի (1907-1984), , 1951-1979 (Օրգանական քիմիա):

10. Դարբինյան Մամիկոն Վարդանի (1908-1969 թթ.), 1954-1963 թթ. (Անալիտիկ քիմիա), 1963-1969 թթ. (Անօրգանական քիմիա):

11. Խաչատրյան Կարո Էրանի (1909-1993 թթ.), 1964-1970 թթ. (Քիմիական թերմոդինամիկա և մոլեկուլի կառույց), 1970-1984 թթ. (Տեսական քիմիա):

12. Մելքոնյան Լիպարիտ Գևորգի (1909-1976 թթ.), 1972-1976 թթ. (Ֆիզիկական քիմիա):

13. Մարտիկյան Դերենիկ Հովսեփի (1910-1950 թթ.), 1937-1950 թթ. (Անօրգանական քիմիա):

14. Ավագյան Սարգիս Նազարի (1918-1995 թթ.), 1984-1989 թթ. (Անօրգանական քիմիա):

15. Բաբայան Հրանտ Գրիգորի (1927-2014 թթ.), 1969-1983 թթ. (Անօրգանական քիմիա):

16. Բեյլերյան Նորայր Մանվելի (1929 թ.), 1976-2000 թթ. (Ֆիզիկական քիմիա):

17. Մուշեղյան Աշոտ Վարազդատի (1933-1994 թթ.), 1987-1994 թթ. (Կատալիզ և տեխնիկական քիմիա):

18. Ավետիսյան Աիդա Ավետիսի (1938-2009 թթ.), 1979-2000 թթ. (Օրգանական քիմիա):

19. Հարությունյան Վիլիկ Սիրակի (1938-2015 թթ.), 2000-2015 թթ. (Օրգանական քիմիա):

20. Գրիգորյան Մերգեյ Կոստանդի (1938 թ.), 1989-2007 թթ. (Անօրգանական քիմիա):

21. Հարությունյան Ռոմիկ Սուրենի (1946 թ.), 2007-2013 թթ. (Անօրգանական քիմիա), 2013-2018 թթ. (Անօրգանական և անալիտիկ քիմիա):

22. Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի (1947 թ.), 2000 թ. (Ֆիզիկական քիմիա):

23. Խառատյան Սուրեն (1948 թ.), 2002-2005 թթ. (Կատալիզ), 2005-

2008 թթ. (Քիմիական ֆիզիկա):

24. Խաչատրյան Համբարձում Գուրգենի (1948 թ.), 1983-2013 թթ. (Անալիտիկ քիմիա):

25. Փիրումյան Գևորգ Պետրոսի (1951 թ.), 2007-2015 թթ. (Էկոլոգիական քիմիա):

26. Գրիգորյան Գրիգոր Գևորգի (1951), 1994-2002 թթ. (Կատալիզ և տեխնիկական քիմիա):

27. Սաղյան Աշոտ Սերոբի (1957 թ.), 2000-2016 թթ. (Դեղագործական քիմիա):

28. Դուրգարյան Նարինե Անժելոյի (1963 թ.), 2016 թ. (Օրգանական քիմիա):

29. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի (1959 թ.), 2018 թ. (Անօրգանական և անալիտիկ քիմիա):

30. Հովհաննեսյան Ռուբեն Անդրանիկի (1951 թ.), 2015-2016 թթ. (Կենսաբժշկագիտություն):

31. Հովհաննեսյան Անահիտ Մխիթարի (1962 թ.), 2015-2016 թթ. (Ֆարմատեխնոլոգիա և ֆարմացիա, էկոնոմիկա ու կառավարում):

Հաջորդիվ ներկայացվում են ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում ամբիոնների ուսումնագիտական գործունեության պատմությունը և ամբիոնի վարիչների համառոտ կենսագրությունները:

III-2-1. Օրգանական քիմիայի ամբիոն (1920-2019 թթ.)

Օրգանական քիմիայի ամբիոնի ձևավորումն ու կազմակերպումը նորաստեղծ Երևանի համալսարանի բնագիտական ֆակուլտետում իրագործել է հայ խոշորագույն քիմիկոս, պրոֆեսոր Ս. Ղամբարյանը: Նա մեր հանրապետությունում քիմիական գիտության բնագավառի մասնագետների մեջ ամենակարկառուն ու պայծառ դեմքերից է, ով կրթվել և մասնագիտացել է Գերմանիայում (1899-1906 թթ.): Միջազգային գիտական գրականության մեջ պրոֆ. Ս. Ղամբարյանը հիշատակվում է աշխարհում ազատ ռադիկալներ առաջացնող գործընթացների առաջին հետազոտողը: Մեծ է նրա դերը գերօքսիդների քիմիայի բնագավառում, որոնց ուսումնասիրությունները շարունակվել են ֆիզիկական քիմիայի ամբիոնում պրոֆ. Հ. Չալքիկյանի կողմից: Պրոֆ. Ս. Ղամբարյանը 1920 թ. արտի մոմենտով, կամավոր վերադարձել է Մայր Հայրենիք՝ նորաստեղծ Խորհրդային Հայաստան և համալսարանի ստեղծման առաջին իսկ օրից նվիրվել է հայ ժողովրդի քիմիական կրթության, գիտության, արդյունաբերության, մաս արվեստի (կուլտուրայի) վերածննդի և զարգացման վեհ գործին: Նա համախմբել է իր շուրջը արտերկրներում ուսում ստացած խոշոր գիտնականների՝ Լ. Ռոտինյան, Պ. Քալանթարյան, Հ. Ակունյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Հակոբյան և ուրիշներ, իսկ հետագայում մաս անվանի գիտնականներ դարձած իր սաներին, քիմիայի տարբեր նեղ մասնագիտությունների տիրապետողներ՝ Հ. Չալքիկյան, Ա. Մնջոյան, Ա. Բաբայան, Ս. Վարդանյան, Վ. Ազատյան, Դ. Մարության, Վ. Իսագուլյանց և շատ ուրիշների: Պրոֆ. Ս. Ղամբարյանը մինչև 1937թ. վերջը իր գործընկերների հետ միասին ստեղծել, կազմակերպել և զարգացրել է օրգանական քիմիայի (մաս մյուս մասնագիտական ամբիոնների) լաբորատորիաները, իսկ 1930-ական թվականներից հետո մաս համալսարանից առանձնացած ինքնուրույն գործող այլ բուհերում: Նրա անմիջական ջանքերով կազմավորվել են ու մի քանի տարի նրա կողմից դեկավարվել են Օրգանական քիմիայի ամբիոնը և լաբորատորիաները ինչպես համալսարանում, այնպես էլ առանձնացած ինստիտուտներում:

Քիմիայի բարձրագույն կրթության կազմակերպման սկզբնական փուլում պրոֆ. Ղամբարյանը բացի օրգանական քիմիայից, կար-

դացել է մաս ընդհանուր և անօրգանական քիմիայի դասընթացներ համալսարանի նորաստեղծ՝ Գյուղատնտեսական, Բժշկական և Տեխնիկական ֆակուլտետներում:

Պրոֆ. Ս. Ղամբարյանը եղել է ոչ միայն փայլուն մանկավարժ ու դասախոս, այլ մաս շատ տաղանդավոր գիտնական, նրան հետաքրքրում էր այն ամենը ինչից կարելի էր քիմիական ճանապարհով օգուտ քաղել ժողովրդականության համար: Նրա գործունեության և հետաքրքրությունների ոլորտները քիմիայի բնագավառում բազմազան էին:

Պրոֆ. Ս. Ղամբարյանը իր ուսումնագիտական, կազմակերպչական և ղեկավար գործունեություններին համընթաց մեծագույն դեր է կատարել ՀՀ-ում քիմիական արդյունաբերության ստեղծման, զարգացման և ներդրման գործում: Նա պրոֆեսոր Լևոն Ռոտինյանի, Պապա Քալանթարյանի, ամբիոնի անդամների և այլոց հետ ամենագործուն մասնակցությունն է ունեցել պետական տարբեր մակարդակներում քիմիական արդյունաբերության (հատկապես՝ Երևանի, Վանաձորի, Ալավերդու գործարանների) հարցերի և խնդիրների գործընթացում, որտեղ Ս. Ղամբարյանի մոտեցումն ու խոսքը միշտ իր տեղն է ունեցել: Առանձնապես Երևանի «Կաուչուկ» գործարանի ստեղծման և կազմակերպման գործընթացում հիմնական և արտակարգ դեր է ունեցել պրոֆ. Ս. Ղամբարյանը, ինչը նրա կյանքում եղել է հերոսական: 1920 թ. սկսած մեծ էր կաուչուկի արտադրության պահանջը աշխարհում, հատկապես կաուչուկը որպես ավտոդողերի հումք օգտագործելու տեսակետից: Կաուչուկատու բույսերից կաուչուկի ստացումը, որը առաջինը իրականացվել է ԱՄՆ-ում Դյուպոն ֆիրմայի գործարանում, պահանջները չէր բավարարում՝ քիչ էր և քանկ: Սկսվեց արհեստական ճանապարհով կաուչուկ ստանալու որոնումները թե՛ Ամերիկայում, թե՛ Եվրոպայում, թե՛ Ռուսաստանում: Ռուսաստանում առաջինը կարտոֆիլից ստացան էթիլ սպիրտ, դրանից բութադիեն ու այնուհետև ռուս մեծ գիտնական ակադեմիկոս Սերգեյ Վասիլևիչ Լեբեդևը մշակեց և աշխարհում առաջինը ստացավ բութադիենային սինթետիկ կաուչուկ: Սակայն դա շատ քանկ եղանակ էր, անհրաժեշտ էր գտնել կաուչուկ ստանալու հումքի՝ ագետիլենի, նոր և էժան ճանապարհ: Հարկ է նշել, որ գիտական աշխարհում մշակված էր ագետիլենի բազայի վրա քլորոպրեն և պոլիքլորոպրեն

ստանալու արդյունաբերական եղանակը դեռևս 1925թ.: Սակայն հեշտ և էժան ճանապարհով կաուչուկի հումքի (ացետիլենի) ստացումը դեռ մնում էր պրոբլեմ, այդ խնդիրը չէր լուծված, իսկ տարաբնույթ մեքենաների և արտադրության ընդլայնումը աշխարհում արդեն մեծ քանակության անվադողների պահանջարկ ուներ: Աշխարհում պրպտումները շարունակվում էին...

Կարելի է հպարտանալ, որ այդ խնդիրը աշխարհում առաջինը լուծեց հայազգի հանճարեղ գիտնական-քիմիկոս պրոֆ. Ս. Ղամբարյանը, ով սինթետիկ կաուչուկի հումքի՝ ացետիլենի, ստացման համար առաջարկեց իր իսկ կողմից մշակած շատ պարզ և հասարակ եղանակ: Հումքը հանրահայտ և համեմատաբար էժան կրաքարն էր և քարածուխը: Կրաքարը ածխի հետ բարձր ջերմային փոխազդեցությամբ ստացվում է կալցիումի կարբիդ, ապա ջրի հետ դրա փոխազդմամբ ացետիլեն, իսկ ացետիլենից քլորոպրենի և պոլիքլորոպրենի ստացման ուղիները արդեն գիտական աշխարհում մշակված էին: Ս. Ղամբարյանը իր մշակած եղանակով ստացված ացետիլենի հիման վրա Լենինգրատի գործընկերների հետ ստացավ պոլիքլորոպրենային սինթետիկ կաուչուկի առաջին մոլոշները: Խորհրդային Միությունում կառավարական որոշմամբ 1930 թ. սկսվեց նախապատրաստական լայն ծավալի աշխատանքներ Երևանում սինթետիկ կաուչուկի գործարան կառուցելու և շահագործելու համար:

Կաուչուկի գործարանի (հետագայում անվանվեց՝ «Սովպրեն») կազմակերպման աշխատանքների ընթացքը անձամբ հսկում էր Ս. Ղամբարյանը՝ իր ամբիոնով և կադրերով: Հիրավի հերոսական էր անխոջ պրոֆեսորի ջանքերով ՀՀ կառավարության ձեռքբերումը ԽՍՀՄ առաջին կաուչուկի գործարանի կառուցման թույլտվությունը մեր հանրապետությունում Խորհրդային Միության ղեկավարության (ավելի ճիշտ՝ Ստալինի) կողից: 1930 թ. ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի նիստով որոշվել էր, որ կաուչուկի գործարան պետք է կառուցվեր Ադրբեջանում: Անհրաժեշտ էլեկտրաէներգիա ստանալու համար նախատեսված էր էլեկտրակայան կառուցել Սևանի արևելյան կողմից ջուրը դեպի Ղարաբաղ մղվող գետի վրա, իբրև թե էլեկտրական էներգիան օգտագործելու՝ նավթի մշակումից կաուչուկային հումք ստանալու համար: Պետք է հստակ նշել, որ Ս. Ղամբարյանի կաուչուկի գործարանի ստեղծման մտքի հան-

ճարեղ բռնիքով այն ժամանակ հիրավի փրկվեց Սևանը «թուրքի» բաժին դառնալուց (նրանց կողմից հիդրոկայանի կառուցումը նպատակաուղղված էր Սևանը ջրագրկելուն և վերացնելուն, որի համար խորամանկաբար, ինչպես միշտ, մավթից կաուչուկի ստացման ԽՍՀՄ-ի համար շատ կարևոր հարցն էին դրել որպես ՀԷԿ կառուցման հիմնավորում): Այնինչ պրոֆ. Ս. Ղամբարյանը կարողացավ ցույց տալ, որ սինթետիկ կաուչուկ կարելի է ստանալ շատ պարզ և հստակ եղանակով, սինթեզելով մեծ քանակով ագետիլեն կալցիումի կարբիդից՝ կրաքարի (որը շատ կա ՀՀ-ում) և ածխի (որը կար Վրաստանում կամ կարելի էր բերել Դոնբասից) փոխազդեցությունից բարձր ջերմաստիճանում (էներգիան էլ պետք էր ստանալ հենց Սևանից Երևան հոսող Հրազդան գետի վրա էլեկտրակայան կառուցելով): Ինչպես նշվեց վերը, կարբիդային եղանակով ագետիլենից քլորոպրեն, ապա պոլիքլորոպրենային կաուչուկի ստացման մոտոշները մինչ այդ արդեն մշակվել էին պրոֆ. Ս. Ղամբարյանի և Պետերբուրգի գիտնականների համատեղ աշխատանքներով: Կաուչուկի գործարանի կառուցման և կաուչուկի ստացման ֆինանսատեխնիկական գործընթացի իրականացումը կատարվեց այն ժամանակվա Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի և նրա տեղակալներ՝ Լևոն Երզնկյանի ու Ստեփան Կուրսելի գործուն աջակցությամբ, ովքեր անհավատալիորեն, 1937թ. դարձան զոհեր որպես «ժողովրդիկ թշնամիներ»։ Ս. Տեր-Գաբրիելյանը կարողացավ համոզել այն ժամանակվա Անդրֆեդերացիայի նախագահ Ս. Օրջոնիկիձեին, որպեսզի նա հարցը ներկայացնի Ստալինին ԽՍՀՄ արդյունաբերության կոմիսար (նախարար) Ֆ. Չերժինսկու միջոցով: Այդ եռյակի հանդիպումը տեղի ունեցավ Ստալինի հետ 1930 թ., ով տեղեկանալով կարբիդային եղանակով ՀՀ-ում կաուչուկ ստանալու առաջարկին, իսկույն կռահեց հայկական առաջարկի խորությունը և ռազմատեխնիկական իրական էությունն ու հենց այդ նիստին անմիջապես բեկանեց նախկին որոշումը և հանձնարարեց շատ արագ կերպով կաուչուկի գործարան կառուցել ՀՀ-ում, ամենայն աջակցություն ցուցաբերելով այդ կարևոր գործին: Կարբիդի հիման վրա Ս. Ղամբարյանի եղանակով ագետիլենի հումքով սինթեզված կաուչուկը անվանվեց «Սովպրեն», որի ստացման առանձին կարևորագույն գործընթացների մշակումը ԽՍՀՄ-ում մինչև 1933 թ. առաջին անգամ իրականացվեց ՀՀ-ում (Երևանում),

որը ղեկավարում էր անձամբ պրոֆ. Ս.Ղամբարյանը: Եվ վերջնականապես կառուցվեց ու գործարկվեց միութենական և համաշխարհային նշանակության Երևանի Կիրովի անվան «Սինթետիկ կաուչուկի» գործարանը (հետագայում «Նաիրիտ» ԳԱՄ), որը շահագործվեց 1940 թ. մարտի 19-ին, երբ պրոֆ. Ս.Ղամբարյանը արդեն գտնվում էր արքունիքում՝ Սեմիպալատինսկում (1937-1944 թթ.):

ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի միջնորդությամբ (հատկապես՝ պրոֆեսորներ Արաքսի Բաբայանի և Արմենակ Մնջոյանի ջանքերով) հաջողվեց Ստալինի կարգադրությամբ 1944թ. պրոֆ. Ս. Ղամբարյանին ազատել և վերադարձնել Երևան գիտական գործունեության, իսկ Ակադեմիայի ընդհանուր ժողովով անմիջապես միաձայն քվեարկությամբ նրան շնորհվեց ՀՀ ԳԱ թղթակից անդամի կոչում (1944 թ.): Սիրված գիտնականը նորից ղեկավարեց Քիմիայի ինստիտուտի օրգանական բաժինը, սակայն նրա առողջությունը քայքայված էր արդեն և 1948 թ. հավերժորեն հեռացավ: Նույնիսկ կյանքի վերջին պահին չկտրվելով քիմիայից՝ համալսարանի «Լեչ-կոմիսիայի» հիվանդանոցում նրա կողքին էր դրված «Успехи химии» ամսագրի վերջին համարը, որում տպագրված էր նաև Ս.Ղամբարյանի սուլֆամիդներին նվիրված հոդվածը, ինչպես պատմում էր նրան այցելած, նրա լավագույն աշակերտներից պրոֆ. Լ.Գյուլբուրադյանը:

Համալսարանում պրոֆ. Ս. Ղամբարյանից հետո Օրգանական քիմիայի ամբիոնը 1938-1941 թթ., ապա նաև երկրորդ ժամանակաշրջանով՝ 1944-1951 թթ. ղեկավարել է տաղանդաշատ գիտնական պրոֆ. Ա. Մնջոյանը: Կարճ ժամանակով պատերազմի տարիներին (1942-1944 թթ.) Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ է եղել ակադեմիկոս (1943 թ.) Վաչե Հովհաննեսի Իսազուլյանցը (1893-1973 թթ.), ով 1942-1946 թթ. որպես պրոֆեսոր դասավանդել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում: ՀՀ-ում աշխատելու տարիներին արդյունավետ համագործակցել է պրոֆեսորներ՝ Ս. Ղամբարյանի և Ա.Մնջոյանի հետ: Նա ՀԽՍՀ և ԽՍՀՄ պարֆյուներիայի (օծանելիքների և հոտավետ նյութերի սինթեզի) և նավթաքիմիայի հիմնադիրն է ու ամենաճանաչվածը այդ բնագավառներում: Ակադ. Վ. Իսազուլյանցը 1946 թ. հրավերով տեղափոխվել է Մոսկվա և նշանակվել ԽՍՀՄ նավթի և գազի արդյունաբերության ինստիտուտի տնօրեն (1946-1963 թթ.):

Պրոֆ. Ա. Մնջոյանի՝ Օրգանական քիմիայի ամբիոնի ղե-

կավարման տարիներին ամբիոնը ունեցել է շատ բարձր ու բազմակողմանի ուսումնագիտական մակարդակ, ամբիոնում աշխատել են համալսարանի անդրանիկ և տաղանդավոր կադրեր, որոնցից կարելի է նշել կենսաքիմիկոս Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանին (1907-1981 թթ.), հետազայում՝ դոկտոր (1937 թ.), պրոֆեսոր (1939 թ.), ակադեմիկոս (1943 թ.), պատերազմի տարիներին եղել է ԵՊՀ ռեկտոր (1942-1945 թթ.), իսկ հետպատերազմյան տարիներին Երևանի կենսաքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1961-1981 թթ.): Բունիաթյանը օրգանական քիմիայի ամբիոնում դասախոսել է կենսաքիմիա, միաժամանակ կադրեր է պատրաստել և իր մոտ լաբորատորիայում աշխատանքի վերցրել ավարտական կուրսի առաջադեմ ուսանողներ Լիպարիտ Գյուլբուդաղյանին, Հրաչիկ Մատինյանին և ուրիշների: Սակայն Լ. Գյուլբուդաղյանը կենսաքիմիկոս չդարձավ: Նա համալսարանը ավարտել է կարմիր դիպլոմով և ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան ու Արմֆանի տնօրեն Դ. Մարությանի երաշխավորությամբ 1939 թ. հայկական Արմֆանի կողմից գործուղվել է Մոսկվա, ԽՍՀՄ Ջելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտ՝ որպես ասպիրանտ: Սակայն նույն թվականին ԽՍՀՄ-ի բոլոր գիմապարտներին, այդ թվում նաև ասպիրանտներին, զորակոչել են բանակ և 2 ամսվա ասպիրանտ Լ. Գյուլբուդաղյանը (ապագայում՝ դոկտոր, համալսարանի երկար տարիների պրոֆեսոր) յոթ տարի (1939-1945 թթ.) ծառայեց բանակում, մասնակցել է ֆիննական և գերմանական պատերազմներին, վերջում որպես գնդի հրամանատար զորացրվել մայորի կոչումով: Երբ 1945 թ. վերադարձավ Երևան, Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա. Մնջոյանը Լ. Գյուլբուդաղյանին և Հ. Հարոյանին վերցրել է որպես ասիստենտ, ովքեր ամբիոնում տանում էին կուրսերի մշակումներ, գործնական աշխատանքներ, դեկավարում դիպլոմային աշխատանքներ: Այդ ժամանակ օրգանական քիմիայի ամբիոնում էր աշխատում նաև Ա. Մնջոյանի սան Մամիկոն Տիգրանի Դանդաղյանը (1907-1984 թթ.) որպես ասիստենտ (հետագայում նա ևս դարձավ դոկտոր-պրոֆեսոր, ամբիոնի վարիչ՝ 1951 թ., դեկան՝ 1953 թ.): Ժամավճարային հիմունքներով ամբիոնում էին աշխատում նաև Լևոն Ղազարյանը և Լևոն Ջանփոլադյանը, ովքեր հետագայում մշտական աշխատանքի անցան՝ Լ. Ղազարյանը՝ Պոլիտեխնիկ ինստիտուտում, իսկ Լ. Ջանփոլադյանը՝

ՀՀ սննդի և թեթև արդյունաբերության նախարարությունում: Համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնում Լևոն Ղազարյանը (1908-1983 թթ.) կարդացել է Մետաօրգանական միացությունների քիմիա: Միաժամանակ եղել է Պոլիտեխնիկի օրգանական քիմիայի տեխնոլոգիայի և օրգանական քիմիայի ամբիոնների (առանձին) վարիչը (1938-1945 թթ.), ապա ֆիզքիմիայի և Օրգանական քիմիայի ամբիոնի (միասին) վարիչը (1947-1968 թթ.), նաև Պոլիտեխնիկի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի ղեկավարը (1939-1944 թթ.): Լ. Ջանփոլադյանը զբաղվել է կոնյակի ստացման ու մշակման գիտաարտադրական գործունեությամբ, եղել է ՀՀ թեթև և սննդի արդյունաբերության նախարար ու Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, զբաղեցրել է նաև այլ բարձր պաշտոններ:

Ամբիոնի վարիչ Ա. Մնջոյանը իր գիտահետազոտական աշխատանքները ուղղորդել է հիմնականում Արմֆանի օրգանական քիմիայի ինստիտուտում զարգացվող դեղաքիմիայի ուղղությամբ, որի տնօրենն էր արդեն ինքը, միաժամանակ աշխատելով Բժշկական ինստիտուտին կից իր ստեղծած լաբորատորիայում: 1946 թ. հետպատերազմյան շրջանի դժվարությունները աստիճանաբար սկսվեցին հաղթահարվել և գիտահետազոտական աշխատանքները ԵՊՀ-ի օրգանական քիմիայի ամբիոնում ակտիվացան ամբիոնի վարիչ Ա. Մնջոյանի հեղաշրջող գործունեությամբ և ամբիոնի երիտասարդ աշխատակիցների մեծ ջանքերով: Նրանք էին՝ Լիպարիտ Գյուլբուդադյանը, Հարություն Հարոյանը, Սիրուշ Տիտանյանը, Խոստիկ Աբովյանը և ուրիշներ: 1950 թ. Լ. Գյուլբուդադյանը և Հ. Հարոյանը պաշտպանեցին թեկնածուական թեզեր, Հարոյանը հետո տեղափոխվեց Ա. Մնջոյանի ստեղծած Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ (ՆՕԲԻ), իսկ Գյուլբուդադյանը մնաց համալսարանում: Ամբիոնի վարիչ Ա. Մնջոյանը եղել է արտակարգ աշխատասեր և նպատակասլաց գիտնական և այդ ժամանակ ստեղծել է իր գիտահետազոտական լաբորատորիան՝ Օրգանական սինթեզի ու ֆարմակոլոգիայի բաժիններով հանդերձ: Եվ որպես ՀՀ ԳԱ փոխնախագահի ձեռնամուխ է եղել նաև Նուրբ օրգանական քիմիայի (ՆՕԲ) համալիրի վերջնական կազմավորմանը, որը սկսել էր ստեղծել դեռևս 1947 թվից: Ի վերջո, պրոֆ. Ա. Լ. Մնջոյանը, համալսարանում թողնելով ամբիոնի վարիչությունը և ղեկավարությունը, 1952 թ. իր ուսումնական, գիտահետազոտական

և ղեկավար գործունեությունը շարունակեց ՀՀ ԳԱ համակարգում, որպես Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն մինչև իր կյանքի վերջը (1970 թ.): Շատ մեծ է ակադեմիկոս Ա. Մնջոյանի վաստակը ՀՀ-ում, հատկապես նուրբ օրգանական սինթեզի, դեղագիտական հետազոտությունների զարգացման և ներդրման գործում (դրա համար էլ 1971 թ. Ա. Մնջոյանի անունով է կոչվում նրա կողմից ստեղծած ՆՕՔ ինստիտուտը): Նա դեղագիտության բնագավառում համաշխարհային դեմք է եղել և մնում է այդպիսին: Նրա կատարած աշխատանքներին և սինթեզված դեղամիջոցներին մեծ գնահատական են տվել արտասահմանյան ամենախոշոր մասնագետները: Ակադեմիկոս Ա. Մնջոյանի ստեղծած ուսումնագիտական դպրոցը ՀՀ-ում, նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում և Բժշկական ինստիտուտում պահպանվեց ու մեծ վերելք ապրեց՝ տալով բազում գիտական նորանոր արդյունքներ և շատ ճանաչված ուսումնագիտական կադրեր օրգանական քիմիայի և դեղաբանության, ընդհանրապես քիմիայի բնագավառներում:

1951 թ. ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ դարձավ ակադեմիկոս Լ. Ա. Մնջոյանի սան, պրոֆ. Մամիկոն Տիգրանի Դանդոյանը, ով եղել է նաև Քիմիական ֆակուլտետի երկարամյա ղեկան երկու ժամանակահատվածով (1953-1961 թթ. և 1967-1973 թթ.): Նոր գիտահետազոտական աշխատանքները պրոֆ. Մ. Տ. Դանդոյանի ղեկավարությամբ ամբիոնում հիմնականում ծավալվեցին դիցիանդիամիդի նոր ռեակցիաների ուսումնասիրության և բազմաֆունկցային γ-լակտոնների քիմիայի ուղղությամբ (Լ. Գյուլբուդաղյան, Մ. Չալինյան, Ա. Դուրգարյան, Գ. Շահնազարյան, Ս. Առաքելյան, Է. Մեսրոպյան): Այդ ուղղություններով ուսումնասիրությունները Օրգանական քիմիայի ամբիոնում հետագայում շարունակաբար ավելի ընդլայնվեցին ու խորացվեցին գիտական նորագույն հետազոտություններով և ավելի երիտասարդ գիտնականներով:

1970-ական թթ. սկսած ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում շարունակվեցին կատարվել ավելի նոր և խորը գիտական ուսումնասիրություններ, որոնք նվիրված էին չհագեցած լակտոնների՝ ֆուրանոնների և պիրանոնների սինթեզին ու հետազոտություններին և հետագայում ամփոփվեցին Աիդա Ավետիսյանի և Միքայել Չալինյանի դոկտորական թեզերում: Պրոֆեսորներ Մ. Չալինյանի

և Ա. Ավետիսյանի անմիջական ղեկավարությամբ զարգացման նոր մակարդի հասցվեց լակտոնների քիմիան և պատրաստվեցին նաև բարձր մակարդակի կադրեր այդ ուղղությամբ:

Պրոֆ. Ա. Ավետիսյանը 1979 թ. դարձավ ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ Մ. Գ. Ջալիմյանը 1981 թ. տեղափոխվեց Երևանի ժողովրդագրության ինստիտուտի քիմիայի ամբիոնի վարիչ և պրոֆեսոր առ 2017 թ.:

Քիմ. գիտ. դոկտոր (1975 թ.), պրոֆեսոր (1977 թ.) Սիքայել Գարեգինի Ջալիմյանը (1930-2017 թթ.) 1952 թ. ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը և աշխատել օրգանական քիմիայի ամբիոնում (1952-1981 թթ.): Նրա գիտական աշխատանքները վերաբերել են հազեցած բազմաֆունկցային լակտոնների սինթեզին, դրանց սինթեզի եղանակների մշակմանն ու քիմիական հատկությունների հետազոտմանը, ինչպես նաև լակտոնային և տարացիկլային միացությունների համակցմամբ նոր ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի հարցերին: Պրոֆ. Մ. Ջալիմյանը եղել է ՀՀ ամենաճանաչված քիմիկոս-մասնագետներից: Գիտական և դասախոսական բեղուն գործունեություններից ու բարձրակարգ կադրեր պատրաստելուց բացի մեծ ծավալի աշխատանք է կատարել՝ երկար տարիներ ղեկավարելով ու կազմակերպելով համալսարանական և համամիութենական դպրոցական ու ուսանողական օլիմպիադաներ, մրցույթներ: Հեղինակ է ՀՀ-ում մայրենի լեզվով գրած առաջին նախաբուհական ուսումնական «Քիմիա» ձեռնարկին, որը 1960-ական թվականներից վերահրատարակվել է մի քանի անգամ:

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, դեռևս ակադ. Ա. Մնջոյանի և պրոֆ. Մ. Դանդոյանի վարիչության տարիներին, շարունակվեցին զարգացվել նաև խինոլինային հիմքերի ուսումնասիրությունները, որի արդյունքները տարիներ հետո ներգրավվեցին Լ. Գյուլբուդաղյանի դոկտորական թեզում (1973 թ.): Պրոֆեսոր (1974 թ.) Լ. Գյուլբուդաղյանը (1912-2003 թթ.) կատարել է խինոլինների քիմիային և տարացիկլիկ միացությունների սինթեզին նվիրված ուսումնասիրություններ (ավելի քան 300 աշխատանք), այդ թվում՝ կենսաբանական ակտիվ միացությունների (հակաալերգիկ, սնկասպան), ինչպես նաև պարա-ալկօքսիբենզոլային թթվի ամինաէսթերների (Ա. Մնջոյանի հետ), որոնց հիման վրա հետագայում ՆՕՔ ինստիտուտում ստեղծվեցին Գանգլերոն և Քվատերոն դեղանյութերը: Պրոֆ. Լ. Վ.

Գյուլբուղայանը «Օրգանական քիմիայի պրակտիկում» (1984 թ.) ուսումնական ձեռնարկի հեղինակ է:

Օրգանական քիմիայի ամբիոնում տարվել են կարևոր նոր գիտական հետազոտություններ՝ հոմո- և համապոլիմերների սինթեզի և մեխանիզմի բացահայտման ու պարզաբանման ուղղությամբ, որոնք ամփոփվել են Անժելո Հակոբի Դուրգարյանի դոկտորական ատենախոսությունում (1972 թ.): Պրոֆեսոր (1974 թ.) Ա. Հ. Դուրգարյանը (1928 թ. ծնվ.) 1951 թ. ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը և աշխատում է ֆակուլտետում առ այսօր: 1960-1966 թթ. նա աշխատել է նաև ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից նորաստեղծ Պրոբլեմային լաբորատորիայում, ղեկավարել իոնական պոլիմերման քեմիայի հետազոտական խմբի աշխատանքները, իսկ այնուհետև տեղափոխվել է Օրգանական քիմիայի ամբիոն որպես դոցենտ, շարունակելով զարգացնել իր գիտական թեմատիկ աշխատանքները նույն խմբով: Իոնական պոլիմերման հարցերից բացի իր ղեկավարությամբ գիտահետազոտական խումբը զբաղվել է նաև համապոլիմերման և այլ հարցերով: Հետազոտությունների արդյունքում հայտնաբերել է 15 նոր ռեակցիաներ, որոնք վերաբերում են քլորօքսիրանների փոխարկումներին: Սինթեզել է կիսահաղորդիչ, իոնափոխանակիչ և կոմպլեքսագոյացուցիչ բարձր հատկություններով օժտված նոր պոլիմերներ: Պրոֆ. Ա. Դուրգարյանը առաջինն է հագեցած ալիֆատիկ և արոմատիկ նիտրիլները օգտագործել որպես համամոնոմեր կատիոնային համապոլիմերման ժամանակ: Մշակել է օրգանական ցիկլային միացությունների անվանակարգման նոր սկզբունք: Նրա ղեկավարությամբ աշխատանքային խումբը սինթեզել է էլեկտրոնաակցեպտորային հատկություններով օժտված նոր նյութերի դաս՝ քլորանիլի և բիսանիոնների փոխազդեցությամբ, ինչպես նաև մշակել է էլեկտրոնադոնոր հատկություններով նոր պոլիմերների ստացման եղանակ՝ պոլիքլորոպրենի էպօքսիդի և արոմատիկ ամինների ու դիամինների փոխազդեցությամբ: Պոլիքլորոպրենի օքսիդացման արդյունքներից սինթեզվել են պոլիէլեկտրոլիտներ և իոնիտներ, որոնք օգտագործելի են արտադրական ջրերից թունավոր ծանր իոնները կլանելու համար: Հեղինակ է նաև «Բարձրամոլեկուլային միացությունների քիմիա» (2004 թ.) ուսումնական ձեռնարկի:

Չհագեցած միացությունների սինթեզի և հետազոտության ուղղու-

քյամբ կատարած աշխատանքներով դոկտորական թեզ է պաշտպանել (1971 թ.) վաղամեծիկ Ժորա (Գևորգ) Մելխակի Շահնագարյանը (1927-1982 թթ.), ով ուներ քիմիայի ուսումնագիտական բարձր մակարդակ: Եղել է ՀՀ հանրագիտարանի օրգանական քիմիայի գծով գիտաճյուղային խորհրդի անդամ: 1957 թ. նա ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատել ամբիոնում որպես դասախոս: Գիտական աշխատանքները վերաբերում են դիհալոիդ վինիլային միացությունների գերթթուներով օքսիդացմանը և եռհալոիդներով կարբոնիլների դեհիդրատացմանը, դրանց մոլեկուլային վերախմբավորմանը և արդյունքների կիրառմանը:

1979-2000 թթ. Օրգանական քիմիայի ամբիոնի երկարամյա վարիչ է եղել քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Աիդա Ավետիսի Ավետիսյանը: Նրա ամբիոնի վարիչության տարիներին Օրգանական քիմիայի ամբիոնում նշանակալիորեն զարգացվեց և հարստացվեց լակտոնների քիմիան և ամբիոնը դարձավ Խորհրդային Միության լակտոնների քիմիայի առաջատար ու ճանաչված կենտրոններից մեկը: Այդ ժամանակաշրջանում ընդարձակվեց ամբիոնի ուսումնագիտական բազան, ստեղծվեցին միութենական և միջազգային կապեր՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Չեխոսլովակիայի և Լեհաստանի ուսումնագիտական կենտրոնների հետ: Ակադեմիկոս Ա. Ավետիսյանի ղեկավարությամբ ամբիոնում կատարվեցին նոր գիտական և կիրառական բնույթի կարևոր աշխատանքներ, որոնց իրականացմանը ակտիվորեն մասնակցեցին համեմատաբար երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ, որոնք հետագայում պաշտպանեցին դոկտորական թեզեր: Պրոֆ. Ա. Ա. Ավետիսյանը որպես ֆակուլտետի ղեկան մեծ թափ հաղորդեց նաև ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքներին: Նրա ղեկավարությամբ և ջանքերով ֆակուլտետում բացվեցին և գործեցին քիմիական նոր բաժիններ՝ Դեղագործական (1994-1997 թթ.), Կիրառական (1995-2002 թթ.), Էկոլոգիական (1992-2007 թթ.), նաև ամբիոններ՝ Դեղագործական քիմիայի (1998-2016 թթ.), Էկոլոգիական քիմիայի (2007-2015 թթ.), Քիմիական ֆիզիկայի (2005-2008 թթ.):

2000-2015 թթ. ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ եղել է քիմ.գիտ.դոկտոր (1988 թ.), պրոֆեսոր (1991 թ.) Վիլիկ Սիրակի Հարությունյանը: Նա ամբիոնի ուսումնական աշխատանքներում

(հատկապես մագիստրատուրայում) կազմակերպել է նոր ծրագրային առարկաների դասավանդում: 2008-2010 թթ. ղեկավարել է ամբիոնին կից գործող՝ «Օրգանական սինթեզ» բազային լաբորատորիայի աշխատանքները: Նրա գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են ֆունկցային տեղակալված հազեցած լակտոնների և հարակից կառուցվածքով տարացիկլային, մաս կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին և հատկությունների ուսումնասիրություններին: Նրա ղեկավարությամբ մշակված սինթեզի որոշ եղանակներ կիրառվել են Երևանի քիմիական ռեակտիվների գործարանում, իսկ սինթեզված որոշ միացություններ ներդրվել են ավագանային ձկնաթյունաբերության մեջ (Ազովի ձկնատնտեսության գիտահետազոտական ինստիտուտի հետ) որպես աճի խթանիչ, սանիտարական վիճակը բարելավող և վնասատու ջրիմուռների աճը կանխող միջոցներ:

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը իր գործունեության ընթացքում (սկսած 1920 թ.) բարձր մակարդակի ուսումնագիտական քիմիկոս կադրերի պակաս չի ունեցել, ֆակուլտետում միշտ եղել է առաջավոր և ամենաշատ թվով դոկտորներ աճեցրած ամբիոնը: Վերջին տասնամյակներում դոկտորական թեզեր են պաշտպանել ամբիոնի առաջատար դասախոսներ՝ Գ. Մելիքյանը (1994 թ.), Տ. Դոշիկյանը (2008 թ.), Գ. Թոքմաջյանը (2012 թ.), Ն. Դուրգարյանը (2013 թ.):

Քիմ. գիտ. դոկտոր (1994 թ.), պրոֆ. (2003 թ.) Գագիկ Սուրենի Մելիքյանը (1945 թ. ծնվ.) 1967 թ. ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, 1971 թ.-ից աշխատում է համալսարանի Օրգանական քիմիայի ամբիոնում: Ժամանակ առ ժամանակ աշխատել է մաս արտերկրների ուսումնագիտական կենտրոններում: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են թթվածին, ազոտ և ծծումբ պարունակող տարացիկլային, այդ թվում կենսաբանորեն ակտիվ, միացությունների սինթեզին ու ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություններին:

Գայանե Գևորգի Թոքմաջյանը (1951 թ. ծնվ.) 1973 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1980 թ.-ից մինչև հիմա աշխատում է Օրգանական քիմիայի ամբիոնում որպես դասախոս: Պրոֆ. Գ. Թոքմաջյանի գիտական աշխատանքները վերաբերում են հա-

գեցած և չհազեցած γ - և δ -լակտոնների, ինչպես նաև չհազեցած γ -իմինոլակտոնների նոր տարացիկլային բազմակորիզ ածանցյալների սինթեզին, քիմիական հատկությունների ուսումնասիրմանը և ստացված միացությունների շարքում կենսաբանորեն ակտիվ նյութերի առանձնացմանը: Պրոֆ. Գ. Գ. Թոքմաջյանը հեղինակ է «Կենցաղային քիմիա» (2013 թ.), համահեղինակ է՝ Գ. Գ. Թոքմաջյան, Լ. Վ. Կարապետյան «Սիջֆազային կատալիզը որոշ օրգանական ռեակցիաներում» (2014 թ.) և Գ. Գ. Թոքմաջյան, Լ. Վ. Կարապետյան «Կենսաակտիվ պոլիմերներ» (2015 թ.) ուսումնագիտական ձեռնարկների:

2016 թ. ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը ղեկավարում է ամբիոնի համեմատաբար երիտասարդ դոկտոր (2013 թ.), պրոֆեսոր (2016 թ.) Նարինե Անժելյոյի Դուրգարյանը (1963 թ. ծնվ.): Նրա գիտական աշխատանքները վերաբերում են հաղորդիչ ու կոմպլեքսագոյացնող պոլիմերների սինթեզին և ուսումնասիրություններին, պոլիմերների և քլորօքսիրանների քիմիային, ինչպես նաև անօրգանական պոլիմերների հիբրիդ միացությունների հետազոտություններին: Ներկայումս նա ղեկավարում է ամբիոնի պոլիմերների քիմիայի գիտական խմբի աշխատանքները, որոնք վերաբերում են օքսիդացմամբ պոլիկոնդենսման ռեակցիաների և բարձր էլեկտրահաղորդականությամբ օժտված ազոտ պարունակող նոր պոլիմերների սինթեզին ու հատկությունների ուսումնասիրմանը:

Հիշարժան են ամբիոնում տարբեր տարիներ աշխատած առաջատար դոցենտներ՝ Սուրեն Առաքելյանը (ֆակուլտետի կուսբյուրոյի երկարամյա քարտուղար), Լենոր Ոսկանյանը (1970-ական թթ. դեկանի տեղակալ), Ալեքսանդր Հախնազարյանը (1980-ական թթ. դեկանի տեղակալ), Վոլա Կսիպտրիլիսը և Արամ Ղուկասյանը (միաժամանակ 1990-ական թթ. դեկանի տեղակալներ), Լիլիա Խաչատրյանը (եղել է ուսումնական գործի առաջավոր, համահեղինակ է մի քանի ուսումնական ձեռնարկների):

Ամբիոնի առաջատար և փորձառու դոցենտ է Իսկուհի Լևոնի Ալեքսանյանը, ով 1970 թ. գիտահետազոտական գործունեություն է ծավալել պրոֆ. Լ.Վ. Գյուլբուրադյանի լաբորատորիայում և հրատարակել մոտ 100 գիտական աշխատանք: Հեղինակ է «Հոմոգեն կատալիզը օրգանական քիմիայում» ուսումնական ձեռնարկի (2013 թ.), նաև

«Քիմիական կապերի էլեկտրոնային կառուցվածքը և ատոմների փոխադարձ ազդեցությունը օրգանական մոլեկուլներում (զուգորդված համակարգեր)» (2003 թ.), «Հոմոգեն կատալիզը օրգանական քիմիայում առարկայից լաբորատոր աշխատանք» (2013 թ.) ուսումնամեթոդական աշխատանքների: Քիմիայի ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահն է:

Ամբիոնի առաջատար և ակտիվ աշխատակիցներից է դոցենտ Լատրա Գալստյանը (1997-2007 թթ. դեկանի տեղակալ), ով համահեղինակ է ուսումնագիտական և մեթոդական ձեռնարկների՝ Լ. Խ. Գալստյան, Կ. Ս. Ավետիսյան, Ա. Ա. Ավետիսյան «Օրգանական քիմիայի պրակտիկում» (2011 թ.), Լ. Խ. Գալստյան, Վ. Օ. Թովուզյան «Պաշտպանիչ խմբերի կիրառումը բազմաֆունկցիոնալ միացությունների սինթեզում» (2011 թ.), Ա. Ա. Ավետիսյան, Լ. Խ. Գալստյան «Ալկենների քիմիական հատկությունները» (2005 թ.), Ա. Ա. Ավետիսյան, Լ. Խ. Գալստյան «Ալկեններ, ցիկլոալկեններ, ալկիններ. կառուցվածքը և հատկությունները» (2008 թ.): Ամբիոնի փորձառու դասախոսներից է դոցենտ Զուրեյդա Կարապետյանը:

Ամբիոնի համեմատաբար երիտասարդ և հեռանկարային աշխատակիցներ են Լ. Կարապետյանը, Հ. Ալվանջյանը, Կ. Ավետիսյանը, Մ. Սամվելյանը, Փ. Մինասյանը, Ա. Գալստյանը (2018 թ. սեպտեմբերից ֆակուլտետի դեկանի տեղակալ):

Հաջորդիվ ներկայացնում ենք Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչների կենսագրություններն ըստ ժամանակակարգի:

III-2-1-1. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները 1922-2019 թթ.

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչներից երեքը՝ ակադեմիկոս Արմենակ Մնջոյանը, պրոֆեսոր Մամիկոն Դանդոյանը և ակադեմիկոս Աիդա Ավետիսյանը, եղել են նաև Քիմիայի ֆակուլտետի դեկաններ, ուստի նրանց՝ որպես ամբիոնի վարիչների և դեկանների կենսագրությունները զետեղված են դեկանների կենսագրությունների րաժմում:

1. Ղամբարյան Ստեփան Պողոսի (1879-1948 թթ.), 1922-1937 թթ.
2. Մնջոյան Արմենակ Լևոնի (1904-1970 թթ.), 1937-1941 թթ.
3. Իսազուլյանց Վաչե Հովհաննեսի (1893-1973 թթ.), 1942-1944 թթ.
4. Մնջոյան Արմենակ Լևոնի (1904-1970 թթ.), 1944-1951 թթ.
5. Դանդոյան Մամիկոն Տիգրանի (1907-1984 թթ.), 1951-1979 թթ.
6. Ավետիսյան Աիդա Ավետիսի (1938-2009 թթ.), 1979-2000 թթ.
7. Հարությունյան Վիլիլ Սիրակի (1938-2015 թթ.), 2000-2015 թթ.
8. Դուրգարյան Նարինե Անժելոյի (1963 թ.), 2016 թ. առ այսօր:

1. Ղամբարյան Ստեփան Պողոսի (Պավելի) (1879 թ. Կոջոր-Թիֆլիս - 1948 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1937 թ.), պրոֆ. (1926 թ.),

ՀՀ ԳԱ քղթակից անդամ (1944 թ.),

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1922-1937 թթ.)

Պրոֆ. Ս. Պ. Ղամբարյանը իրավմամբ ՀՀ-ում քիմիայի ուսումնագիտական մտքի զարգացման հիմնադիրն է, քիմիական արդյունաբերության ստեղծողը, խորհրդահայ քիմիկոսների գիտական դպրոցի կառուցողը: Հիմք ընդունելով Ս. Ղամբարյանի գիտական բարձր նվաճումներն ու ծառայությունները քիմիայի բնագավառում՝ 1937 թ. ԽՍՀՄ ԲՈՒՀ-ի կողմից նրան շնորհվել է դոկտորի գիտական աստիճան առանց ատենախոսության պաշտպանության, 1926 թ. դարձել է պրոֆեսոր, իսկ 7 տարվա աքսորից վերադառնալուց անմիջապես հետո՝ 1944 թ., ընտրվել է ՀՀ ԳԱ քղթակից անդամ:

Ս. Ղամբարյանը ավարտել է Ռիգայի դասական գիմնազիան (1898 թ.), ապա սովորել Գերմանիայում՝ Մյունխենի, Լայպցիգի և Հայդելբերգի համալսարաններում (1899-1906 թթ.): Այնուհետև

վերապատրաստման նպատակով շարունակել է ուսանել Գերմանիայում, ասիստենտել անվանի գիտնականներին (1907-1911 թթ.)՝ աշխատելով Գերմանիայի համալսարանների ամենախոշոր պրոֆեսորների՝ Թիլեի (Ստրասբուրգ), Վիլանդի և Վիլշտետերի (Մյունխեն), Բյուխների (Բեռլին) հետ, խորանալով քիմիայի գիտական գաղտնիքների մեջ, դառնալով միջազգային մակարդակի գիտնական: Հենց Գերմանիայում աշխատելու ժամանակ նա առաջինը աշխարհում զբաղվել է գերօքսիդների քիմիայով և ցույց տվել, որ գերօքսիդի ճեղքումը ընթանում է համաչափ (հոմոլիտիկ)՝ առաջացնելով ռադիկալային մասնիկներ, ինչը հետագայում հաստատվել է աշխարհի շատ գիտնականների կողմից: Պրոֆեսոր Ս. Ղամբարյանը Գերմանիայից վերադարձել է Անդրկովկաս որպես բարձր մակարդակի քիմիկոս: 1911-1914 թթ. աշխատել է Բաքվի ռուսական տեխնիկական ընկերության քիմիայի լաբորատորիայում, իսկ 1914-1920 թթ.՝ Թիֆլիսի (Թբիլիսիի) երկրագործական դեպարտամենտի Քիմիամանրեաբանության լաբորատորիայում՝ դասախոսելով նաև Թիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացներում: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, պարգևատրվել է Գեորգիի Խաչով:

1920 թ. իր կամքով ընդմիշտ տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Սկզբում աշխատել է Արարատի գործարանի իր կողմից հիմնված քիմիական լաբորատորիայում, ապա հրավերով աշխատել է նորաստեղծ Երևանի համալսարանում որպես դասախոս: Իր ջանքերով կազմակերպել և ղեկավարել է համալսարանի Օրգանական քիմիայի բաժինը (1920 թ.), ապա՝ ամբիոնը (1922 թ.), իսկ 1930-ական թվականներին՝ նաև նորաստեղծ՝ Բժշկական, Պոլիտեխնիկական, Գյուղատնտեսական, Անասնաբուծական-անասնաբուծական, Մանկավարժական ինստիտուտների օրգանական (նաև որոշ ինստիտուտներում՝ անօրգանական) քիմիայի բաժինները, լաբորատորիաները և ամբիոնները՝ լինելով դրանց միաժամանակվա վարիչը մինչև նոր մասնագետների պատրաստումը: Դասախոսել է օրգանական, անօրգանական և ընդհանուր քիմիաներ համալսարանում և մյուս ինստիտուտներում: Եղել է նաև Պոլիտեխնիկ ինստիտուտի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի ղեկան (1930-1931 և 1936-1937 թթ.), որտեղ ստեղծել և ղեկավարել է նաև գիտահետազոտական լաբորատորիա: 1935-1937 թթ. եղել է Խորհրդային Միության ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆանի) նախագահության անդամ և Օրգա-

նական քիմիայի բաժնի վարիչ: Պրոֆ. Ս. Ղամբարյանը եղել է նաև քիմիական պարբերականների առաջին գրադարանի հիմնադիրը ՀՀ-ում:

Նա զարգացրել է ագետիլենի քիմիան՝ առաջինը մշակելով աշխարհում անօրգանական նյութերից ագետիլեն ստանալու համար կարբիդային եղանակը, որի հիման վրա սինթեզվել է կաուչուկ, ինչը Ս. Ղամբարյանի գիտաարտադրական ղեկավարությամբ իրականացվել է 1930-ական թվականներին: Սինթետիկ կաուչուկի արտադրության առաջին «Սովպրեն» գործարանի բացումը տեղի է ունեցել 1940 թ. մարտի 19-ին: Պրոֆ. Ս. Ղամբարյանի գիտահետազոտական գործունեությունը շատ բազմազան է եղել: Նա զբաղվել է տեղական ալյուրոթերաքաքարերի և եթերայուղատու բույսերի ուսումնասիրությամբ, իսկ կարբիդի գործարանի բացումից (1933 թ.) հետո՝ ագետիլենի բազայի վրա քացախաթթվի, պլաստմասսաների, քլոր պարունակող լուծիչների, գյուղատնտեսական կենդանիների պարազիտային հիվանդությունների դեմ դեղամիջոցների՝ տետրաքլորէթիլենի և հեքսաքլորէթանի ստացմամբ և կիրառմամբ: Իհարկե, կաուչուկի գործարանի կառուցումը և գործարկումը Երևանում պրոֆ. Ս. Ղամբարյանի գիտաարտադրական նվաճումն է ոչ միայն միութենական, այլև համաշխարհային մակարդակով: «Սովպրենի» ստեղծումը պրոֆ. Ս. Ղամբարյանի կողմից հերոսական գործ է եղել:

Մեծ գիտնականը և նորարարը, ՀՀ քիմիայի ուսումնագիտական և արտադրական հիմնադիրը արժանավույն չգնահատվեց, ընդհակառակը, այն ժամանակվա «ղեկավարությունը» նրան անհիմն կոչեց «ժողովրդի թշնամի», դատապարտեց ու քստրեց Սեմիպալատինսկ, որտեղից յոթ տարի հետո (1944 թ.) գործընկերների (Արաքսի Բաբայան, Արմենակ Մնջոյան) մեծ ջանքերով «արդարացվեց», և վերադարձավ Երևան, որտեղ հիվանդ վիճակում մի քանի տարի աշխատեց ՀՀ քիմիայի ինստիտուտում բաժնի վարիչ ու վախճանվեց 1948 թվականին: Փա՛ռք, հավերժ հիշատակ ՀՀ-ում բարձրագույն քիմիայի և քիմիական արդյունաբերության ստեղծողին ու երախտավորին, ըստ արժանվույն չգնահատված քիմիկոս հերոսին:

2. Մնջոյան Արմենակ Լևոնի

Ակադեմիկոս Արմենակ Մնջոյանի կենսագրությունը գետեղված է Քիմիայի ֆակուլտետի ղեկավարների կենսագրությունների բաժնում:

3. Իսազուլյանց Վաչե Հովհաննեսի (Իվանի)

(1893 թ. Շուշի - 1973 թ. Մոսկվա)

Քիմ. գիյր. դոկտոր (1932 թ.), պրոֆեսոր (1936 թ.),

ՀՀ ԳԱ ակադեմիկոս (1943 թ.),

*ԽՍՀՄ նավթի և գազի քիմիայի ինստիտուտի ամբիոնի վարիչ և
պրոռեկտոր (1933-1941 թթ.),*

Արմֆանի քիմիայի ինստիտուտի տնօրեն (1941-1946 թթ.),

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1942-1944 թթ.),

*ԽՍՀՄ «Նավթի քիմիայի և գազի արդյունաբերության» ինստիտուտի
տնօրեն (1946-1963 թթ.)*

Հայ խորհրդային խոշոր գիտնական-քիմիկոս, ակադեմիկոս Վաչե Իսազուլյանցը ավարտել է Շուշվա ռեալական դպրոցը և ընդունվել Մոսկվայի առևտրի ինստիտուտի տեխնոլոգիական բաժանմունքը, որն ավարտել է 1921 թվականին: 1921-1930 թթ. աշխատել է Մոսկվայի քիմիադեղագործական գործարանում (այժմ Կարպովի անվան), ապա անցել է դասախոսական աշխատանքի Մոսկվայի ժողովրդական տնտեսության քիմիկատեխնոլոգիական ինստիտուտում (1931-1932 թթ.), այնուհետև՝ Մոսկվայի նավթի քիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտում (1933-1941 թթ.) որպես Նավթի քիմիայի ամբիոնի վարիչ, ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր: Միաժամանակ Մոսկվայում ղեկավարել է օժանդակային քիմիայի, հատկապես անուշահոտ (բուրավետ) նյութերի բնագավառում տարվող հետազոտությունները՝ ստեղծելով այդ ճյուղի հայրենական առաջին արտադրության հիմքերը Կալուգայի կոմբինատում: Քիմիական գիտության դոկտոր է դարձել 1932 թվականին, իսկ պրոֆեսոր՝ 1936 թվականին: Երևանում աշխատելու ժամանակ համագործակցել է պրոֆ. Ղամբարյանի և պրոֆ. Մնջոյանի հետ: Պրոֆ. Վ. Իսազուլյանցը 1941 թ. հրավիրվել է Երևան և 1941-1946 թթ. եղել է Արմֆանի Քիմիայի ինստիտուտի տնօրեն, ղեկավարել ացետիլենի քիմիայի ու տեղական արդյունաբերության թափոնների օգտագործման ուղղությամբ տարվող գիտահետազոտական աշխատանքները: 1943 թ. ընտրվել է ՀՀ ԳԱ ակադեմիկոս: 1942-1946 թթ. դասավանդել է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի Օրգանական քիմիայի ամբիոնում որպես պրոֆեսոր, իսկ 1942-1944 թթ. նաև եղել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչը: 1946 թ. ակադեմիկոս Վ. Իսազուլյանցը պաշտոնական հրա-

վերով նորից վերադարձել է Մոսկվա և ղեկավարել ԽՍՀՄ նավթի քիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտը (1946-1963 թթ.), ապա մինչև կյանքի վերջն աշխատել է նույն ինստիտուտի Հավելանյութերի պրոբլեմային լաբորատորիայի վարիչ (1963-1973 թթ.): ՀՀ-ում նրա գիտական աշխատանքները վերաբերում են նուրբ օրգանական սինթեզին (պարֆյումերային), առաջինը ՀՀ-ում և ԽՍՀՄ-ում սինթեզել է սինթետիկ, իսկ ղեկավարությից՝ բնական հոտավետ նյութեր: Մշակել է նեոսավարսանի, նավթի ածխաջրածիններից երրորդային սպիրտների և թթվածին պարունակող մի շարք արժեքավոր ածխաջրածինների ստացման եղանակներ: Ստեղծել է կատիոնների ներկայությամբ ֆենոլների ակիլման անընդհատ եղանակ և առաջինն է կիրառել եթերի բացակայությամբ ակիլ- ու արիլ- մագնեզիում հալոգենիդների հիմքով սինթեզի ու քսայուղերի որակի բարձրացման եղանակները: Հեղինակ է երեք մենագրության. «Синтетические душистые вещества», Ереван, 1947; «Химия нефти», М-Л, 1949; «Ионнообменный катализ», Ереван, 1975:

Ակադեմիկոս Վաչե Իսազուլյանը ՀՀ և ԽՍՀՄ պարֆյումերիայի (օծանելիքների), բուրումնավետ նյութերի սինթեզի ու նավթաքիմիայի հիմնադիրն է և ամենաճանաչված հայ գիտնականը քիմիայի այդ բնագավառներում:

4. Դանդյան Մամիկոն Տիգրանի

Պրոֆ. Մ. Դանդյանի կենսագրությունը գետեղված է Քիմիայի ֆակուլտետի ղեկանների կենսագրությունների բաժնում:

5. Ավետիսյան Արդա Ավետիսի

Ակադ. Ա. Ավետիսյանի կենսագրությունը գետեղված է Քիմիայի ֆակուլտետի ղեկանների կենսագրությունների բաժնում:

6. Հարությունյան Վիլի Սիրակի (1938 թ. Երևան - 2015 թ. Երևան)

Քիմ. գիտ. դոկտոր (1988 թ.), պրոֆեսոր (1991 թ.),

Էկոլոգիական ՄԱ անդամ (1996 թ.),

ՀՀ ԻԳԱ բոլորակից անդամ (2003 թ.),

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (2000-2015 թթ.)

Պրոֆ. Վ. Ս. Հարությունյանը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի ուսումնագիտական բնագավառի ճանաչված մասնագետներից է, որի գիտական գործունեության ոլորտը եղել է տարբեր տեսակի կետոլակտոնների և կետոթթոնների բազայի հիման վրա կենսաբանորեն ակտիվ նոր միացությունների սինթեզը և հետազոտությունները: Նա մշակել է այդ դասերի տարբեր ֆունկցային ածանցյալների հետերոցիկլիկ միացությունների ստացման մատչելի եղանակներ՝ որպես քիմիայի բնագավառում նոր ուղղություններ: Պարզաբանվել է, որ ստացված միացություններից շատերը ցուցաբերում են կենսաբանական հատկություններ՝ հակաբորբոքային, հակացնցումային, հակամանրէային, հակամուտագեն, հիպոթենզիվ, աճի խթանիչ և այլն: Նրա կողմից սինթեզված 60 անոն նոր նյութերի ստացման եղանակներ ներդրվել են Երևանի քիմիական ռեակտիվների գործարանում, որոնց մի մասը լայն կիրառության միացություններ են՝ ալկիլգլիցիդային եթերները, թիոգլիկոլաթթուն, տեղակալված թիոմիզանյութերը, α -DL-ֆենիլէթիլամինը և այլն: Եղել է ամբիոնի «Օրգանական սինթեզ» գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարը (2008-2010 թթ.): Պրոֆ. Վ. Հարությունյանը հրատարակել է մոտ 230 գիտական աշխատություններ՝ հրապարակված հանրապետական և արտասահմանյան հանդեսներում, որոնցից 85-ը ԽՍՀՄ արտոնագրեր են: Ջեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միութենական գիտաժողովներում:

Վ. Հարությունյանը ծնվել է 1938 թ., ավարտել է Ստեփանավանի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումը, որը գերազանցությամբ ավարտել է և 1959 թ. ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1964 թ. համալսարանը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան օրգանական քիմիայի գծով՝ Մ. Գ. Ջալիմյանի ղե-

կավարությամբ: 1969 թ. Վ. Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1988 թ.՝ դոկտորական: Դոցենտի կոչում ստացել է 1974 թ., իսկ պրոֆեսորի՝ 1991 թ.: Նա համալսարանի Օրգանական քիմիայի ամբիոնում ուսումնամանկավարժական աշխատանքի է անցել 1966 թ., սկզբում որպես ասիստենտ (1966-1971 թթ.), ապա ավագ դասախոս (1971-1979 թթ.), դոցենտ (1974-1991 թթ.), պրոֆեսոր (1991-2015 թթ.):

Պրոֆ. Վ. Հարությունյանը կարևոր գործունեություն է վարել մաս հանրապետական և միութենական դպրոցական օլիմպիադաներում (մոտ 25 տարի), աշխատելով կազմկոմիտեների և ժյուրիների կազմում, պարգևատրվել է Կիրգիզիայի ակադեմիայի պատվոգրով՝ Ֆրունզեում կայացած համամիութենական օլիմպիադայում բարձր ակտիվության համար: Ակադեմիկոս Ա. Ավետիսյանի հետ հրատարակել է «Օրգանական քիմիան քիմիական օլիմպիադայում» (Երևան, 2005 թ.) ուսումնամեթոդական ձեռնարկը դպրոցների համար: Նա եղել է Քիմիայի ֆակուլտետի և ԵՊՀ խորհուրդների անդամ, ինչպես և ՀՀ ԳԱԱ ՕԶԻ գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ: Պրոֆ. Վ. Հարությունյանը եղել է ճանաչված գիտնական, ընտրվել է Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ (1996 թ.), ՀՀ ինժեներական ակադեմիայի թղթակից անդամ (2003 թ.): Պարգևատրվել է «ԽՍՀՄ գյուտարար» կրծքանշանով 1981 և 1984 թթ., ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրով (1999 թ.):

Պրոֆ. Վլիկ Սիրակի Հարությունյանը իր ուսումնագիտական գործունեությամբ նշանակալի հետք է թողել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի և օրգանական քիմիայի ամբիոնի, ինչպես մաս ՀՀ-ում օրգանական քիմիայի զարգացման ոլորտում:

7. Դուրգարյան Նարինե Անժելյոյի (1963 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (2013 թ.), պրոֆեսոր (2016 թ.),

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (2016 թ.)

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գործունեության բոլոր ժամանակների կլին ամբիոնի վարիչներից չորրորդն է (օրգանական քիմիայի ամբիոնում երկրորդը): Ն. Դուրգարյանը համալսարանի գերազանցիկ շրջանավարտներից է և աչքի է ընկել իր աշխատասիրությամբ ու

պարտաճանաչությամբ, կատարում է գիտական հետաքրքիր և կիրառական բնույթի աշխատանքներ՝ նվիրված պոլիմերային քիմիային, քլորօքսիրանների քիմիային, էլեկտրաակտիվ, կոմպլեքսագոյացնող և կենսաակտիվ բարձրամոլեկուլային միացությունների սինթեզին ու հետազոտություններին: Նա սիրով և բարձր մակարդակով է տանում մաս ուսումնամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում:

Ն. Դուրգարյանը ծնվել է 1963 թ. Երևանում, սովորել է №131 դպրոցում (1969-1972 թթ.), ապա՝ №4 դպրոցում (1972-1979 թթ.): Դպրոցն ավարտելուց հետո անմիջապես ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտել է 1984 թ., 1983-1984 թթ. եղել է Լենինյան թոշակառու, 1983 թ. համամիութենական ուսանողական օլիմպիադայում (Օդեսա) նվաճել է առաջին կարգի պատվոգիր: 1984 թ. համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ք. Արովյանի «Սիրիուս» գիտաարտադրական միավորումում որպես ինժեներ: Նույն թվականին ընդունվել է ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան, որը ավարտելուց հետո նույն ինստիտուտում շարունակել է աշխատել (1987-1993 թթ.) որպես գիտաշխատող: 1993 թ. տեղափոխվել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոն և աշխատել ավագ լաբորանտ, կրտսեր և ավագ գիտաշխատող: 1996 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ Բ.00.06 մասնագիտությամբ՝ «Որոշ էլեկտրաակտիվ պոլիմերների սինթեզ և ուսումնասիրություն» թեմայով: 2003-2009 թթ. ամբիոնում աշխատել է որպես ասիստենտ, ապա՝ դոցենտ: Շարունակելով զարգացնել հրատապություն ունեցող իր գիտական այդ ուղղությունը, Ն. Դուրգարյանը 2013 թ. հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Նոր էլեկտրաակտիվ և կոմպլեքսագոյացնող պոլիմերների սինթեզը և ուսումնասիրությունները» թեմայով, իսկ պրոֆեսորի կոչում ստացել է 2016 թ.: Պրոֆ. Ն. Դուրգարյանը 2016 թ.-ից զբաղեցնում է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը: Դեկավարում է տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրեր:

Նա ֆակուլտետի գիտական խորհրդի և ՀՀ ԲՈՀ-ի 010 մասնագիտական խորհրդի անդամ է: Հրատարակել է ավելի քան 70 գիտական աշխատություններ, ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետի և համալսարանի բոլոր գործընթացներին:

III-2-2. Անօրգանական քիմիայի ամբիոն (1923-2019թթ.)

Անօրգանական, Անալիտիկ և Ֆիզիկական քիմիաների ամբիոնների ստեղծումը և զարգացումը նորաստեղծ Հայաստանի ժողովրդական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում 1921-23 թթ. իրագործել է քիմիայի մեծ մվիրյալ, պրոֆ. Լ. Ռոտինյանը (1879-1964 թթ.): Նա պրոֆ. Ս. Ղամբարյանի հետ միասին եղել է նորաստեղծ Խորհրդային Հայաստանում քիմիայի ուսումնագիտական և արդյունաբերական բնագավառների ստեղծողներից մեկը և առաջինը համալսարանում կազմակերպել է Անօրգանական, Անալիտիկ և Ֆիզիկական քիմիաների բաժինները (1921-22 թթ.), ապա այդ բաժինների հիման վրա կազմավորել է Ֆիզիկական քիմիայի (առանձին) և Անօրգանական ու անալիտիկ քիմիայի (միասին) ամբիոնները (1923 թ.), որոնց առաջին վարիչը եղել է ինքը: 1934 թ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում կազմավորվել է առանձին գործող Անօրգանական և Անալիտիկ քիմիաների ամբիոնները, որոնցից Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը (նաև ֆիզիկական քիմիայի) շարունակել է վարել պրոֆ. Լ. Ա. Ռոտինյանը (մինչև 1938 թ.), իսկ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ է դարձել Թբիլիսիից հրավիրված պրոֆ. Ղազար Գրիգորի Տեր-Ղազարյանը:

Պրոֆ. Լ. Ռոտինյանը և պրոֆ. Ս. Ղամբարյանը մշակել են տեղական հումքով ցեմենտի և կարբիդի ստացումը Երևանում և Վանաձորում (Կիրովականում) (1923-27 թթ.): Լ. Ռոտինյանը իրականացրել է Արարատյան դաշտի հողաբարելավումը (մելորացիան) (1924-1926 թթ.), ճահճուտները դարձնելով մշակվող հող, որտեղ Երևանի մոտակա տարածքում հետագայում կառուցվեց նաև «Կաուչուկ» գործարանը: Նա առաջարկել է ապակե մանրաթելերի ստացման անընդհատ եղանակը, պարզաբանել է բազալտի հալման ու բյուրեղացման գործընթացների օրինաչափությունները և կառուցել բազալտի մշակման Մոլիտի գործարան ՀՀ-ում:

Պրոֆ. Լ. Ռոտինյանը 1934 թ.-ից շարունակել է ուսումնագիտական գործունեությունը ԵՊՀ-ում որպես Ֆիզիկական քիմիայի ամբիոնի (1923-1938 թթ.) և Անալիտիկ քիմիայի ամբիոնի (1934-1938 թթ. ու 1942-1946 թթ.) վարիչ: 1934 թ., ինչպես նշվեց վերը, Անօրգանական քիմիայի ամբիոնի (արդեն առանձին գործող) առաջին վարիչ

դարձավ Թբիլիսիից հրավիրված քիմիայի նշանավոր պրոֆեսոր Ղազար Գրիգորի Տեր-Ղազարյանը, ով միաժամանակ նշանակվել էր ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի առաջին դեկան (1934-1937 թթ.): Այդ ժամանակներում պրոֆ. Ղ. Տեր-Ղազարյանը զուգահեռաբար ղեկավարել է նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ընդհանուր քիմիայի ամբիոնը, ինչպես և ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի, ընդհանուր քիմիայի բաժինը, իսկ հետագայում տեղափոխվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ և եղել քիմիայի ամբիոնի երկարամյա վարիչ (1938-1955 թթ.):

Ինչպես հիշում էր այն ժամանակվա առաջին կուրսի ուսանող, հետագայում ԵՊՀ պրոֆեսոր Լ. Գյուլբուդադյանը (1912-2003 թթ.), ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի առաջին կուրսում «Անօրգանական քիմիա» առարկան իրենց կարդացել է պրոֆ. Ղ. Տեր-Ղազարյանը, ում դասախոսությունները տեղի են ունեցել Պոլիտեխնիկ ինստիտուտի կլոր լսարանում, որը նախատեսված էր քիմիայի հատուկ կրթության և ուսուցման համար, որտեղ կար լաբորատոր փորձերի ցուցադրման հարմարանքներ և փորձնական աշխատանքների կատարման լավ պայմաններ ու ընդարձակ լաբորատորիաներ: Հետագայում մման պայմաններով լաբորատորիաներ ստեղծվեցին նաև համալսարանի Քիմիայի ֆակուլտետում՝ Աբովյան փողոցում գտնվող (Սև) շենքում՝ սկսած 1938 թվականից: Այն ժամանակ պրոֆ. Ղ. Տեր-Ղազարյանի դասախոսությունների ցուցադրական փորձերը կատարում էր երիտասարդ խոստումնալից ասիստենտ Սամսոնը (գոհվել է Հայրենական պատերազմում), որոնք շատ հետաքրքիր էին և բովանդակությամբ հարուստ ու դիտարժան: Պրոֆ. Տեր-Ղազարյանի դասախոսությունները խիստ պլանավորված էին և լիարժեք կազմակերպված, մա շատ ուշադիր է եղել ուսանողների հանդեպ, ունեցել է խիստ ձգված կեցվածք՝ կարգապահ զինվորականի պես, խրոխտ, մարդասեր և պահանջկոտ: Նրա փոքր որդին գոհվել է պատերազմում, իսկ ավագը՝ Էդգար Ղազարի Տեր-Ղազարյանը եղել է ճանաչված միջազգային մակարդակի քիմիկոս-ինժեներ, իր հոր արժանի զավակը: Պրոֆ. Ղազար Գրիգորի Տեր-Ղազարյանը մեծ հետք է թողել Անդրկովկասում, ՀՀ-ում և ԵՊՀ-ում քիմիայի զարգացման բնագավառում:

Անօրգանական քիմիայի ամբիոնի (առանձին գործող) երկրորդ վարիչ եղել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դերենիկ Հովսեփի Մարությանը՝ միաժամանակ լինելով Քիմիայի ֆակուլտետի երկրորդ դեկանը (1937-1950 թթ.): Մինչև հայրենական պատերազմի սկսվելը՝ սկսած 1937 թվականից, ինչպես նաև պատերազմի ժամանակ որոշակիորեն դանդաղել է քիմիական ուսումնագիտական ընթացքը համալսարանում, սակայն պատերազմի ավարտից հետո քիմիական գիտությունը ՀՀ-ում, առաջին հերթին համալսարանում, մեծ առաջընթացի հասավ: Պատերազմական դժվարին տարիներին և հետո համալսարանի անօրգանական քիմիայի ուսումնագիտական գործընթացը հաջողությամբ ղեկավարել է պրոֆ. Դ. Մարությանը: Նա կոմպլեքս միացությունների քիմիայի հիմնադիրն է և զարգացնող ոչ միայն Անօրգանական քիմիայի ամբիոնում, այլ նաև ՀՀ-ում:

1950-1962 թթ. համալսարանի Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ եղել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Մոսկայի Լոմոնոսովի անվան համալսարանի շրջանավարտ (1936 թ.) Տիրան Տիրանի Ղազանչյանը (1901-1967 թթ.): Թբիլիսիի Ներսիսյան դպրոցի նախկին սանը, Գերմանիայում և Ռուսաստանում մասնագիտացած քիմիկոս-գիտնականը, հետաքրքրաշարժ քիմիայի և ՀՀ-ում քիմիայի պատմության մեծ գիտակը, հայրենասեր ու հայասեր, շատ հաճելի և հրաշալի անձնավորություն էր: Պրոֆ. Տ. Ղազանչյանը Անօրգանական քիմիայի ամբիոնում ֆիզիկաքիմիական (ֆիզքիմ.) անալիզի ուսումնամեթոդական եղանակի հիմնադիրն է եղել (ՀՀ-ում առաջինը) և ֆակուլտետում հիմք է դրել այդ մասնագիտության դասավանդմանը: Պրոֆ. Տ. Ղազանչյանը հեղինակ է մի շարք հանրամատչելի գրքույկների և ուսումնամեթոդական ձեռնարկների՝ նվիրված ընդհանուր և տարրերի քիմիային ու ՀՀ-ում քիմիայի ծագման և զարգացման պատմության հարցերին:

1963-1969 թթ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անօրգանական քիմիայի ամբիոնը ղեկավարել է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամիկոն Վարդանի Դարբինյանը, ով եղել է նաև անալիտիկ քիմիայի լավագույն մասնագետներից մեկը ՀՀ-ում: Նրա գիտական ուղվածությունները հիմնականում եղել են ապարների և հանքանյութերի մասնագիտական ուսումնասիրությունները, անալիզն ու մշակումը, այնուհետև՝ դրանցից մետաղական մագեդիումի և այլ

անօրգանական միացությունների ստացումն ու հետազոտումը:

1969-1983 թթ. ԵՊՀ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնը ղեկավարել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հրանտ Գրիգորի Բաբայանը: Նա բացառիկ ուսումնագիտական գործունեություն է ծավալել ամբիոնում: Նրա ջանքերով 1971 թ. ամբիոնին կից ստեղծվել է համամիութենական նշանակության ճյուղային՝ «Հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիան», որը գոյատևել է մինչև 1991 թվականը:

Պրոֆ. Հ. Բաբայանի ղեկավարությամբ ամբիոնում և լաբորատորիայում զարկ տրվեցին հանքային և արդյունաբերական թափոնների մշակման և գիտահետազոտական արդյունքների ներդրման աշխատանքներին: Այդ ընթացքում պատրաստվեցին տասնյակ բարձր մակարդակի որակյալ կադրեր՝ ուսումնագիտական և արտադրական ոլորտներում աշխատելու համար: Այդ գործընթացում մեծ ակտիվություն են ցուցաբերել նաև ամբիոնի դասախոսական կազմը և փորձառու գիտաշխատողները՝ պրոֆ. Ս. Ավագյանը, դոցենտներ Ռաֆիկ Մխիթարյանը, Մ. Սարգսյանը, Գ. Չթյանը, Է. Ղափանցյանը, Ռ. Սարգսյանը, Ֆ. Փայանը, Ճյուղային լաբորատորիայի վարիչ Գ. Փանոսյանը, ավագ գիտաշխատողներ Ա. Շահնազարյանը, Կ. Տեր-Առաքելյանը (հետագայում՝ Պոլիտեխնիկի դոցենտ), Լ. Գիրգորյանը և Ռ. Գրիգորյանը (հետագայում՝ դոկտորներ Ռուսաստանում), Ռ. Սկրտչյանը (հետագայում ղեկանի տեղակալ), Ռ. Ադամյանը (ֆակուլտետի արհմբյուրոյի նախագահ, ԵՊՀ արհմկոմիտեյի անդամ, դոցենտ), Ժ. Գրիգորյանը (հետագայում՝ դոցենտ), Գ. Ավագյանը (հետագայում՝ Չարենցավանի Սարքաշինական, ապա՝ Երևանի սննդի տեխնիկումների տնօրեն) և ուրիշներ: Պրոֆ. Հ. Բաբայանը համալսարանում ամբիոնի վարիչ աշխատելու տարիներին հասավ ուսումնագիտական մեծ հաջողությունների և հանրապետությունում ճանաչված անօրգանիկ քիմիկոս-գիտնականներից էր: Նրա ղեկավարությամբ իրականացվեցին բազմամետաղական հանքանյութերի և արտադրական թափոնների վերամշակման գիտահետազոտական աշխատանքներ՝ ոսկու կորզման նոր եղանակ, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի թափոնների վերամշակման տեխնոլոգիա և այլն: 1983 թ. պրոֆ. Հ. Գ. Բաբայանը կառավարության կողմից նշանակվեց Երևանի «Զար և սիլիկատներ» գիտարտադրական

միավորման (ԳԱՄ) գլխավոր տնօրեն (1983-1993 թթ.)՝ միաժամանակ համատեղությամբ լինելով ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր:

1984-1989 թթ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցրել է համալսարանի քիմիայի ֆակուլտետի սան և նախկին դեկան (1973-1975 թթ.), պրոֆ. Սարգիս Նազարի Ավագյանը (1918-1995 թթ.): Որպես ամբիոնի վարիչ նա համալսարանում հնարավորինս պահպանեց գիտահետազոտական աշխատանքների ուղղվածությունները և ուսումնական գործընթացի մակարդակը: Նա լուրջ աշխատանքներ է կատարել տեսական և գործնական նշանակության π և խելատային կոմպլեքսների սինթեզի և հետազոտության բնագավառում:

1989-2007 թթ. Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ աշխատել է համալսարանի կադր, ֆիզքիմիայի ամբիոնի պրոֆեսոր Սերգեյ Կոստանովի Գրիգորյանը (1938 թ. ծնվ.), ում ղեկավարությամբ՝ պահպանել է ամբիոնի լավագույն ավանդույթները ուսումնական և գիտահետազոտական բնագավառներում և նոր թափ ու ուղղություն տրվել ուսումնագիտական աշխատանքներին: Ամբիոնում նրա վարիչության ժամանակ կատարվել են տասնյակ տնտայնամագրային (15) և բյուջետային (12), նաև միջազգային (2) ու նպատակային (1) գիտահետազոտական աշխատանքներ (1989-2014 թթ.)՝ կապերի մեջ լինելով Մոսկվայի, Մարսելի, Լյուբլինի, Բրատիսլավիայի, Նիժնի-Նովոգորոդի, Թբիլիսիի համալսարանների և գիտական կենտրոնների հետ: Պրոֆ. Ս. Գրիգորյանի ջանքերով ամբիոնին կից ստեղծվել է բազային՝ «Անօրգանական սինթեզ, հետազոտություն և կիրառություն» գիտահետազոտական լաբորատորիան, որի գիտական ղեկավարը 2005-2014 թթ. եղել է ինքը: Ամբիոնը այդ ընթացքում հրատարակել է ավելի քան 250 աշխատություն, այդ թվում՝ տասնյակ ուսումնամեթոդական աշխատանքներ և բուհական դասագրքեր՝ Ս. Գրիգորյան «Ընդհանուր քիմիա» (2002 թ.), Ա. Գրիգորյան, Ռ. Սարգսյան, Է. Ղափանցյան «Ընդհանուր և անօրգանական քիմիայի պրակտիկում» (2004 թ., 2007 թ.):

1989-1997 թթ. Անօրգանական քիմիայի ամբիոնում կոմպլեքսների քիմիային վերաբերող բյուջետային թեմաների շրջանակում քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ Աշոտ Սաղյանի անմիջական ղեկա-

վարությամբ կատարվել են «Օպտիկապես ակտիվ ոչ սպիտակու-
ցային ամինաթթուների ասիմետրիկ սինթեզ անցման շարքի մե-
տադիոնների դեհիդրոամինաթթվային խիրալային կոմպլեքսների
միջոցով» թեմայով ուսումնասիրություններ:

2007-2018 թթ. Անօրգանական քիմիայի, ապա Անօրգանական
և անալիտիկ քիմիայի ամբիոնը ղեկավարել է համալսարանի ֆիզ-
քիմիայի ամբիոնի սան, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Հարություն-
յանը: Նա, շարունակելով ամբիոնի ավանդական ուսումնագիտական
ուղղությունները, զարկ է տվել նաև լուծույթներում ընթացող կարևոր
և կիրառական բնույթի գործընթացների գիտահետազոտական աշ-
խատանքներին, իսկ 2014 թ. ղեկավարում է նաև ամբիոնին կից գործող
Բազային գիտահետազոտական լաբորատորիան: Նա հրատարակել
է բազմաթիվ գիտական հոդվածներ, պատենտներ և քիմիական
գիտությամբ առնչվող աշխատանքներ՝ նվիրված էմուլսիաներում ըն-
թացող օքսիդացման և պոլիմերման ռեակցիաների կինետիկայի և մե-
խանիզմի բացահայտման խնդիրներին:

Ամբիոնում շարունակաբար մեծ ուշադրություն է դարձվել կենսա-
մետաղ-կենսալիզանդ-ջուր համակարգերում կոմպլեքսագոյացման
օրինաչափությունների ուսումնասիրմանը, բնական կլանիչների վե-
րափոխման և կիրառման խնդիրներին (պրոֆ. Ռ. Հարությունյան,
դոցենտներ Գ. Ջեյրադյան, Ռ. Սարգսյան, Ն. Ղափանցյան),
բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի եղանակով
անօրգանական նյութերի ստացման օրինաչափություններին
(պրոֆ. Ս. Խառատյան, քիմ. գիտ. թեկնածուներ Խ. Մանուկյան և
Հ. Խաչատրյան), քիմիական տեղափոխման ռեակցիաների կի-
նետիկային և մեխանիզմներին (պրոֆ. Գ. Գրիգորյան, դոցենտ Հ.
Բեգլարյան): Նշված տարիներին ամբիոնում իրականացվել են տե-
ղական և միջազգային մի քանի դրամաշնորհային ծրագրեր: 2007-2018
թթ. ամբիոնում պաշտպանվել են 15-ից ավելի թեկնածուական և մեկ
դոկտորական թեզեր, հրատարակվել են դասագրքեր և ձեռնարկներ՝
«Անօրգանական քիմիա» (I և II մաս, դոց. Ռ. Աղամյան, ԵՊՀ, 2018),
«Սիլիկատների և ցեոլիտների քիմիա» (պրոֆ. Ռ. Հարությունյան,
դոց. Հ. Բեգլարյան, դոց. Գ. Պետրոսյան, ԵՊՀ, 2017), «Ընդհանուր
քիմիական տեխնոլոգիա» (դոց. Հ. Խաչատրյան, պրոֆ. Տ. Ղոչիկյան,
պրոֆ. Ռ. Հարությունյան, ԵՊՀ, 2018), «Հետերոգեն փոխարկումների

ուսումնասիրությունը արգասիքների կուտակման կինետիկական եղանակով» (դոցենտ Հ. Բեգլարյան, պրոֆ. Գ. Գրիգորյան, ԵՊՀ, 2013):

2008 թ. Անօրգանական քիմիայի ամբիոն ներգրավվեցին ֆակուլտետի «Քիմիական ֆիզիկա» լուծարված ամբիոնի մի քանի աշխատակիցներ, որոնց թվում այդ ամբիոնի նախկին վարիչ, ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անօրգանական պինդ նյութերի բարձրջերմաստիճանային փոխարկումների մասնագետ Ս. Խառատյանը և տեսական քիմիայի ու տրանսպորտային քիմիական պրոցեսների մասնագետ, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Գրիգորյանը:

2013 թ. համալսարանի խորհուրդը որոշեց (համապատասխան ժամաքանակի պակասի պատճառով) ֆակուլտետի «Անալիտիկ քիմիա» ամբիոնը միացնել Անօրգանական քիմիայի ամբիոնին: Նշված երկու ամբիոնների միացումից հետո (2013 թ.) ամբիոնը անվանվեց՝ «Անօրգանական և անալիտիկ քիմիայի» ամբիոն, որի առաջին վարիչ ընտրվեց պրոֆ. Ռ. Հարությունյանը: Նոր ամբիոնում իրականացվում են նաև բազմաբաղադրիչ համակարգերի ֆիզիկաքիմական հետազոտություններ (պրոֆ. Հ. Խաչատրյան, դոց. Հ. Դարբինյան, քիմ. գիտ. թեկնածու Լ. Մանգասարյան): 2015 թ. դասաժամերի պակասի հետևանքով լուծարվեց նաև ֆակուլտետի համեմատաբար նորաստեղծ (2007 թ.) «Էկոլոգիական քիմիա» ամբիոնը, որի վարիչն է եղել (2007-2015 թթ.) տեխ. գիտ. դոկ., պրոֆեսոր Գ. Փիրումյանը: Էկոլոգիական քիմիայի ամբիոնի նախկին երեք դասախոսներ նույնպես ներգրավվել են Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն ու շարունակում են աշխատել ՀՀ ջրային համակարգերի և ավազանների էկոլոգիական և քիմիական հետազոտությունների ուղղվածությամբ (պրոֆ. Գ. Փիրումյան, դոց. Գ. Սիմոնյան և այլք): Այդպիսով, նշված երեք առանձին գործող լուծարված ամբիոնների աշխատակիցների ներգրավվումը «Անօրգանական և անալիտիկ քիմիայի» ամբիոնին ընդլայնեց ուսումնագիտական աշխատանքների ծավալը և հնարավորությունները քիմիայի զարգացման գործում ու ներկայումս այդ ամբիոնը ուսումնագիտական հզոր մասնագիտական կենտրոն է՝ անօրգանական, անալիտիկ, էկոլոգիական և տեխնոլոգիական քիմիաների ուղղվածություններով, ոչ միայն համալսարանում, այլ նաև ՀՀ-

ում:

Ամբիոնում աշխատել են 7 դոկտոր, որոնք հանրապետությունում ճանաչված քիմիկոսներ են: Նրանց թվում են պրոֆ. Ռ. Հարությունյանը, պրոֆ. Ս. Գրիգորյանը, պրոֆ. Ս. Խառատյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), պրոֆ. Հ. Խաչատրյանը, պրոֆ. Գ. Փիրումյան, պրոֆ. Գ. Գիրգորյանը և քիմ. գիտ. դոկտոր Լ. Հարությունյանը (2019 թ. հուլիսից աշխատում է ՀՀ Ազգային ագրարային համալսարանի ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ), ինչպես նաև տասնյակ բարձրակարգ թեկնածու-դոցենտներ՝ Ռոբերտ Մկրտչյանը (դեկանի երկարամյա տեղակալ), Ռոբերտ Ադամյանը (քիմիայի ֆակուլտետի արհմբյուրոյի երկարամյա նախագահ, ԵՊՀ արհմկոմիտեի անդամ), Ռազմիկ Մխիթարյանը (ֆակուլտետի արհմբյուրոյի երկարամյա նախագահ և համալսարանի արհմկոմիտեի անդամ, ԲՈՀ-ի 057 մասնագիտական խորհրդի անդամ), Գ. Սիմոնյանը, Գ. Պետրոսյանը, Հ. Բեգլարյանը, Հ. Դարբինյանը, Խ. Մանուկյանը, Հ. Խաչատրյանը, Ռ. Սարգսյանը, Ն. Ղափանցյանը, Գ. Ջեյթադյանը և ուրիշներ: 2018 թ. հունիսից Անթրոպոլոգիայի և անալիտիկ քիմիայի ամբիոնի նոր վարիչ է ընտրվել ֆակուլտետի դոցենտ Արմեն Իզմատիոսի Մարտիրոսյանը:

Անթրոպոլոգիայի և անալիտիկ քիմիայի ամբիոնը կոմպլեքսների քիմիայի, հազվագյուտ ու ցրված տարրերի քիմիայի, բնական կլանիչների վերափոխման ուղղություններով ՀՀ և որոշ արտերկրների համար բարձրակարգ կադրերի պատրաստման դպրոց է: Ամբիոնը մշտապես մեծ ակտիվություն ու գործունեություն է ծավալել ուսումնագիտական գործընթացներում:

III-2-2-1. Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1923-2019 թթ.)

Անօրգանական քիմիայի, ինչպես նաև ֆիզիկական քիմիայի ու Անալիտիկ քիմիայի ամբիոնների առաջին ստեղծողը և վարիչը համալսարանում եղել է պրոֆ. Լ. Ռոտինյանը: Նրա կենսագրական տեղեկությունները տրված են ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչների ցուցակում: Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչներ՝ պրոֆ. Ղ.Գ. Տեր-Ղազարյանի, պրոֆ. Դ. Հ. Մարությանի և պրոֆ. Ս. Ն. Ավագյանի կենսագրությունները, նաև որպես ղեկանների, զետեղված են ղեկանների կենսագրությունների բաժնում: Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչները.

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի (1879-1964 թթ.), 1923-1934 թթ., (Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն)

2. Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի (1874-1958 թթ.), 1934-1937 թթ.,

3. Մարության Դերենիկ Հովսեփի (1910-1950) թթ., 1937-1950 թթ.

4. Ղազանչյան Տիրան Տիրանի (1901-1967 թթ.), 1950-1963 թթ.

5. Դարբինյան Մամիկոն Վարդանի (1908-1969 թթ.), 1963-1969 թթ.

6. Բաբայան Հրանտ Գրիգորի (1927-2014 թթ.), 1969-1983 թթ.

7. Ավագյան Սարգիս Նազարի (1918-1995 թթ.), 1984-1989 թթ.

8. Գրիգորյան Սերգեյ Կոստանդի (1938 թ.), 1989-2007 թթ.

9. Հարությունյան Ռոմիկ Սուրենի (1946 թ.), 2007-2013 թթ.

10. Հարությունյան Ռոմիկ Սուրենի (1946 թ.), 2013-2018 թթ., (Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն)

11. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի (1959 թ.), 2018 թ. (Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն)

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի

Պրոֆ. Լևոն Ռոտինյանի կենսագրությունը զետեղված է ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչների կենսագրությունների բաժնում:

2. Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի

Պրոֆ. Ղազար Տեր-Ղազարյանի կենսագրությունը զետեղված է ղեկանների կենսագրությունների բաժնում:

3. Մարուխյան Գերենիկ Հովսեփի

Պրոֆ. Գերենիկ Մարուխյանի կենսագրությունը զետեղված է ղեկավարների կենսագրությունների բաժնում:

4. Ղազանջյան Տիրան Տիրանի (1901 թ. Թբիլիսի - 1967 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1952 թ.), պրոֆեսոր (1953 թ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1950-1963 թթ.)

Ծնվել է Թբիլիսիում, 1921 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը, այնուհետև քիմիայի մասնագիտական կրթություն ստացել է Գերմանիայում և Ռուսաստանում, ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (1936 թ.): Վերադարձել է Երևան և մինչև կյանքի վերջն աշխատել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի՝ անօրգանական քիմիայի ամբիոնում: Նա քիմիայի պատմության և հետաքրքրաշարժ քիմիայի մեծ գիտակ էր, հայրենասեր, հայասեր, լեզվագետ, շատ հաճելի անձնավորություն, զրուցակից և դասախոս: ՀԽՍՀ-ում կազմակերպել է առաջին ֆիզիկաքիմիական (ֆիզքիմ) անալիզի լաբորատորիան և կատարել հանքատեսակների ֆիզիկաքիմիական հետազոտություններ: 1952 թ. դարձել է քիմիական գիտությունների դոկտոր, 1953 թ.՝ պրոֆեսոր: 1950-1963 թթ. եղել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչը: Միջնադարյան մատենագիտական նյութերի հիման վրա քննարկել ու համակարգել է Հայաստանում քիմիայի ծագման և զարգացման պատմությունը, քիմիական տարրերի պատմաբնափիլիսոփայական ուսմունքի ուսումնասիրությունները, հայ իրականության մեջ քիմիական գիտության առաջընթացի տարեգրությունը, որոնք ընդգրկված են պրոֆ. Տ. Ղազանջյանի հրատարակած մենագրություններում՝ «Էլեմենտների ուսմունքը հայ բնափիլիսոփայության մեջ», Երևան 1946 թ., «Սահակ Ծաղկարար», Երևան, 1956 թ., «Очерки по истории химии в Армении», Ереван, 1955 г.: Տ. Ղազանջյանը մաս քիմիային վերաբերող գիտահանրամատչելի և հետաքրքրաշարժ գրքույկների հեղինակ է՝ «Ջրածին» (1953 թ.), «Թթվածին» (1954 թ.), «Նյութի ատոմամոլեկուլյար կառուցվածքի մասին» (1956 թ.), «Ջրի կյանքը» (1957 թ.), «Ալյումինիում» (1959 թ.), «Պղինձ» (1961 թ.), «Միլիցիումի աշխարհում» (1962 թ.):

Պրոֆ. Տ. Ղազանչյանը եղել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ էր (1963 թ.): Համալսարանում առաջինը զարգացրեց ֆիզիկաքիմիական անալիզի ուղղությունը: Անգուգական և հմայիչ պրոֆեսոր էր և մնայուն տեղ ունի Հայաստանում քիմիայի ծագման բնափիլիսոփայական հիմունքների ու զարգացման պատմության համակարգման և լուսաբանման բնագավառներում:

5. Դարբինյան Մամիկոն Վարդանի

(1908 թ. Ալեքսանդրապոլ (Գյումրի) - 1969 թ. Երևան)

Տեխնիկական գիտությունների դոկտոր (1953 թ.), պրոֆեսոր (1954 թ.),

ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (1954-1963 թթ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1963-1969 թթ.)

1929 թ. ավարտել է համալսարանը, 1927 թ.-ից աշխատել է համալսարանում և զբաղվել Անօրգանական ու Անալիտիկ քիմիայի ամբիոններում տարվող անօրգանական հանքանյութերի ուսումնասիրությամբ և անալիզի հարցերով: Նրա կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները վերաբերել են ՀՀ-ում ապարների և հանքանյութերի վերամշակման և դրանց միացությունների ստացման խնդիրներին: Այդ հետազոտությունների արդյունքներով 1953 թ. պաշտպանել է դոկտորական թեզ և դարձել տեխ. գիտ. դոկտոր, իսկ 1954 թ.՝ պրոֆեսոր: Աշխատել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (1954-1963 թթ.), այնուհետև ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1963-1969 թթ.):

Անալիտիկ և Անօրգանական քիմիայի ամբիոններում աշխատելու ժամանակահատվածներում ղեկավարել է տնտեսական պայմանագրային բնույթի գիտահետազոտական աշխատանքներ՝ համագործակցելով ակադեմիական ինստիտուտների և արտադրական հիմնարկ ձեռնարկությունների հետ:

Պրոֆ. Մ. Դարբինյանը եղել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1967 թ.), անալիտիկ և անօրգանական քիմիայի ՀՀ լավագույն մասնագետներից մեկը և նշանակալի հետք է թողել քիմիայի բնագավառում:

6. Բաբայան Հրանտ Գրիգորի (1927 թ. Երևան - 2014 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1966 թ.), պրոֆեսոր (1969 թ.),

ՀՀ և Միջազգ. ԻԳԱ ակադեմիկոս (1991 թ., 1995 թ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1969-1983 թթ.),

ՀՀ «Քար և սիլիկատներ» ԳԱՄ տնօրեն (1983-1993 թթ.)

Նշանավոր քիմիկոս, տաղանդավոր գիտնական Հ.Գ. Բաբայանը ծնվել է Երևանցի հայտնի շինարար Գրիգոր Բաբայանի ընտանիքում, ում երեք որդիները հետագայում դարձան քիմիկոսներ: Հ. Բաբայանը 1952 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիա-տեխնոլոգիական ֆակուլտետը և ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Ն. Կուռնակովի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան, որը հաջողությամբ ավարտելով՝ 1956 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Վերադարձել է Երևան և աշխատել ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում որպես գիտաշխատող, հետագայում՝ գիտության գծով փոխտնօրեն: Ստեղծել է ֆիզիկաքիմիական անալիզի գիտահետազոտական լաբորատորիա և երիտասարդ կոլեկտիվով կատարել սիլիկատային համակարգերի հետազոտություններ, սինթեզել նոր սիլիկատային նյութեր (մետասիլիկատներ), մշակել Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատի կարևոր հանգույցներից մեկի տեխնոլոգիական արտադրամասը: Գիտնականի բազմամյա աշխատանքները արտացոլվել են նրա դոկտորական թեզում՝ «Մետասիլիկատներ, հիդրօքսիդներ և մատրիումի ու կալիումի կարբոնատներ պարունակող ջրադային համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտությունները», որը հաջողությամբ պաշտպանել է 1966 թ. Մոսկվայի օրգանական և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհրդում: 1966 թ. Հ. Բաբայանը հրավիրվել է ԵՊՀ, իսկ 1969 թ. ընտրվել է Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Հ. Բաբայանը համալսարանում ուսումնամանկավարժական գործունեության հետ զուգընթաց իր շուրջն է համախմբել ամբիոնի աշախատակիցներին՝ ծավալելով լուրջ գիտահետազոտական աշխատանքներ՝ նվիրված հազվագյուտ և ցրված տարրերի քիմիային և տեխնոլոգիային: Տարվող աշխատանքների արդյունավետությունը և կարևորությունը հնարավորություն ստեղծեցին 1971 թ. համալսարանի Քիմիայի ֆակուլտետին կից ստեղծել միութենական

նշանակության նոր գիտահետազոտական օջախ՝ «Հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի ճյուղային լաբորատորիա» պրոֆ. Հ. Բաբայանի ղեկավարությամբ (1971-1983 թթ.): Լաբորատորիայում մշակվել են հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական թափոնների և հանքային նյութերի հետազոտման ու առանձնացման եղանակներ, ինչպիսիք էին ոսկու խտանյութերի կոմպլեքս մշակումը, մուրբ կոնվերտերային փոշիների հիդրոմետալուրգիական վերամշակումը, պղնձաէլեկտրոլիտային շլամներից պղնձազերծումը, մաքուր շիբերի ստացումը, մասնադաջրային համակարգերի հետազոտումը, հալույթային բազում տրամագիրների (դիագրամների) կազմումը և այլն:

Շանաչված գիտնականը և կազմակերպիչը կառավարության կողմից նշանակվել է «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ի գլխավոր տնօրեն (1983-1993 թթ.), որտեղ նրա ղեկավարությամբ սինթեզվել են բնական հումքի՝ պեռլիտների, տուֆերի, պեմզաների կոմպլեքսային մշակմամբ նոր նյութեր՝ կատալիզատորներ, կրողներ, հղկավոշիներ, քիմիապես մաքուր նյութեր, ստեղծել էր մասնաշվողական կենտրոն: Հ. Բաբայանը երկար տարիներ եղել է քիմիայի գծով դպրոցական հանրապետական և համամիութենական օլիմպիադաների հանձնաժողովների նախագահ: Մեծ է Հ. Բաբայանի դերը բարձրորակ կադրերի պատրաստման գործում, նրա ղեկավարությամբ պաշտպանել են մի քանի տասնյակ թեկնածուական և դոկտորական թեզեր, հրատարակել է ավելի քան 350 գիտական աշխատանք, որոնցից մոտ 70 հեղինակային իրավունքով: Եղել է գիտական մասնագիտական խորհրդի նախագահ, ֆիզիկաքիմիական անալիզի և բյուրեղային պրոցեսների ԽՍՀՄ բաժանմունքի նախագահության անդամ, ԽՍՀՄ բարձրագույն կրթության գիտամեթոդական բյուրոյի անդամ, Մենդելևյան համամիութենական ընկերության կառավարման նախագահության անդամ, Հայաստանի քիմիական ընկերության նախագահ, Հայկական հանրագիտարանի խմբագիր-անդամ, ՀՀ և Միջազգային ինժեներական ակադեմիաների ակադեմիկոս (1991 թ., 1995 թ.), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (1981 թ.): Պրոֆ. Հ. Բաբայանը եղել է ՀՀ-ում քիմիայի բնագավառի ականավոր և հայրենամոլ գիտնականներից մեկը, ով ՀՀ-ում մեծ զարգացման է հասցրել անօրգանական քիմիան:

7. Ավագյան Սարգիս Նազարի

Պրոֆ. Սարգիս Նազարի Ավագյանի կենսագրությունը զետեղված է ղեկամների կենսագրությունների բաժնում:

8. Գրիգորյան Սերգեյ Կոստանդի (1938 թ. Հաքերք, Ղարաբաղ)

Քիմիական գիտությունների դոկտոր (1986 թ.), պրոֆեսոր (1987 թ.),

ՀՀ ԻԳԱ ակադեմիկոս (1999 թ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1989-2007 թթ.)

Պրոֆ. Ս.Կ. Գրիգորյանը որպես քիմիկոս իր ուսումնագիտական մկրտությունը և հասունությունը ստացել է Մայր բուհում՝ համալսարանում: Սկսած ուսանողական տարիներից աշխատել է Ֆիզիկական քիմիայի ամբիոնում (1958-1989 թթ.), ապա ամբիոնի վարիչ ընտրվելուց հետո՝ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնում (1989 թ. առ այսօր): Ծնվել է Լեռնաային Ղարաբաղի Հաքերք գյուղում (17.07.1938 թ.), տեղի դպրոցը ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, որն ավարտել է 1959 թ.: Համալսարանը ավարտելուց հետո կարճ ժամանակով աշխատել է «Կանազ» գործարանի կենտրոնական լաբորատորիայում որպես ինժեներ-հետազոտող և գործարանի տեխնիկական հսկողության բաժնի պետ: Սակայն ՀՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Չաթիկյանի խորհրդով վերադարձել է համալսարան և 1961 թ. ապրիլից դարձել Ֆիզքիմիայի ամբիոնի ասպիրանտ՝ Հ. Չաթիկյանի ղեկավարությամբ: Թեկնածուական քեզը նվիրված է եղել ջրածնի պերօքսիդի և հիդրոպերօքսիդների քայքայման կինետիկային ամինների առկայությամբ ջրային միջավայրում, որով մեծ գիտական ասպարեզ է բացվել նրա համար, որը շարունակվել է հետագա տարիներին: Այդ ուղղությամբ տարվող գիտական աշխատանքներով Ս. Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական (1966 թ. Գորկի քաղաքի համալսարանի խորհրդում) և դոկտորական (1986 թ. Թբիլիսիի համալսարանի խորհրդում) թեզեր: Ասպիրանտուրան ավարտելուց հետո շարունակել է աշխատել ամբիոնում՝ որպես գիտաշխատող, ասիստենտ, ավագ դասախոս, դոցենտ (1970 թ.), պրոֆեսոր (1987 թ.): Նրա կողմից առաջինը ստացված գիտական արդյունքները նշանակալի ավանդ են ջրային լուծույթներում հիդրոպերօքսիդների հետ ամինների և մե-

տաղիոնների փոխազդեցությունների տեսության և կիրառության խնդիրների լուծման առումով: Նա ստացել է ջրային միջավայրում հիդրոպերօքսիդները անընդհատ քայքայող նոր կատալիզատորներ՝ ամինասպիրտների և մետաղամիմային կոմպլեքսների հիման վրա, որոնցից կոբալտի կոլամիմային կոմպլեքսը որպես ջերմա- և լուսակայունացուցիչ օգտագործվել է քլորոպրենային լատեքսները և կաուչուկը կայունացնելու համար ու ներդրվել «Նաիրիտ» ԳԱՄ-ում (1984-1986 թթ.): Հրատարակել է 300-ից ավելի գիտական հոդվածներ, պատենտներ, թեզիսներ, ձեռնարկներ և այլն: Եղել է Անօրգանական քիմիայի ամբիոնին կից բազային լաբորատորիայի առաջին ղեկավարը (2005-2014 թթ.): 1967 թ.-ից պրոֆ Ս. Գրիգորյանը եղել է տարբեր խորհուրդների անդամ՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի և ԵՊՀ գիտական խորհուրդների, ԵՊՀ թեզերի պաշտպանության, Անօրգանական քիմիայի գծով մասնագիտական խորհրդի նախագահ (1994-1999 թթ.), Ընդհանուր և անօրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի խորհրդի անդամ, ՀՀ լեզվի տեսչության անդամ, ԲՈՀ-ի 017 մասնագիտական խորհրդի անդամ է: ՀՀ ինժ. ակադեմիայի ակադեմիկոս է (1999 թ.):

Նրա նախաձեռնությամբ և առաջարկով ֆակուլտետի խորհրդի որոշմամբ համալսարանում բացվել է Դեղագործական քիմիայի բաժին (1994 թ.), որի ուսումնական պլանի և առարկայական ծրագրի կազմումը Խորհրդի հանձնարարությամբ կատարել է պրոֆ. Ս. Գրիգորյանը: Հեղինակ է «Ֆիզիկական և կոլոիդային քիմիա» (1983 թ.) և «Ընդհանուր քիմիա» (2002 թ.) մայրենի լեզվով բուհական ձեռնարկների, համահեղինակ է «Ընդհանուր և անօրգանական քիմիայի պրակտիկում» (2003 թ., 2007 թ.) ուսումնական ձեռնարկի և «Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրները» (1998 թ.) մենագրության: Նա եղել է ֆակուլտետի ղեկանի տեղակալ (1967-1969 թթ.), դպրոցական, ուսանողական, համամիութենական և հանրապետական օլիմպիադաների հանձնաժողովների, ժյուրիների անդամ (1965-2007 թթ.), ֆակուլտետի ՌԻԳԸ գիտական ղեկավար (1972-1984 թթ.), ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղար (1969-1985 թթ.), Համալսարանի ժողվերահսկողության նախագահի տեղակալ (1974-1982թթ.), Արցախ-Հայաստան և ԵՊՀ «Դարաբաղ» կոմիտեների նախագահության անդամ և այլն:

Պրոֆ Ս. Գրիգորյանը նշանակալից դեր ունի համալսարանում և ՀՀ-ում քիմիայի զարգացման բնագավառում և ուսանողության կրթության ու հայրենասիրության դաստիարակության վեհ գործընթացում:

9. Հարությունյան Ռոմիկ Սուրենի (1946 թ. Տաթև, Սյունիք)

Քիմիական գիտությունների դոկտոր (1996 թ.), պրոֆեսոր (2008 թ.),

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (2007-2013 թթ.),

ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (2013-2018 թթ.)

Ծնվել է ՀՀ Սյունիքի Տաթև գյուղում (01.01.1946 թ.) ուսուցչի ընտանիքում: 1962 թ. ավարտել է տեղի դպրոցը, այնուհետև աշխատել Բուխարա-Ուրալ գազամուղի շինարարությունում, իսկ 1964-1969 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, 1969-1971 թթ. ծառայել է Խորհրդային բանակում որպես սպա: 1972 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ քիմիական ֆակուլտետում որպես ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ և ամբիոնի պրոբլեմային լաբորատորիայի գիտական աշխատակից, կատարելով թեկնածուական թեզ՝ «Միջավայրի ազդեցությունը ռադիկալաշրջայական ռեակցիաների կինետիկայի վրա էմուլսիաներում» թեմայով, որը պաշտպանել է 1984 թ.: Շարունակելով և զարգացնելով այդ գիտական ուղղությունը, 1996 թ. պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Ջրային էմուլսիաներում օքսիդացման և պոլիմերման ռադիկալային պրոցեսների տոպոքիմիական և կինետիկական յուրահատկությունները» թեմայով: Հեղինակ է 280-ից ավելի գիտական աշխատությունների և 7 հեղինակային իրավունքով աշխատանքի: Նրա ղեկավարությամբ թեկնածուական թեզ են պաշտպանել 12 անձ, իսկ դոկտորական՝ 1 անձ, որոնցից մի քանիսը աշխատում են արտերկրում: Հանդես է եկել գիտական գեկուցումներով հանրապետական և միջազգային գիտաժողովներում, հանրապետական մամուլում և հանդեսներում հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով տարաբնույթ հարցերի վերաբերյալ՝ քիմիական գիտության, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և այլն: 2007-2013 թթ. աշխատել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ 2013-2018 թթ.՝ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ: Պրոֆ.

Ռ. Հարությունյանը ղեկավարում է ամբիոնին կից «Անօրգանական քիմիա» գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքները (2014 թ.): Նա համահեղինակ է մի քանի ուսումնական ձեռնարկների (տե՛ս էջ 114), ինչպես նաև Լ. Հարությունյան, Ռ. Հարությունյան «Ջրային միջավայրում ՄԱՆ-ի միցելագոյացման և սուլլոբիլացման գործընթացների ուսումնասիրումը», ԵՊՀ, 2007 թ.: Նրա հեղինակությամբ հրատարակվել են գիտահամրամատչելի և գեղարվեստական գրքույկներ՝ «Մակերևութային ակտիվ նյութերի կիրառումը ժողովրդական տնտեսության մեջ», «Ծխախոտածուխը և մենք» (համահեղինակ Լ. Հարությունյան), «Հավերժի ճամփորդները», «Գրական Տաքս», «Հետադարձ հայացք 90-ամյա շեմից»:

1990-ական թվականներից մեր հանրապետությունում շրջանառության մեջ է նրա կողմից կազմած քիմիական աղյուսակը (այն ընդգրկում է տարրերի պարբերական աղյուսակը, քիմիական միացությունների ջրում լուծելիության աղյուսակը և այլ տեղեկություններ), որի տարբեր տարբերակների համահեղինակներ են քիմ. գիտ. թեկնածու Վ. Գրիգորյանը և քիմ. գիտ. դեկտոր Լ. Հարությունյանը: Նրա և քիմ. գիտ. թեկնածու Գայանե Գրիգորյանի ու Լ. Հարությունյանի կողմից ռուսերենից հայերեն է թարգմանվել Դ. Ս. Хомченко, Пособие по химии для поступающих в ВУЗЫ. М.: Новая волна, 1988, ժամանակին մեծ պահանջարկ ունեցող ձեռնարկը:

Ուսանողական տարիներին որպես լաբորանտ ընդգրկվել է ֆիզքիմիայի ամբիոնի ուսումնագիտական աշխատանքներին: Ուսանող տարիներին եղել է ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը, իսկ հետագայում՝ ՈՒԳԸ գիտական ղեկավար: Եղել է ֆակուլտետի արհրյուրոյի նախագահ, համալսարանի արհկոմիտեի անդամ և վերաստուգիչ հանձնաժողովի նախագահ, ԵՊՀ գիտական տեղեկագրի (բնական գիտություններ) խմբագրական խորհրդի անդամ:

Պրոֆ. Ռ.Ս. Հարությունյանը եղել է ՀՀ ԲՈՀ-ի 010 և 017 մասնագիտական խորհրդների անդամ, ինչպես նաև Զիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ:

Նրա օրոք ամբիոնում ընդլայնվել է ուսումնագիտական աշխատանքների ծավալը և հնարավորություններ են ստեղծվել անօրգանական, անալիտիկ, էկոլոգիական և տեխնոլոգիական քիմիաների զարգացման համար:

10. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի (1959 թ. Երևան)

*Քիմիական գիտությունների թեկնածու (1993 թ.), դոցենտ (2005 թ.),
ԵՊՀ աևօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (2018 թ.)*

Ծնվել է Վաղարշապատ քաղաքում (01.06.1959 թ.), 1966-1974 թթ. սովորել է տեղի №2 դպրոցում, իսկ 1974-1976 թթ.՝ Երևանի Ա. Իսահակյանի անվան №16 դպրոցում: 1976-1977 թթ. աշխատել է Երևանի «Հաստոցանորմալ» գործարանում որպես բանվոր, իսկ 1977-1980 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Ջորագրվելուց հետո եղել է ԵՊՀ նախապատրաստական բաժնի ունկնդիր: 1980 թ. ընդունվել ու 1985 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի ընդունվել ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, ապա ավագ լաբորանտ (1986-1993 թթ.): 1993 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Որոշ օրգանական միացությունների ֆիզիկաքիմիական փոխարկումների օրինաչափությունները ջրային միջավայրում և մոդելային համակարգերում» թեմայով, լինելով նույն ամբիոնում որպես գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող: 1996-2000 թթ. աշխատել է «Կատալիզ և տեխնիկական քիմիա» ամբիոնում որպես ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ և համատեղությամբ՝ դասախոս: 2000 թ.-ից աշխատել է ասիստենտ, իսկ 2005 թ. ստացել է դոցենտի կոչում: Քիմիական ֆիզիկայի ամբիոնի լուծարումից հետո աշխատել է նորաստեղծ Էկոլոգիական քիմիայի ամբիոնում (2007-2015 թթ.): Այնուհետև այդ ամբիոնի լուծարումից հետո նորից տեղափոխվել է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոն որպես դոցենտ: 2005 թ. սկսած Ա. Մարտիրյանը շարունակում է իր գիտահետազոտական աշխատանքների զարգացումը, որոնց շրջանակը բավականին լայն է ու արդիական. Ջրային միջավայրում և պինդ մակերևույթին ընթացող լուսաքիմիական և ռադիկալային բնույթի ֆիզիկաքիմիական փոխարկումների ուսումնասիրություններ, ինչպես նաև սննդի քիմիային և բյուրեղաքիմիային վերաբերող հետազոտություններ: Նա մասնակցել է միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքներին: Ա. Մարտիրյանի համահեղինակությամբ հրատարակվել են 77 գիտական և ուսումնամեթոդական աշխատություններ: Համահեղինակ է «Սննդի անվտանգության,

սննդի քիմիայի և սննդարտադրական տեխնոլոգիաների անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինաբանական համառոտ բառարան»-ի:

Դոց. Ա. Մարտիրյանը քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է, եղել է գիտխորհրդի քարտուղար (2010-2016 թթ.), ֆակուլտետի դեկանի տեղակալ (2017-2018 թթ.), 2018 թ. հունիսին ընտրվել է ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ:

III-2-3. Ֆիզիկական քիմիայի ամբիոն (1923 -2019 թթ.)

Քիմիական գիտության «ֆիզիկական քիմիա» ճյուղը ՀՀ-ում կազմակերպել և զարգացրել է քիմիայի խոշոր ջատագով և տաղանդավոր մասնագետ, պրոֆ. Լ. Ռոտինյանը: Հայաստանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում Լ. Ռոտինյանը 1921-1923 թթ. բացել է «ֆիզիկական քիմիայի» բաժին, ապա առանձին ամբիոն, նաև Անօրգանական և անալիտիկ քիմիայի միացյալ բաժին, և ամբիոն, որոնց վախճան է եղել է ինքը: 1934 թվականին դրանք իրարից առանձնանալուց հետո Քիմիայի ֆակուլտետում շարունակել է ղեկավարել Անալիտիկ քիմիայի և Ֆիզիկական քիմիայի ամբիոնները զուգահեռաբար մինչև 1938 թ.: 1927-1929 թթ. պրոֆ. Լ. Ռոտինյանը իր և Ս. Ղամբարյանի լավագույն աշակերտ Հ. Չաթրիկյանի հետ համալսարանում կազմակերպել և վերակառուցել են Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոն, որի վարչությունը շարունակել է Լ. Ռոտինյանը մինչև 1938 թ.: 1939 թ.-ից այն ղեկավարել է Հ. Չաթրիկյանը մինչև իր կյանքի վերջը (1972 թ.):

Պրոֆ. Լ. Ռոտինյանը, բացի ֆիզիկական քիմիայից տիրապետել է նաև անօրգանական և անալիտիկ քիմիաներին: Նա դեռևս Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտում դասախոս աշխատած տարիներին (1903-1917 թթ.) կազմել է ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների ռուսերենով գրած առաջին ուսումնական ձեռնարկը բուհերի ուսանողության համար: Չեռնարկը օգտագործվել է Լ. Ռոտինյանի կողմից կազմակերպած Սանկտ Պետերբուրգի ռուսական առաջին ֆիզիկական քիմիայի ուսումնական լաբորատորիայում՝ Քիմիայի և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնում, հետագայում նաև մեր համալսարանում: Նա եղել է քիմիական գիտության արտաստվոր գիտակ: Պրոֆ. Ս. Ղամբարյանի հետ 1920-ական թվականներին լծվել են Խորհրդային Հայաստանում քիմիայի և քիմիական արդյունաբերության ստեղծման ու զարգացման հայրենանվեր գործին:

1921-1960 թթ. պրոֆ. Լ. Ռոտինյանը ֆիզիկաքիմիական հետազոտությունների արդյունքների հիման վրա իրականացրել է ՀՀ համար շատ կարևոր գիտական և կիրառական բնույթի աշխատանքներ: Նրա հետազոտությունները ֆիզիկական քիմիայի (նաև անօրգանական

և անալիտիկ քիմիկների) ուղղություններով բազմազան են, որոնք վերաբերում են քիմիական թերմոդինամիկային, մասնավորապես, քիմիական հավասարակշռական երևույթներին, անիզոտրոպ հեղուկների և քիմիական միացությունների կրիտիկական ջերմաստիճանների ուսումնասիրություններին և դրանց որոշմանը: Կյանքի վերջին ժամանակաշրջանում (1957-1964 թթ.) նա կատարել է դժվարին և արժեքավոր ֆիզիկաքիմիական գիտահետազոտական աշխատանքներ՝ ուսումնասիրելով եռբաղադրիչ հեղուկ համակարգերի լուծելիության իզոթերմալին տրամագրերը (դիագրամները): Կիրառելով բաշխման օրենքը ստացել է լուծված նյութերի կոնցենտրացիաներն ու համասեռության տիրույթները իրար կապող մաթեմատիկական հավասարումներ:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոնի երկրորդ վարիչ է աշխատել Ս. Ղամբարյանի և Լ. Ռոտինյանի սիրելի ու տաղանդավոր աշակերտ, քիմիայի ճանաչված գիտնական-մասնագետ Հովհաննես Հակոբի Չալքիկյանը: Նա երկար տարիներ (1939-1972 թթ.) ղեկավարել է Ֆիզիկական քիմիայի ամբիոնը, այն հասցրել համամիութենական ու միջազգային մակարդակի և ճանաչման: 1959 թ. համալսարանում ստեղծել է ամբիոնին կից «Պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային համամիութենական գիտահետազոտական լաբորատորիա», որի անվտոմիս ղեկավարն է եղել մինչև իր կյանքի վերջը: Հ. Չալքիկյանը շարունակաբար զբաղվել է ամինների և բենզոլի գերօքսիդի փոխազդեցության մեխանիզմի ուսումնասիրմամբ: Հ. Չալքիկյանը, շնորհիվ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ձեռք բերած գիտելիքների, նշված ռեակցիաները քանակապես և կինետիկորեն հետազոտելիս կանխորոշել է իր հետագա գիտական աշխատանքների հիմնական ուղղությունները՝ ֆիզիկական օրգանական քիմիայի զարգացումը և նոր դպրոցի ստեղծումը ՀՀ-ում, որը շարունակվեց զարգանալ նաև հետագայում իր աշակերտների կողմից՝ ունենալով կարևոր տեսական և կիրառական արդյունքներ:

Պրոֆ. Հ. Չալքիկյանը մինչև համալսարանում աշխատելը և ամբիոնի վարիչ դառնալը կարևոր և բարձր մակարդակի գիտական ճանապարհ է անցել, որը սկսվել է Երևանում և շարունակվել ՌԴ-ում, Գերմանիայում (1927-1937 թթ.): 1937 թ.-ից աշխատել է հիմնականում

միայն ԵՊՀ-ում, իսկ 1939 թ.-ից որպես ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ: Այդ ժամանակահատվածում նրա գիտահետազոտական աշխատանքները վերաբերել են վինիլացետատի ստացման ռեակցիաների մեխանիզմների բացահայտմանը, որոնք խիստ կարևոր էին սինթետիկ կաուչուկի արտադրության համար: Այդ աշխատանքների արդյունքով 1946 թ.-ին Մոսկվայում պաշտպանել է դոկտորական թեզ, թեկնածուական գիտական աստիճան նրան շնորհվել է 1934 թ.՝ առանց պաշտպանության: Հետագայում պրոֆ. Հ. Չալթիկյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերվել են քիմիական կինետիկայի հարցերին՝ ամին-բենզոիլ գերօքսիդ և ամին-կալիումի գերօքսիդատ համակարգերի ուսումնասիրություններին, նաև այդ համակարգերը օգտագործելով որպես հարուցիչներ մոնոմերների պոլիմերման պրոցեսներում: Նա առաջինն է արտահայտել ամին-գերօքսիդ ռեակցիաներում միաժամանակ զուգահեռաբար ոչ ռադիկալային և ռադիկալային մեխանիզմներով գերօքսիդների քայքայման ընթացքը:

Պրոֆ. Հ. Չալթիկյանը տաղանդավոր գիտնական-մանավարժ էր: Ամբիոնում ու Պրոբլեմային լաբորատորիայում ձևավորվել էր մասնագետների հսկա ուսումնագիտական բանակ, ովքեր շարունակեցին նրա գործը, հատկապես գերօքսիդների քիմիայի և պոլիմերման կինետիկայի ուսումնասիրությունների բնագավառներում: Պրոֆ. Հ. Չալթիկյանի ամբիոնի վարիչության տարիներին (հետագայում նաև պրոֆ. Ն. Բեյլերյանի) ամբիոնում աշխատում էին 50-ից ավելի ճանաչում ունեցող դասախոսներ, գիտաշխատողներ: Նրանցից էին՝ Ն. Բեյլերյանը (Պրոբլեմային լաբորատորիայի վարիչ, հետագայում՝ դոկտոր, պրոֆեսոր, Ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ 1976-2000 թթ.), դոցենտ Ս. Նալչաջյանը (հետագայում Բիմիայի ֆակուլտետի ղեկան՝ 1975-1985 թթ.), դոցենտ Ելենա Աթանեսյանը (կոլոիդային քիմիայի միակ դասախոսը), դոցենտ Ս. Գրիգորյանը (ապագայում ղեկանի տեղակալ, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ 1989-2007 թթ.), քիմ. գիտ. թեկնածու Ա. Դուրգարյանը (իոնային պոլիմերման խմբի ղեկավար, հետագայում քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), դոցենտ Թ. Ղուկասյանը (ֆակուլտետի երկար տարիների ղեկանի տեղակալ), դոցենտ Ա. Սամվելյանը (1976-1981 թթ. Ժողովնետության ինստիտուտի քիմիայի ամբիոնի վարիչ),

դոցենտ Ռ. Մելիքսեթյանը (հետազայում՝ ԵՊՀ գիտահետազոտական բաժնի վարիչ, Քիմիական տեխնիկումի տնօրեն, «Նաիրիտ» ԳԱՄ-ին կից ուսումնարանի տնօրեն), դոցենտներ՝ Բ. Սողոմոնյանը, Ն. Սարուխանյանը, Մ. Գևորգյանը, Ռ. Եղոյանը (հետազայում՝ դոկտոր, պրոֆեսոր), Ռ. Հակոբյանը, Ֆ. Կարապետյանը, Լ. Տեր-Սիմասյանը (ԵՊՀ գիտահետազոտական բաժնի վարիչ, Ֆիզքիմիայի ամբիոնի Պրոբլեմային լաբորատորիայի վարիչ), քիմ. գիտ. թեկնածուներ Օ. Վարդապետյանը, Շ. Մարգարյանը (հետազայում՝ դոկտոր, պրոֆեսոր, Ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ՝ 2000 թվականից), Ռ. Չալքիկյանը (հետազայում՝ դոկտոր, պրոֆեսոր), Բ. Օդաբաշյանը և Լ. Սիմոնյանը (հետազոտության ֆիզիկական քիմիական եղանակների մեծ գիտակներ), Ա. Խաչատրյանը (հետազայում՝ դոցենտ), Ռ. Հարությունյանը (հետազայում՝ դոկտոր, պրոֆեսոր), Գ. Փիրումյանը (հետազայում՝ դոկտոր, պրոֆեսոր), Հ. Հակոբյանը, Ա. Խաչոյանը, Ս. Ավագյանը, Ա. Ավագյանը, Ջ. Գրիգորյանը, Լ. ՄելիքՕհանջանյանը, ավագ գիտաշխատող Ս. Մխիթարյանը և ուրիշներ:

1972 թ. ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի երրորդ վարիչ դարձավ Էմուլսիայում պոլիմերման պրոցեսների ճանաչված մասնագետ, նույն ամբիոնի այն ժամանակվա ժամավճարային աշխատակից, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Մելքոնյանը: Նրա օրոք մեծ ուշադրություն սևեռվեց Էմուլսիայում մոնոմերների պոլիմերացման գործընթացի ուսումնասիրմանը (Յ. Նալբանդյան, Ս. Ավագյան, Ռ. Հարությունյան): Պրոֆ. Լ. Մելքոնյանը վատառողջ էր և շուտ հենացավ կյանքից՝ թողնելով բարի հիշատակ:

1976 թ. Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի չորրորդ վարիչ ընտրվեց պրոֆ. Հ. Չալքիկյանի առաջին կադրը՝ քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Բեյլերյանը, ամբիոնի գիտական աշխատանքների գծով ամենաթրծված, բանիմաց, բազմակողմանի զարգացած մասնագետը: Դճանաչված քիմիկոս-գիտնականը երկար տարիներ (1976-2000 թթ.) ղեկավարել է ամբիոնը ու Պրոբլեմային պրոցեսների կինետիկայի գիտահետազոտական լաբորատորիան և այդ ընթացքում ավելի զարգացրել ու բարձրացրել պրոֆ. Հ. Չալքիկյանի կողմից ստեղծած միութենական ու միջազգային գիտական մակարդակը ֆիզիկական քիմիայի բնագավառում: Կադրերի պատրաստման գործում դժվար է նշել ՀՀ-ում որևէ քիմիկոս, ով Ն.

Բեյլերյանի չափ ղեկավարած լինի թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ՝ (50+6) անձ, ովքեր համալսարանում զբաղեցրել են տարբեր պաշտոններ: Այսպես, պրոֆ. Ս. Գրիգորյանը համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1989-2007 թթ.), պրոֆ. Ռ. Հարությունյանը Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (2007-2018 թթ.), պրոֆ. Շ. Մարգարյանը՝ Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ (2000 թ. հիմա), Ռ. Չալոխյանը՝ համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, պրոֆ. Գ. Փիրումյանը՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ (2007-2015 թթ.), Ռ. Եղոյանը՝ ֆիզիկական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր և այլն: Պրոֆ. Ն. Բեյլերյանի գիտական գործունեությունը ընդգրկում է մի շարք գիտական պրոբլեմատիկ ուղղություններ, որոնցից կարելի է նշել՝ գերօքսիդների քայքայման կինետիկայի ուսումնասիրությունները լուծույթներում՝ ամինների և դրանց մետաղական կոմպլեքսների առկայությամբ (Ս. Գրիգորյան), ռադիկալաշրջայական ռեակցիաների կինետիկան (օքսիդացում և պոլիմերում) (Ռ. Եղոյան, Շ. Մարգարյան), ճառագայթային (ռադիացիոն) (Հ. Ղազարյան) և լազերային քիմիա (Ռ. Չալոխյան) կոնդենսացված համակարգերում, ջրածնի պերօքսիդի քայքայում հողերում և բնական ջրերում (Գ. Փիրումյան), մակերևութային ակտիվ նյութերի (ՄԱՆ) դերը և նշանակությունը պոլիմերման պրոցեսներում (Ռ. Հարությունյան), «շրջված» միցելային կատալիտիկ պրոցեսների հետազոտում լուծույթներում: Պետք է շեշտել, որ պրոֆ. Ն. Բեյլերյանը բազմաբնույթ, պրպտող մտքի տեր գիտնական է, նրա կողմից ստեղծված գիտական ուղղությունները իրենց զարգացումն են ստացել իր բազմաթիվ աշակերտների և գործընկերների ակտիվ մասնակցությամբ, որոնց հետ նրա կապերը եղել և մնում են մշտապես փոխադարձ ու բարեկամական:

2000 թ.-ից ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի ուսումնագիտական աշխատանքները ղեկավարում է նույն ամբիոնի սան, դոկտոր, պրոֆեսոր Շ. Մարգարյանը, ով ստեղծել է ամբիոնում նոր ուղղություն՝ նվիրված լուծույթներում ընթացող ֆիզիկաքիմիական-կենսաբանական երևույթներին: Պրոֆ. Շ. Մարգարյանի կողմից (կապված նոր երկաստիճան կրթական համակարգի ձևավորման հետ) ֆիզիկական քիմիայի ամբիոնում ևս տեղի ունեցան

դասավանդվող առարկաների և դասախոսական կազմի որոշ փոփոխություններ՝ երիտասարդ կադրերի ընդգրկմամբ: Նրա ղեկավարման ընթացքում ավելի ուշադրություն է դարձվել լուծույթների ֆիզիկական քիմիային, մոլեկուլային սպեկտրոսկոպիային և համակարգչային քվանտաքիմիական հաշվարկներին: Ձուգահեռաբար սկիզբ դրվեց նոր միջառարկայական ուղղությունների զարգացմանը, ինչպիսին կենսաբանաբժշկական ֆիզիկական քիմիան է, որը հիմք հանդիսացավ 2005 թ. ամբիոնին կից վերաբացելու նոր անվանումով՝ «Կենսաբանական նշանակություն ունեցող համակարգերում մոլեկուլային փոխազդեցություններ» բազային գիտահետազոտական լաբորատորիան: Ամբիոնում լայն թափ առան կենսամոլեկուլների կառուցվածքի և տարբեր դեղամիջոցների հետ փոխազդեցությունների ֆլուորեսցենց ուսումնասիրությունները (Կ. Գրիգորյան):

Ֆիզիկական քիմիայի ամբիոնի դասախոսական կազմը և գիտահետազոտական լաբորատորիայի աշխատակիցների ուսումնագիտական պոտենցիալը ներկայումս բավականին բարձր է: Իրենց մանկավարժական գործունեությունը պատշաճ մակարդակով են կատարում ամբիոնի փորձառու աշխատակիցները: Ուսումնական գործընթացին զուգահեռ գիտական կարևորագույն ուղղությունների առաջընթացի գործում մեծ ավանդ ունեն դոցենտներ՝ Գրիգոր Գրիգորյանը, Գևորգ Գրիգորյանը, Հ. Ղազոյանը, Հ. Մարգարյանը, Լ. Գաբրիելյանը, Ա. Ջատիկյանը: Ամբիոնը 2000 թվականից հետո հրատարակել է 4 ձեռնարկ («Մոլեկուլային սպեկտրոսկոպիա», «Փորձարարական ֆիզիկական քիմիա», «Փորձարարական կոլոիդ քիմիա» և «Մոլեկուլային ֆլուորեսցենցիայի հիմունքները»), ուսումնամեթոդական աշխատանքներ, ստացվել է 5 արտոնագիր, գիտական պարբերականներում հրատարակվել է ավելի քան 200 գիտական աշխատանքներ: Այս ամենին նպաստել են նաև ամբիոնի վարիչ պրոֆ. Շ. Մարգարյանի ղեկավարությամբ և ամբիոնի աշխատակիցների ակտիվ մասնակցությամբ իրականացվող միջազգային համագործակցության ծրագրերը և դրամաշնորհները, ընդ որում՝ երիտասարդ գիտաշխատողները նույնպես իրականացրել են մի քանի՝ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» դրամաշնորհային ծրագրեր: Ամբիոնի դրամաշնորհների միջոցով ձեռք են բերվել ժամանակակից սարքեր, սարքա-

վորումներ, հաշվարկային համակարգչային ծրագրեր, ամբիոնում ստեղծված է առաջավոր ուսումնագիտական բազա: Նշանակալից են գիտական և կրթական կապերը մի շարք երկրների համալսարանների հետ (ԱՄՆ, Շվեյցարիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Ուկրաինա), որոնք միտված են ուսումնագիտական փոխադարձ գործունեություններով:

Ֆիզիկական և կոլտիդային քիմիայի ամբիոնը հաջողությամբ շարունակում է իր ուսումնագիտական գործունեությունը համալսարանում՝ նշանակալի ավանդ ներդնելով ՀՀ-ում ֆիզիկաքիմիական և քիմիակենսաբանական ուղղությունների զարգացման բնագավառներում:

III-2-3-1. Ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1923 թ. - 2019 թ.)

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի (1879-1964 թթ.), 1923-1938 թթ.
2. Չալթիկյան Հովհաննես Հակոբի (1902-1972 թթ.), 1939-1972 թթ.
3. Մելքոնյան Լիպարիտ Գևորգի (1909-1976 թթ.), 1972-1976 թթ.
4. Բեյլերյան Նորայր Մանվելի (1929 թ.), 1976-2000 թթ.
5. Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի (1947 թ.), 2000 թ. առ այսօր

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի (1879 թ. Թիֆլիս - 1964 թ. Երևան)

Ֆիզիկաքիմիական (1906 թ.) և քիմիական գիտությունների դոկտոր (1948 թ.), պրոֆեսոր (1925 թ.),

Հայաստանի համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ (1923-1938 թթ.),

Հայաստանի համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1923-1934 թթ.),

Հայաստանի համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (1923-1937 թթ., 1942-1946 թթ.),

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ու տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնների վարիչ (1930-1938 թթ.)

ՀՀ-ում ֆիզական քիմիայի, ինչպես և Անօրգանական ու անալիտիկ քիմիաների ամբիոնները համալսարանում և այլ բուհերում, նաև Տեսական էլեկտրաքիմիայի և Տեխնոլոգիական քիմիայի ամբիոնները Պոլիտեխնիկում ստեղծել և ղեկավարել է քիմիայի մեծ մվիրյալ պրոֆ. Լ. Ռոտինյանը: Նրա ջանքերով 1923 թ. Հայաստանի համալսարանում ստեղծվել է Ֆիզիկական քիմիայի (առանձին) ամբիոնը և Անօրգանական ու անալիտիկ քիմիայի (համատեղ) ամբիոնը, որոնց առաջին վարիչն եղել է ինքը: Բոլոր ամբիոններում հիմնական կուրսը՝ ֆիզիկական, անօրգանական և անալիտիկ քիմիաները, կարդացել է պրոֆ. Լ. Ռոտինյանը: Պետք է հատուկ նշել, որ նա բացարձակորեն տիրապետել է այդ մասնագիտություններին (նաև տեսական էլեկտրաքիմիային ու քիմիական տեխնոլոգիային) և զարմանալի չէ, որ քիմիայի այդ ուղղություններով ՀՀ-ում և այլուր մեծ հաջողությամբ աշխատել և դրանք զարգացրել է , թե՛ տեսական, թե՛ կիրառական

տեսակետներով, ընդհուպ մինչև կյանքի վերջը: 1930 թ. պրոֆ. Լ. Ռոտինյանը զուգահեռաբար ուսումնագիտական աշխատանք է կատարել նաև ՀՀ նորաստեղծ Շինարարական և Բիմիատեխնոլոգիական ինստիտուտներում, որոնք հետագայում ներգրավվեցին Պոլիտեխնիկի կազմում: Իսկ Պոլիտեխնիկ ինստիտուտում նույնպես պրոֆ. Լ. Ռոտինյանը կազմակերպել ու ստեղծել է՝ Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ու տեսական էլեկտրաքիմիայի և տեխնոլոգիայի նոր ամբիոններ, զուգահեռաբար լինելով դրանց վարիչը (1930-1938 թթ.): Շատ մեծ է եղել այդ տաղանդավոր գիտնականի ներդրումը քիմիայի բոլոր բնագավառներում: Վանաձորի (Կիրովականի) քիմիական կոմբինատում կազմակերպել է ֆիզիկաքիմիական հետազոտությունների կենտրոնական լաբորատորիա, իսկ 1943-1946 թթ. եղել է նաև դրա վարիչը: 1921-1922 թթ. կազմակերպել է նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի լաբորատորիան և ղեկավարել այն, ապա 1922-1927 թթ. ստեղծել և աշխատել է որպես վարիչ Երևանի հողժողկոմատի և ժողտնտիստրիի կենտրոնական միացյալ լաբորատորիայի անօրգանական քիմիայի բաժնում: Եղել է ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի՝ Արմֆանի ստեղծողներից (1935-1938 թթ.) և ֆիզիկական քիմիայի գծով վարիչը:

Եղել է Գանձակի (Կիրովաբադի) գյուղատնտեսական ինստիտուտի անօրգանական քիմիայի ամբիոնի ստեղծողը և վարիչը (1946-1948 թթ.), իսկ անարդարացի աքսորի ժամանակ՝ Չուաշական գյուղատնտեսական ինստիտուտի անօրգանական քիմիայի ամբիոնի ստեղծողը և առաջին վարիչը Չեբոկսարիում (1948-1953 թթ.):

Աքսորից ազատվելուց հետո վերադարձել է Երևան և աշխատել ՀՀ ժողկոմխորիի գիտահետազոտական ինստիտուտում (1953-1960 թթ.) որպես ֆիզիկական քիմիայի բաժնի վարիչ: Դառն է եղել մեծ գիտնականի կյանքը, սակայն նա ապրել է երկար (85 տարի) և գործել մինչև կյանքի ավարտը: Պրոֆեսոր է դարձել 1925 թ., նրան երկրորդ անգամ (1948 թ.) ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի խորհրդի կողմից, առանց պաշտպանության շնորհվել է քիմիական գիտությունների դոկտորի աստիճան:

Պրոֆ. Լ. Ռոտինյանը ծնվել է 1879 թ. Թբիլիսիում բժշկի ընտանիքում, 1898 թ. ավարտել է Թբիլիսիի 3-րդ գիմնազիան, ընդունվել Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլ-

տետի բնագիտական բաժինը և ավարտել 1903 թ., ստացել անօրգանական և ֆիզիկական քիմիաների մասնագետի որակավորում և աշխատել համալսարանի Ֆիզիկական և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնում: 1903-1917 թթ. աշխատել է Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկական քիմիայի ամբիոնում, որտեղ աշակերտել է ակադեմիկոս Վ. Կիստյակովսկուն (1865-1952 թթ.), և առաջինը Ռուսաստանում կազմել ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների ձեռնարկ ռուսերեն լեզվով, որն օգտագործվել է հետագայում նաև Երևանի համալսարանում: 1904-1907 թթ. գիտական գործուղումով եղել է Գերմանիայում, որտեղ դարձել է դոկտոր (1906 թ.) ֆիզքիմիա մասնագիտությամբ: 1918 թ. հրավիրվել է Թիֆլիսի նորաստեղծ համալսարան որպես քիմիայի դասախոս, որտեղ աշխատել է մինչև 1921 թվականը, ապա հրավերով մշտապես տեղափոխվել Երևանի նորաստեղծ համալսարան:

Պրոֆ. Լ. Ռոտինյանը եղել է տաղանդավոր գիտնական, ունեցել է գիտական հարուստ մտածելակերպ, քիմիական բարդ երևույթների խորքերը թափանցելու մեծ ընդունակություն և կարողություն: Պրոֆ Ս. Ղամբարյանի հետ միասին ՀՀ-ում ստեղծեցին բուհական մակարդակով (համալսարանի և տարբեր ինստիտուտների) քիմիայի գիտաուսումնական կրթություն, քիմիական ուղղվածությամբ գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, բաժիններ, արտադրական հիմնարկ-ձեռնարկություններ, գործարաններ:

Պրոֆ. Լ. Ռոտինյանը իր ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա դեկավարել և իրականացրել է ՀՀ համար շատ կարևոր գիտական և կիրառական բնույթի աշխատանքներ 1920-ական թվականներից մինչև 1960-ական թվականները, որոնցից կարելի է նշել հետևյալները: 1924-1926 թթ. կատարած մերձարաքսյան ճափերների հողային և ջրաբանական հետազոտությունների հիման վրա նա իրականացրեց Արարատյան դաշտի ճահճոտների հողաբարելավումը (մելորացիան): 1923-1927 թթ. ՀՀ հանքային և ոչ հանքային ապարների նրա ուսումնասիրությունները (Ղամբարյանի հետ) հնարավոր դարձրին ցեմենտի և կարբիդի արտադրության ստեղծումը մեր երկրում: Պրոֆ. Լ. Ռոտինյանը զբաղվել է հալկական բազալտների հատկությունների, դրանց հալման և բյուրեղացման օրինաչափությունների ուսումնասիրությամբ,

մշակել և առաջարկել է ապակե մանրաթելերի ստացման անընդհատ եղանակ, ստեղծել է հեղուկների գոլորշիացման ջերմության որոշման ճշգրիտ սարք:

Աքսորավայրում գտնվելու ժամանակ «Մետաղների արդյունաբերական ստացման տեխնոլոգիական պրոցեսների մշակում և յուրացում» աշխատանքի ղեկավարման համար 1950 թ. պրոֆ. Լ. Ռոտինյանը ստացել է ԽՍՀՄ Պետական մրցանակ (արտառոց դեպք որպես արքայական):

Անգնահատելի է հանճարեղության հասնող հայ այդ երկու խոշոր քիմիկոս գիտնականների՝ պրոֆ. Ս. Ղամբարյանի և պրոֆ. Լ. Ռոտինյանի գործունեությունը ՀՀ-ում քիմիայի զարգացման գործում, թե՛ կրթության, թե՛ գիտության, թե՛ արդյունաբերության բնագավառներում: Նրանք կատարել են համաշխարհային մակարդակի գիտական աշխատանքներ: Սակայն շատ ցավալի է, որ նրանց արժանվույն չգնահատեցին, տիտղոսներ, կոչումներ, պարգևներ չտվեցին, ընդհակառակը՝ դատապարտեցին ու արքայադուրս դարձրին... Այնինչ նրանք այն ժամանակվա քիմիայի բնագավառում միջազգային մակարդակ և գիտական աշխարհում մեծ ճանաչում են ունեցել: Քիմիայի ուսումնագիտական և արդյունաբերական ուղղություններով կատարած նրանց աշխատանքները նույնիսկ ներկա ժամանակների համար հրատապ են և կիրառելի: Նրանցով կարելի է միայն հպարտանալ:

2. Զալքիկյան Հովհաննես Հակոբի (1902 թ. Ղարս - 1972 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1946 թ.), պրոֆեսոր (1948 թ.),

ՀՀ ԳԱ քոթակից անդամ (1961 թ.),

Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ռեկտորի տեղակալ և Քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի ղեկավար (1932-1934 թթ.),

ԵՊՀ Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ (1939-1972 թթ.)

Պրոֆ. Ս. Ղամբարյանի ու պրոֆ. Լ. Ռոտինյանի լավագույն աշակերտներից ամենատաղանդավորը, ով երկար տարիներ (1939-1972 թթ.) ղեկավարել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնը և այն հասցրել համամիութենական ու միջազգային

ճանաչման: 1959 թ. առաջինը համալսարանում ստեղծել է ամբիոնին կից Պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա, որի անփոփոխ ղեկավարն է եղել մինչև կյանքի վերջը:

Պրոֆ. Հ. Չաթիկյանը ծնվել է Ղարսում, ավարտել է Գյումրիի միջնակարգ դպրոցը և 1922 թ. ընդունվել Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի քիմիայի բաժին, միաժամանակ սովորել է նաև համալսարանի Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում և 1927 թ. ավարտել է համալսարանը՝ քիմիկոսի և ֆիզիկամաթեմատիկոսի որակավորումներով: 1927-1929 թթ. և 1933 թթ. պրոֆ. Լ. Ռոտինյանի հետ միասին վերակազմավորեցին առանձին գործող ֆիզիկական քիմիայի ամբիոնը այն ժամանակվա բարձր մակարդակով՝ որպես ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոն, որը շարունակեց ղեկավարել Լ. Ռոտինյանը: Քիմիական գիտելիքների հարստացման նպատակով բազմիցս գործուղվել է արտասահման: 1930 թ. մեկնել է Լենինգրադ, ապա Մոսկվա, ուր աշխատել է հայտնի ֆիզիկոս Մանդելշտամի մոտ, իսկ 1931 թ.-ին՝ գործուղվել է Գերմանիա (Մյունխեն), որտեղ աշխատել է պրոֆ. Կ. Ֆայանսի ղեկավարությամբ: Այդ ընթացքում զբաղվել է ուժեղ էլեկտրոլիտների լուծույթների մի շարք ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությամբ: 1932 թ. գործուղումներից վերադառնալուց հետո Հ. Հ. Չաթիկյանը ղեկավարել է նոր կազմակերպված Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի պրոռեկտոր, ռեկտորի տեղակալ, միաժամանակ կատարելով ինստիտուտի Քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի ղեկանի պարտականությունները (1932-1934 թթ.): 1933 թ. գործուղվել է Մոսկվա, որտեղ հանդես է եկել որպես Երևանի սինթետիկ կաուչուկի (Սովպրեն) գործարանի նախագծման և այդ ձեռնարկության համար կադրերի պատրաստման աշխատանքների մասնակից: Այնուհետև գիտական վերապատրաստում է անցել Մոսկվայի Կարպովի անվան քիմիայի ինստիտուտում, որտեղ նրան հաջողվել է լուծել 150 տարի ձգձգվող գիտական վեճը, ապացուցելով մետաղ-վակուում բաժանման մակերևույթին տեղի ունեցող պրոցեսի պատճառը՝ վոլտա-պոտենցիալի առաջացումը: Այդ երևույթի պարզաբանման համար երիտասարդ տաղանդավոր գիտնականին առանց պաշտպանության ԽՍՀՄ ԲՈՒՀ-ի կողմից 1934 թ.

շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Երևանի վերը նշված գործարանին կից Հ. Չալքիկյանը դեռևս 1930-ական թթ. կազմակերպել է նաև գիտահետազոտական լաբորատորիա, որտեղ երկար ժամանակ (ինը տարի) զուգահեռաբար զբաղվել է արտադրության համար շատ կարևոր նշանակություն ունեցող ագետիլենի քիմիայի հարցերով: Այդտեղ մասնակցել է նաև քլորաջրածնի սինթեզի ԽՍՀՄ-ում առաջին կիսագործարանային սարքի ստեղծմանը և «Սովպրեն» գործարանում այն ներդնելու աշխատանքներին: 1937 թ.-ից Հ. Չալքիկյանը աշխատել է միայն ԵՊՀ-ում: Այդ ժամանակահատվածին են վերաբերվում նրա գիտահետազոտական աշխատանքները վինիլացետատի ստացման ռեակցիաների մեխանիզմների բացահայտման ուղղությամբ, որոնք խիստ կարևոր էին կաուչուկի արտադրության համար: Այդ աշխատանքների արդյունքով 1946 թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1948 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: Այնուհետև պրոֆ. Հ. Չալքիկյանի գիտական աշխատանքները հիմնականում նվիրված էին քիմիական կինետիկային՝ ամին-բենզոիլ պերօքսիդ և կալիումի պերսուլֆատ, ավելի ուշ՝ ամին-հիդրոպերօքսիդ համակարգերի ուսումնասիրություններին իր աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Հ. Չալքիկյանը դեռևս «Կաուչուկ» գործարանում աշխատելու տարիներին ուսումնասիրել է կուպրոկատալիտիկ ռեակցիաները ագետիլենային միացությունների մասնակցությամբ, որոնց շնորհիվ բացահայտվեցին այդ համակարգերում կինետիկորեն ակտիվ կոմպլեքսի բաղադրությունը և ռեակցիաների մեխանիզմները, այդ թվում նաև ագետիլենի դիմերման, վինիլացետիլենի հիդրոքլորման կատալիտիկ ռեակցիաների մեխանիզմները (1939-1948 թթ.): Պրոֆ. Հ. Չալքիկյանը առաջինն է արտահայտել ամին-պերօքսիդ ռեակցիաների միաժամանակ ոչ ռադիկալային և ռադիկալային քայքայման երկակի բնույթը, որը գիտական աշխարհում համընդհանուր ճանաչում է ստացել: Պետք է հստակ նշել, որ պրոֆ. Հ. Չալքիկյանը ՀՀ-ում հեղուկաֆազ ռեակցիաների ֆիզիկական քիմիայի և ֆիզիկական օրգանական քիմիայի դպրոցի հիմնադիրն է և զարգացնողը: 1961 թ. նրան շնորհվել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում, նույն թվականին ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ: Նա հեղինակ է 200-ից ավելի գիտական

աշխատությունների, հեղինակ է՝ «Ֆիզիկական քիմիա» (1972-1975 թ., Երևան), «Ֆիզիկական քիմիայի պրակտիկում» (1969 թ., Երևան) բուհական դասագրքերի ու «Կուպրոկատալիզ» (1963 թ., Երևան) մենագրությանը, որը թարգմանվել է ԱՄՆ-ում («Cooper Catalytic Reactions», 1966, N-Y): Ինչքան անցնում է ժամանակը, այնքան ավելի վեր է խոյանում Չալքիյան մեծ գիտնականի հոյակապ պատկերը, որպես բարեհոգի հայ մարդու, որպես մեծ քիմիկոսի, որպես արտակարգ ինտելեկտի տեր դասախոսի և հետաքրքիր զրուցակցի, ով անընդհատ հիշում էր Ղարսը, Գյումրին, Ղարաբաղը իրենց մարդկանցով և շատ զարմանալի, ֆանտաստիկ պատմություններով: Դրանց հետ միասին Հ. Չալքիյանը խստապահանջ էր, անաչառ, կադրեր ընտրում էր ըստ արժանիքների՝ ուսումնագիտական և փորձարարական բարձր մակարդակ ունեցողներին, նպաստում էր կադրերի առաջխաղացմանը: Նա ստեղծել է համալսարանում ֆիզիկա-քիմիական հետազոտությունների կենտրոն, ինչը ճանաչում է ստացել Խորհրդային Միությունում և աշխարհում, մեծ գիտական կապեր ուներ արտերկրյա խոշոր գիտնականների հետ: Տաղանդավոր գիտնականի և պրոֆեսորի ուսումնագիտական ժառանգությունը հաջողությամբ զարգացվել են նրա սաների կողմից առ այսօր: ՀՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Չալքիյանը եղել է միջազգային մակարդակի քիմիկոս, գիտնական և մեծ ժառանգություն է թողել քիմիայի ուսումնագիտական և կիրառական բնագավառներում:

3. Մելքոնյան Լիպարիտ Գևորգի (1909 թ. Ղարաքիլիսա (Վանաձոր) - 1976 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1969 թ.), պրոֆեսոր (1970 թ.), «Նաիրի» ԳԱՄ-ի (Պոլիմերների համամիութենական գիրափորագրության ինստիտուտի (ՊՀԳՀԻ)) լաբորատորիայի վարիչ (1958-1970 թթ.), ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ (1972-1976 թթ.)

Պրոֆ. Լ. Մելքոնյանը եղել է պոլիմերների ֆիզիկական քիմիայի բնագավառի խոշոր տեսաբան և ճանաչված մասնագետ: 1938 թ. ԵՊՀ-ն ավարտել է գերազանցությամբ: Դեռևս հինգերորդ կուրսում նշանակվել է ասիստենտ: Համալսարանը ավարտելուց հետո աշ-

խատել է որպես ավագ դասախոս, ցուցաբերելով մանկավարժական մեծ տաղանդ, կատարելով մաս գիտական աշխատանք: Կամավոր մասնակցել է Հայրենական պատերազմին, ծանր վիրավորվելուց հետո գորացրվել է և վերադարձել Երևան, շարունակելով ուսումնագիտական գործունեությունը ԵՊՀ-ում և Պոլիտեխնիկ ինստիտուտում ավելի քան 25 տարի: 1954 թ. դարձել է քիմիական գիտությունների թեկնածու: Այնուհետև աշխատել է Երևանի կաուչուկի գործարանում, եղել է Պոլիմերների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (ՊՀԳՀԻ) պոլիմերների և լատեքսների ֆիզիկաքիմիական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ (1958-1970 թթ.), միաժամանակ համատեղությամբ դասախոսել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնում (մաս Պոլիտեխնիկ ինստիտուտում) որպես պրոֆեսոր: Բացահայտել է կաուչուկների և լատեքսների սինթեզի օրինաչափությունները էմուլսիայում պոլիմերման եղանակով: Այդ աշխատանքների արդյունքներով 1969 թ. պաշտպանել է դոկտորական թեզ, իսկ 1970 թ. դարձել է պրոֆեսոր:

Նա Խորհրդային Միությունում հայտնի էր որպես պոլիմերների և լատեքսների (հատկապես՝ քլորոպրենային) քիմիայի խոշոր մասնագետ: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են էմուլսիայում մոնոմերների հոմո- և համապոլիմերման գործընթացների ուսումնասիրություններին: Պրոֆ. Լ. Մելքոնյանը առաջարկել է նոր թերմոդինամիկորեն հիմնավորված տեսություն էմուլսիայում պոլիմերման բնագավառում, համաձայն որի պոլիմերման հիմնական օջախը էմուլգատորի հեղուկբյուրեղային հիդրոֆոր շերտն է, որտեղ ստեղծվում է ռեակցիայի ընթացքի համար հատուկ պայմաններ: Պարզաբանել է էմուլսիաներում մակրոմոլեկուլների կազմավորման օրինաչափությունները, էմուլգատորի շերտի դերն ու անցանկալի երկրորդական պրոցեսների կանխման հնարավորությունները: Նա առաջարկել է մաս բարձրորակ քլորոպրենային կաուչուկների և լատեքսների ստացման շատ հեշտ (դյուրին) իրականացվող արտադրական եղանակներ, որոնք ժամանակին ներդրվել են «Նաիրիտ» ԳԱՄ-ում:

Պրոֆ. Լ. Մելքոնյանը, որպես ՀՀ-ում պոլիմերների քիմիայի բնագավառի լավագույն մասնագետ, «Պոլիմերների ֆիզիկաքիմիա» առարկայից թե՛ ԵՊՀ-ում, թե՛ Պոլիտեխնիկում երկար տարիներ դասախոսություններ է կարդացել: Աճեցրել է տասնյակ որակյալ

կադրեր: Հեղինակ է ավելի քան 90 հոդվածի, 65 հաշվետվության, 7 հեղինակային վկայականի: Եղել է մասնագիտական խորհուրդների անդամ ԵՊՀ-ում և Պոլիտեխնիկում, մաս զանազան գիտական կազմակերպությունների անդամ, «Հայկական քիմիական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, երեք մեդալով:

Պրոֆ. Լ. Մելքոնյանը կարևոր հետք է թողել պոլիմերների քիմիայի ֆիզիկաքիմիական հետազոտությունների ուսումնագիտական և կիրառական բնագավառներում:

4. Բեյլերյան Նորայր Մանվելի (1929 թ. Կահիրե, Եգիպտոս)

Քիմիական գիտությունների դոկտոր (1974 թ.), պրոֆեսոր (1975 թ.),

ՀՀ ԻԳԱ ակադեմիկոս (2009 թ.),

ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ (1976-2000 թթ.)

Ն. Բեյլերյանը ֆիզիկական քիմիայի ուսումնագիտական աշխատանքների բնագավառում մեր հանրապետության ամենաբանիմաց, թրծված և բազմակողմանի զարգացած ու ճանաչված գիտնականներից է, ով երկար տարիներ աշխատել է ԵՊՀ-ում (1953-2011 թթ.): Լինելով Քիմիական ֆակուլտետի ֆիզքիմիայի ամբիոնի վարիչ՝ էլ ավելի է զարգացրել ու բարձրացրել ֆիզիկական քիմիայի ուսումնագիտական ուղղվածությունը՝ պահպանելով ամբիոնի համամիութենական և միջազգային բարձր մակարդակը:

Ն. Բեյլերյանը ծնվել է 1929 թ. Եգիպտոսի Կահիրե քաղաքում, 1947 թ. գերազանցությամբ ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանը և նույն թվականին ընտանիքով ներգաղթել Խորհրդային Հայաստան: 1948-1953 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետի ֆիզքիմիայի բաժինը և ամբիոնի վարիչ պրոֆ. Հ. Չաթխիյանի ղեկավարությամբ աշխատանքի է ներգրավվել ֆիզիկական քիմիայի ամբիոնում, որտեղ ասիստենտից (1953 թ.) հասել է պրոֆեսորի (1975 թ.) և ամբիոնի վարիչի պաշտոնների: Նա ազատ տիրապետում է մայրենիից բացի ևս 4 լեզուների՝ ֆրանսերենի, անգլերենի, արաբերենի և ռուսերենի: Ուսանողական տարիներից մեծ հակում է ունեցել դեպի գիտահետազոտական աշխատանքները, ինչը աննկատ չի մնացել այն ժամանակվա ամբիոնի

վարիչ պրոֆեսոր Չաթիկյանի կողմից, ով ներգրավել է Ն. Բեյլեր-յանին ամբիոնի ուսումնագիտական աշխատանքներին: Հատկապես արդյունավետ դարձավ նրա գործունեությունը ամբիոնում 1959 թ.-ին, երբ Չաթիկյանի ջանքերով ամբիոնին կից ստեղծվեց համամիութենական մասշտաբի՝ Պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան, որի առաջին վարիչը դարձավ (1959 թ.) Ն. Բեյլերյանը: Նա քիմիական գիտությունների թեկնածու է դարձել 1964 թ., դոկտոր՝ 1974 թ., պրոֆեսոր՝ 1975 թ., աշխատել է Պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավար՝ 1976-1995 թթ., ամբիոնի վարիչ՝ 1976-2000 թթ.: Հեղինակ է երկհատոր՝ «Քիմիական կինետիկա» (1978 թ., 1980 թթ.) և «Ֆիզիկական քիմիա» (2016 թ., 2016 թթ.) բուհական դասագրքերի:

Պետք է շեշտել, որ պրոֆ. Ն.Մ. Բեյլերյանը բազմաբնույթ, պրպտող մտքի տեր գիտնական է, իր երբեմնի ղեկավար Հ. Չաթիկյանի արժանի հետևորդներից մեկը: Պրոֆ. Ն.Մ. Բեյլերյանը իր գործունեության ընթացքում հրատարակել է ավելի քան 700 աշխատություն, եղել է բազում գիտական խորհուրդների անդամ, ներկայումս շարունակում է իր ակտիվ մասնագիտական հետաքրքրությունները:

Նա ֆիզիկական քիմիայի, քիմիական կինետիկայի և կատալիզի, պերօքսիդների քիմիայի, պոլիմերային պրոցեսների կինետիկայի ուղղությունների չգերազանցված և խոշոր մասնագետներից է:

5. Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի (1947 թ. Քարաշեն, Զանգեզուր)

Քիմիական գիտությունների դոկտոր (1989 թ.), պրոֆեսոր (2002 թ.),

*ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ
(2000 թ. առ այսօր)*

Ծնվել է ՀՀ Գորիսի շրջանի Քարաշեն գյուղում (14.04.1947 թ.), 1965 թ.-ին ավարտել է Երևանի Կրուպսկայայի անվան թիվ 19 դպրոցը, իսկ 1970 թ.-ին՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1970-1974 թթ. եղել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ: 1975 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ:

1974-1988 թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբ-

իոնի պրոբլեմային լաբորատորիայում, սկզբում որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 1977-1989 թթ.՝ ավագ գիտաշխատող: 1989 թ. Դոնի Ռոստովի ֆիզիկական օրգանական քիմիայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Սուլֆօքսիդների, սուլֆիդների, եթերների և ամինների միջնդեկուլային փոխազդեցությունները և ռեակցիաները» թեմայով, իսկ 2002 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2000 թ.-ից Շ. Մարգարյանը զբաղեցնում է ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2005 թ.-ից ղեկավարում է նաև ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից բազային գիտահետազոտական լաբորատորիան:

Բացի ուսումնական գործընթացից Շ. Մարգարյանը շարունակաբար վարում է նաև գիտական բուռն գործունեություն: Գիտական պարբերականներում հրապարակել է ավելի քան 230 գիտական աշխատություններ, միջազգային գիտաժողովների բազմաթիվ թեզիսներ, համաժողովներ և 4 դասագրքի և 5 արտոնագրի: 2003 թ. լույս է տեսել նրա «Մոլեկուլային սպեկտրոսկոպիա» ուսումնական ձեռնարկը, իսկ 2009 թ. և 2013 թ. նրա համաժողովնակությամբ «Փորձարարական ֆիզիկական քիմիա» և «Փորձարարական կոլոիդ քիմիա» ուսումնական ձեռնարկները որպես Ֆիզիկական և կոլոիդային քիմիա դասընթացների լաբորատոր պարապմունքների դասագրքեր: Շ. Մարգարյանի ղեկավարությամբ 12 անձ դարձել են գիտության թեկնածու և մեկը՝ գիտության դոկտոր: Նա 1992-2004 թթ. եղել է Հայաստանի քիմիական հանդեսի, իսկ 2000-2006 թթ.՝ ԵՊՀ գիտական տեղեկագրի (բնական գիտություններ) խմբագրական խորհուրդների անդամ: 2002-2006 թթ. Շ. Մարգարյանը եղել է ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, իսկ 2005-2007 թթ.՝ ԵՊՀ մեթոդական խորհրդի անդամ:

Շ. Մարգարյանի գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղություններն են՝ քիմիական և կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտությունները, մոլեկուլային փոխազդեցությունների ուսումնասիրությունները սպեկտրոսկոպիական և տեսական եղանակներով: Նրա գործունեության շնորհիվ ՀՀ-ում ֆիզիկական քիմիայի ոլորտում զարգացվել են ժամանակակից ուղղություններ՝ դիէլեկտրիկ ռելաքսացային սպեկտրոսկոպիան և մոլեկուլային ֆլուորեսցենցիան: Նրա ղեկավարությամբ ներկայացրած

միջազգային համագործակցության ծրագրերը արժանացել են մի շարք դրամաշնորհների:

Իր գիտատուսմնական արդյունավետ գործունեության համար Շ.Ա. Մարգարյանը արժանացել է մի շարք պարգևների. 2002 թ. ՀՀ նախագահի մրցանակ, 2010 թ. Բնագիտության ասպարեզում ՀՀ լավագույն գիտական աշխատանքի մրցանակ, իսկ 2013, 2014 և 2016 թթ.՝ «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող: 2017 թ. պրոֆեսոր Շ.Ա. Մարգարյանը արժանացել է ՀՀ կառավարության բարձր պարգևի՝ «Անանիա Շիրակացի» մեդալի: Պրոֆ. Շիրազ Մարգարյանը, որպես ամբիոնի վարիչ և պրոֆեսոր, շարունակում է ակտիվ ուսումնագիտական գործունեությունը:

III-2-4. Անալիտիկ քիմիայի ամբիոն (1923 -2019 թթ.)

Ինչպես արդեն նշվել է Հայաստանի համալսարանում պրոֆ. Լ. Ռոտինյանի կողմից 1923 թ. կազմակերպվել է Անօրգանական և անալիտիկ քիմիայի համատեղ առաջին ամբիոնը, որի առաջին վարիչը եղել է հենց ինքը՝ պրոֆ Լ. Ռոտինյանը: Անալիտիկ քիմիայի ամբիոնում պրոֆ. Լ. Ռոտինյանի ղեկավարությամբ կատարվել են համապատասխան քիմիական անալիզների հայտնի եղանակների յուրացումը և կիրառումը: Ամբիոնի փորձարարական էլեկտրաքիմիական եղանակների մշակման և ներդրման աշխատանքներին նպաստել է ռուս հայտնի անալիտիկ ակադեմիկոս Ի. Ալիմարինը: 1938 թ. համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ դարձավ քիմ. գիտ. թեկնածու Վ. Թառայանը, ով մինչ այդ աշխատում էր պրոֆ. Լ. Ռոտինյանի կազմակերպած Ժողովուրդների կենտրոնական քիմիական լաբորիատորիայում որպես անալիտիկ-քիմիկոս, բաժնի վարիչ: Պրոֆ. Լ. Ռոտինյանի երաշխավորությամբ 1937 թ. նա տեղափոխվել է ԵՊՀ և 1938 թ. նշանակվել Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ:

Ամբիոնի վարիչի պաշտոնում Վ. Թառայանը աշխատել է երեք ժամանակահատվածով՝ 1938-1942, 1946-1954, 1962-1977 թթ.: Ամբիոնի վարիչության առաջին շրջանում Վ. Թառայանը իրականացրել է պրոֆ. Լ. Ա. Ռոտինյանի առաջարկած նստեցման և կոմպլեքսագոյացման մի շարք ռեակցիաների պոտենցիալական հետազոտություններ, մշակվել են սիլիկաթթվի, ալյումինիումի, բերիլիումի, կապարի, քորիումի և այլ տարրերի որոշման քանակական եղանակները: Ամբիոնի վարիչության երկրորդ ժամանակաշրջանում Վ. Թառայանի ղեկավարությամբ հիմք դրվեց ծավալաչափական անալիզի նոր եղանակի՝ մերկուրոմեդուկտոմետրիայի մշակմանը: Այդ ուղղությամբ կատարվեցին հետաքրքիր և գործնական նշանակություն ունեցող աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա հրատարակվեց Վ. Թառայանի «Մերկուրոմեդուկտոմետրիա» (ռուսերեն) մենագրությունը (1958 թ.): Ամբիոնում շարունակվեցին ավելի զարգանալ գիտահետազոտական աշխատանքները, սկսեցին կատարվել նաև հազվագյուտ և ցրված տարրերի և դրանց միացությունների անալիտիկ ուսումնասիրությունները: Ստացված

արդյունքների հիման վրա հրատարակվեց (ռուսերեն) ՀՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Թառայանի երկրորդ մենագրությունը (1965 թ.)՝ «Ռենիումի անալիտիկ քիմիան»: Նրա ամբիոնի վարիչության երրորդ շրջանում ներդրվեցին և ամբիոնում զարգացան քիմիական անալիզի նոր եղանակներ: Պրոֆ. Վ. Թառայանն ու դոց. Ե. Հովսեփյանը կիրառելով օրգանական ներկանյութեր մշակեցին լուծահանման միջոցով հազվագույտ և ցրված տարրերի որոշման արդյունավետ եղանակ: Ամբիոնում մշակվեց և հիմնադրվեց անալիզի նրբաշերտ քրոմատոգրաֆիայի եղանակը ամբիոնի դոցենտ, հետագայում դոկտոր, պրոֆեսոր Դ. Գալբակյանի (1927-2003 թթ.) կողմից:

1954 թ. ամբիոնի երրորդ վարիչ է ընտրվել քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Դարբինյանը: Պրոֆ. Մ. Դարբինյանի գիտահետազոտական ուսումնասիրման օբյեկտ է եղել մագնեզիումական հայաստանյան հանքատեսակների ապարների անալիզը և մշակումը:

Դեռևս պրոֆ. Վ. Թառայանի ամբիոնի վարիչության տարիներին՝ Անալիտիկ քիմիայի ամբիոնում ծավալած ուսումնագիտական աշխատանքներում որպես հուսալի օգնականներ, բանիմաց ու շնորհալի գիտնականներ, որակյալ դասախոսներ են եղել դոցենտներ՝ Եվգենյա (Ժենյա) Հովսեփյանը, Սոնա Վարդանյանը, Գալինա Շապոշնիկովան, Ժենյա Առստամյանը (1999 թ. դոկտոր, պրոֆեսոր), ավելի երիտասարդ քիմիկոս Հ. Խաչատրյանը:

Անալիտիկ քիմիայի ամբիոնի չորրորդ վարիչ է ընտրվել ամբիոնի դասախոս, քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ե. Հովսեփյանը, ով աշխատել է այդ պաշտոնում 1978-1983 թթ.: Նա նպաստել է անալիտիկ քիմիայի զարգացմանը, հրատարակել է հարյուրից ավելի գիտական աշխատանքներ նվիրված ՀՀ ընդերքի հազվագյուտ և ցրված տարրերի միկրոքանակների որոշմանը, լուծահանման-լուսաչափական, ամպերաչափական և այլ եղանակների մշակմանն ու կիրառմանը, հասնելով բարձր արդյունքների: Դոցենտ Ե. Հովսեփյանը նվիրված է եղել երիտասարդ մասնագետների պատրաստման և դաստիարակության գործին, օգնել է ամբիոնի ասպիրանտների աշխատանքների կատարմանը (այդ թվում նաև արտերկրներից):

Առանձնապես պետք է շեշտել մեր հանրապետության լավագույն անալիտիկ-քիմիկոսներից երկարամյա դասախոս, քիմ. գիտ. թեկ-

նածու, պրոֆ. Աղասի Գարեգինի Քանքանյանին (1904-1999 թթ.): Մեծ եղեռնի արհավիրքը տեսած վանեցի փախստական երիտասարդը ավարտել է համալսարանի Գյուղատնտեսական ֆակուլտետը և աշխատանքի տեղավորվել Անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, ապա ասիստենտ: 1933-1935 թթ. սովորել է Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրայում, և 1939 թ. պաշտպանել թեկնածուական թեզը ու վերադարձել հարազատ համալսարան և շարունակել աշխատել Անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես դոցենտ (1941 թ.): Համատեղությամբ աշխատել է նաև Գյուղատնտեսական ինստիտուտում և ԳԱ քիմիայի ինստիտուտում, իսկ Հայրենական պատերազմի ժամանակ եղել է աշխարհագրային, կատարել է պահակային ծառայություն: Նա ՀՀ որակական անալիտիկ քիմիայի գծով տաղանդավոր մասնագետներից էր, մեծ խանդավառությամբ հանելուկային ձևերով ուսանողներին ուսուցանում էր անալիտիկ քիմիայի նրբագույն գաղտնիքները: Հպարտություն էր ներշնչում այդ փոքրամարմին, իմաստուն, ազնիվ ու շիտակ մարդ-գիտնական քիմիկոսը, որին հարգում և պաշտում էին բոլորը՝ ուսանողները, դասախոսները և իրեն ճանաչողները: Հրատարակել է 150-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են ներմետաղական միացությունների ստացմանն ու հետազոտմանը, նաև նրբաշերտ քրոմատոգրաֆիական ուսումնասիրություններին և այլն: Մայրենի լեզվով և գեղեցիկ ոճով շարադրել է որակական քիմիական անալիզի տեսական և գործնական ուսումնական չորս ձեռնարկներ, որոնք իրենց արժեքը չեն կորցրել առ այսօր: Դրանք են՝ «Անալիտիկ քիմիայի խնդիրներ և վարժություններ» (1974 թ.), «Որակական քիմիայի անալիզի գործնական աշխատանքներ» (1977 թ.), «Որակական անալիզի տեսական հիմունքներ» (1979 թ.), «Վերլուծական քիմիայի ծրագրավորված խնդիրների ժողովածու» (1984 թ.), «Քիմիական անալիզի հիմունքները» (1985 թ.):

Ա. Քանքանյանը եղել է յուրահատուկ դասախոս, իսկական հայ մտավորական, ակտիվ հասարակական գործիչ՝ համալսարանի արհկոմիտեի նախագահ, աշխատանքի պաշտպանության բաժնի վարիչ, վերահսկողության խմբի նախագահ, շուրջ 40 տարի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի գիտական քարտուղար: Եղել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (1970 թ.): Որպես բարի և լավ մարդ

Աստված նրան պարգևել էր շատ երկար և փառավոր կյանք:

ԵՊՀ առանձին գործող անալիտիկ (վերլուծական) քիմիայի վերջին՝ հինգերորդ, ամբիոնի վարիչ (1983-2013 թթ.) եղել է Համբարձում Գուրգենի Խաչատրյանը: Նրա ղեկավարությամբ տարվել են գիտահետազոտական աշխատանքներ տարբեր ուղղություններով՝ նոր եղանակների մշակում օրգանական ներկանյութերի կիրառմամբ (քիմ. գիտ. դոկտոր Ժ. Առուստամյան, քիմ. գիտ. թեկնածու Ջ. Սիքալեյան և ուրիշներ), գազքրոմատոգրաֆիական եղանակի մշակում և օգտագործում (քիմ. գիտ. դոկտոր Ս. Հայրապետյան), սպեկտրոսկոպիական որոշ եղանակների ներդրում: Պրոֆ. Հ. Խաչատրյանը հաջողությամբ շարունակում է անալիտիկ քիմիայի ուղղությամբ ուսումնագիտական աշխատանքները միասնական՝ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում: Գիտական հետազոտությունների ուղղություններն են՝ հազվագյուտ և ցրված տարրերի, թունավոր ծանր մետաղների, ազնիվ մետաղների որոշման օպտիկական և էլեկտրաքիմիական եղանակների մշակում, հեղուկային քրոմատոգրաֆիայի համար նոր կլանիչների ստացում, կենսաբանորեն ակտիվ նյութերի մաքրման և բաժանման համար դրանց կիրառում:

III-2-4-1. Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները 1923-2019 թթ.

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի (1879-1964 թթ.), 1923-1938 թթ.
(Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն), 1942-1946 թթ.
(Անալիտիկ քիմիայի ամբիոն)
2. Թառայան Վերգինե Մակարի (1905-1985 թթ.), 1938-1942 թթ.,
1946-1954 թթ., 1962-1977 թթ.
3. Դարբինյան Մամիկոն Վարդանի (1908-1969 թթ.), 1954-1962 թթ.
4. Հովսեփյան Եվգենյա Նշանի (1923-1992 թթ.), 1977-1983 թթ.
5. Խաչատրյան Համբարձում Գուրգենի (1948 թ.), 1983-2013 թթ.
6. Հարությունյան Ռոմիկ Սուրենի (1946 թ.), 2013-2018 թթ.
(Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն)
7. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի (1959 թ.), 2018 թ. առ այսօր
(Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն)

1. Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի

Կենսագրությունը՝ Ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչների
կենսագրությունների բաժնում:

2. Թառայան Վերգինե Մակարի

Կենսագրությունը՝ դեկանների կենսագրությունների բաժնում:

3. Դարբինյան Մամիկոն Վարդանի

Կենսագրությունը՝ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչների
կենսագրությունների բաժնում:

4. Հովսեփյան Եվգենյա Նշանի (1923 թ. Երևան - 1992 թ. Երևան)

*Քիմիական գիտությունների թեկնածու (1955 թ.), դոցենտ (1961 թ.),
ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (1977-1983 թթ.)*

Ծնվել է 1923 թ. Երևանում՝ ծառայողի ընտանիքում: Ավարտել է
Երևանի Մ. Գորկու անվան դպրոցը և 1941 թ. ընդունվել ԵՊՀ քիմիայի
ֆակուլտետը, որն ավարտելուց հետո 1946 թ. աշխատանքի է անցել
Անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ (1946-1948 թթ.),

ապա ասիստենտ (1948-1961 թթ.): 1949 թ. ընդունվել է համալսարանի Քիմիական ֆակուլտետի ասպիրանտուրան պրոֆ. Վ.Մ. Թառայանի ղեկավարությամբ՝ կատարելով գիտական աշխատանք նվիրված սիլիկատային ապարներում ալյումինի որոշման եղանակների մշակմանը, որոնք ամփոփվել են նրա թեկնածուական թեզում (1955 թ.), 1961-1992 թթ. աշխատել է որպես ամբիոնի դոցենտ: 1977 թ. ընտրվել է Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ և աշխատել այդ պաշտոնում մինչև 1983 թ.: Աշխատանքային վերջին տարիներին նա մշակել է անալիզի նոր եղանակներ ՀՀ-ում սինթեզվող և կիրառվող պեստիցիդների և հերբիցիդների որոշման համար: Գիտամանկավարժական գործընթացին զուգահեռ նա ակտիվ մասնակցել է ՀՀ և համալսարանի հասարակական կյանքին՝ եղել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր (1967-1969 թթ.), երկար տարիներ եղել է ֆակուլտետի խորհրդի անդամ և գիտական քարտուղար, պարգևատրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Դոցենտ Եվգենյա Նշանի Հովսեփյանը եղել է ազնիվ ու բարի անձ-նավորություն, իր գործին նվիրված դասախոս, հմուտ և գործունյա քիմիկոս-մասնագետ:

5. Խաչատրյան Համբարձում Գուրգենի (1948 թ. Վաղարշապատ)

Քիմիական գիտությունների դոկտոր (1998 թթ.), պրոֆեսոր (2000 թթ.),

ՀՀ ԲԱ ակադեմիկոս (2012 թթ.),

ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ (1983-2013 թթ.)

Ծնվել է 1948 թ. Վաղարշապատում զինծառայող-սպայի ընտանիքում: Հ. Խաչատրյանը 1965 թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի №122 միջնակարգ դպրոցը, իսկ 1970 թ.՝ ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետը կարմիր դիպլոմով և անմիջապես ընդունվել նույն ֆակուլտետի ասպիրանտուրան անալիտիկ քիմիայի ամբիոնում: Ամբիոնի վարիչ Վ. Թառայանի կողմից գործուղվել է Կիև ու թեկնածուական թեզը կատարել Կիևի ԳԱ Լ. Պիսարժևսկու անվան ֆիզիկական քիմիայի ինստիտուտում, որը պաշտպանել է 1974 թ. Կիևում: Վերադարձել է և աշխատել ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես գիտաշխատող: 1976-1983 թթ. աշխատել է Քիմիական ռեակտիվների և Հատուկ մաքրության նյութերի համամիութենական գիտահետազոտական

ինստիտուտի անօրգանական նյութերի երևանյան բաժանմունքում որպես ավագ գիտաշխատող, ապա բաժնի վարիչ: Այդտեղ կազմակերպել ու ղեկավարել է անալիզի գործիքային եղանակների լաբորատորիան: 1983 թ. նոյեմբերին ընտրվել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ և այդ պաշտոնում աշխատել է մինչ ամբիոնը Անօրգանական քիմիայի ամբիոնին միավորելը (2013 թ.): Ներկայումս նա Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր է: Ունի 200-ից ավելի հրատարակված աշխատություններ, 8 հեղինակային իրավունքի վկայագիր: Եղել է միջազգային և տեղական դրամաշնորհների գիտական ղեկավար և պատասխանատու կատարող: Պրոֆ. Հ. Խաչատրյանը 2006 թ. արժանացել է ՀՀ նախագահի ամենամյա մրցանակին՝ «Բնական Գիտություններ» անվանակարգում:

Նա եղել է ԵՊՀ խորհրդի անդամ, ներկայումս Քիմիայի ֆակուլտետի խորհրդի անդամ է, «Հայաստանի քիմիական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ, «ԵՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ: Պրոֆ. Հ.Գ. Խաչատրյանը եղել է ԲՈՀ-ի 057 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ և ԲՈՀ-ի 017 մասնագիտական խորհրդի անդամ: Նա բազմակողմանի զարգացած գիտնական-քիմիկոս է:

6. Հարությունյան Ռոմիկ Սուրենի

Կենսագրությունը՝ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչների կենսագրությունների բաժնում:

7. Մարտիրյան Արմեն Իգնատիոսի

Կենսագրությունը՝ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչների կենսագրությունների բաժնում:

III-2-5. Տեսական քիմիայի ամբիոն (1964-2007 թթ.)

Քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի (1964-1970 թթ.),

Տեսական քիմիայի (1970-1984 թթ.),

Տեխնիկական քիմիայի և կատալիզի (1987-2004 թթ.),

Քիմիական ֆիզիկայի (2005-2007 թթ.)

Քիմիայի ֆակուլտետի այս ամբիոնը (հերթական անվանումներով, որը պայմանական անվանենք Տեսական քիմիայի ամբիոն) համալսարանում ստեղծվել է 1964 թ. տեսական քիմիայի լավագույն մասնագետներից մեկի, Խորհրդային Միությունում և ՀՀ-ում ճանաչված գիտնական, ֆիզիկոս-քիմիկոս, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարո Էրանի Խաչատուրյանի ջանքերով: Սկզբում ամբիոնը անվանվել է Քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի (1964-1970 թթ.), ապա Տեսական քիմիայի (1970-1984 թթ.), որոնց վարիչը եղել է պրոֆ. Կ. Խաչատուրյանը: 1984 թ. Տեսական քիմիայի ամբիոնը միացվել է ֆիզիկական քիմիայի ամբիոնին: 1987 թ. նորից ձևավորվել է ամբիոնը՝ Տեխնիկական քիմիա և կատալիզ անվամբ՝ պրոֆ. Աշոտ Վարադգատի Մուշեղյանի ղեկավարությամբ (1987-1994 թթ.): Նրա մահից հետո այդ ամբիոնի վարիչ նշանակվել է դոց. Գրիգոր Գեորգիի Գրիգորյանը, ով այդ պաշտոնում աշխատել է 1994-2002 թթ.: 2002 թ. ամբիոնի նոր վարիչ է ընտրվել նույն ամբիոնի պրոֆ. Սուրեն Լևոնի Խառատյանը, միաժամանակ շարունակելով աշխատել Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում որպես Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) լաբորատորիայի վարիչ: Նա նշված գիտական ուղղությունը զուգահեռաբար զարգացրել է նաև համալսարանում, իսկ ամբիոնի անվանումը 2005 թ. փոխվել է «Քիմիական ֆիզիկա» անվամբ: 2008 թ. ֆակուլտետի այդ կարևոր և բարձր ուսումնագիտական մակարդակի ամբիոնը անհասկանալի հանգամանքներում լուծարվեց, իսկ աշխատակիցները տեղափոխվեցին Ֆիզիկական և Անօրգանական քիմիայի ամբիոնները՝ իրենց ուսումնական ծանրաբեռնվածություններով և կատարվող գիտահետազոտական թեմաներով հանդերձ: Ֆակուլտետի «Տեսական քիմիայի» ամբիոնը մոտ 45 տարի գոյության ընթացքում մշտապես դրսևորել է ուսումնագիտական բարձր մակարդակ, որտեղ ուսանողությանը դասավանդվել են կարևոր քիմիական առարկաներ: Ամբիոնում կատարվել են բազմաբնույթ

տեսական և կիրառական նշանակության գիտահետազոտական աշխատանքներ՝ օգտագործելով ժամանակակից ֆիզիկաքիմիական և սպեկտոսկոպիական տարբեր եղանակներ: Ամբիոնում ժամանակի ընթացքում պատրաստվել և ձևավորվել են բարձրակարգ մասնագետներ, որոնցից շատերը բացի համալսարանից աշխատել են մասնաշաղկապում և գիտահետազոտական ինստիտուտներում, ոմանք էլ արտերկրում: 1965-70-80-ական թթ. Տեսական քիմիայի ամբիոնում համատեղությամբ աշխատել են շատ նշանավոր գիտնականներ՝ ակադեմիկոս Արամ Բակրատի Նալբանդյանը, ակադեմիկոս Ադոլֆ Հայրապետի Մանթաշյանը, ակադեմիկոս Լևոն Աղասու Թավադյանը, պրոֆ. Հովհաննես Դավթյանը, ՌԴ ԳԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ Վիլեն Վաղարշաևի Ազատյանը և ուրիշներ: Նրանք դասավանդել են մասնագիտական կարևոր առարկաներ, մասնակցել ամբիոնում տարվող ուսումնագիտական աշխատանքների կատարմանը՝ լինելով մաս Զիմիայի ֆակուլտետի գիտական ու ստենդալտոսական մասնագիտական խորհուրդների անդամներ: Անկասկած մեծ է եղել այդ ամբիոնի դերը ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացում, համալսարանում և ընդհանրապես ՀՀ-ում:

Հարկ է նշել այդ ամբիոնում կատարված կարևոր գիտական աշխատանքները: 1964-1984 թթ. ամբիոնի վարիչ պրոֆ. Կ. Խաչատուրյանի ղեկավարությամբ, այնուհետև 1987-1993 թթ. ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Մուշեղյանի ղեկավարությամբ կատարվել են էական նշանակության գիտահետազոտական աշխատանքներ, բազմաբաղադրիչ տարասեռ համակարգերի կատալիտիկ հատկությունների վերաբերյալ մշակվել են ուսումնագիտական և կիրառական բնույթի շատ հարցեր: Ամբիոնի վարիչ, պրոֆ. Կ. Խաչատուրյանը կարևոր դեր է կատարել համալսարանում և քիմիայի ֆակուլտետում ուսումնագիտական գործընթացի զարգացման բնագավառում: Ամբիոնում պրոֆ. Կ. Խաչատուրյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերել են քիմիական թերմոդինամիկային և քվանտային քիմիային: Հիշատակման արժանի է ամբիոնում 1970-1980-ական թթ. աշխատած պրոֆ. Հովհաննես Դավթյանը, ով ԽՍՀՄ-ում եղել է քվանտային քիմիայի հիմնադիրը և շատ նշանավոր մասնագետ մաս թերմոդինամիկայի, տեսական ֆիզիկայի, կինետիկայի և կատալիզի ոլորտայիններով: Նա Խորհրդային Միությունում առաջինն է գրել քվանտային

քիմիայի բուհական դասագիրք՝ «Квантовая химия», Москва, 1962 ռ.: Նրա ղեկավարությամբ ԽՍՀՄ-ում առաջինը մշակվել են ներքին այրման շարժիչներում վառելանյութի այրման ռեակցիայի քվանտամեխանիկական տեսությունները և կատալիզի նոր եղանակներ: Երևանում (Նորքում) հիմնադրել և ղեկավարել է ՀՀ-ում միակ տեսական քիմիայի ուղղվածությամբ գիտահետազոտական լաբորատորիան: Նա աշխարհին տվել է այնպիսի էլեկտրական մարտկոցներ պատրաստելու տեխնոլոգիա (մշակված իր լաբորատորիայում), որի շնորհիվ ամերիկյան տիեզերանավը վայրէջք կատարեց Լուսնի վրա: Պրոֆ. Մուշեղյանից հետո ամբիոնի վարիչ է աշխատել դոց. Գ. Գրիգորյանը (1994-2002 թթ.): Այդ ժամանակաշրջանում ամբիոնում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել մետաղական և մետաղօքսիդային կոմպլեքսային կատալիզատորների, սիլիկագելային կլանիչների (սորբենտների) ստացման ու հատկությունների ուսումնասիրման ուղղություններով (Գ. Գրիգորյան, Օ. Քամալյան): Քիմ. գիտ. դոկտոր (2009 թ.), պրոֆ. (2011 թ.) Օլեգ Քամալյանը (1951 թ.) 1977 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատել Տեսական քիմիայի ամբիոնում: Արցախյան պատերազմի տարիներին ԼՂՀ համալսարանում աջակցել է քիմիայի ամբիոնի հիմնադրմանը (1993 թ.) և ռազմական բնույթի աշխատանքներ կատարելու համար պարգևատրվել ԼՂՀ «Մարտական ծառայություն» և ԼՂՀ վարչապետի ոսկե մեդալներով: Հրատարակել է 120-ից ավելի ուսումնագիտական աշխատություններ, նրա ղեկավարությամբ 3 անձ պաշպանել են թեկնածուական ատենախոսություններ: 2012-2019 թթ. աշխատել է ՀՀ Ազգային ազդարային համալսարանի ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ:

Ամբիոնում քիմիական տեղափոխման ռեակցիաների ուսումնասիրությունների ուղղությամբ էական աշխատանքներ են կատարվել պրոֆ. Գ. Գրիգորյանի ղեկավարությամբ: Մասնավորապես անօրգանական պինդ բյուրեղային բնույթի սկլալիական և d-տարրերի մետաղօքսիդներն ու հալոգենիդները 300-700°C զազային ֆազ տեղափոխելու համար, որպես տեղափոխման ռեակցիայի խթանիչ առաջին անգամ օգտագործվել են հիդրոպերօքսիդները (դոց. Գևորգ Գրիգորյան): Աշխատանքային գործունեության վերջին շրջանում պրոֆ. Գ. Գրիգորյանը մեծ ուշադրություն է դարձրել ցածր ջերմաս-

տիճաններում տեղափոխման ռեակցիաների կինետիկական օրինաչափությունների բացահայտմանը (դոց. Հ. Բեգլարյան): Փաստորեն քիմ. գիտ. դոկտոր (1990 թ.), պրոֆ. (1994 թ.) Գ. Գրիգորյանը հիմք է դրել և զարգացրել քիմիական տեղափոխման ռեակցիաների կինետիկական գործընթացների հետազոտումը մեր հանրապետությունում: Նա ծնվել է Իրանում (1939 թ.), 1946 թ. տեղափոխվել են Երևան, 1961 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, 1961-1994 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, իսկ 1994-2017 թթ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: Բազմաթիվ գիտական աշխատությունների և գյուտերի հեղինակ է: Այժմ ապրում է ԱՄՆ-ում:

2002-2007 թթ. Քիմիական ֆիզիկայի ամբիոնի վերջին վարիչ է եղել պրոֆ. Ս. Խառատյանը: Ամբիոնի վարիչ ընտրվելուց հետո ամբիոնում կատարվող ֆիզիկաքիմիական հետազոտություններին զուգահեռ նա զարգացրեց նաև ԲԻՍ պրոցեսներին վերաբերող աշխատանքներ, որոնք հիմնականում տարվում էին Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: Պետք է նշել, որ ԲԻՍ պրոցեսների ուղղությամբ ուսումնասիրությունները պրոֆ. Ս. Խառատյանը երկար տարիներ հաջողությամբ իրականացնում է թե՛ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, թե՛ համալսարանում՝ ստանալով կիրառական նորարարություններ և այդ գիտական ուղղությամբ պատրաստելով բարձրակարգ երիտասարդ մասնագետներ, որոնցից ոմանք աշխատում են արտերկրում:

III-2-5-1. Տեսական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1964-2008 թթ.)

1. Խաչատուրյան Կարո Էրանի (1909-1993 թթ.), 1964-1970 թթ. (Քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի ամբիոն), 1970-1984 թթ. (Տեսական քիմիայի ամբիոն)
2. Մուշեղյան Աշոտ Վարազդատի (1933-1994 թթ.), 1987-1994 թթ. (Կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոն)
3. Գրիգորյան Գրիգոր Գեորգիի (1951 թ.), 1994-2002 թթ. (Կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոն)
4. Խառատյան Սուրեն Լևոնի (1948 թ.), 2002-2005 թթ. (Կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոն), 2005-2007 թթ. (Քիմիական ֆիզիկայի ամբիոն)

1. Խաչատուրյան Կարո Էրանի

Պրոֆ. Կ. Է. Խաչատուրյանի կենսագրությունը զետեղված է ղեկանների կենսագրությունների բաժնում:

2. Մուշեղյան Աշոտ Վարազդատի (1933 թ. Երևան - 1994 թ. Երևան)

Քիմիական գիտությունների դոկտոր (1986 թ.), պրոֆեսոր (1987 թ.), ԵՊՀ կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոնի վարիչ (1987-1994 թթ.)

Պրոֆ. Ա. Մուշեղյանը ծնվել է Երևանում (11.06.1933 թ.), միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 40 դպրոցում: 1951 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտելով 1956 թ. աշխատանքի է անցնել ՀՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում որպես լաբորանտ, այնուհետև կրտսեր գիտաշխատող: 1960 թ. տեղափոխվել է ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտ, որտեղ կազմակերպել է սպեկտրոսկոպիայի լաբորատորիա, որը տվյալ բնագավառում հանրապետությունում առաջինն էր և ղեկավարել լաբորատորիայի հետազոտական խումբը:

1967 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և նույն թվականին տեղափոխվել աշխատանքի ԵՊՀ նորաստեղծ «Քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի» ամբիոն սկզբում որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ: 1984 թ. ամբիոնը կցվել է Ֆիզիկական

քիմիայի ամբիոնին առ 1987 թ.: 1986 թ. դոցենտ Ա. Մուշեղյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1987 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականին ֆիզքիմիայի ամբիոնում գործող նախկին Տեսական քիմիայի ամբիոնը աշխատակիցներով հանդերձ վերականգնվել է նոր անվանումով՝ Կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոն, որի վարիչ ընտրվել է պրոֆ. Ա. Մուշեղյանը և աշխատել այդ պաշտոնում մինչև կյանքի վերջը (1994 թ.): Նրա անմիջական ջանքերով Քիմիայի ֆակուլտետում կազմակերպվել է «Հետազոտման ֆիզիկական եղանակներ» առարկայի դասավանդումը և համապատասխան ֆիզիկաքիմիական հետազոտությունների գործիքային բազա: Պրոֆ. Ա. Մուշեղյանի նախաձեռնությամբ ամբիոնում լուրջ գիտական հիմքերի վրա են դրվել Արարատյան որդան կարմիրից ներկերի ստացման և դրանց ուսումնասիրման գիտական աշխատանքները (պատասխանատու կատարող՝ Ս. Ներսիսյան): Պրոֆ. Ա. Մուշեղյանը եղել է ավելի քան 120 գիտական աշխատությունների հեղինակ, որոնք կարևոր ներդրում են եղել տարասեռ կատալիզի տեսական և փորձարարական եղանակների ուսումնասիրման բնագավառում: Նրա գիտական աշխատանքները ուղղված էին մասնավորապես, հատկապես ագեոլիզմային կարբինոլների տարասեռ կատալիտիկ փոխարկումներին: Առանձնակի ուշադրության են արժանացել սպիրտների իզոմերման մեխանիզմի և վերջանյութերի ստացման բացահայտումը, ինչպես մասնավորապես մեքենաներից արտանետվող վնասակար միացությունների վնասազերծման համար տարասեռ կատալիզատորների մշակումն ու ստեղծումը: Պրոֆ. Ա. Մուշեղյանը լինելով ՀՀ-ում սպեկտրոսկոպիական անալիզի առաջատար մասնագետներից և քիմիայում դրա առաջին արմատավորողներից մեկը՝ լուրջ և կարևոր ներդրում է ունեցել հանրապետությունում այդ բնագավառի մասնագետների պատրաստման և տարասեռ կատալիզի զարգացման գործընթացում:

3. Գրիգորյան Գրիգոր Գեորգիի (1951 թ. Երևան)

*Քիմիական գիտությունների թեկնածու (1982 թ.), դոցենտ (1988 թ.),
ԵՊՀ կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոնի վարիչ (1994-2002 թթ.)*

Ծնվել է 1951 թ. Երևանում, 1968 թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի Ա. Շիրվանզադեի անվան թիվ 21 դպրոցը և ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտել է կարմիր դիպլոմով

(1973 թ.) և աշխատանքի անցել Տեսական քիմիայի ամբիոնում, սկզբում որպես լաբորանտ, ապա ուսումնական լաբորատորիայի վարիչ: Ուսումնական գործունեությանը զուգընթաց կատարել է գիտահետազոտական աշխատանքներ, հրատարակել է 76-ից ավելի գիտական աշխատություններ նվիրված ացետիլենային սպիրտների կլանման (ադսորբման) և կատալիտիկ հատկություններին: Թեկնածուական թեզը պաշտպանել է 1982 թ., 1988 թ. ստացել է դոցենտի կոչում, իսկ 1994 թ. ընտրվել է նույն ամբիոնի վարիչ և աշխատել մինչև 2002 թ.:

Դոց. Գ. Գրիգորյանի ամբիոնի վարիչության տարիներին բարձր մակարդակով են տարվել գիտահետազոտական աշխատանքները, օգտագործել են ժամանակակից ֆիզիկաքիմիական եղանակներ՝ սպեկտրոսկոպիական (ԻԿՍ, ՈւՄՍ), ատոմնաաբտորբման, կալորիմետրիական և այլն:

Ամբիոնի լուծարումից հետո (2008 թ.) Գ. Գրիգորյանը աշխատում է Ֆիզիկական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ: Նա երկար տարիներ եղել է Քիմիայի ֆակուլտետի ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահ, ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: Դոցենտ Գ. Գրիգորյանը թե՛ որպես ամբիոնի վարիչ, թե՛ որպես դոցենտ աշխատելիս մշտապես բարձր մակարդակով և մեծ պատասխանատվությամբ կատարել և կատարում է իր պարտականությունները:

4. Խառատյան Սուրեն Լևոնի (1948 թ. Քերդ, Տավուշ)

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր (1995 թ.), պրոֆեսոր (2006 թ.),

ՀՀ ԳԱԱ քղբակից անդամ (2010 թ.),

ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ԲԻՍ պրոցեսների կինետիկայի լաբորատորիայի վարիչ (1982 թ. առ այսօր),

ԵՊՀ կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոնի վարիչ (2002-2005 թթ.),

ԵՊՀ քիմիական ֆիզիկայի ամբիոնի վարիչ (2005-2007 թթ.)

Ծնվել է 01.09.1948 թ. ծառայողի ընտանիքում, 1966 թ. ավարտել է Բերդի թիվ 1 միջնակարգ դպրոցը, իսկ 1971 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունն սկսել է դեռևս ուսանողական տարիներին (1970 թ.) ՀՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայում: 1971 թ. ընդունվել է Քիմիական

Ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղ՝ այրման և բոցավառման տեսության բնագավառի հանրահայտ մասնագետ պրոֆ. Ա.Գ. Մերժանովի լաբորատորիա: Ասպիրանտուրան ավարտելուց հետո 1975 թ.-ից աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, որտեղ 1977 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1977-1982 թթ. նույն ինստիտուտում եղել է «Այրման պրոցեսների թերմոդինամիկայի և կինետիկայի» հետազոտական խմբի ղեկավար, իսկ 1982 թ.-ից առ այսօր՝ «Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի պրոցեսների կինետիկայի» լաբորատորիայի վարիչ: Շարունակել է իր գիտական թեմատիկայի զարգացումը և 1995 թ. ՌԴ ԳԱ կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտում պաշտպանել դոկտորական ատենախոսություն՝ նվիրված պինդ ֆազի մասնակցությամբ ընթացող արագընթաց քիմիական ռեակցիաների կինետիկային, և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2006 թ.-ից պրոֆեսոր է, իսկ 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Պրոֆ. Խառատյանը 400-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ է: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտը վերաբերում է բարձրջերմաստիճանային արագընթաց ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի ուսումնասիրություններին, ինչպես նաև կոնդենսված ֆազում այրման պրոցեսների կիրառմամբ ժամանակակից կերամիկական և դժվարահալ անօրգանական նյութերի սինթեզին: ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի իր կողմից ղեկավարվող լաբորատորիայում մշակվել են նոր կերամիկական, կոմպոզիտային ու դժվարահալ անօրգանական նյութերի ստացման տեխնոլոգիաներ, ինչպես նաև մի շարք արժեքավոր մետաղական փոշիների (այդ թվում՝ կոբալտ, միկել, պոլինձ, մոլիբդեն, ինտերմետաղական նյութեր) ստացման արդյունավետ եղանակներ: Նրա գիտական հետազոտությունների արդյունքները պարբերաբար տպագրվում են հայտնի միջազգային ամսագրերում: Նրա ղեկավարությամբ 14 անձ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Նա 1995 թ.-ից զուգահեռաբար համատեղությամբ աշխատել է համալսարանում, դասախոսություններ է կարդացել ԵՊՀ քիմիայի

ֆակուլտետի կիրառական քիմիայի նորաբաց բաժնում, իսկ 2002 թ. ընտրվել է ԵՊՀ կատալիզի (2005 թ.-ից՝ Քիմիական ֆիզիկայի) ամբիոնի վարիչ և այն ղեկավարել մինչև 2007 թ.: 2008 թ.-ից Անօրգանական քիմիայի (2013 թ.-ից՝ Անօրգանական և անալիտիկ քիմիայի) ամբիոնի պրոֆեսոր է: Մեծ թվով ուսանողներ ուսումնառության տարիներին նրա աջակցությամբ կատարել և շարունակում են կատարել գիտական հետազոտություններ, որոնց արդյունքները պարբերաբար գեկուցվել են ինչպես ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ, այնպես էլ նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

Պրոֆ. Ս. Խառատյանը միջազգային ճանաչում ունեցող գիտնական է, նա բազմիցս հանդես է եկել գիտաժողովներում և սեմինարներում: Նա մի շարք գիտական և ատենախոսական խորհուրդների անդամ է: Իր աշխատանքային գործունեության ընթացքում արժանացել է՝ ՀՀ ԳԱԱ գովեստագրի (1983 թ.), ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի անվան մրցանակի (1999 թ.), ՀՀ ԳԱԱ պատվոգրի (2005 թ.), ՀՀ նախագահի մրցանակի (2008 թ.):

Ներկայումս ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ս. Լ. Խառատյանը, որպես ՀՀ-ում բարձրջերմաստիճանային փոխարկումների միակ բարձրակարգ մասնագետ, իր ղեկավարած գիտական խմբերով հաջողությամբ շարունակում է համալսարանում և Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում զարգացնել ԲԻՍ ուղղությամբ տարվող ուսումնագիտական և կիրառական նշանակության աշխատանքները:

III-2-6. Դեղագործական քիմիայի ամբիոն (1998-2016 թթ.)

Ինչպես նշվել է 1994 թ. քիմիայի ֆակուլտետում առաջին անգամ բացվել է Դեղագործական քիմիայի բաժին, որին սպասարկել են ֆակուլտետի ամբիոնները (Անօրգանական քիմիայի ամբիոնը նաև որպես համակարգող) մինչև նոր «Դեղագործական քիմիա» ամբիոնի ստեղծումը: Ուսումնական գործընթացը բաժնի կուրսերում այդ տարիներին տարվում էին ամենաբարձր մակարդակով, բարձրորակ դասախոսներով, թե՛ համալսարանական, թե՛ հրավիրված համատեղությամբ աշխատող մասնագետներով: Հարկ է նշել Դեղագործական քիմիայի բաժնի առաջին մասնագետ դասախոսներին: Բժշկական գիտությունների դոկտոր, Երևանի պետական բժշկական ինստիտուտի պրոֆ. Ե. Սաֆրազբեկյան, ով այն ժամանակներում դեղագործության բնագավառի ամենաճանաչված մասնագետներից մեկն էր ՀՀ-ում: Նա ԵՊՀ դեղագործական քիմիայի բաժնում (1994-1997 թթ.) աշխատել է համատեղությամբ, դասավանդելով դեղագիտության կարևոր և շատ հետաքրքիր առարկաներից մեկը՝ Դեղատեսակների ռեցեպտավորում և անվանակարգում: Նրա դասախոսությունները մեծ հետաքրքրություններ են առաջացրել Դեղագործական քիմիայի բաժնում, որոնց մասնակցում էին, ուսանողներից բացի, նաև ֆակուլտետի աշխատակիցները: Ֆարմակոլոգիա առարկան վարել է բժշկ. գիտ. թեկնածու Կ. Մարգարյանը, Դեղատեսակների տեխնոլոգիան՝ քիմ. գիտ. թեկնածու Ա. Հովհաննիսյանը, Դեղագործական քիմիան՝ քիմ. գիտ. թեկնածու Հ. Մինասյանը, Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն՝ քիմ. գիտ. թեկնածու Վ. Միրզոյանը (հետագայում Արցախի համալսարանի քիմիական ֆակուլտետի դեկան), կենսաբանություն և անատոմիա՝ դոց. Հ. Սեմիրջյանը (ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի դեկանի տեղակալ), իսկ ամբիոնի դոցենտ Ա.Սաղյանը կարդացել է ամինաթթուների կոմպլեքսներ, կենսաանօրգանական և կենսաօրգանական քիմիա առարկաների դասախոսությունները: Դեղագործական քիմիայի բաժինը մեծ զարգացում ունեցավ և այդ բաժնի հիման վրա 1998 թ. բացվեց Դեղագործական քիմիայի ամբիոնը, որի առաջին վարիչ ընտրվեց ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի շրջանավարտ, դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սարգսի Վարդանյանը, ով այն ժամանակ աշխատում

էր Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում որպէս լաբորատորիայի վարիչ ու հանրապետությունում ճանաչված դեղաբանության մասնագետ: Նա շարունակեց ԵՊՀ նորաստեղծ ամբիոնի զարգացման գործընթացը, որոշ չափով ամբիոնը համարեց անհրաժեշտ բարձրորակ դասախոս-մասնագետներով և եղած գիտական ուղղություններին ավելացրեց նորերը: Նորաստեղծ ամբիոնում աշխատել է նաև քիմ. գիտ. դոկտոր Ա. Սաղյանը: Այդ ամբիոնում 2002-2016 թթ. աշխատել է ԵՊՀ-ի սան (ավարտել է կենսաքիմիայի բաժինը), Նյու-Յորքի, Էկոլոգիական միջազգային, Ռուսաստանի բնական գիտությունների, Ռուսաստանի բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաք. գիտ. դոկտոր (1986 թ.), պրոֆ. (1990 թ.) Պետրոս Արամի Ղազարյանը՝ աշխատելով նաև ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ. Հ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոնում որպէս գիտության գծով փոխտնօրէն: Նա մի շարք գիտական խորհուրդների և ընկերությունների անդամ է, նրա ակտիվ մասնակցությամբ հիմնադրվել են «Արյուն» և «Ֆարմա» գիտագործնական ամսագրերը: Նա համահեղինակ է ավելի քան 470 աշխատությունների, 7 հեղինակային վկայականների և արտոնագրերի, հրատարակել է 2 ուսումնական ձեռնարկ և 5 ուսումնամեթոդական աշխատանք: Նրա ղեկավարությամբ 25 անձ պաշտպանել են թեկնածուական և 3 անձ՝ դոկտորական ատենախոսություններ:

Ակադեմիկոս Ռ. Վարդանյանը կարճ ժամանակահատված աշխատեց որպէս Դեղագործական ամբիոնի վարիչ և անսպասելիորեն ընդհատեց իր աշխատանքային գործունեությունը համալսարանում և 2000 թ. ընտանիքով տեղափոխվեց ԱՄՆ մշտական բնակության, որտեղ շարունակում է զարգացնել իր գիտական ուղղվածությունը:

Քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնի երկրորդ վարիչ ընտրվեց (2000 թ.) նույն ամբիոնի պրոֆ. Աշոտ Մերոբի Սաղյանը, ում ուսումնագիտական գործունեությունը, որպէս ամբիոնի վարիչ, շատ ծավալուն, բեղմնավոր ու կարևոր ընթացք ունեցավ Քիմիայի ֆակուլտետում, ապա Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում:

Նրա վարչության ժամանակահատվածում դեղագործական քիմիայի ամբիոնը գիտական մեծ արդյունքներ տվեց և աստիճանաբար ստեղծվեց դեղագիտական ու դեղագործական քիմիայի լուրջ

և հզոր կենտրոն, որը ճանաչվեց և գնահատվեց մաս միջազգայնորեն: Պրոֆ. Ա. Սադյանի ղեկավարությամբ կատարվել են գիտական հիմնարար աշխատանքներ՝ ոչ սպիտակուցային օպտիկապես ակտիվ α-ամինաթթուների ասիմետրիկ բիոմետրիկ սինթեզ, մանրէաբանական և էնզիմատիկ կուլտուրալ հեղուկներից ամինաթթուների և կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատում ու մաքրում, նոր քիրալային կատալիզատորների սինթեզ և ուսումնասիրում, ոչ սպիտակուցային ամինաթթվային պեպտիդների ստացում, նոր դեղատեսակների սինթեզների մշակում: Պրոֆ. Ա. Սադյանը այդ աշխատանքներին ներգրավեց բազմաթիվ աշխատակիցների և պատրաստեց երիտասարդ ուսումնագիտական կադրեր՝ Հայարփի Սիմոնյան, Անահիտ Հովհաննիսյան, Սլավիկ Դադայան և ուրիշներ: Այդ կադրերից է մաս ներկայիս ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի տեղակալ, քիմ. գիտ. թեկնածու, Ֆարմաքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի դոցենտ Սամվել Մարտունու Վարդապետյանը (1955 թ. ծնվ.): 1977 թ. նա ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, ապա ՀՀ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան (1982 թ.), գիտությունների թեկնածու է 2001 թ.-ից, դոցենտ՝ 2003 թ.-ից: Ս. Վարդապետյանը իր աշխատանքային գործունեությունը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում սկսել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ (1977-1979 թթ.), այնուհետև աշխատել է Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում որպես գիտաշխատող (1983-1989 թթ.), իսկ հետո ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ (1989-1996 թթ.) և ասիստենտ: Այդտեղից տեղափոխվել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոն որպես ասիստենտ (1996-2003 թթ.), ապա դարձել է ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնի դոցենտ (2003-2016 թթ.): Եղել է ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ղեկանի տեղակալ (2010-2017 թթ.), իսկ 2017 թ. ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրենն է:

Հաշվի առնելով Դեղագործական քիմիա բաժնի ուսանողների թվաքանակը և ուսումնագիտական աշխատանքների ծավալը 2015 թ. քիմիայի ֆակուլտետը անվանափոխվեց Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի: Այդ նոր ֆակուլտետում բացվեցին դեղագործական քիմիայի ևս երկու ամբիոններ՝ «Կենսաբժշկագիտության»

ու «Ֆարմտեխնոլոգիայի և Ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման»։ Ուսումնագիտական բնագավառում պրոֆ. Ա. Սաղյանի աննախադեպ բարձրակարգ և բեղմնավոր գործունեության շնորհիվ համալսարանի Դեղագիտական և քիմիայի ֆակուլտետի դեղաբանական մասնագիտության երեք ամբիոնների բազայի հիման վրա 2017 թ. ստեղծվեց նոր՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ՝ ակադեմիկոս Ա. Սաղյանի ղեկավարությամբ։



ՀԽՄՀ ԳԱ թղթակից անդամ Սյրեւիան Համբարյանը, 1920 թ.



Պրոֆեսոր Լ. Ռուբինյանը



Քիմիայի ֆակուլտետի դասախոսական կազմը, 1957 թ.

Ձախից աջ I-ին շարք (նստած)՝ Մ. Սարգսյան, Տ. Ղազանչյան, Է. Թադևոսյան, Մ. Դանդաշյան, Հ. Չալոյիկյան, Մ. Դարբինյան, Ա. Բանբասյան, Գ. Չրյան

II շարք՝ Ա. Մանուկյան, Ռ. Մխիթարյան, Մ. Հեքիմիյան, Մ. Ավագյան, Ժ. Հովսեփյան, Ա. Ավերիսյան, Լ. Գյուլբուրադյան, Ա. Մանյան, Ա. Տիրանյան, Վ. Գրիգորյան, Ա. Մուրադյան

III շարք՝ Ռուզան Ջաբարյան, Է. Մխարդյան, Ս. Առաքելյան, Մ. Չալինյան, Ա. Չազյան, Ս. Ղազարյան, Ա. Հարությունյան

IV շարք՝ Ժ. Շահնազարյան, Ռ. (Ջուլյա) Հակոբյան, Ա. Սողոմյան, Դ. Կուսրանդյան, Ա. Ավիյան, Լ. Գրիգորյան, Դ. Գալստյան, Ն. Քելլերյան



Օրգանական քիմիայի ամբիոնի դասախոսական կազմը, 1973 թ.

Ձախից աջ ներքին շարք՝ Օ. Սարգսյան, Օ. Խաչագործյան, Մ. Չալինյան, Է. Մխարդյան, Լ. Գյուլբուրադյան, Մ. Դանդաշյան, Ս. Առաքելյան, Ս. Տիրանյան, Ա. Ավերիսյան, Ա. Դուրգադյան, Ա. Չազյան

Վերին շարք՝ Վ. Դուրգադյան, Լ. Ոսկանյան, Վ. Հարությունյան, Գ. Համբարձումյան, Յ. Բունիարյան, Գ. Թաթևոսյան, Մ. Մանուկյան, Ա. Հակոբյան, Բ. Հակոբյան, Ժ. Բոյաջյան, Ա. Ղուկասյան



Ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դասախոսական կազմը, 1968 թ.
 Ձախից աջ I-ին շարք (նստած)՝ Ա. Կազյան, Ռ. Մելքոնյան, Ա. Ասլանյան, Ա. Խաչատրյան,
 Ջ. Ճաղիկյան, Գ. Դերմենջյան, Մ. Գևորգյան
 II շարք՝ Բ. Օդաբաշյան, Ն. Բեյլերյան, Ս. Մխիթարյան, Հ. Չալոբիկյան, Ե. Աբանասյան,
 Ռ. Հակոբյան, Բ. Սողոմոնյան
 III շարք՝ Ս. Հակոբյան, Ջ. Շնարիկյան, Ռ. Մելիքսերյան, Մ. Չոբանյան, Ֆ. Կարապետյան,
 Ա. Ավագյան



1980 թ. ԵՊՀ չախմատի քիմային առաջնորդության հաղորդ Բիմիայի ֆակուլտետի քիմը
 (ձախի շարքը՝ դոցենտ Ս. Գրիգորյան, ուսումնական լաբորատորիայի վարիչ Ռ. Մխիթարյան,
 ավագ գիտաշխատող Լ. Տեր-Մինասյան, Հարությունյան (ուսանողուհի))



Քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աիդա Ավետիսյանը լաբորատորիայում, 1978 թ.



Քիմիական ֆակուլտետի դեկան Սուրեն Նալչաջյանը դիպլոմներ է հանձնում շրջանավարտներին:



Ակադեմիկոս Ա. Սադյանը (աջից առաջինը) ԵՊՀ-ի և ՌԴ Բելգորոդի պետական ազգային հեղափոխական համալսարանի ղեկավարների հետ քննարկում են համագործակցության ծրագիր, 2015 թ.:



*ԵՊՀ ղեկավարիայի ամբիոնի մի շարք դասախոսներ՝
Ջախից աջ վերևի շարք՝ Սիմոնյան Հայարիի, Բալայան Լյուդմիլա, Պեպրոսյան Սաթենիկ,
Աղամյան Էլվիրա,
Ներքևի շարք՝ Ղահրամյան Անահիտ, Սարգսյան Ժաննա, Պեպրոսյան Կինա, Շեյրանյան Սարինա, 2015 թ.*



Քիմիայի ֆակուլտետի գիրական խորհուրդը, 1999 թ.

*Չախից աջ՝ I շարք՝ Հ. Խաչատրյան – ք.գ.դ., պրոֆ., անալիտիկ քիմիայի վարիչ,
Ռ. Վարդանյան – ք.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Դեղագործական քիմիայի ամբիոնի
վարիչ, Ս. Գրիգորյան – ք.գ.դ., պրոֆ., Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ,
Լ. Գալստյան – ք.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի ղեկանի տեղակալ, Ն. Բեյլերյան – ք.գ.դ.,
պրոֆ., ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, Ժ. Առուստամյան – ք.գ.դ., պրոֆ.,
Ս. Վարդանյան – ք.գ.թ., դոցենտ:*

*Չախից աջ՝ II շարք՝ Գ. Գրիգորյան – ք.գ.դ., պրոֆ., Գ. Մելիքյան – ք.գ.դ., պրոֆ.,
Ռ. Մխիթարյան – ք.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի արհելյուրոյի նախագահ, Գ. Գրիգորյան –
ք.գ.թ., դոցենտ, Կարալիզի ամբիոնի վարիչ, Տ. Ղուչկյան – ք.գ.թ., ֆակուլտետի խորհրդի
գիրքարարուղար, Վ. Հարությունյան – ք.գ.դ., պրոֆ.:*



*Անօրգանական քիմիայի ամբիոնի աշխատողները գիրառատումնական հարցեր քննարկելիս
Չախից աջ՝ ուս. լաբ. վարիչ Կ. Սարգսյան, ավագ գիրաշխատող Ն. Մանուկյան, ավագ
լաբորանտ Ս. Բաղդասարյան, ք.գ.դ., պրոֆ. Հ. Բաբայան, ք.գ.դ., պրոֆ., ամբիոնի վարիչ
Ռ. Հարությունյան, ավագ լաբ. Ն. Գալստյան*



Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն, 2019 թ.
(ձախից աջ) I-ին շարք՝ ներքինից՝ Ասլանյան Ս. պրոֆեսոր, Բեգլարյան Հ. թ. գ. թ., դոցենտ,
Գալստյան Ն. ավ. լաբորանտ, Մխիթարյան Ռ. թ. գ. թ., դոցենտ, Մարտիրոսյան Ա. թ. գ. թ., դոցենտ,
ամբիոնի վարիչ, Պետրոսյան Գ. թ. գ. թ., դոցենտ, Աղամյան Ռ. թ. գ. թ., դոցենտ, Հարությունյան Լ.
թ. գ. թ., դոցենտ,

II-րդ շարք՝ Հարությունյան Ռ. թ. գ. թ., պրոֆեսոր, Թադևոսյան Լ. թ. գ. թ., ավ. լաբորանտ,
Հարդանյան Ն. ավ. լաբորանտ, Խաչատրյան Հ. թ. գ. թ., պրոֆեսոր, Դարբինյան Հ. թ. գ. թ.,
դոցենտ, Մանգասարյան Լ. թ. գ. թ., ախտորոշող, Պետրոսյան Ի. ավ. լաբորանտ, Ներսիսյան Լ.
թ. գ. թ., ավագ գիտ. աշխատող, Դայան Ռ. ավ. լաբորանտ

III-րդ շարք՝ Պետրոսյան Հ. ավ. լաբորանտ, Սկրբչյան Ռ. թ. գ. թ., դոցենտ, Փիրումյան Գ. թ. գ. թ.,
պրոֆեսոր, Մինոնյան Գ. թ. գ. թ., դոցենտ, Խառատյան Ս. թ. գ. թ., պրոֆեսոր, ԳԱԱ քղթ. անդամ,
Հայրապետյան Ս. թ. գ. թ., ավ. գիտ. աշխատող, Սարգսյան Կ. ուս. լաբ. վարիչ



Օրգանական քիմիայի ամբիոն, 2019 թ.

Ձախից աջ՝ վերին շարք՝ Կ. Ավետիսյան – դոցենտ, ավագ գիտաշխատող,
Փ. Մինասյան – թ. գ. թ., ավագ գիտաշխատող, Լ. Համբարձումյան – թ. գ. թ., գիտ. աշխատող,
Մ. Սամվելյան – թ. գ. թ., դոցենտ, Ա. Գալստյան – թ. գ. թ., դեկանի փոխակալ
Ներքին շարք՝ Ի. Ալեքսանյան – թ. գ. թ., դոցենտ, Տ. Ղոջիկյան – թ. գ. թ., պրոֆ. դեկան,
Ն. Դուրգարյան – թ. գ. թ., պրոֆ., ամբիոնի վարիչ – Գ. Թորմաջյան, թ. գ. թ., պրոֆ.,
Ն. Միրաբջյան – ուսումնական լաբորատորիայի վարիչ



Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոն, 2019 թ.

Ձախից աջ՝ ներքևի շարք՝ Շիլաջյան Հ. – ք.գ.ք., ուսումնական լաբորատորիայի վարիչ, Շահինյան Գ. – ք.գ.ք., ավագ լաբորանտ, Մարգարյան Հ. – ք.գ.ք., դոցենտ, Մարգարյան Շ. – ք.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, Հազոյան Հ. – ք.գ.ք., դոցենտ, Գաբրիելյան Լ. – ք.գ.ք., դոցենտ: Վերևի շարք՝ Գրիգորյան Զ. – ասպիրանտ, Գրիգորյան Գ. – ք.գ.ք., դոցենտ, Գրիգորյան Կ. – ք.գ.դ., պրոֆեսոր, Դեհերյան Շ. – լաբորանտ, Չափիկյան Ա. – ք.գ.ք., ավագ գիտաշխատող, Գրիգորյան Գ. – ք.գ.ք., դոցենտ, Մխիթարյան Ա. – լաբորանտ:



Քիմիայի ֆակուլտետի գիտությունների կազմը, 2019 թ.

Ձախից աջ՝ I-ին շարք ներքևից՝ Մարտիրոսյան Ա. – ք.գ.ք., դոցենտ, անօրգանական և անալիտիկ քիմ. ամբ. վարիչ, Վարդանյան Շ. – ՈՒԳԸ նախագահ, Մխիթարյան Ռ. – ք.գ.ք., դոցենտ, արհրբյուրոյի նախագահ, Դոշիկյան Տ. – ք.գ.դ., պրոֆեսոր, ղեկավար, Բրուստյան Ա. – ՈՒՄ նախագահ, Առաքելյան Գ. – բակալավրիարի ուսանողուհի

2-րդ շարք՝ Հարությունյան Ռ. – ք.գ.դ., պրոֆեսոր, Ալեքսանյան Բ. – ք.գ.ք., դոցենտ, Գրիգորյան Կ. – ք.գ.դ., պրոֆեսոր, Դուրգարյան Ն. – ք.գ.դ., պրոֆեսոր, օրգանական քիմ. ամբ. վարիչ, Մամիկյան Մ. – ք.գ.ք., դոցենտ, գիտ. քարտուղար, Գալստյան Ա. – ք.գ.ք., ասիստենտ, ղեկավարի տեղակալ

3-րդ շարք՝ Մարգարյան Շ. – ք.գ.դ., պրոֆեսոր, ֆիզիկական և կոլոիդ քիմ. ամբ. վարիչ, Փիրումյան Գ. – տ.գ.դ., պրոֆեսոր:

ԵՊՀ շրջանավարտ քիմիական գիտությունների դոկտորները

1. Աղաջանյան Յուլիա Եփրեմի
2. Մարգարյան Էդուարդ Աբրեսի
3. Մելիք-Օհանջանյան Ռաֆիկ Գեղամի
4. Նորավյան Ազատ Սողոմոնի - ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
5. Հարոյան Հարություն Ասատուրի - ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
6. Թադևոսյան Գուրգեն Տրգրանի - ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
7. Կուռոյան Ռազմիկ Հակոբի
8. Գևորգյան Գյուլնարա Արտավազդի
9. Հովակիմյան Մառլենա Ժիրայրի
10. Խաչիկյան Ռայա Ջահանի
11. Չոբանյան Ժորա Արմենակի
12. Սարգսյան Մուշեղ Սիրունի
13. Բաղանյան Շալիկո Հովակիմի - ՀՀ ԳԱԱ անդամ
14. Դանագույան Գևորգ Հրաչի - ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
15. Հասրաթյան Գագիկ Վաչեի
16. Չուխաջյան Էմմա Հովսեփի
17. Գյուլնագարյան Արա Խաժակի
18. Հովհաննիսյան Առնոս Արշակի
19. Սիրականյան Սամվել Նապոլեոնի
20. Պարոնիկյան Երվանդ Գառնիկի
21. Մարկոսյան Աշոտ Իշխանի
22. Թովուդյան Վիգեն Օնիկի - ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
23. Քոչարյան Սասուն Տիգրանի
24. Բաբայան Արաքսի Թովմասի - ՀՀ ԳԱԱ անդամ
25. Կուրտիկյան Տիգրան Ստեփանի
26. Ոսկանյան Մարտուն Գրիգորի
27. Մարտիրոսյան Գուրգեն Թորգոմի
28. Հակոբյան Լևոն Ալեքսանդրի
29. Հակոբյան Ալեքսանդր Մկրտչի
30. Մոռյան Նազար Մնացականի
31. Պողոսյան Գալուստ Մնացականի
32. Չուխաջյան Գառնիկ Ալեքսանդրի
33. Մնջոյան Արմենակ Լևոնի - ՀՀ ԳԱԱ անդամ
34. Վարդանյան Սարգիս Համբարձումի - ՀՀ ԳԱԱ անդամ

35. Վարդանյան Ռուբեն Սարգսի - ՀՀ ԳԱԱ անդամ
36. Փանոսյան Ալեքսանդր Գևորգի
37. Աղբալյան Սեդա Գարեգինի
38. Գևորգյան Ալեքսանդր Համբարձումի
39. Առաքելյան Ալվարդ Սահակի
40. Ղազարյան Փեփրոնե Իվանի
41. Մելիքյան Գագիկ Գևորգիի
42. Ենգոյան Ալեքսանդր Փայլակի
43. Գաբրիելյան Աննա Գուրգենի
44. Սարգսյան Սերժիկ Հակոբի
45. Պետրոսյան Վազգեն Ազատի
46. Տոնոյան Անահիտ Ավետիսի
47. Հարությունյան Էդիկ
48. Ոսկանյան Էմիլ Սերոբի
49. Գրիգորյան Ռոբերտ
50. Խաչատրյան Լավրենտ Արտավազդի
51. Ղուկասյան Պետրոս Սարգիսի
52. Խառատյան Սուրեն Լևոնի - ֆիզմաթ. գ.դ., ՀՀ ԳԱԱ քոթ. անդամ
53. Զուլումյան Նշան Հովհաննեսի
54. Զավուկցյան Սերյան Գևորգի
55. Չալտիկյան Հովհաննես Հակոբի - ՀՀ ԳԱԱ քոթ. անդամ
56. Բեյլերյան Նորայր Մանվելի
57. Մելքոնյան Լիպարիտ Գևորգի
58. Հարությունյան Ռոմիկ Սուրենի
59. Չալտիկյան Ռուբեն Հովհաննեսի
60. Փիրումյան Գևորգ Պետրոսի - տ.գ.դ.
61. Գրիգորյան Սերգեյ Կոնստանտի
62. Եղոյան Ռայա Վահանի
63. Գրիգորյան Կարինե Ռաֆայելի
64. Մուշեղյան Աշոտ Վարազդատի
65. Հարությունյան Լուսինե Ռոմիկի
66. Մարուխյան Դերենիկ Հովսեփի
67. Գրիգորյան Ռուդիկ Համազասպի
68. Գրիգորյան Լևոն Համազասպի
69. Դարբինյան Մամիկոն Վարդանի
70. Ղանդյան Մամիկոն Տիգրանի

71. Գուլբուդադյան Լիպարիտ Վաղարշակի
72. Դուրգարյան Անժելո Հակոբի
73. Ավետիսյան Աիդա Ավետիսի
74. Զալինյան Միքայել Գարեգինի
75. Շահնազարյան Ժորա Մելսակի
76. Հարությունյան Վիլիկ Սիրակի
77. Դոչիկյան Տարիել Վլադիմիրի
78. Մելիքյան Գագիկ Սուրենի
79. Թոքմաջյան Գայանե Գևորգի
80. Դուրգարյան Նարինե Անժելոյի
81. Մալխասյան Արարատ Յուլակի
82. Սահակյան Լիդա Արշակի
83. Օրդյան Միքայել Բախշիի
84. Մեսրոպյան Էվելինա Գուրգենի
85. Խաչատրյան Ռուանդ Հարությունի
86. Սադյան Աշոտ Սերոբի - ՀՀ ԳԱԱ անդամ
87. Կուրդիանյան Կլիմ Ամրոսի
88. Ղազարյան Հրաչիկ Արմենակի
89. Իրադյան Մելքոն Արփիարի
90. Նալբանդյան Արամ Բագրատի
91. Վարդանյան Ռազմիկ Լևոնի
92. Վարդանյան Լուիզա Ռազմիկի
93. Վարդանյան Իրմա Արմենակի
94. Դովլաթյան Վռամ Վադիմակի
95. Երիցյան Մեծլուս Լևոնի
96. Շահինյան Արամ Արտաշեսի - ՀՀ ԳԱԱ անդամ
97. Սիմոնյան Մաքսիմ Արշալույսի

III-2-6.1. Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1998-2016 թթ.)

Այդ մասնագիտությամբ ամբիոնի վարիչներ աշխատել են.

1. Վարդանյան Ռուբեն Սարգսի (1949 թ.), 1998-2000 թթ.
2. Սաղյան Աշոտ Սերոբի (1957 թ.), 2000-2016 թթ.
3. Հովհաննեսյան Ռուբեն Անդրանիկի (1951 թ.), 2015-2016 թթ.
4. Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի (1962 թ.), 2015-2016 թթ.

1. Վարդանյան Ռուբեն Սարգսի (1949 թ. Երևան)

*Քիմիական գիտությունների դոկտոր (1985 թ.), պրոֆեսոր (1988 թ.),
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1998 թ.),*

*Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի
լաբորատորիայի վարիչ (1984-1992 թթ.),*

*ՀՀ դեղամիջոցների և բժշկական տեխնոլոգիաների զարգացման
տնօրենի տեղակալ (1992-1998 թթ.),*

ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ (1998-2000 թթ.)

Ռ. Վարդանյանը ծնվել է 20.03.1949 թ. Երևանում ակադեմիկոս, քիմիկոս Սարգիս Վարդանյանի ընտանիքում: Դպրոցը ուկն մեղալով ավարտելուց հետո 1966 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1971 թ. և ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ ՕԲԻ (Մոսկվա) ասպիրանտուրան: Ժամկետից շուտ պաշտպանել է թեկնածուական թեզը և վերադարձել Երևան ու անցել աշխատանքի Ա. Մնջոյանի անվան ինստիտուտում: Գիտական հետաքրքրությունները կենտրոնացրել է ցավազրկող քիմիական դեղամիջոցների սինթեզին և հետազոտությանը, որոնց արդյունքում սինթեզվեցին օփիոիդային շարքի դեղամիջոցներ՝ ֆենարիդինը, ֆենետամը: 1984 թ. ԽՍՀՄ Պետկոմի ֆինանսավորմամբ ՆՕԲԻ-ում ստեղծվեց Ռ. Վարդանյանի լաբորատորիան, որտեղ սինթեզվեց հակաառիթմածին Ֆիալիֆեն դեղամիջոցը: Առաջին անգամ Ռ. Վարդանյանի կողմից առաջարկվել և մշակվել են հեքսահիդրոպիրիդազինների սինթեզի մի շարք նոր եղանակներ, հայտնաբերվել նոր վերախմբավորումներ: Նշված հետազոտությունների հիման վրա Ռ. Վարդանյանը 1985 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1988 թ. ստացել պրոֆեսորի կոչում: 1990 թ. Ռ. Վարդանյանը ընտրվել

է ՀՀ ԳԱ քոլբակից անդամ, իսկ 1996 թ.՝ ակադեմիկոս: 1992 թ. նա համատեղությամբ նշանակվել է ՀՀ դեղամիջոցների և բժշկական տեխնոլոգիաների նորաստեղծ գործակալության տնօրենի առաջին տեղակալ, ուր աշխատեց մինչև 1998 թ.: Այնուհետև տեղափոխվել է աշխատանքի ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ՝ նորաստեղծ Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ: Այդտեղ նա կիրառեց ուսման նոր սկզբունքի տարբերություն Բժշկական ինստիտուտում գործող ավանդական եղանակների՝ շեշտը դնելով պատրաստելու բժշկական քիմիայի մասնագետներ՝ որպես դեղամիջոցների պոտենցիալ ստեղծողներ, իր դասընթացներով ուսանողներին ծանոթացնելով դեղերի սինթեզի աշխարհին: Ավելի ուշ այդ ուղղությամբ նրա կողմից հրատարակվել է դասագիրք՝ «Синтез основных лекарственных средств», Москва, 2004 թ.: Ռ. Վարդանյանը Խորհրդային Միության փլուզումից հետո իր գիտահետազոտական պոտենցիալը իրացրել է աշխարհի մի շարք համալսարաններում՝ Իսպանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի: Կարճ տևեց ակադեմիկոս Ռուբեն Սարգսի Վարդանյանի գործունեությունը ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնում (1998-2000 թթ.), նա տեղափոխվեց ԱՄՆ-ի Արիզոնայի համալսարան որպես գիտաշխատող, իսկ 2004 թ. այդ համալսարանում ստանալով պրոֆեսորի կոչում հաջողությամբ շարունակում է աշխատել այնտեղ առ այսօր: 2006 թ. «Elsevier» միջազգային խոշորագույն գիտական հրատարակչությունը լույս է ընծայել ակադեմիկոս Ռ. Ս. Վարդանյանի՝ «Synthesis of Essential Drugs» գիրքը: 2016 թ. նույն հրատարակչությունը հրատարակել է Ռ. Ս. Վարդանյանի թվով երրորդ գիրքը՝ «Synthesis of Best-Seller Drugs», իսկ 2017 թ. չորրորդը՝ «Piperidine-Bades Drug Discovery»: Ակադեմիկոս Ռ. Ս. Վարդանյանը հեղինակ է տպագրված 130 գիտական հոդվածների, այդ թվում՝ 5 հոդված-ակնարկների, 20 հեղինակային իրավունքի, 4 ԱՄՆ արտոնագրի: Նրա վերջին ակնարկային հոդվածը՝ «Fentanyl-related compounds and derivatives current status and future prospects for pharmaceutical application», որը նրա սեփական հետազոտությունների արդյունքների ընդհանրացումն է ու դիտարկվում է ցավազրկող դեղամիջոցների ստեղծման հեռանկարները, տպագրվել է «Future Medicinal Chemistry» ամսագրում 2014 թ.: Նա հեղինակ է նաև մի շարք հոդվածների՝ նվիրված ՀՀ գիտության և կրթության հիմնախնդիրներին:

Ակադեմիկոս Ռ. Վարդանյանը որպես հայ մեծ և միջազգային ճա-

նաչում ունեցող քիմիկոս-դեղագետ գիտնական ձևավորվել է ԵՊՀ-ում
և Ա. Մնջոյանի անվան ՆՕԲ ինստիտուտում:

2. Սաղյան Աշոտ Սերոբի (1957 թ. Չափար, ԼՂՀ)

Քիմ. գիր. դոկտոր (1997 թ.), պրոֆեսոր (1998 թ.),

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (2007 թ.),

*ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ
(2000-2016 թթ.),*

*ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի
տնօրեն (2000 թ.),*

*ԵՊՀ ֆարմացիայի ուսումնագիտական ինստիտուտի տնօրենի
պաշտոնակատար (2017 թ.)*

Ծնվել է ԼՂՀ Չափար գյուղում (07.04.1957), մանկավարժի ըն-
տանիքում: Տեղի միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո անմի-
ջապես ընդունվել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, որն ավարտել է
1978 թ., 1978-1980 թթ. որպես ավագ լաբորանտ աշխատել է ԽՍՀՄ
մանրէաբանական արդյունաբերության (ՄԱ) գենետիկայի հա-
մամխոթենական գիտահետազոտական ինստիտուտի Չարենցա-
վանի մասնաճյուղում, 1981-1984 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյա-
նովի անվան Էլենենտօրգանական միացությունների ինստիտուտի
ասպիրանտ: Թեկնածուական թեզը պաշտպանելուց հետո (1984 թ.)
վերադարձել է Երևան ու աշխատանքի անցել ԽՍՀՄ ՄԱ ամինաթթու-
ների տեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտում որպես
կրտսեր գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող, 1986-1988 թթ.
եղել է Մեմբրանային տեխնոլոգիայի բաժնի վարիչ, 1988-2006 թթ.
Ամինաթթուների նմանակների և ածանցյալների սինթեզի լաբորա-
տորիայի վարիչ, 2000 թ. «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ տնօրեն,
իսկ 2010 թ. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական
կենտրոնի տնօրենի պաշտոնակատար:

Նա 1989-1997 թթ. աշխատանքային գործունեություն է ծավալել
նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անօրգանական քիմիայի ամբիոնում:
1992-2000 թթ. աշխատել է ԵՊՀ-ում որպես դոցենտ, իսկ 2000 թ.-ից՝
պրոֆեսոր: 2000-2016 թթ. եղել է Դեղագործական քիմիայի ամբիոնի
վարիչ: 2017 թ. հունվարից ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի
պաշտոնակատար է:

Պրոֆ. Ա. Ս. Սաղյանը ուսումնագիտական մեծ հաջողությունների է հասել սկսած 1990-ական թվականներից համալսարանում և Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում համատեղ աշխատանքային գործունեության ժամանակահատվածում, զարգացնելով ՀՀ-ում գիտական հետազոտությունների շատ կարևոր բնագավառներ.

1. Օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզ, որը միակն է ՀՀ-ում և նվիրված է ժամանակակից կենսատեխնոլոգիայում խիստ արդիական և կարևոր ոչ բնական կառուցվածքով կենսաբանորեն և դեղաբանորեն ակտիվ օպտիկապես մաքուր քիրալային միացությունների ստացմանը:

2. Ոչ բնական պեպտիդների սինթեզ և բժշկականաբանական հատկությունների ուսումնասիրություն: Սինթեզվել են ոչ սպիտակուցային (S)- և (R)- ամինաթթուներ պարունակող 40-ից ավելի նորերկ- եռ- և քառապեպտիդներ, հետազոտվել են ոչ սպիտակուցային ամինաթթուների և դրանցից կազմված պեպտիդների բժշկականաբանական հատկությունները:

3. Ամինաթթուների և այլ կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատում և մաքրում: Մշակվել է մանրէաբանական արտադրության կուլտուրալ հեղուկներից (S)-պրոլինի անջատման և մաքրման յուրահատուկ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:

Այս աշխատանքները Ա. Սաղյանին մեծ ճանաչում բերեցին ՀՀ-ում և միջազգային ասպարեզում: Ա. Սաղյանը պատրաստում է նաև բարձրորակ կադրեր և՛ համալսարանում, և՛ ինստիտուտում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 16 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսական թեզեր: Պրոֆ. Ա. Սաղյանի հեղինակությամբ տպագրվել են 320-ից ավելի գիտական աշխատություններ: Նրա կողմից հրատարակվել են հետևյալ ձեռնարկները.

1. Сагиян А. С. Энантиомерно чистые небелковые аминокислоты: способы получения. // Монография, 341 с., Москва, Издательство «Наука», 2010 ք.:

2. Սաղյան Ա. Ս. Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա // Դասագիրք, 392 էջ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2010 ք.:

3. Սաղյան Ա. Ս. Կենսատեխնոլոգիա // Դասագիրք, 412 էջ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013 ք.:

4. Սաղյան Ա. Ս. Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա // Դասագիրք, 452 էջ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015 թ.:

5. Ashot S. Saghyan, Peter Langer // Asymmetric synthesis of non-proteinogenic amino acids, ISBN: 978-3-527-34041-5; 2016; 376 page, Wiley-VCH:

Ակադեմիկոս Ա. Սաղյանի ուսումնագիտական գործունեությունը շատ բարձր է գնահատվել ՀՀ-ում և արտերկրում: Նա արժանացել է բազում մրցանակների և պարգևների, այդ թվում՝ Եվրոմիության Դեկ-արտի անվան մրցանակի (2001 թ.), ՉԺՀ կառավարության «Բարեկամություն» շքանշանի (2002 թ.), ՀՀ նախագահի մրցանակի (2004 թ., 2011 թ.), «Գոլդ Ստար» միջազգային որակի շքանշանի (2006 թ.), ՀՀ վարչապետի շնորհակալագրի (2006 թ.), ՀՀ վարչապետի հուշամեդալի (2009 թ.), ՀՀ գիտության վաստակավոր գործչի (2014 թ.), ՀՀ պետական մրցանակի (2015 թ.): Նա եղել է բազմաթիվ միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերի իրականացման ղեկավար: Պրոֆ. Ա. Սաղյանը ներկայումս «Հայաստանի քիմիական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի համակարգող խորհուրդում որպես ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ մի շարք խորհուրդների անդամ:

3. Հովհաննեսյան Ռուբեն Անդրանիկի (1951 թ. Երևան)

Բժշ. գիտ. դոկտոր (1993 թ.), պրոֆեսոր (2001 թ.),

ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի կլինիկական պարոֆիզիոլոգիայի ամբիոնի հիմնադիր-վարիչ (1998-2011 թթ.),

ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ (2015-2016 թթ.),

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ (2017 թթ.)

Ռ. Հովհաննեսյանը 1968 թ. ավարտել է դպրոցը, իսկ 1974 թ.-ին՝ Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1974 թ. աշխատել է Երևանի 1 կլինիկական հիվանդանոցում որպես բժիշկ ինտերն: 1975-1977 թթ. ծառայել է Խորհրդային բանակում որպես բժշկական ծառայության սպա: 1980 թ.-ին ԽՍՀՄ բժշկական ԳԱ վիրաբուժության համամիութենական գիտական կենտրոնի Երևանի

մասնաճյուղում առաջինը ՀՀ-ում հիմնադրել և ղեկավարել է միկրոցիրկուլացիայի լաբորատորիան: 1984-1993 թթ. աշխատել է ԲԳԱ այդ մասնաճյուղի գլխավոր բժիշկ: 1987թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1993 թ. դոկտորական ատենախոսություն, պրոֆեսոր է 2001 թ.-ից: 1993 թ. անցել է աշխատանքի ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում: 1998-2000 թթ. ղեկավարել է ՀՀ ԱՆ գիտության, կրթության և կադրային ներուժի վարչությունը: 1998-2011 թթ. ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում հիմնադրել և ղեկավարել է կլինիկական պաթոֆիզիոլոգիայի ամբիոնը: 2011-2015 թթ. աշխատել է ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում որպես գլխավոր փորձագետ, ապա «Ապացուցողական բժշկության հիմունքները» դասընթացի ղեկավար: 2015-2016 թթ. աշխատել է ԵՊՀ ղեղագիտության և քիմիայի ֆակուլտետում որպես կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ: 2017 թ. հունվարից շարունակում է աշխատել ԵՊՀ ֆարմացիայի նորաստեղծ ինստիտուտում: Պրոֆ. Ռ. Հովհաննեսյանը ճանաչված գիտնական է, հեղինակ է մոտ 160 գիտական աշխատության, 4 գյուտի արտոնագրի և 14 նորարական առաջարկության: Իր կողմից 2002 թ. հիմնադրած «Հայկական բժշկական տարեգրեր» հանդեսի գլխավոր խմբագիրն է:

4. Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի (1962 թ. Երևան)

Կենսաբ. գիր. թեկնածու (2010 թ.), դոցենտ (2013 թ.),

ԵՊՀ ղեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ֆարմաբիոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ (2015-2016 թթ.),

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաբիոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ (2017 թ.)

Ա. Հովհաննիսյանը ավարտել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի բաժինը (1986 թ.), նույն տարում անցել է աշխատանքի Երևանի ամինաթթուների ԳՀԻ «Անթափոն արտադրություն» լաբորատորիայում որպես ճարտարագետ-տեխնոլոգ, որտեղ զբաղվել է ամինաթթուների մանրէաբանական սինթեզի արտադրության հիմնահարցերով: 2000-2005 թթ. աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեղագործական քիմիայի ամբիոնում գիտական թեմայի գիտաշխատող: 2005 թ.-ից աշխատում է Դեղագոր-

ծական քիմիայի ամբիոնում, նախ՝ ավագ լաբորանտ, ապա 2007 թ.-ից որպես դասախոս, այնուհետև՝ 2010-2013 թթ. որպես ասիստենտ, իսկ 2013 թ.-ից՝ դոցենտ: 2015 թ. ընտրվել է ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ: 2017 թ. հունվարից շարունակում է աշխատել ԵՊՀ ֆարմացիայի նորաստեղծ ինստիտուտում նույն պաշտոնով:

Կենսաբ. գիտ. թեկնածու (2010 թ.), դոցենտ Ա. Հովհաննիսյանը իր աշխատանքային գործունեության շրջանակներում մասնակցել է մի քանի միջազգային դրամաշնորհների աշխատանքներին: Դոց. Ա. Մ. Հովհաննիսյանը հեղինակ է 43 ուսումնագիտական աշխատանքի:

III-2-7. Էկոլոգիական քիմիայի ամբիոն (2007-2015 թթ.)

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնը ստեղծվել է 2007 թ. ապրիլին ֆակուլտետում գործող (1997-2007 թթ.) էկոլոգիական քիմիայի միջամբիոնային ուսումնագիտական լաբորատորիայի բազայի հիման վրա: Ամբիոնի միակ անվտուխ վարիչ եղել է տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Պետրոսի Փիրումյանը: Էկոլոգիական քիմիա մասնագիտությամբ որոշ առարկաների դասավանդումը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում ընթացել է սկսած 1995 թ.-ից: Ամբիոնը ֆակուլտետում իր գործունեության տարիներին ցուցաբերել է մեծ ակտիվություն և բարձր կազմակերպվածություն թե՛ գիտահետազոտական, թե՛ ուսումնամանկավարժական աշխատանքներում: Կազմվել են բակալավրիատի և մագիստրատուրայի բազմաթիվ առարկաների ուսումնական ծրագրեր, որոնք ՀՀ-ում դասավանդվել են առաջին անգամ:

Ամբիոնում զարգացվել են մի շարք գիտահետազոտական ուղղություններ, որոնք են՝ աղտոտվածությունների հսկում և շրջակա միջավայրի որակի կառավարում, կենսագործունեության պրոցեսների մեխանիզմների ուսումնասիրում, հեղուկ ֆազում արեգակնային լույսի, մետաղների, թթվածնի, ազատ ռադիկալների մասնակցությամբ օքսիդավերականգնման գործընթացների ուսումնասիրում, ֆազերի բաժանման մակերևույթին ընթացող գործընթացներ, նյութերի զանգվածատեղափոխում շրջակա միջավայրում բնական և մարդածին գործոնների ազդեցությամբ, բնական և թափոնային ջրերի մաքրման ֆիզիկաքիմիական եղանակների մշակում, բնական քաղցրահամ ջրերի որակի նոր ջրաքմիական ինդեքսների մշակում, բնական քաղցրահամ ջրերի ինքնամաքրման գործընթացների քանակական ուսումնասիրություններ:

Նշված գիտական ուղղություններով ամբիոնի գործունեության ժամանակաշրջանում թեկնածուական թեզեր են պաշտպանել «Էկոլոգիական քիմիա» մասնագիտական բաժնի 14 շրջանավարտներ և Իրանի Իսլամական Հանրապետության երեք ասպիրանտ: Ամբիոնի աշխատակիցները և ուսանողները մասնակցել են բազմաթիվ միջազգային գիտաժողովների և սեմինարների: Ամբիոնի աշխատակիցները հրատարակել են շուրջ 220 գիտական հոդված և 100-ից ավելի

թեզիսներ, ստացել են 8 գյուտի արտոնագիր, տպագրել են 13 համահեղինակային մենագրություն, 11 ուսումնամեթոդական աշխատանք:

Երկար տարիներ ամբիոնում դասախոսական աշխատանքներ են կատարել քիմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ՝ Ա. Մարտիրյանը, Գ. Սիմոնյանը, Լ. Հարությունյանը, Է. Փիրումյանը, Լ. Մարգարյանը, Զ. Հակոբյանը: Էկոլոգիական քիմիայի ամբիոնը լուծարվել է 2015 թ. այդ մասնագիտության գծով ուսանողների ընդունելության պակասի պատճառով: Ամբիոնի լուծարումից հետո պրոֆ. Գ. Փիրումյանը և դոցենտներ Գ. Սիմոնյանն ու Լ. Հարությունյանը տեղափոխվել են ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն, իսկ Ա. Մարտիրյանը՝ ֆիզիկական և կոլորիդների քիմիայի ամբիոն:

**III-2-7-1. Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչը,
նրա կենսագրությունը
(2007-2015 թթ.)**

Փիրումյան Գևորգ Պետրոսի (1951 թ. Երևան)

Տեխ. գիյր. դոկտոր (1997 թ.), պրոֆեսոր (1999 թ.),

Էկոլոգիական միջազգային ակադեմիայի անդամ (1996 թ.),

ԱՄՆ աշխարհագրական ընկերության իսկական անդամ (1996 թ.),

*Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս
(2004 թ.),*

ԵՊՀ Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ (2007-2015 թթ.),

ԵՊՀ Էկոլոգիայի անվտանգության կենտրոնի ղեկավար (2009 թ. առ այսօր)

Ծնվել է Երևանում ծառայողի ընտանիքում (29.06.1951 թ.), սովորել է Երևանի թիվ 19 դպրոցում, որը ոսկե մեդալով ավարտել է 1968 թ. ու ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1973 թ., այնուհետև ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրան՝ ֆիզիկական քիմիա մասնագիտությամբ և 1979 թ. պաշտպանել թեկնածուական թեզ: 1975-1992 թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից Պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիայում որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող, առաջատար գիտաշխատող, գիտական թեմայի ղեկավար, իսկ 1992-2002 թթ. աշխատել է ֆիզիկական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ: 1997 թ. պաշպանել է դոկտորական թեզ՝ «Ջրային ռեսուրսներ, ցամաքի ջրաբանություն, ջրաքիմիա» մասնագիտությամբ, ստանալով տեխ. գիտ. դոկտորի գիտական աստիճան, պրոֆեսոր է 1999 թ.-ից: 2002-2006 թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, իսկ 2007-2015 թթ. աշխատել է ԵՊՀ Էկոլոգիական քիմիայի նորաստեղծ ամբիոնի վարիչ: Պրոֆ. Գ. Փիրումյանը փաստորեն ԵՊՀ-ում և ՀՀ-ում Էկոլոգիական քիմիայի և Ջրաքիմիայի գիտական դպրոցի հիմնադիրն է: Էկոլոգիական քիմիայի ամբիոնից բացի 2009 թ. նա ԵՊՀ-ում կազմակերպել է նաև ԵՊՀ Էկոլոգիական անվտանգության կենտրոնը (միակը հանրապետությունում), որը առ այսօր ղեկավարում է:

Մեծ է նրա ուսումնագիտական ներդրումը ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում և ՀՀ-ում, հատկապես Էկոլոգիական քիմիայի

ուղղվածությամբ: Դեռևս ուսանողական տարիներին մեծ հակում է ցուցաբերել դեպի քիմիական գիտությունը և կատարել մեծ ծավալի գիտական աշխատանքներ: 1970 թ. և 1972 թ. դարձել է ուսանողական գիտական աշխատանքների Համամիութենական մրցույթների դափնեկիր, 1977 թ. և 1978 թ.՝ համամիութենական Մենդելևյան քիմիական ընկերության գիտական աշխատանքների մրցույթի հաղթող, իսկ 1980 թ. Կոմերիտության գիտության և տեխնիկայի բնագավառում մրցանակի դափնեկիր: 2008 թ.-ից սկսած պրոֆ. Գ.Պ. Փիրումյանը ստացել է բազում տիտղոսներ, կոչումներ, պարգևներ, պատվոգրեր, շքանշաններ, մեդալներ, հուշամեդալներ՝ ՀՀ և արտերկրների: Մասնավորապես՝ ՀՀ ԿԳ նախարարության պատվոգիր (2009 թ.), Ա. Նոբելի անվան Ոսկե մեդալ (2014 թ.), «Բարի կամքի դեսպան» պատվավոր կոչում (ՄԱԿ) (2015 թ.), ՌԴ բնագիտության ակադեմիայի «Կրթության և գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր տիտղոս (2015 թ.), ՌԴ «Գիտական դպրոցի հիմնադիր» պատվավոր կոչում (2015 թ.), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գիտատեխնիկական խորհրդի անդամ (2012 թ.), Արտակարգ իրավիճակների կառավարման միջազգային կազմակերպության (IEMO) լիազոր ներկայացուցիչ ՀՀ-ում (2016թ.):

Պրոֆ. Գ.Պ Փիրումյանը անդամակցել և անդամակցում է ավելի քան 30 խորհուրդների, մասնաճյուղերի, ակադեմիաների, փորձագիտական աշխատանքային խմբերի, հանձնաժողովների, խմբագրական խորհուրդների աշխատանքներին, որոնցից կարելի է նշել՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի (1985 թ.-ից առ այսօր) և ԵՊՀ գիտական խորհուրդների անդամ (2006-2011 թթ.), Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի հայկական մասնաճյուղի տնօրեն (1995-2015 թթ.), «Ջուր-Էկոլոգիա-Բժշկություն» միջազգային ասոցիացիայի ազգային փորձագետ (1997 թ.), «Ցամաքի ջրաբանություն, ջրային ռեսուրսներ, ջրաքիմիա» մասնագիտական խորհրդի անդամ (1999-2016 թթ.), «Երկրաբնապահպանություն» մասնագիտական խորհրդի անդամ (2000-2018 թթ.), Էկոլոգիական քիմիայի միջազգային կոմիտեի անդամ (2002 թ.), ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի Խորհրդի անդամ (2003-2015 թթ.), ՌԴ «Ջուր և էկոլոգիա. հիմնահարցեր և լուծումներ» (2009 թ.), «Ջուր. քիմիա և էկոլոգիա» (2004 թ.), ԵՊՀ «Գիտական տեղեկագիր. քիմիա և կենսաբանություն» (2009

թ.) գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ: Պրոֆ. Գ. Պ. Փիրումյանը ՀՀ գիտության վաստակավոր գործիչ է (2011 թ.):

Համահեղինակ է՝ 250-ից ավելի գիտական հոդվածի, 100-ից ավելի գիտական թեզիսի, 8 մենագրության, 2 դպրոցական դասագրքի, 1 բուհական դասագրքի, 20 արտոնագրի, 6 ուսումնամեթոդական աշխատանքի: Նրա ղեկավարությամբ պաշպանել են 23 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսություններ:

2015 թ.-ից նա աշխատում է Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես պրոֆեսոր և շարունակաբար ակտիվորեն վարում է կոլոգիական քիմիայի ուղղվածությամբ ուսումնագիտական գործընթացը համալսարանում և ՀՀ-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական խորհրդային հանրագիտարան (1-2 հատոր): Գլխավոր խմբագիրներ՝ Աբել Պողոսի Սիմոնյան (1-4 հատորների, 1974-1979 թթ.) և Մակիչ Վահանի Արզումանյան (5-12 հատորների, 1979-1986 թթ.): ՀՀ ԳԱ հրատարակություն: Երևան, 1974-1986 թթ.:

2. Խորհրդային Հայաստան: Հայկական խորհրդային հանրագիտարան: Գլխավոր խմբագիր՝ Մակիչ Վահանի Արզումանյան: ՀՀ ԳԱ հրատարակություն: Երևան, 1987 թ., 688 էջ:

3. Ով ով է. Հայեր: Կենսագրական հանրագիտարան (1-ին և 2-րդ հատորներ): Գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Մնացականի Այվազյան: ՀՀ ԳԱԱ, Հայկական հանրագիտարան. ԳԱ հրատարակություն, Երևան, 2005 թ.:

4. Ռուդիկ Եղիշի Գևորգյան, Մեծ Քիմիայի «առեղծվածը»: «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2010 թ., 552 էջ:

5. Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան (1919-1930 թթ.), Երևան 1994 թ., 303 էջ:

6. Լ. Վ. Գյուլբուղադյան, Հուշեր քիմիայի զարգացման և հիմնադրման մասին Երևանի համալսարանում 1930-ական թթ. մինչև 1990-ական թթ., 1991 թ., 21 էջ.: Նոթագրումը պրոֆ. Ս. Կ. Գրիգորյանի:

7. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ամբիոնների կողմից գրավոր ներկայացրած ուսումնագիտական տվյալները առ 2019 թ.:

8. Պրոֆ. Լ. Պ. Ղարիբջանյան, Մեր անվանի դասախոսները, I մաս: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1970 թ., 300 էջ:

9. Պրոֆ. Լ. Պ. Ղարիբջանյան, Հ. Ք. Գասպարյան, Մեր անվանի դասախոսները, II մաս: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2006 թ., 336 էջ:

10. Պրոֆ. Լ. Պ. Ղարիբջանյան, Հ. Ք. Գասպարյան, Մեր անվանի դասախոսները, III մաս: Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Սիմոնյան և խմբագիր Բան. գիտ. թեկնածու Հ. Բ. Պետրոսյան: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009 թ., 220 էջ:

11. Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի համալսարանի ռեկտորները (1919-1999 թթ.): ԵՊՀ հրատարակչություն, Երևան 1999թ., 140 էջ:

12. ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների 95-ամյա ուղին (1919-2014թթ.): Կազմեցին և հրատարակության պատրաստեցին՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդ. Գ. Մինասյան, Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Ավագյան: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2014 թ., 128 էջ:

13. Երևանի պետական համալսարանը վավերագերում (փաստաթղթերի

ժողովածու): Կազմեց և հրատարակության պատրաստեց Վ. Ս. Մաղալյանը:
ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009 թ., 188 էջ:

14. Լևոն Սողոմոնյան (Նովել), Արծվանիստ Ձեյթուն: Գլխավոր խմբագիր
Վաչիկ Ղազարյան: Հրատարակիչ՝ ՀՀ «Տոնուս» ընկերություն (նախագահ՝
Աշոտ Տոնոյան), Երևան, 2007 թ., 672 էջ:

15. Персональный Состав АН за 1943-1983 гг. Академия Наук Армянской
ССР. Ответственный редактор С.А. Геворкян. Составители кандидаты наук:
М. Агаджанян (биолог), Г.А. Григорян (историк), Л.А. Григорян (геолог),
Э.Х. Григорян (математик), Г.Ж. Кочарян (математик), А.А. Мхитарян
(математик), Л.В. Симонян (математик). Изд. АН Арм. ССР.1984 г; 169 стр.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների կողմից	3
ԲԱԺԻՆ I	
Հայաստանում քիմիայի զարգացման հակիրճ պատմական ակնարկ	4
ԲԱԺԻՆ II	
II-1. Քիմիայի զարգացման նոր փուլի համառոտ պատմությունը Հայաստանում և համալսարանում Խորհրդային (1920-1991 թթ.) և հետխորհրդային ժամանակաշրջանում	9
II-2. Քիմիայի հիմնական մասնագիտական կենտրոնների (բաժինների) ստեղծումն ու գործունեությունը ՀՀ-ում և համալսարանում 1920-2019 թթ. .	17
ԲԱԺԻՆ III	
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՍԱՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1919-2019 թթ.)	56
III-1. Համալսարանի ստեղծումը, քիմիայի ուսուցման ֆակուլտետները, դեկանները, գործունեությունները (1919-2019 թթ.)	56
III-1-1. ԵՊՀ քիմիական (քիմիայի) ֆակուլտետի դեկանների կենսագրությունները (1934-2019 թթ.)	66
III-2. Երևանի համալսարանի քիմիայի ուսուցման ֆակուլտետների, բաժինների, ամբիոնների և ամբիոնի վարիչների գործունեությունները՝ (1919-2019 թթ.)	82
III-2-1. Օրգանական քիմիայի ամբիոն (1920-2019 թթ.)	87
III-2-1-1. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները 1922-2019 թթ.	101
III-2-2. Անօրգանական քիմիայի ամբիոն (1923-2019 թթ.)	109
III-2-2-1. Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1923-2019 թթ.)	117
III-2-3. Ֆիզիկական քիմիայի ամբիոն (1923 -2019 թթ.)	128
III-2-3-1. Ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1923 թ. - 2019 թ.)	135
III-2-4. Անալիտիկ քիմիայի ամբիոն (1923 -2019 թթ.)	147
III-2-4-1. Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները 1923-2019 թթ.	151
III-2-5. Տեսական քիմիայի ամբիոն (1964-2007 թթ.)	154
III-2-5-1. Տեսական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսագրությունները (1964-2008 թթ.)	158
III-2-6. Դեղագործական քիմիայի ամբիոն (1998-2016 թթ.)	163
III-2-6.1. Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչները և նրանց կենսա- ագրությունները (1998-2016 թթ.)	167
III-2-7. Էկոլոգիական քիմիայի ամբիոն (2007-2015 թթ.)	174
III-2-7.1. Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչը և նրա կենսագրությունը (2007-2015 թթ.)	176
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	179

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՍՏԱՆՈՎԻ

(քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ

(քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ)

ԵՊՀ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(1919-2019 ԹԹ.)

ГРИГОРЯН СЕРГЕЙ КОСТАНДОВИЧ

(док. хим. наук, профессор. ЕГУ)

АРУТЮНЯН РОМИК СУРЕНОВИЧ

(док. хим. наук, профессор. ЕГУ)

ИСТОРИЯ ХИМИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТА ЕГУ

(1919-2019 ГГ.)

GRIGORYAN SERGEY K.

(doctor, prof. chem. sc., YSU)

HARUTYUNYAN ROMIK S.

(doctor, prof. chem. sc., YSU)

HISTORY OF CHEMISTRY FACULTY OF YSU

(1919-2019)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի

Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:

ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տրագրության 05.09.2019:

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 11.375 + 12 էջ ներդիր:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

www.publishing.y-su.am